ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

# ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

*ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ*

## 12 (02)

ԵՐԵՎԱՆ
2021

ՀՏԴ 001
ԳՄԴ 72
Ե 744

Հաստատված է ԵՀ Գիտական խորհրդի
2021թ. դեկտեմբերի 24-ի թիվ 32 նիստում

***Գլխավոր խմբագիր՝***
**Բիշարյան Հեղինե,** մանկավարժական գիտ. թեկնածու

***Խմբագրական խորհուրդ***
**Մանասյան Գ.,** աշխարհագրական գիտ. թեկնածու, դոցենտ
**Վահանյան Գ.,** տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
**Կիրակոսյան Ն.,** տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
**Հայրապետյան Վ.,** տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
**Մելիքյան Վ.,** տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
**Խաչատրյան Ա.,** իրավաբանական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
**Տոնոյան Ն.,** իրավաբանական գիտ. թեկնածու, դոցենտ
**Մուրադյան Մ.,** իրավաբանական գիտ. թեկնածու, դոցենտ
**Շահգելդյան Մ.,** քաղաքական գիտ. թեկնածու
**Եսոյան Մ.,** պատմական գիտ. թեկնածու, դոցենտ
**Ղարիբյան Ա.,** փիլիսոփայական գիտ.թեկնածու
**Նալչաջյան Կ.,** հոգեբանական գիտ. թեկնածու, դոցենտ
**Քելոյան Մ.,** հոգեբանական գիտ. թեկնածու
**Թովմասյան Հ.,** բանասիրական գիտ. դոկտոր, դոցենտ
**Հակոբյան Ս.,** բանասիրական գիտ. թեկնածու
**Հարությունյան Ս.,** ֆիզ.-մաթ. գիտ.թեկնածու, դոցենտ

Ե 744 **Եվրոպական համալսարան:** Գիտ. հոդվածների ժող./ ԵՀ.
Գլխ. խմբ.՝ Հ. Բիշարյան,– Եր.: «ԵՀ» հրատ., 2021: Գիրք 12(02) - 304 էջ:

*Ժողովածուն ընդգրկում է կառավարման, տնտեսագիտության, իրավագիտության, պատմության, քաղաքագիտության, լեզվաբանության, հոգեբանության, մանկավարժության տարբեր ոլորտների հրատապ խնդիրների վերլուծությանը նվիրված հոդվածներ: Ներկայացված հետազոտությունների արդյունքները կարող են օգտակար լինել համապատասխան բնագավառներում զբաղված մասնագետների, ասպիրանտների, հայցորդների, ինչպես նաև գիտության նորագույն նվաճումներով հետաքրքրվող անձանց:*

ЕВРОПЕЙСКИЙ УНИВЕРСИТЕТ: СБОРНИК НАУЧНЫХ ТРУДОВ
EUROPEAN UNIVERSITY: COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

ՀՏԴ 001
ISBN 978-99941-2-609-5 ԳՄԴ 72

© Եվրոպական համալսարանի հրատարակչություն, 2021
© Publishing of European University, 2021

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ԿԱՌԱՎԱՐՈՒՄ


**L. Tumyan, A. Hanisyan**
The Competition Protection in EAEU Cross-Border Markets ...................... 6
**Գ. Ավետիսյան**
Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ազդեցությունը ԲՈՒՀ-ի մարդկային ռեսուրսների կառավարման վրա ......................... 21
**Ե. Կարապետյան**
Ինտերնետ մարքեթինգ եզրույթի բնորոշումները և դրանց հստակեցումը ................................................................................ 31
**H. Mahjoub**
New Approach to Food Safety by Creation of Chain of Ownership on Blockchain .......................................................................................43


## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ


**Գ. Չատինյան, Մ. Վարդանյան**
Ֆինանսական զարգացման և տնտեսական աճի փոխկապվածությունը Հայաստանի Հանրապետությունում .................53
**Ս. Պարսյան, Հ. Մանուկյան**
ՀՀ բանկերի 2020 թվականի վարկային պորտֆելի գնահատումն ակնկալվող պարտքային կորստի պահուստի միջոցով ........................77
**Ա. Հովհաննիսյան**
Հայաստանի և Թուրքիայի առևտրատնտեսական կապերի զարգացման հնարավորությունները և հեռանկարները .......................93


## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ


**Ն. Տոնոյան, Լ. Կարապետյան**
Երեխաների նկատմամբ բռնություն. COVID-19 համավարակի թաքնված ճգնաժամ ..................................................................... 107

**Ա. Ղամբարյան**
Սահմանադրական իրավունքի զարգացումը contra constitutionem (ընդհանուր բնութագիրը) ........ 116
**Ա. Ղամբարյան**
ՀՀ ազգային ժողովի՝ ՀՀ սահմանադրությանը հակառակ վարքագիծը. սահմանադրական դելիկտ, թե contra constitutionem վարքագիծ ........ 141
**Կ. Բատիկյան**
Քրեական դատավարությունում պաշտպանի կողմից ապացույցներ հավաքելու հիմնախնդիրները ........ 167
**Դ. Թումասյան**
Երեխայի պաշտպանությունն ընտանիքում բռնությունից ........ 179
**Վ. Սուքիասյան, Ա. Խաչատրյան**
Մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում ........ 193

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

**Մ. Եսոյան**
Եգիպտահայ «Փինիկ» պարբերականը ........ 207

**ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**

**Ա. Հովհաննիսյան**
Պաղեստինյան հակամարտության առաջացումը և ԱՄՆ-ի դիրքորոշումը ........ 220

**ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

**Հ. Թովմասյան**
Ներհայեցումը՝ որպես հոգելեզվաբանության ուսումնասիրման արդյունավետ մեթոդ ........ 235
**G. Muradyan, K. Harutyunyan**
English Interjections in the Context of Emotional Literacy ........ 245

**K. Harutyunyan, A. Karapetyan**
Deformation of Idioms in English Nursery Literature ............................ 253
**Ա. Իվանյան**
Գործարար անգլերենում կենդանական տրանստերմինները որպես տնտեսական և գիտակրթական ոլորտները խթանող գործոններ ............................ 263

## ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**Ա. Գևորգյան**
ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների աշխատակիցների կառավարման յուրահատկությունները ............................ 278

## ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

**Գ. Նիկողոսյան, Վ. Մանուկյան**
Մաթեմատիկական տիպային խնդիրների ոչ տիպային լուծումները որպես ուսուցման արդյունավետության բարձրացման միջոց ............ 289

# THE COMPETITION PROTECTION IN EAEU CROSS-BORDER MARKETS

***Lusine Tumyan***
*EUA, Chair of Management, PhD in Economics*
*lusine.tumyan@mail.ru, +374 91 416749*
***Anna Hanisyan***
*EUA, Chair of Management, PhD in Economics*
*anna.hanisyan@gmail.com, +374 55 071017*

*To face the new challenges in global markets, different countries cooperate and join forces with each other on competition issues more and more intensely. Such cooperation is conducted through joint activities of different competition authorities, based on bilateral or multilateral treaties, while participating in diverse international organizations, regional supranational associations, or economic unions, like the EAEU (Eurasian Economic Union). Important aspects, as well as exposures of the regulatory and legal framework of the union in the sphere of competition are explained in detail, the main advantages of the EAEU are investigated, important instruments that have been omitted from the EAEU current competition boundaries are discussed in the article (particularly, a leniency program and merger control). Certain recommendations are given to improve the competition protection in EAEU cross-border markets.*

***Keywords**: Eurasian Economic Union (EAEU), Competition Protection, Eurasian Economic Commission (EEC), Antimonopoly Regulation, Cross-border Market, abuse of dominance, anti-competitive agreements.*

Nowadays regional integration and globalization processes determine the development of the global economy and, as a result, considerably affect competition policies. To face the new challenges in global markets, different countries cooperate and join forces with each other on competition issues more and more intensely.

Considered deliberate cooperation is required for both practical (consideration of prominent merger control cases, conduct of combined investigations of abuse of a market power cases, anticompetitive agreements and cases on other types of antitrust violations, etc.) and methodological intents (making joint clarifications, sharing expertise, ensuring information exchange, etc.). Such cooperation is conducted through joint activities of different competition authorities, based on bilateral or multilateral treaties, while participating in diverse international organizations, regional supranational associations, or economic unions, like the EAEU (Eurasian Economic Union).

The roots of the Eurasian regional institutions date back to 2000 - at the time the Eurasian Economic Community (shortly - EurAsEC) was formed [1], then in 2003 the CES (Common Economic Space) was established; subsequently in 2006 the Customs Union was founded. [2]

The EAEU was established in 2014 (May 29) by a treaty signed firstly by the Russian Federation, as well as Belarus, Kazakhstan, then followed by the Republic of Armenia and also Kyrgyzstan, which are considered to be the member States accessed to the EAEU in January 2015 after the above-mentioned Treaty entered into force [3]. According to the Treaty, the EAEU is a global organization with international legal personality in the scopes of regional economic integration [4]. The primary objectives and goals of the EAEU are:

- to establish appropriate conditions for continual economic development of the member countries to amend the living conditions of their population;
- to ensure complete modernization, collaboration and competitiveness of domestic economies within the world economy;
- to strive to create a joint market of goods, labor, services and capital within the overall union. [5]

The Treaty includes general rules and principles of competition regarding to the disclosure and abolition of anticompetitive behavior in the EAEU member countries and actions with a harmful impact on the

competition situation on EAEU cross-border (of two or more member countries) markets.

These general rules and principles of competition must be applied when implementing the competition policy inward the EAEU member countries as well as with separate economic players where their business and economic activities have a cross-border impact on domestic national markets. In these scopes, there is a distribution of responsibilities between the permanent regulatory authority, institutional body of the EAEU called EEC - the Eurasian Economic Commission (decisions taken by the which are obligatory for execution in all EAEU member States, without further approval at national level) and the national competition authorized bodies (NCAs) of corresponding member States.

According to the Treaty:

- Its terms shall be used towards the relations that are connected to the execution of antitrust policy as well as competition within the EAEU countries and towards relations with economic players of the member countries which have or may have a harmful effect on competition in trans-border markets on the areas of two (or more) EAEU member countries.
- The EAEU countries shall conduct harmonized antitrust as well as competition policy in relation to activities of economic players of third (not EAEU member) countries, if such activities may affect negatively the competition in product markets of the EEU member States.
- The member countries must follow their rules regarding to the competition and, of course, antitrust legislation towards economic players based on the bans set out in the Treaty. Concurrently, the EAEU member States are allowed to determine in their legislation yet more requirements, additional restrictions and prohibitions which should be considered by relevant national competition regulations and laws, if not, the Treaty's international norms prevail.

At the same time, as general rules and principles connected with competition the Treaty includes PROHIBITED:

- Omissions (actions) of predominant economic subjects that bring or there is a possibility to bring prevention, elimination or even restriction of competition and/or defiance of interests of other people, particularly:

1) setting and keeping monopolistically low or high prices of goods;

2) obliged placement of any unjustified (economically and also technologically) contractual conditions to parties that are unfavorable for the latest or unrelated to the subject matter of their agreement;

3) taking off the goods from their normal circulation ensuing to an increase of prices of that goods;

4) unjustified (economically and also technologically) rejection to enter or escape from concluding contracts with separate buyers capable of producing or supplying the relevant goods;

5) unjustified (economically and also technologically) decrease or termination of production of products and goods, if they are in demand or their delivery orders have been placed and their production is viable;

6) unjustified (economically, technologically or otherwise) setting of various prices (tariffs) for the same goods and products, and doing so creating unfair conditions;

7) creating obstacles for the entrance to the product market or exit from the product market for other economic subjects.

- Unfair competition, in particular:

1) dissemination of inaccurate, false or wrong information, which can impose damage to an economic entity or to the business reputation of it;

2) in terms of their nature misleading method and place of production, certain consumer properties, quantity and quality of goods or their producers;

3) inaccurate comparison of produced or sold goods by a commercial entity with goods produced or sold by other commercial entities.

- Agreements between economic units of the EAEU countries if these units are competitors functioning in the same commodity market and such agreements have the possibility to lead to:

1) decreasing, increasing or maintaining prices in tenders;

2) setting or maintaining discounts, prices/tariffs, allowances and additional or extra charges;

3) decrease or termination of the production of products and goods;

4) dividing the product market in the regional principle, by the quantity of purchases or sales of goods, by the assortment of products sold or compound of sellers or buyers;

5) rejection to enter into agreements with particular sellers or buyers.

- «Vertical» agreements between different economic units with the exception of the ones recognized as admissible, if:

1) such kind of agreements lead or can lead to setting a resale price of products and goods, excluding the case where they set the possible greatest resale price;

2) such kind of agreements oblige the buyer not to trade goods of any economic unit that is a current or potential competitor for the seller (this prohibition won't apply to agreements implying organization by the purchaser of goods with the mark or other identifications of the producer or seller).

- Other types of agreements between economic units, if it is determined that such kind of agreements lead or are able to lead to any hindrance for competition.

The EEC has the right to fight infringements of the general rules of competition in the EAEU countries only if the such violations have or can have a negative and harmful effect on competition in EAEU cross-border markets [6], except for infringements affecting competition in trans-border financial markets (they are tackled in accordance with the domestic legislation of the member countries).

It should be mentioned that all the EAEU member States have their national domestic laws regarding to the competition. The Law of the RA

on Protection of Economic Competition was enacted in 2000, according to which *competition (or economic competition)* is an economic activity which is aimed at ensuring the most advantageous conditions for selling or obtaining goods, as a result of which the risk that a separate competitor will be able to have an influence on general conditions of the product market is justly restricted. [7]

To implement the Treaty's general principles and fundamental rules of competition the Treaty relates to the cooperation and collaboration between the competent bodies of the EAEU member countries, particularly NCAs are bound to notify their counterparts when it was found out that their national law execution may have an effect on the interests of another country in the EAEU. It is noteworthy that a separate section of the Treaty addresses the collaboration between the EEC and the NCAs concerning to the check of the compliance with the noted Treaty's general rules and principles related to the competition. The primary circumstances in which the corresponding collaboration can occur are the followings:

1. when the NCAs are focused on the discussion of information exchange of the regulation of the EAEU countries and different urgent matters of law enforcement, the EEC, together with the NCAs, organizes meetings with the leaders of the NCAs and the corresponding Member of the Board of the EEC in charge of antitrust regulation issues and competition problems;

2. when making an investigation of an infringement of the general rules of competition, the EEC sends an appeal requesting information and also documents from Government bodies of a corresponding member State and to persons (legal and/or natural) of a member State, at the same time the EEC sends a duplicate of such an appeal to the NCA of the EAEU member country at issue.

Besides the abovementioned Treaty, there are other remarkable documents, regulating the competition protection field in the scopes of the EAEU, which are represented in the Table 1:

*Table 1. Documents, Regulating the Competition Protection in EAEU Cross-border markets*

| | ***The Name of the Document*** | ***The Corresponding Act*** |
|---|---|---|
| 1. | The Calculation Methods and Fine Imposition Procedure for Violation of Regular Competition Rules at Trans-Border Markets | Decision N 118 of the Council of the EEC of 17 December 2012 |
| 2. | The Market as a Cross-Border Classification Criteria | Decision N 29 of the Supreme EEC of 19 December 2012 |
| 3. | Procedures of Considering Applications on Violations of the Rules of Competition in Trans-Border Markets | Decision N 97 of the Council of the EEC of 23 November 2012 |
| 4. | Procedures of Considering Cases of Violation of Relevant Competition Rules | Decision N 99 of the Council of the EEC of 23 November 2012 |
| 5. | Violations Investigation Procedures for the Common Rules of Competition in Trans-Border Markets | Decision N 98 of the Council of the EEC of 23 November 2012 |
| 6. | Monopolistic High/Low Prices Identification Methods | Decision N 117 of the Council of the EEC of 17 December 2012 |
| 7. | Competitive Situation Evaluation Methods | Decision N 7 of the Council of the EEC of 30 January 2013 |
| 8. | Agreement on the Process of Confidential Information Protection and the Liability to Disclosure It Upon Practice by the EEC of Powers to Monitor the Compliance with Appropriate Competition Rules | Agreement signed on 12.11.2014 by Belarus, Kazakhstan and Russia |

There is a structural subdivision of the EEC called Antimonopoly Regulation Department ensuring the activities of the EEC in the field of monitoring the accordance with the general rules of competition in EAEU

trans-border markets. The Antimonopoly Regulation Department performs the following main functions:

- considers applications (materials) on the existence of signs of violation of the common rules in the sphere of competition;
- conducts investigations of certain violations of the general principles and rules of competition;
- prepares materials of cases on relevant violations;
- assesses the state of competition in trans-border markets when investigating the corresponding violations of the rules, including when the EEC conducts investigations in accordance with the Protocol on the application of special protective, as well as countervailing and anti-dumping measures in relation to third countries;
- analyzes and summarizes the practical enforcement of law in EAEU member countries in the field of antimonopoly and state price controls and regulation;
- considers inquiries received by the EEC on issues of antimonopoly and state price controls and prepares responses to them;
- performs other functions within its authority.

The powers of the EEC on trans-border markets of the EAEU are represented in the Figure 1.




*Figure 1. The Powers of the EEC on Trans-Border Markets of the EAEU* [8]

The control over the compliance with the common rules of competition in the EAEU trans-border markets is carried out through:

1. consideration of applications (files);
2. development and submission of proposals on actions eliminating the signs of violations of common rules of competition and assuring competition in trans-border markets,
3. issuing warnings requesting to terminate actions without imposing a fine;
4. execution of investigations of different anti-competitive agreements, as well as abuse of dominance and also unfair competition;
5. initiation of cases (including violations of the common rules regarding to the competition and failure to provide information/provision of incorrect information, requested by the EEC);
6. making decisions of the EEC Board appealed to the Court of the EAEU.

The results of the control over compliance with the general principals and rules of competition in EAEU cross-border markets from 2015 to September 2020 are represented in the Table 2.

*Table 2. The Results of the Control Over Compliance with the General Competition Rules in the Cross-Border Markets of the EAEU Member Countries from 2015 to September 2020* [8]

| | |
|---|---|
| **Considered applications (files)** on violation of competition general rules | 77 |
| **Issued warnings** requesting to terminate actions without imposing a fine | 5 |
| **Carried out investigations** of anti-competitive agreements, as well as dominance abuse and unfair competition | 33 |
| **Initiated cases** (including violations of the common rules of competition and failure to provide information/provision of incorrect information, requested by the EEC) | 15 |
| **Decisions** of the EEC Board appealed to the Court of the EAEU | 2 |

When cooperating with the EEC, the national bodies in the EAEU countries represent opinions on draft decisions of the EEC Board and also they take part in relevant decision-making process of other EAEU bodies. The cooperation between the EEC and national competition relevant bodies of the EAEU member countries is described in the Figure 2.




*Figure 2. The Cooperation between the EEC and National Competition Relevant Bodies of the EAEU Member Countries* [9]

Taking into account all the above-mentioned, we can conclude that the EAEU incorporates an effective and powerful regional competition system. The main advantages of the EAEU as a regional integration unit in the field of competition are the equal conditions, the fair competition on the trans-border markets and also the investment attractiveness.

At the same time as concluding remarks we consider that the most important things requiring attention are the followings:

➢ Leniency programs can be very effective for detecting cartels and getting the necessary evidence to stop them. It's noticeable that not all the member countries of the EAEU have implemented leniency programs into their domestic legislation, which, in return, can be problematic in the situation of detecting a cartel in the trans-border market of the member countries. The primary purposes of carrying out a leniency program are

the detection and resulting deterrence and effective enforcement [10], so the key factors for the efficiency of the leniency program are incentives for submitting corresponding applications as early as possible and incentives for cooperation and interaction with competition authority's investigation. From our point of view, to consider an effective leniency program for the EEC, it should cause the necessary incentives for companies to cooperate and collaborate with its investigation; the responsibility of ongoing cooperation should be put on applicants as a condition for receiving leniency. In this context, any break of the obligation such as providing misinformation or refusing to give information should disable leniency. Finally, effective and strong law enforcement by a relative competition authority is a necessity for any efficient leniency program.

- Merger control is a vital tool for competition authorities, letting them preserve and protect competition in markets. For example, a large portion of foreign direct investment takes the form of mergers and is often supported by governments, especially in developing countries. We strongly believe that one of the major pillars of a competition system is merger control, intending to maintain the competitive nature of markets. To analyze the mergers a dialogue with the parties during the procedure is required, often encouraging third sides and other interested parties to provide information and comments that may be helpful to make an assessment by the relevant competition body. Moreover, the ability to impose remedies to mergers may allow the competition authority to protect and also to promote competition in the respective markets.

Regarding to the competition protection in EAEU cross-border markets we offer the following recommendations:

- applying international best practices to broaden the powers of the EEC allowing it to pursue economic units not registered in the EAEU thus allowing the EEC to pursue and prosecute any foreign entity which is active in the EAEU market, whose economic activities have an impact on the EAEU market and areas;

- to treat equally to economic entities and state-own enterprises which is essential to have a healthy functioning market and to encourage a competitive environment where all participants are subject to competition law. Hence, a clarification is needed regarding to the submission of state-own enterprises to the competition framework;
- to expand supranational law guided and procedural harmonization efforts to improve the horizontal cooperation of NCAs as well the vertical cooperation between the EEC and NCAs;
- to comprise public interest criterion for applying and reacting unfair competition cases within the EAEU competition law framework (national interest is crucial in connection with the provision on unfair competition);
- to set out guidelines based on existing cases' practice and experience for further certainty and consistency;
- to outline a EAEU regional leniency program to coordinate efforts of the different national leniency programs in order to automatically homologate such programs;
- to adopt by the EEC a merger oversight regime based on certain national case studies.

We emphasize the need of constant interaction between the EAEU institutional bodies and the business community of the EAEU member countries for the timely detection and repression of anti-competitive actions of participants in EAEU cross-border markets. It's important to convey to the business community representatives the rules of competition in the EAEU and to prepare entrepreneurs to preserve their rights every time they are violated by any monopolist or different ps in anti-competitive agreements.

## Literature

1. Aleksandra Klofat, «Regulatory Competition Within the Eurasian Economic Union and the European Union: A Comparative Legal Analysis», Legal Issues of Economic Integration, Volume 44, Issue 2 (2017) pp. 173 – 196
2. «The Eurasian Economic Union: Facts and Figures», Library of Eurasian Integration. Eurasian Economic Commission, 2018
3. Eurasian Economic Commission official website; http://www.eurasiancommission.org/en/Pages/default.aspx
4. Eurasian Economic Union (EAEU) official website; http://www.eaeunion.org/?lang=en
5. Treaty on the Eurasian Economic Union, 29 May 2014; https://docs.eaeunion.org/docs/en-us/0017353/itia_05062014_doc.pdf
6. L.G. Pashtova et al., «Financial Analytics: Science and Experience», 2018, vol. 11, iss. 3, pp. 244–255
7. Law of the RA on Protection of Economic Competition
8. «Regional Competition Rules in the EAEU», 8th United Nations Review Conference on Competition and Consumer Protection, Geneva, 2020
9. The PROCEDURE for cooperation, including information exchange, between the Eurasian Economic Commission and competent authorities of the Member States of the Customs Union and Single Economic Space within the Agreement on the unified principles and rules of competition dated December 9, 2010
10. UNCTAD, «The Use of Leniency Programs as a Tool for the Enforcement of Competition Law against Hardcore Cartels in Developing Countries», TD/RBP/CONF.7/4 (2010)

# ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵԱՏՄ ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ

**Լուսինե Թումյան**
ԵՀ, Կառավարման ամբիոն, տնտ.թ
**Աննա Հանիսյան**
ԵՀ, Կառավարման ամբիոն, տնտ.թ.

Գլոբալ շուկաներում նոր մարտահրավերներին դիմակայելու նպատակով տարբեր երկրներ ավելի ու ավելի ինտենսիվ են համագործակցում միմյանց հետ մրցակցության հարցերով: Այդպիսի համագործակցությունն իրականացվում է մրցակցության ոլորտի տարբեր մարմինների համատեղ գործողությունների միջոցով՝ հիմնված երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրերի վրա, մասնակցելով տարատեսակ միջազգային կազմակերպություններին, տարածաշրջանային վերազգային ասոցիացիաներին կամ տնտեսական միություններին, ինչպիսին է հանդիսանում Եվրասիական տնտեսական միությունը (ԵԱՏՄ): Սույն հոդվածում մանրամասն նկարագրված են մրցակցության ոլորտում ԵԱՏՄ կարգավորման կարևոր հանգամանքները, լուսաբանված են ԵԱՏՄ հիմնական առավելությունները, ներկայացված են կարևոր գործիքներ, որոնք բացակայում են ԵԱՏՄ մրցակցության ոլորտի կարգավորման առկա շրջանակից (մեղմացման ծրագիր և միաձուլումների նկատմամբ վերահսկողություն), ինչպես նաև ներկայացված են հստակ առաջարկություններ ԵԱՏՄ անդրսահմանային շուկաներում մրցակցության պաշտպանությունը բարելավելու համար:

**Հիմնաբառեր**. Մրցակցության պաշտպանություն, Եվրասիական տնտեսական միություն (ԵԱՏՄ), Եվրասիական տնտեսական հանձնաժողով (ԵՏՀ), անդրազգային շուկա, հակամենաշնորհային կարգավորում, հակամրցակցային համաձայնություններ, գերիշխող դիրքի չարաշահում:

# ЗАЩИТА КОНКУРЕНЦИИ НА ТРАНСГРАНИЧНЫХ РЫНКАХ ЕАЭС

**Лусине Тумян**
ЕУ, кафедра Управления, к. э.н.
**Анна Анисян**
ЕУ, кафедра Управления, к. э.н.

Для противостояния новым вызовам на глобальных рынках, разные страны все более интенсивно сотрудничают друг с другом по вопросам конкуренции. Такое сотрудничество осуществляется через совместную деятельность различных антимонопольных органов на основе двусторонних или многосторонних договоров при участии в различных международных организациях, региональных наднациональных ассоциациях или экономических союзах, таких как Евразийский экономический союз (ЕАЭС). В статье подробно разъясняются важные аспекты нормативно-правовой базы ЕАЭС в сфере конкуренции, исследуются основные преимущества ЕАЭС, рассматриваются важные инструменты, которые отсутствуют в существующих основах защиты конкуренции в рамках ЕАЭС (программа смягчения наказания и контроль за слияниями), а также даны определенные рекомендации по усилению защиты конкуренции на трансграничных рынках ЕАЭС.

**Ключевые слова**: Защита конкуренции, Евразийский экономический союз (ЕАЭС), Евразийская экономическая комиссия (ЕЭК), трансграничный рынок, антимонопольное регулирование, антиконкурентные соглашения, злоупотребление доминирующим положением.

*Տրվել է տպագրության՝ 18.10.2021թ.*
*Գրախոսվել է՝ 15.12.2021թ.*

# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՀ-Ի ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎՐԱ

***Գոհար Ավետիսյան***
*Ե Հ, Կառավարման ամբիոն*
*g.avetisyan@eua.am, +374 98 484442*

*Հոդվածի նպատակն է բացահայտել մարդկային ռեսուրսների կառավարման (ՄՌԿ) առանձնահատկությունները և օրինաչափությունները բուհերում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման դեպքում: Հետազոտական աշխատանքում օգտագործվել են դասախոսի՝ նորաստեղծ էլեկտրոնային քարտարանի տվյալները բուհերից մեկի օրինակի հիման վրա:*

***Հիմնաբառեր.*** *մարդկային ռեսուրսներ, մարդկային ռեսուրսների կառավարում, տեղեկատվական տեխնոլոգիաներ, էլեկտրոնային քարտարան:*

Մարդկային ռեսուրսները յուրաքանչյուր կազմակերպության, անկախ կազմակերպաիրավական ձևից, հիմնական աշխատանքի իրականացնողներն են: Մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացի կարևորագույն տարրերից է կադրերի համալրումը՝ ընդհուպ մինչև աշխատանքի արդյունքերի գնահատում, վերապատրաստման համակարգի ներդրում և կադրերի առաջխաղացում, որոնք արդի ժամանակաշրջանում անհնար են իրականացնել առանց թվայնացված տեղեկատվության ձևավորման և պահպանման [4]:

Բուհերում մարդկային ռեսուրսների կառավարումը նախատեսում է չորս հիմնական խնդիրների առանձնահատկությունների կանխորոշումը և լուծումը.

- բարելավել պրոֆեսորադասախոսական կազմի գիտելիքներն ու հմտությունները՝ ընձեռելով վերջիններին վերապատրաստման և որակավորման բարձրացման հնարավորություն,
- խրախուսել վստահությունն ու փոխհամաձայնությունը,

- ստեղծել դինամիկ և միասնական անձնակազմ,
- նպաստել և խրախուսել ստեղծարար մտքի ընդհանրացումն ու կիրառումը:

Վերոնշյալ խնդիրների լուծման անհրաժեշտությունը պահանջում է գնահատման ցուցանիշների համակարգի մշակում և կիրառում՝ մարդկային ռեսուրսների պարբերաբար գնահատման նպատակով:

Վերը նշված դիտանկյունից կարելի է սահմանել, որ կրթական ոլորտի համակարգողները, մեծամասամբ, կիսել են ստորև նշված խնդիրների լուծման հնարավորությունները իրազեկ և արհեստավարժ պրոֆեսորադասախոսական կազմ ձևավորելու նպատակով.

- շահադրդել բուհական թիմերին ընդհանուր առմամբ, ինչպես նաև անհատ-դասախոսներին առանձին,
- ապահովել և խրախուսել անձնակազմի նպատակասլացությունը և բարձր կատարողականությունը,
- ընդունել տարակարծությունը,
- խթանել անհատական զարգացումը և ինքնագնահատումը:

Բարձրագույն ուսումնական հաստատությունները իրականացնում են պրոֆեսորադասախոսական կազմի մի շարք վերապատրաստումներ և որակավորման բարձրացման դասընթացներ, որոնց վերաբերյալ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ տեղեկատվության պահպանումը դարձել է խիստ անհրաժեշտ և հույժ կարևոր:

Ելնելով այն հանգամանքից, որ տեղեկատվական տեխնոլոգիաները միտված են փոփոխվելու, երբեմն նույնիսկ շատ արագ, դրանց կիրառմամբ նախագծերից շատերում փորձ է արվում բարելավել եղած տեխնոլոգիաները՝ հանդիպելով զանազան տեխնոլոգիական ռիսկերի [1]:

Բուհական համակարգում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ հնարավոր է բացահայտել ՄՌԿ առանձնահատկությունները, սակայն լիարժեքորեն շրջանցել ստորև ներկայացված մարտահրավերները իրատեսական չէ.

- Թիմերի անդամները, աշխատելով բարձրագույն ուսումնական հաստատություններում, իրականացնում են իրենց հիմ-

նական աշխատանքային պարտականությունները: Ուստի, նրանք իրենց համար չեն սահմանում առաջնահերթություններ՝ հետևելով բուհերի մասնագիտական և համաբուհական ամբիոններում սահմանված վերջնաժամկետներին:

- Պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստումների և որակավորման բարձրացման մեծածավալ և տարաբնույթ տեղեկատվության առկայություն:

Վերոնշյալ մարտահրավերներն ու խնդիրները հաղթահարելու համար առաջարկում ենք ժամանակի պլանավորման ռեսուրսների ճիշտ բաշխման տեսանկյունից՝ վերապատրաստումներ անցկացնել պրոֆեսորադասախոսական կազմի շրջանում, ինչպես նաև առաջարկում ենք թվայնացված-էլեկտրոնային քարտարանի համակարգի հիմնում:

Դասախոսի թվայնացված էլեկտրոնային քարտարանի ձևավորումը փորձնական իրականացրել ենք Հայաստանի Եվրոպական համալսարանի ՊԴ կազմի համար, մասնավորապես, Microsoft Office Access ծրագրի կիրառմամբ, որն ունի լայն գործառույթներ, այդ թվում միմյանց հետ կապված հարցումներ, կապ արտաքին աղյուսակների և տվյալների բազայի հետ: Ավելի պատկերավոր ներկայացնելու համար առաջարկում ենք դիտարկել ստորև բերված նկարներն իրենց մեկնաբանություններով:

Նախ և առաջ մշակվել է տրամաբանական կապ ամբիոնի, ամբիոնում գործող սեկցիաների և ՊԴ կազմի հաստիքացուցակի համար (Տե՛ս նկար 1):




***Նկար 1. «Գլխավոր պատուհան»***

Ինչպես երևում է նկար 1-ից, պատկերված են գլխավոր պատուհանները, որին հաջորդելու է «Վերապատրաստողներ» պատուհանը՝ ամբիոնի ՊԴ կազմի վերապատրաստումների վերաբերյալ ընդգրկուն տեղեկատվությամբ (Տե՛ս նկար 2):




***Նկար 2. «Վերապատրաստողներ» պատուհան***

Ինչպես երևում է նկար 2-ից «Վերապատրաստողներ» պատուհանը բացելով տեսանելի են դառնում փնտրման կոճակները:

Համաձայն այդ պատուհանի՝ կարող ենք ընտրել՝ ինչպես ենք որոնելու մեզ անհրաժեշտ տվյալները: Նշելով, օրինակ, վերապատրաստող դասախոսի անուն-ազգանունը, այնուհետև սեղմելով «ok» կոճակը, վերապատրաստող դասախոսի վերապատրաստման և որակավորման բարձրացման տեղեկատվությունը հասանելի և տեսանելի կդառնա (Տե՛ս նկար 3):



***Նկար 3. «Վերապատրաստողների տվյալներ» պատուհան***

Բացելով «Վերապատրաստվողներ» պատուհանը, նշելով անուն-ազգանունը՝ հնարավոր կլինի տեսնել, թե ինչպիսի վերապատրաստումներ է անցել տվյալ վերապատրաստվող դասախոսը (Տե՛ս նկար 4):



***Նկար 4. «Վերապատրաստվողներ» պատուհան***

Երբ ընտրում են «Դասախոսներ» կոճակը, հնարավոր է դառնում տեսնել դասախոսի, նրա կողմից մատուցվող առարկայական դաս-ընթացի վերաբերյալ տեղեկատվությունը (Տե՛ս Նկար 5)




***Նկար 5. «Վերապատրաստվող դասախոսներ» պատուհան***

«Վերապատրաստում անցածներ» պատուհանը բացելով տեսնում ենք ընդգրկուն և համապարփակ տեղեկատվություն տվյալ բուհի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների վերապատրաստման, որակավորման բարձրացման վայրի, թեմատիկայի, սկզբի ու ավարտի և կրեդիտի վերաբերյալ (Տե՛ս նկար 6):



***Նկար 6. «Վերապատրաստումներ անցածներ» պատուհան***

Այսպիսով, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն է ընձեռում առավել արդյունավետ դարձնել բուհում պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման և որակավորման բարձրացման գործընթացները:

## Օգտագործված գրականության ցանկ


1. https://textbookequity.org/Textbooks/Baars_book_project_management.pdf, 12.12.2021
2. Harrison R., (2005), Learning and Development, 2nd edn CIPD, London
3. Guest D. E., Horwood R., (1981), *Caracteristics of the successful personel manager,* Personnel Management, May, pp 18-23

4. Armstrong M., (2003), *A Handbook of Human Resource Management Practice,* London and Philadelphia

## THE IMPACT OF INFORMATION TECHNOLOGIES USE ON THE UNIVERSITY HUMAN RESOURCES MANAGEMENT

**Gohar Avetisyan**
EU, Chair of Management

The purpose of this article is to identify the features and patterns of human resource management by the use of information technologies in universities. The data of the lecturers' newly created electronic passport based on the example of one of the universities has been presented in the research paper.

**Keywords:** human resources, human resource management, information technologies, electronic card.

## ВЛИЯНИЕ ИСПОЛЬЗОВАНИЯ ИНФОРМАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ НА УПРАВЛЕНИЕ ЧЕЛОВЕЧЕСКИМИ РЕСУРСАМИ УНИВЕРСИТЕТА

**Гоар Аветисян**
ЕУ, Кафедра Управления

Целью данной статьи является выявление особенностей модели управления человеческими ресурсами при использовании информационных технологий в университетах. В исследовательской работе использовались данные вновь созданной электронной карты преподавателя на примере одного из вузов.

**Ключевые слова:** человеческие ресурсы, управление человеческими ресурсами, информационные технологии, электронная карта.

*Տրվել է տպագրության՝ 06.10.2021թ.*
*Գրախոսվել է՝ 16.12.2021թ.*

# ԻՆՏԵՐՆԵՏ ՄԱՐՔԵԹԻՆԳ ԵԶՐՈՒՅԹԻ ԲՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀՍՏԱԿԵՑՈՒՄԸ

***Ելենա Կարապետյան***
*ԵՀ, Կառավարման ամբիոն, ասպիրանտ*
*helen_19862006@yahoo.com, +374 41 332331*

*Ինտերնետ մարքեթինգի ժամանակակից ուսումնասիրությունները վերջին մի քանի տարում փոխել են իրենց ուղղությունը՝ տեսականից անցում կատարելով դեպի գործնական: Այս ամենը պայմանավորված է տնտեսական միջավայրի փոփոխությամբ, թվային տնտեսության ձևավորմամբ ու տեխնոլոգիական առաջընթացով: «Ինտերնետ մարքեթինգ» եզրույթը պահանջում է արդիականացում՝ տեղեկատվական միջավայրի կողմից իրականացվող գործողությունների ամբողջ շղթան ճիշտ հասկանալու համար: Սույն հոդվածն ունի տեսական, ֆունդամենտալ բնույթ, որի նպատակն է տալ ինտերնետ մարքեթինգի առավել հստակ ու տվյալ ժամանակահատվածի համար ադապտացված բնորոշում: Մեր առջև դրված խնդիրն է՝ ուսումնասիրելով «ինտերնետ մարքեթինգ» եզրույթի տարբեր գիտական բնորոշումները, տալ ամենաարդիականը: Գիտական նորույթը կայանում է եզրույթի տեսական հիմնավորման մեջ, իսկ արդիականությունը պայմանավորված է հստակ բնորոշման բացկայության մեջ:*

***Հիմնաբառեր.*** *համացանց, ինտերնետ մարքեթինգ, գովազդ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ինտերնետ մարքեթինգի գործիքակազմ:*

Տեղեկատվական տեխնոլոգիաներն ընդգրկում են մեր կյանքի բոլոր ասպարեզները, և մարթեքինգը բացառություն չէ: Թվային տնտեսության զարգացմամբ դեվայսների կայծակնային զարգացումը, ինչպես նաև աշխարհի ցանկացած կետից դեպի համացանց ազատ մուտքը հանդիսանում է մարքեթինգային ապագա տենդենցների ձևավորման հիմնական գործոն: Այսպես կոչված «ապագայի մարքեթինգը» հիմնվում է այն փաստի վրա, որ գնորդ-վաճառող փոխհա-

րաբերություններում կենտրոնական տեղ զբաղեցնում են նորարարական տեխնոլոգիաները:

Առաջին ինտերնետ մարքեթինգի քայլերը պարզ գովազդային հայտարարություններն էին, որոնք տեղադրում էին ցուցատախտակներին կամ կորպորատիվ ռեսուրսներում, սակայն ժամանակը ցույց տվեց, որ դա բավարար չէ, և այսօր ինտերնետ մարքեթինգն ավելին է, քան տեղակատվական պրոդուկտի վաճառք: Այժմ տեղի է ունենում տեղեկատվական տարածության, բիզնես մոդելների և այլ ապրանքների ու ծառայությունների առքուվաճառք:

Գիտական գրականության մեջ կարելի է հանդիպել ինտերնետ մարքեթինգի բազմաթիվ բնորոշումներ: Առաջին անգամ ինտերնետ մարքեթինգ հասկացությունը հանդիպել է արևմտյան գրականության էջերում:

Դիտարկենք դրանցից մի քանիսը աղյուսակի միջոցով.

*Աղյուսակ 1*[1]

*Ինտերնետ մարքեթինգի բնորոշումը՝ ըստ տարբեր հեղինակների*

| № | Հեղինակ | Բնորոշում |
|---|---|---|
| 1 | Ալեքսեև Ի.Վ. | դիտարկում է ինտերնետ մարքեթինգը՝ որպես մարքեթինգի բաժին, որն ուղղված է համացանցում տնտեսական սուբյեկտների փոխազդեցության սկզբունքների ուսումնասիրմանը. նպատակը՝ ունիվերսալ համակարգերի մշակում՝ շահույթի ստացման ու հասարակության սոցիալական պահանջմունքների բավարարման համար [1, c.14-18]: Ունիվերսալ համակարգն առաջմղման այն գործիքակազմն է, որը կիրառում է կազմակերպությունը՝ համացանցի միջավայրում բիզնես-խնդիրների լուծման համար: Մարքեթինգի խնդիրն է |

[1] Կազմվել է հեղինակի կողմից:

| | | |
|---|---|---|
| | | լինել այնտեղ, որտեղ կա լսարան [2, с. 240]: |
| 2 | Բ. Էլեյ Բ. և Շ. Թիլլեյ | ինտերնետ մարքեթինգը դիտարկում են որպես գովազդային գործունեություն համացանցում, այդ թվում նաև էլեկտրոնային փոստի միջոցով [3, p. 21]: |
| 3 | Դ. Չեֆֆին, Ռ. Մայեր | ինտերնետ մարքեթինգը դիտարկում են որպես մարքեթինգային նպատակների իրականացնում՝ թվային տեխնոլոգիաների միջոցով: Ինտերնետ մարքեթինգի մարքեթինգային նպատակներին են դասում ապրանքի կամ ծառայության մասին տեղեկությունները, վաճառքի ապահովումն առցանց հարթակներում, հաճախորդների ուսումնասիրությունը, լոյալության ծրագրերի մշակումը և այլն [4, p.579] |
| 4 | Լ. Վելլանը, Ջ. Կեսթլեր | ինտերնետ մարքեթինգը դիտարկում են որպես թիրախային լսարանի հետ հաղորդակցման տնտեսապես ամենաարդյունավետ եղանակ՝ համացանցի և այլ տարատեսակ էլեկտրոնային կապի կիրառմամբ: Ինտերնետ մարքեթինգը կիրառվում է ոչ միայն պոտենցիալ հաճախորդների հետ կապի ստեղծման, այլև արդեն իսկ հաճախորդների հետ կապի պահպանման նպատակով [5, p.21]: |
| 5 | Վեկշինսկի Ա.Ա. | ինտերնետ մարքեթինգի ներքո հասկանում է համացանցի հիպերմեդիայի միջավայրում մարքեթինգի տեսական և մեթոդաբանական կազմակերպումը [6, с. 103]: |

| | | |
|---|---|---|
| 6 | Կիտաևա Ե.Օ. | գտնում է, որ ինտերնետ մարքեթինգը հաճախ դիտարկվում է որպես որևէ ապրանքի կամ ծառայության առաջմղում համացանցում, գովազդ՝ համաշխարհային ցանցում, բաներային գովազդ [7,c.66] : |
| 7 | Ա.Դ. Բառանով | գտնում է, որ, սովորաբար, ինտերնետ մարքեթինգի ներքո հասկանում են միայն մեկ բան՝ կամ կոնտեքստային գովազդ, կամ բաներային գովազդ, կամ SEO, SMM, կամ նույնիսկ E-mail մարքեթինգ: Իրականում ինտերնետ մարքեթինգը այդ ամենն է՝ միասին վերցված, որտեղ յուրաքանչյուրը գործի է դրվում փուլ առ փուլ [8, c.85]: |
| 8 | Յուրասով Ա.Վ | «Էլեկտրոնային առևտրի հիմքերը» դասագրքում տալիս է ինտերնետ մարքեթինգի հետևյալ բնորոշումը. «Ինտերնետ մարքեթինգը – էլեկտրոնային առևտրի մեթոդների համալիր է, որը ուղղված է ինտերնետային գովազդ պարունակող կայքերի ու հաճախորդների ներգրավմանն ուղղված եղանակների տնտեսական արդյունավետության բարձրացմանը, որը նպաստում է կայքերում հաճախորդների ներգրավմանը, ուղղված է ապրանքների կամ ծառայությունների վաճառքի ապահովմանը, այլ գործողությունների կատարմանը (գրանցում, նորություններին բաժանորդագրում և այլն), կայքի՝ հաստատուն լսարանի և /կամ ցանցային հաղորդակցման (քոմյունիթիի) ստեղծմանը» [9, c. 480]: |

| | | |
|---|---|---|
| 9 | Ուսպենսկիյ Ի.Վ. | առաջարկում է ինտերնետ մարքեթինգի հետևյալ բացատրությունը՝ ինտերնետ մարքեթինգը դա միջոցառումների համալիր է, որն ուղղված է համացանցում ռեսուրսի վարկանիշի բարձրացմանը, կայքի այցելուների ավելացմանը, և, որպես հետևանք, նոր հաճախորդների ներգրավմանը և կազմակերպության աճին, ինչպես նաև շուկայի մասնագիտական վերլուծությանը և ուսումնասիրությանը (մրցակիցների գործունեություն, առաջարկի և պահանջարկի տենդենցը և այլն) [10, c.420]: |
| 10 | Վ.Վ. Ցարեվ, Ա.Ա. Կանտարովիչ | դիտարկում են ինտերնետ մարքեթինգը որպես անհրաժեշտ միջոցառումների համալիր այնպիսի յուրահատուկ շուկայի ուսումնասիրության համար, ինչպիսիք է համացանցի ցանցային շուկան՝ ապրանքների և ծառայությունների առաջմղման համար նոր ինտերնետ տեխնոլոգիաների միջոցով [11, c.265]: |
| 11 | Խոլմոգորով Վ. | դիտարկում է ինտերնետ մարքեթինգը որպես հատուկ մեթոդների համակարգ, որը թույլ է տալիս վեբ ռեսուրսների սեփականատերերին առաջմղել սեփական կայքը համացանցում, այդ ճանապարհով նաև առաջմղել սեփական ապրանքանիշը՝ կիրառելով ցանցային տեխնոլոգիաներ, ստանալ առավելագույն շահույթ [12, c.272]: |

Մենք համակարծիք ենք Բառանով Ա.Դ.-ի հետ. գտնում ենք, որ «ինտերնետ մարքեթինգ» եզրույթում առանցքային է մարքեթինգ հասկացությունը, այլ ոչ թե համացանցը: Անշուշտ, համացանցը ըն-ձեռնում է շատ լայն տեխնիկական հնարավորություններ, սակայն

դրանք ինքնուրույն չեն աշխատում: Արդյունավետ դրանք դառնում են այն ժամանակ, երբ առկա է բովանդակություն, հետաքրքիր առաջարկ և ճիշտ մատուցում:

Չնայած Յուրասով Ա.Վ-ի բնորոշումը բավական լիարժեք է, այնուամենայնիվ, այդ բնորոշումը չի դիտարկում ինտերնետ մարքեթինգի բոլոր ֆունկցիաները, ինչպիսիք են՝ հաճախորդների, մրցակիցների, մատակարարների մասին տեղեկությունների որոնում և այլն: Բնորոշումն առավել ուղղված է ընկերությունների վեբ-կայքին, սակայն, վեբ-կայքը, որքան էլ որ համարվի ինտերնետ մարքեթինգի առավել արդյունավետ գործիք, այնուամենայնիվ, չի հանդիսանում ինտերնետ մարքեթինգի միակ և անհրաժեշտ հատկանիշը:

Ուսպենսկիյ Ի.Վ. «ինտերնետ մարքեթինգ» եզրույթի բացատրությունն ավելի մոտ է որոնողական օպտիմալացմանը, քանի որ ամբողջ ուշադրությունը սևեռված է լինում այն գործունեությանը, որն ուղղված է որոնման արդյունքում կայքերի՝ առաջին հորիզոնականներում հայտնվելուն: Այս դեպքում դուրս է մնում այնպիսի էլեմենտ ինչպիսին է համացանցում օֆլայն կազմակերպությունների գովազդը:

Ցարեվ Վ.Վ.-ի և Կանտարովիչ Ա.Ա.-ի տրված բնութագրում ինտերնետ մարքեթինգը դիտարկվում է որպես համեմատաբար մատչելի համաշխարհային տեղեկատվական ալիք, որը բնութագրվում է բարձր օպերատիվությամբ, փոխազդեցության նպատակաուղղվածությամբ, պոտենցիալ հաճախորդի հետ կապ հաստատելու բավական կարճ գործընթացով, գովազդային ակցիաների և մարքեթինգային միջոցառումների մատչելիությամբ [13, с. 265]: Այս բնորոշման թերությունը կայանում է նրանում, որ ինտերնետ մարքեթինգը բնութագրվում է որպես ալիք, որն արդեն իսկ հակասում է ինտերնետ մարքեթինգի բնույթին: Ինտերնետ մարթեքինգը չի կարող ուղղակի լինել ալիք, քանի որ, համաձայն ցանկացած բնորոշման, այն իրենից ներկայացնում է գործունեություն, «միջոցների համալիր» կամ թեորեմ, բայց ոչ հաղորդակցման միջոց, եղանակ:

Խոլմոգորովի Վ.-ի հետ համակարծիք ենք, սակայն մասնակի, քանի որ իր բնորոշմամբ ինտերնետ մարքեթինգը կապված է միմիայն ինտերնետ գովազդի հետ, բաց է թողնված մարքեթինգային ուսում-

նասիրությունների տեխնոլոգիաների կարևորությունը, ինչպես նաև համացանցում մրցակցային միջավայրի ուսումնասիրությունը և կարևորությունը: Այս և այլ բնորոշումները հնարավոր է միավորել և արդյունքում կստանանք, որ ինտերնետ մարքեթինգը իրենից ներկայացնում է համացանցում բիզնեսի զարգացմանը նպաստող միջոցառումների համալիր, այլ կերպ ասած՝ համացանցում իրականացվող ցանկացած մարքեթինգային գործունեությունն է: Հարկ է նշել այն հանգամանքը, որ սույն հայեցակարգը կարող է լինել դասական մարքեթինգի բաղադրիչ մասը կամ կարող է կիրառվել ինքնուրույն:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ ինտերնետ մարքեթինգը դա կազմակերպության մարքեթինգային նպատակներին հասնելու համար համացանցի՝ տեսական և գործնական հնարավորությունների կիրառումն է՝ վեբ-կայքի ու ինտերնետ գովազդի հնարավորությունների կիրառման միջոցով, ինչպես նաև սպառողների նախապատվությունների ստեղծման և շտկման միջոցով: Ինտերնետ մարքեթինգը մարքեթինգային գործունեության նոր տեսակ է, որն իր մեջ ներառում է ավանդական մարքեթինգի բաղադրիչներ և ֆունկցիաներ՝ գին, ապրանք, բաշխում և առաջմղում, սակայն, որոնց վրա հնարավոր է փոխազդել նոր գործիքակազմի կիրառմամբ և համաշխարհային համացանցում տեղեկատվական փոխանակման արագության մեծացմամբ [14, с. 73-79]: Այս նոր գործիքի առավելությունը ինտերակտիվությունն է: Ինտերնետ տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս սոցիալական ցանցերում ստեղծել վիդեոկոնֆերանսներ, չատեր, խմբեր: Այս ամենը հանգեցնում է լսարանի հետ առավել որակյալ հաղորդակցման, ինչպես նաև նպաստում է ծախսերի կրճատմանը [15], հետևաբար, նաև բացում է փոքր և միջին բիզնեսի համար նոր մարքեթինգային հնարավորություններ՝ դարձնելով ինտերնետ մարքեթինգը հանրային: Այս ամենի հետ մեկտեղ կարևոր է նաև վիրտուալ կապիտալի կարևորության ընդգծումը. մասնավորպես, վիրտուալ կապիտալի արդի կիրառումը, ձևավորումը ու զարգացումը: Ինտերնետ մարքեթինգ ուսումնասիրումը ցույց տվեց, որ կարևոր են նաև մարդկային գործոնը և այն հմտությունները, որոնցով պետք է օժտված լինեն ինտերնետ մարքեթոլոգները: Նախ առաջարկում ենք հմտու-

թյունները, որոնցով պետք է օժտված լինի լավ ինտերնետ մարքեթոլոգը, բաժանել երկու խմբի՝ տարրական հմտություններ և մասնագիտական:

Տարրական հմտությունների մեջ են դասվում.

- շփման հմտությունը. ինտերնետ մարքեթոլոգը իր աշխատանքային պարտականությունների կատարման շրջանակներում պետք է շփում ունենա այլ բաժինների հետ՝ տեղեկությունների փոխանցման ու ստացման նպատակով, այդ իսկ պատճառով կարևորում ենք հենց շփման հմտությունը:
- հեշտ ադապտացման հմտությունը. ըստ մեզ, ամենակարևորն այս հատկանիշն է, քանի որ հեշտ ադապտացման առկայությունն է թույլ տալիս հեշտ ու արագ արձագանքել տնտեսությունում և աշխարհում տեղի ունեցող փոփոխություններին: Covid-19-ի ի հայտ գալը ևս մեկ անգամ ապացուցեց, որ շահեցին այն կազմակերպությունները և ոլորտները, որոնք պատրաստ էին առցանց աշխատելուն և ունեին ճիշտ մարտավարություն, այսինքն՝ հեշտ ադապտացվում են ստեղծվող իրավիճակին:
- վերլուծական ու կրեատիվ մոտեցում. այս հատկանիշները կարևոր են ժամանակին մշակված ռազմավարությունում ճիշտ ուղղումներ կատարելու, կոնտենտի ստեղծման ժամանակ: Հատկանշական է նաև այն, որ ինտերնետ մարքեթոլոգը պետք է ունենա «կենդանի» պատկերացում:

Մասնագիտական հմտություններին են դասվում՝

- վերլուծական գործիքների տիրապետումը. կարևորվում է ոչ միայն վիճակագրության տվյալներ «կարդալու», այլ նաև այլ վերլուծական համակարգերից օգտվելու հմտությունները. օրինակ՝ Google Analytics, սոցիալական մեդիա մարքեթինգի վերլուծության տիրապետում:
- քոփիրայթինգը. ինքնուրույն տեքստերի գրագետ ստեղծում կամ ուղղումների իրականացում: Ինտերնետ մարքեթոլոգը պետք է հստակ հասկանա՝ ինչպես գրել տեքստը, որպեսզի բանալի բառերը կիրառվեն արդյունավետ:

- Թայմ մենեջմենթ. չի կարելի պատկերացնել որևիցե խնդրի ճիշտ ժամանակին լուծում, եթե այն բաժանված չէ փուլերի ու առանձնացված չէ նպատակը:

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ վերջին ժամանակներում ակտիվ կիրառվող ինտերնետ մարքեթինգը իրենից ու ներկայացնում է համացանցի տեսական և գործնական գործիքակազմի հավաքածու, որը օգնում է կազմակերպությանը իրականացնել իր առջև դրված մարքեթինգային նպատակները: «Ինտերնետ մարքեթինգ» եզրույթի ուսումնասիրման ժամանակ մենք կարևորում ենք նաև մարդկային ռեսուրսը: Կարծում ենք՝ տվյալ հոդվածի ուսումնասիրությունները և առաջարկները հնարավոր է կիրառել կազմակերպություններում՝ ինտերնետ մարքեթինգի գործունեության կատարելագործման, ինչպես նաև մարդկային ռեսուրսների հավաքագրման և պատրաստման հարցում:

## Օգտագործված գրականության ցանկ


1. Алексеев И.В. Теоретико методологические аспекты исследования категории «Интернет маркетинг»// Транспортное дело России. - №.3 С. 2014, с. 14-18
2. Халилов Д. Маркетинг в социальных сетях. М.: Манн, Иванов и Фербер, 2014, - с. 240
3. Eley B.,Tilley S. Online Marketing Inside Out. SitePoint Pty Ltd, 2009, p.21.
4. Chaffey D. Internet Marketing: Strategy, Implementation and Practice / F. Ellis-Chadwick, R. Mayer, K. Johnston // Pearson Education. 2006. – p.579
5. Vella L.,KesterJ. Handbook on E-marketing for tourism destination // World Tourism Organization and the European Travel commission: Madrid. – p. 21
6. Векшинский А.А., Тывин Л.Ф. Интернет маркетинг как новое направление в современной концепции маркетинга

взаимодействия // технико-технологические проблемы сервиса.- 2017.№2 - с.103

7. Китаева Е.О. Интернет -маркетинг – инструмент бизнес-пространства Интернета // Вестник МГУП.-2017.-№2.- с.66.
8. Баранов, А.Д, Прогноз возврата инвестиций в интернет маркетинг: Настольная книга маркетолога. Взгляд практика/А. Баранов, М.:ИЦ РИОР, 2017.-, с. 85
9. Юрасов А.В. Основы электронной коммерции.-М.: с.480
10. Успенский И.В. Интернет маркетинг: учеб. - Спб.: Изд-во СПГУЭиФ, 2013.- с. 420
11. Царев В.В., Кантарович А.А. Электронная коммерция. – СПб.: Питер, 2012. – с. 265
12. Холмогоров В. Интернет маркетинг: Краткий курс. Спб.: Питер, 2002. с. 272
13. Царев В.В., Кантарович А.А. Электронная коммерция. – СПб.: Питер, 2012. – с. 265
14. Старкова Н.О., Козырь Н.С. Обзор состояния и перспективы развития сферы электронной торговли России и мира// Экономика, социология, и право в современном мире: материалы 14-й Междунар. науч.- практ.конф.- Пятигорск, 2012
15. Старкова Н.О., Костарева А.М. Применение вирусного маркетинга в деятельности современных предприятий//Научная дискуссия: вопросы экономики и управления: материалы VII международной заочной научно-практической конференции. Часть II.-М.-, 2012.-с.73-79.

## ОПРЕДЕЛЕНИЕ И РАЗЪЯСНЕНИЕ ТЕРМИНА ИНТЕРНЕТ МАРКЕТИНГ

**Елена Карапетян**
ЕУ, кафедра Управления, аспирант

Современное изучение понятия “интернет-маркетинг” в последние годы изменило свой вектор – с теоретического аспекта на практический. Все это обусловлено изменениями экономической среды, появлением цифровой экономики и технологическим прогрессом. Понятие “интернет-маркетинг“ требует модернизации, осовременивания для более четкого понимания всей цепочки действий технологической среды. Данная статья носит теоретический, фундаментальный характер, суть которой состоит в более четком и, для данного промежутка времени, актуальном определении “интернет маркетинга”. Перед нами стоит задача, анализировав разные научные подходы к понятию “интернет-маркетинга”, выбрать наиболее актуальный. Научная новизна исследования состоит в теоретическом обосновании понятия, а актуальность - в отсутствии четкого определения.

**Ключевые слова:** интернет, интернет-маркетинг, реклама, информационные технологии, инструментарии интернет-маркетинга.

## DEFINITION AND CLARIFICATION OF THE TERM INTERNET MARKETING

**Yelena Karapetyan**
EU, Chair of Management, Postgraduate Student

Recent analysis of the term of Internet marketing has changed its direction – from theory to practice. All this is due to changing the economic environment, shaping of the digital economy and technological progress. The term Internet marketing requires upgrading and

reconstruction in order to make entire process of the technological environment more understandable.. This article is of theoretical, fundamental nature. Its purpose is to identify more relevant and actual terms of Internet marketing. The challenge at hand lies in analyzing various scientific approaches and giving the most up to date one. The scientific novelty of the article is in theoretical substation of the term, and the relevance is accounted for by the absence of a clear definition.

**Keywords:** Internet, internet marketing, advertising, information technology, Internet marketing tools

*Տրվել է տպագրության՝ 06.09.2021թ.*
*Գրախոսվել է՝ 01.12.2021թ.*

# NEW APPROACH TO FOOD SAFETY BY CREATION OF CHAIN OF OWNERSHIP ON BLOCKCHAIN

***Hamidreza Mahjoub***
*EU, Chair of Management, Researcher*
*mahjub@gmail.com, +374 93 914873*

***Since the data is protected, no one can change it in the blockchain, the supply chain accountability mechanism becomes completely reliable.***

*Achieving food safety goals can be more realistic and feasible by usage of blockchain technology and Internet of Things. Combination of blockchain technology and IoT devices is the key factor to reaching this goal. Blockchain provides tamper-proof, permanent and reliable data which is chronological and IoT device detects risky events in different phases of food production in their time of occurrence and sends them to the blockchain. IoT smart sensors can detect environmental data which can be considered hazardous and send them at the time of measurement to the smart contract which chronologically registers those events inside its database. At the same time, by a mechanism that named by us as "chain of ownership of a product", during its pathway of production, which keeps the real owner of a specific product at each time or step of production in supply chain, smart contract will identify and register the real responsible actor for the measured fault. Since the data is secure and nobody can change it inside blockchain ledger, the mechanism of creation of accountability in supply chain will be completed. Accountable actors in supply chain do their best in provision of food quality and safety and this in turn, enhances the whole quality and safety inside the supply chain.*

***Keywords:*** *Blockchain, Smart Contract, HACCP, Food Safety, Wireless Sensor Network, Internet of Things, Chain of Ownership.*

**Research Results**

One of the most prominent standards in food safety is HACCP, Hazard Analysis and Critical Control Point, which is an internationally approved preventive approach to food safety [1]. It mainly designed to identify, control and reduce chemical, biological and physical hazards for finished foods in the consumer hand. Because these hazards can happen in any stage of production of food which are provision, production, manufacturing, distribution, warehousing, retailing, consumption and certification, sufficient control should be applied in all of these stages to control hazard by this control system. In other words, all parties of the supply chain should collaborate to control food-borne hazards by mean of HACCP standard and to achieve food safety management system (FSMS[1]).

Based on definition by International Organization for Standardization, ISO 22000, Food Safety Management System is a combination of HACCP principles with three other elements including interactive communication, system management and prerequisite programs [2]. Based on these regulated principles and operations, there are popular hazards in handling safe food and hygiene, which are critical to inspect and manage by FSMS. We gathered most important ones of these hazards in table 1.

**Table 1: Principles and Hazards Involved in Food Safety Management System[2]**

| Probable Hazards [3]: |
|---|
| 1. Non-standard and extra use of chemical pesticides, fertilizers and other chemical substances in food production. |
| 2. Contaminated drinking and irrigation water in food production. |
| 3. Quality of soil, air and light in production process. |
| 4. Improper field practices. |
| 5. Inferior raw materials in both production and processing. |

[1] Based on the definition of ISO22000 in food industry.

[2] Composed by author, data from ISO 22000 and the reference pointed out inside table.

6. Excessive chemical and natural additives in food processing.
7. Improper processing environment parameters like temperature, infections, equipment.
8. Improper processing factory practices.
9. Warehouse environmental bad conditions, including cold storage, temperature, and humidity.
10. Improper warehouse management
11. Transportation environment like cold chain violation, temperature, humidity and location
12. Retailer bad environment conditions like refrigeration, light, temperature and humidity
13. Retailer bad practices like products lifetime check, replace expired foods.

One of the biggest technology achievements that helps determination of deviations from standards in hazard critical control and measurements (and even corrective actions in the case of deviation) is smart agriculture. There are different types of technologies to achieve the goal of making agriculture smart. Some of them are Internet of Things devices like RFID, wireless sensor networks (WSN) and GPS. There are also other types of IoT devices that have low power wide area capability (LPWAN). These devices are infrastructure-less devices that can monitor physical and environmental conditions and are widely used in supply chain traceability systems [4]. The technology in this area is fast growing and its target is to eliminate, as much as it can, the intervention of human in event recording and monitoring data creation. On the other hand, they can operate and make correction operations or managerial operations on a specific pre-defined way. The usage of these devices eliminates manual recording and verifications requirements that were previously done by human manually. By this method, there would not be any opportunity for human intervention, error or tampering information related to safety management.

Usage of sensors and IoT devices can guarantee authentic data generation but what if data after recording in databases change by fraudulent actors, corruption, fraud or other reasons. Actors that are responsible for bad actions can intervene and change or eliminate those

data in central systems. Therefore, to complete the target of IoT devices in smart agriculture, the data should be kept in blockchain. By this way, the party that involved bad action at the time of data generation becomes responsible and of course cannot escape from it.

Here we want to introduce our proposal to use blockchain composed by smart sensors and IoT devices to monitor food safety risks. IoT devices can acts as an identified and authenticated actor, like other actors in blockchain that have authorization to input data into the blockchain or get orders and commands from the blockchain. Depending to the type of environmental data and step of supply chain, data can be generated in specific events, as if a deviation happened, or regularly on a fixed periodic time. The best way to keep responsible actor of an event, in each stage of supply chain, the data of sensors that enter in the profile of product inside blockchain should be assigned to the owner of that product at that specific time. On the other hand, the smart contract should be programmed the way that when product transfers from one party to the other party, its ownership would be updated inside the smart contract to the new party. By this way, we can keep the trajectory of partnerships throughout the supply chain and connect each bad event to the correct party. We call this method of track of ownership of a product from start to the end of process of supply as “chain of ownership”. This chain with the help of smart contract time stamp record of events makes all parties throughout of supply chain accountable and responsible for their quality of operation in supply chain.

As we discussed above, risky events are recorded by the mean of smart contract decentralized ledger, which knows current owner of the product under supply at each time it gets data from related smart sensor. Therefore, trace of malfunctions of supply chain actors that are reported by IoT devices and kept inside blockchain will be straightforward (see figure 1).

**Figure 1: Conceptual Method of Usage of IoT Devices on Blockchain-Based Supply Chain[3]**




We should also mention that smart contract should be implemented the way that in all split or merge of product in processing and manufacturing steps, the integrity of ownership with the split or merged data should be preserved. By this mean, the connection between violated sensors data and owner of product at the time of violation in processing steps can also be kept inside smart contract.

Here we discuss some of the most important hazards of food safety mentioned in table 1 that can be detected by IoT devices in different stages of food supply as examples of all of the hazards mentioned in the table. The only differences to manage and monitor these hazards are type and function of sensors or IoT devices. The idea would be as IoT devices automatically record environmental data on product's current owner profile in blockchain for future trace and probable future managerial correction operations.

---

[3] Composed by author, as a proposal to connect blockchain to its external environment to facilitate and empower traceability system by making supply chain actors accountable and responsible.

**Chemicals and pesticides quality and quantity monitoring:**

There are many types of electrochemical sensors and electrochemical biosensors with the techniques like electrochemical, optical, Nano-colorimetric, piezoelectric, chemo-luminescent and fluorescent that can detect the type and amount of pesticides in agricultural fields [5]. The main biosensor types that work in the field of pesticide detections are Enzymatic, aptasensors, biological and immune sensors [6]. The type and method of pesticide detection is beyond the scope of this article and depending to the food supply chain, it can be inspected more. Gathered data from this sensing can be aggregated in a final sink node. This sink node is identified by smart contract, which means it can send result of pesticides monitoring data to the blockchain. Data can be provided daily, weekly, or even just on the case of problematic situation inside the field's pesticide situations. The result or deviation from standards would be belong to the owner of product at the time of measurement, which is mainly the farmer, breeder or cultivator of food who provide products for processors or manufacturers.

**Irrigation water quality monitoring:**

One of the biggest elements in providing quality in food production and food safety is healthy water. There is a range of technologies for real time inspection of water quality [7]. Among them are molecularly imprinted polymers and chemical sensors that can accurately detect certain water pollutants. These type of sensors can be connected wirelessly and work based on WSN systems. Data of all sensors that spread throughout the provision field can be aggregated in a final node, which is the one that connects to blockchain. Therefore this final node (sink node) can be the source of water healthiness data on the blockchain and register probable deviation from standards or possible contaminations directly into product owner's profile in smart contract (see figure 2).

For all of these smart sensors, smart contract can easily assign the responsible actor for the received data by just easily check the time of

receiving sensor data. Whoever who is owner of the product at the time of receiving of data, would be the owner of data and therefore is responsible for that data. This mechanism is very easily implementable and can be considered as my novelty in providing accountability and traceability in supply chains.

**Figure 2: food safety water contamination monitoring[4]**




**Other environmental hazard monitoring**

For all other food safety hazards monitoring, the base of measurement would be the same as what we offered for pesticides and water pollutants. A collection of sensors or IoT device that work based on WSN network will gather related environmental data and will send it to a sync node, which is identified by smart contract. The sink node sends pure monitoring data to the smart contract that record it with its timestamp and

[4] Composed by Author. Author proposal for usage of smart sensors in smart contract to provide accountability and realization of food safety in water healthiness monitoring.

at the same time know to whom this data belongs at that time. Because in each step of supply chain, ownership of products precisely changes to the current actor of products (chain of ownership), this mechanism will simply can provide an accountability system inside supply chain that complement traceability system. As a final example, in cold chain transportation system, an aggregation of temperature, humidity, light and GPS sensors regularly or in the case of violation from standards, will sent info to the sink node which is again connects to smart contract and register the environmental data directly in the profile of product owner at that time.

**References:**

1. Pal, Mahendra & Aregawi, Weldegebrial & Singh, Raj. (2016). the role of Hazard Analysis Critical Control Point in food safety. Beverage and Food World. Volume 43. Page 33, pp. 33-36.
2. https://www.iso.org/files/live/sites/isoorg/files/news/magazine/ISO%20Focus%20(2004-2009)/2005/ISO%20Focus,%20December%202005.pdf.
3. Lin, Jun & Shen, Zhiqi & Zhang, Anting & Chai, Yueting. (2018). Blockchain and IoT based Food Traceability for Smart Agriculture. Page 5, pp. 1-6. DOI: 10.1145/3265689.3265692.
4. Tian, Feng. (2017). A supply chain traceability system for food safety based on HACCP, blockchain & Internet of things. Page 2, pp. 1-6. DOI: 10.1109/ICSSSM.2017.7996119.
5. Zamora-Sequeira, Roy & Starbird, Ricardo & Rojas-Carillo, Oscar & Vargas, Seiling. (2019). What are the Main Sensor Methods for Quantifying Pesticides in Agricultural Activities? A Review. Molecules (Basel, Switzerland). Volume. 24(14). Pages 1, 3-8, pp. 1-26. DOI: 10.3390/molecules24142659.
6. Pérez Fernández, Beatriz & Costa-García, Agustín & de la Escosura-Muñiz, Alfredo. (2020). Electrochemical (Bio) Sensors for Pesticides Detection Using Screen-Printed Electrodes. Biosensors. Volume 10(4) 32. Page 2, pp. 1-26. DOI: 10.3390/bios10040032.

7. Yaroshenko, Irina & Kirsanov, Dmitry & Marjanovic, Monika & Lieberzeit, Peter & Korostynska, Olga & Mason, Alex & Frau, Ilaria & Legin, Andrey. (2020). Real-Time Water Quality Monitoring with Chemical Sensors. Sensors. Volume 20. Pages 1 and 4, pp. 1-22. DOI: 10.3390/s20123432.

## ԲԼՈՔՉԵՅՆՈՒՄ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՂԹԱ ՍՏԵՂԾԵԼՈՎ՝ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

**Համիդռեզա Մահջուբ**
ԵՀ, Կառավարման ամբիոն, հայցորդ

Սննդամթերքի անվտանգության նպատակներին հասնելը կարող է ավելի իրատեսական և իրագործելի լինել՝ օգտագործելով blockchain տեխնոլոգիան: Blockchain- ը տրամադրում է խափանումներից զուրկ, մշտական և հուսալի տվյալներ, որոնք ժամանակագրական են: Դրանով իսկ հայտնաբերվում են սննդամթերքի արտադրության տարբեր փուլերում ռիսկի դեպքեր և դրանք ուղարկվում բլոկչեյն: Բացահայտվում են վտանգավոր համարվող բնապահպանական տվյալները և դրանց չափման և ճանաչման պահին կցվում են «խելացի պայմանագրին», որը ժամանակագրորեն գրանցում է այդ իրադարձությունները իր տվյալների շտեմարանում: Միևնույն ժամանակ, «խելացի պայմանագիր»-ը բացահայտում և գրանցում է բացասական իրողությունների իրական պատասխանատու դերակատարներին: Քանի որ տվյալները ապահով են, և ոչ ոք չի կարող դրանք փոխել բլոկչեյն-գրքում, մատակարարման շղթայում հաշվետվողականության ստեղծման մեխանիզմը դառնում է լիարժեք և հուսալի:

***Հիմնաբառեր.*** բլոկչեյն, «խելացի պայմանագիր», HACCP, սննդի անվտանգություն, անլար կապի ցանց, իրերի համացանց, սեփականության շղթա:

# НОВЫЙ ПОДХОД К БЕЗОПАСНОСТИ ПИЩЕВЫХ ПРОДУКТОВ ПУТЕМ СОЗДАНИЯ ЦЕПОЧКИ ВЛАДЕНИЯ НА БЛОКЧЕЙНЕ

**Хамидреза Махджуб**
ЕУ, кафедра Менеджмента, соискатель

Достижение целей в области безопасности пищевых продуктов может быть более реалистичным с использованием технологии блокчейн. Блокчейн предоставляет непрерывные, последовательные и надежные данные в хронологическом порядке. Это выявляет случаи риска на разных этапах производства продуктов питания и отправляет их в блокчейн. При этом выявляются рисковые данные об окружающей среде и прикрепляются к «умному контракту» во время их измерения и распознавания, что и хронологически записывается в базу данных. В то же время идентифицируется «смарт-контракт» и регистрируются игроки, ответственные за неисправности. Поскольку данные защищены, никто не может изменить их в цепочке блоков, механизм подотчетности цепочки поставок становится полностью надежным.

***Ключевые слова:*** блокчейн, смарт-контракт, HACCP, безопасность пищевых продуктов, беспроводная сенсорная сеть, интернет-вещи, цепочка владения.

*Տրվել է տպագրության՝ 02.10.2021թ.*
*Գրախոսվել է՝ 17.12.2021թ.*

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

***Գոռ Չափինյան***
*ՀՀ ՊԿԱ, տնտ.թ., դոցենտ*
*ggch@mail.ru, +374 91 413903*
***Մհեր Վարդանյան***
*ՀԱՀ, Համակարգչային և տեղեկատվական*
*գիտության մագիստրոս*
*mher.vardanyan.g@gmail.com, +374 55 990028*

*Սույն հետազոտության նպատակն է հանդիսացել ուսումնասիրել ֆինանսական զարգացման և տնտեսական աճի փոխկապվածությունը Հայաստանի Հանրապետությունում, օգտագործելով 1993-2019 թվականների ժամանակահատվածի ժամանակային շարքերի տվյալները: Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի և Ազգային վիճակագրական կոմիտեի տվյալների բազաներում առկա տվյալների հիման վրա ուսումնասիրվել են ՀՀ ֆինանսական համակարգի զարգացման վիճակը և միտումները: Այնուհետև դիտարկվել է ֆինանսական զարգացման և տնտեսական աճի փոխկապվածությունը: Բացահայտվել է, որ ֆինանսական զարգացման ՀՀ-ի համաթվի վրա բացասական ազդեցություն է ունեցել ֆինանսական շուկաների ենթահամաթիվը: Ֆինանսական շուկաների բոլոր հարաչափերով (խորություն, հասանելիություն և արդյունավետություն) անցած երեք տասնամյակում, որոշ բացառություններով, նշանակալի տեղաշարժեր չեն արձանագրվել, իսկ շուկաների արդյունավետության համաթիվը դեռ երբեք չի բարձրացել զրոյական մակարդակից: Կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծությամբ ստացված տվյալները վկայում են, որ Հայաստանում ֆինանսական զարգացման համաթվի և տնտեսական աճի միջև անմիջական փոխկախվածություն գոյություն չունի. ուսումնասիրված իրավիճակում նորմալացված ՀՆԱ-ի ընդհանուր փոփոխականության 3.1%-ն է բացատրվում ֆինանսական զարգացման, ֆինանսական հաստատությունների զարգացման և ֆինանսական շու-*

*կաների զարգացման համաթվերով: Կապիտալի շուկան, ըստ էության, չի ֆինանսավորում զարգացումը: Առաջնահերթ է դիտարկվել ֆինանսական շուկայի խորության և հասանելիության բարելավումը, ինչով հնարավոր կլինի հասնել ոչ միայն բուն ֆինանսական համակարգի զարգացման նպատակներին, այլև կառաջանան ներքին խնայողությունների մոբիլիզացման լրացուցիչ հնարավորություններ, որոնք անհրաժեշտ են կայուն և փևական աճի ռեսուրսային ապահովման համար:*

***Հիմնաբառեր.*** *ֆինանսական զարգացում, ֆինանսական հասփափություններ, ֆինանսական շուկաներ, ֆինանսական զարգացման համաթիվ, ֆինանսական ինփեգրում, փնփեսական աճ:*

**Ներածություն:** Ֆինանսական զարգացումը ներառում է ֆինանսական համակարգի այնպիսի ծառայությունների բարելավումներ, ինչպիսիք են՝ հնարավոր ներդրումների մասին ակնկալվող տեղեկատվության թողարկումը, ներդրումների մշտադիտարկումը և կորպորատիվ կառավարման իրականացումը՝ ֆինանսավորումը տրամադրելուց հետո, ռիսկերի դիվերսիֆիկացումը և կառավարումը, խնայողությունների մոբիլիզացումը և համախմբումը, ապրանքներ և ծառայություններ փոխանակումը [10, p. 870]: Այս ֆինանսական գործառույթներից յուրաքանչյուրը կարող է ազդել խնայողությունների և ներդրումային որոշումների, հետևաբար՝ տնտեսական աճի վրա: Ֆինանսներն ազդում են հիմնական և մարդկային կապիտալի կուտակման, ըստ էության, ընդհանուր արտադրողականության երեք գործոնների վրա, որոնք պայմանավորում են տնտեսական աճը[20, p.4]:

Գոյություն ունի տեսական հիմնավոր ենթադրություն, որ ֆինանսական հատվածի զարգացումը մեծացնում է ոչ միայն աճի օգուտները՝ կապված ֆինանսական գլոբալացման հետ, այլև նվազեցնում ճգնաժամերի նկատմամբ խոցելիությունը: Ակնհայտորեն՝ զարգացած ներքին ֆինանսական շուկաները և հաստատությունները գործիք են արտաքին ֆինանսական հոսքերի արդյունավետ տեղաբաշխման համար մրցակցող ներդրումային նախագծերի միջև: Նմանապես՝ դրանք կարևոր են ներքին խնայողությունները համախմբելու և տնտեսու-

թյան զարգացման համար անհրաժեշտ ներդրումների փոխակերպելու տեսանկյունից: Ֆինանսական զարգացումն ուղղակիորեն ազդում է նաև ֆինանսապես բաց տնտեսություններում մակրոտնտեսական կայունության վրա: Կապիտալի հոսքերում ուղղության հանկարծակի փոփոխությունները հակված են առաջացնել կամ խորացնել վերելքանկման պարբերաշրջանները զարգացող երկրներում, որտեղ բացակայում են խորը և արդյունավետ գործող ֆինանսական հատվածներ [3; 6]: Ասվածի ապացույց կարող է հանդիսանալ Հայաստանի օրինակը: 2020 թվականին, COVID19 համավարակը խիստ ազդեցություն ունեցավ ՕՈՒՆ-երի համաշխարհային հոսքերի վրա. բացի 35 տոկոսով նվազելուց, նշանակալի նվազեց զարգացող երկրներ դրանց ներհոսքը, ինչը հանգեցրեց նախատեսված ներդրումային նոր նախագծերի չեղարկմանը (22, p. x): Հայաստանում այդ միտումը դրսևորվեց ավելի նշանակալի. ՕՈՒՆ-երի ներհոսքը նվազեցին 54%-ով [22, p. 251], տնտեսական անկումը կազմեց 7.6%, այն դեպքում, երբ համաշխարհային տնտեսության անկումը եղել է 3.4%, միջինից բարձր եկամտով երկրների խմբինը՝ 0.6%, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի երկրների միջինը՝ 1.5% [23]:

Նկատի ունենալով այն, որ ՀՀ-ում ցածր է համախառն խնայողությունների մակարդակը, իսկ կապիտալի շուկան՝ թերզարգացած, ապա առաջանում են համախառն կապիտալի կուտակման ֆինանսավորման խնդիրներ: Հետևաբար, համավարակի հարուցած ճգնաժամի հաղթահարելը և վերականգնողական աճ ապահովելը, ֆինանսական հատվածի թերզարգացվածության պայմաններում, ավելի բարդ կլինի:

Ֆինանսական գլոբալման բոլոր դժվարություններով Հայաստանն արդեն անցել է, սակայն դեռևս չեն հաղթահարվել ֆինանսական զարգացման հիմնախնդիրները, որոնք բարձրացնում են արտաքին շոկերի նկատմամբ երկրի տնտեսության խոցելիության աստիճանը, խոչընդոտում կայուն և տևական տնտեսական աճին: Հետևաբար, առկա ֆինանսական հատվածի զարգացման խնդիրների նույնականացումը և դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների մշակումը մնում է հրատապ:

**Գրականության ակնարկ**: Տնտեսագետները տարբեր, երբեմն հակադիր կարծիքներ են ունեցել տնտեսական աճի համար ֆինանսական համակարգի կարևորության առնչությամբ, սկսած XIX դարից:

Ըստ Ուոլտեր Բեյջհոտի [5] և Ջոն Հիքսի [7], ֆինանասկան համակարգը որոշիչ դեր է խաղացել Անգլիայում արդյունաբերականացման խթանման մեջ՝ նպաստելով «հսկայական աշխատանքների» համար կապիտալի կուտակմանը:

Յոզեֆ Շումպետերը [19, p. 127], կապիտալի շուկան դիտարկելիս նկատել է. «...փողի կամ կապիտալի շուկայի գլխավոր գործառույթը վարկային առևտուրն է՝ զարգացման ֆինանսավորման նպատակով: Զարգացումը ստեղծում և սնուցում է այդ շուկան: Զարգացման ընթացքում այն ձեռք է բերում ևս մեկ, այսինքն՝ երրորդ, գործառույթը. դառնում է եկամտի բուն աղբյուրների շուկա»:

Ըստ Հիքսի [7, pp. 143-145], արդյունաբերական հեղափոխության առաջին տասնամյակում թողարկված արտադրանքը հայտնագործված է եղել ավելի վաղ, սակայն այդ հայտնագործություններից շատերը պահանջում էին կապիտալի խոշոր ներարկումներ և երկարաժամկետ ներդրումներ: Կարևորագույն բաղադրիչը, որը բոցավառեց 18-րդ դարի Անգլիայի աճը, կապիտալի շուկայի իրացվելիությունն էր: Այդ առումով Վալերի Բենչիվենգը և ուրիշներ [Bencivenga, V., Smith, B.. Starr, R., 1996, p.243], բավական դիպուկ նկատել են. «Արդյունաբերական հեղափոխությունը պետք է սպասեր ֆինանսական հեղափոխությանը...»

Անդրադառնալով տնտեսության մեջ ֆինանսական միջնորդների դերակատարությանը, Ռոբերտ Քինգը և Ռոսս Լևինը [9, pp. 156-89] նկատել են. «Բացի լավագույն արտադրական տեխնոլոգիաները բացահայտելուց, ֆինանսական միջնորդները կարող են նաև բարձրացնել տեխնոլոգիական նորարարության տեմպերը՝ բացահայտելով այն ձեռնարկատերերին, որոնք ունեն նոր ապրանքները և արտադրական գործընթացները հաջողությամբ ներդնելու լավագույն հնարավորությունը»:

Ջերեյ Վուրգլերը, զարգացած ֆինանսական հատվածով 65 երկրների ուսումնասիրությամբ ստացված արդյունքների հիման վրա

եզրակացրել է, որ «ֆինանսապես զարգացած երկրները ավելի են մեծացնում ներդրումներն իրենց աճող ոլորտներում և ներդրումներն ավելի կրճատում անկում ապրող ոլորտներում» [21, p.188]:

Անորոշությունների այս ժամանակաշրջանում բավական համոզիչ է թվում Ռոբերտ Մերտոնի և Զվի Բոդիի [14, p. 12] հետևյալ նկատառումը. «Առաջանալով գործարքային և տեղեկատվական ծախսերը նվազեցնելու համար, ֆինանսական համակարգերն իրականացնում են մի գլխավոր գործառույթ. նրանք անորոշ միջավայրում նպաստում են ժամանակի և տարածության մեջ ռեսուրսների տեղաբաշխմանը»: Ռոսս Լևինն [11, p.6] այդ գլխավոր գործառույթը տրոհել է հետևյալ հիմնական գործառույթների. առևտրի, հեջավորման, դիվերսիֆիկացման և ռիսկերի համախմբման դյուրացում, ռեսուրսների տեղաբաշխում, մենեջերների մշտադիտարկում և կորպորատիվ վերահսկողության իրականացում, խնայողությունների մոբիլիզացում, ապրանքների և ծառայությունների փոխանակման դյուրացում:

Որոշ հրապարակումներում հանդիպում են նաև հակառակ կարծիքներ ֆինանսկանա համակարգի առնչությամբ: Այսպես, օրինակ, Ջոան Ռոբինսոնը [15] հակառակ կարծիքին է և գտնում է, որ «ձեռնարկությունն ուր առաջնորդում է, ֆինանսները հետևում են նրան»: Այս տեսանկյան համաձայն, տնտեսական զարգացումն առաջացնում է որոշակի ֆինանսական մեխանիզմների առաջարկ, իսկ ֆինանսական համակարգն ինքնաբերաբար արձագանքում է այդ պահանջներին:

Ռոբերտ Լուկասը [12, p. 6], «Տնտեսական զարգացման մեխանիկայի մասին» հոդվածում նշում է. «ես համարում եմ, որ ֆինանսական հարցերի դերը գերագնահատված է...քանի որ ֆինանսական հաստատությունների զարգացումը սահմանափակ գործոն է, ընդհանուր առմամբ, զարգացման մեջ»:

Այհան Կոսեն և ուրիշները [8, pp.8-9] համապարփակ գնահատել են զարգացող երկրներում աճի և անկայունության վրա ֆինանսական գլոբալացման ազդեցության փորձառական տվյալները և հանգել են հետևյալ եզրակացության. «Առայժմ դժվար է գտնել այն ենթադրության հուսալի ապացույցներ, որ ֆինանսական ինտեգրումն օգնում է

զարգացող երկրներին՝ բարելավել աճը և նվազեցնել մակրոտնտեսական կայունությունը:..ըստ այդ հարաչափերի՝ համոզիչ ապացույցների բացակայությունը պարտադիր չի նշանակում, որ ֆինանսական գլոբալացումն օգուտներ չի բերում, այլ բերում է միայն ռիսկեր…երկրների մեծ մասը, սկսելով ֆինանսական ինտեգրումը, շարունակել են գնալ այդ ուղիով, չնայած ժամանակավոր դժվարություններին»:

Ֆինանսական ինտեգրման և տնտեսական քաղաքականության միջև կապի բարդ լինելով է պայմանավորված եղել անցումային տնտեսությամբ երկրներում ֆինանսական համակարգերի զարգացման առնչությամբ միջազգային հաստատությունների երբեմն ոչ իրատեսական խորհրդատվություններով, ինչի արդյունքում զարգացող և անցումային տնտեսությամբ որոշ երկրներում, այդ թվում Հայաստանում, կապիտալի շուկայի և ֆինանսական հաստատությունների զարգացման մի շարք հիմնախնդիրներ դեռևս մնում են չհաղթահարված: Որոշ հրապարակումներում հանդիպում են նկատառումներ և առաջարկություններ դրանցից մի քանիսի վերաբերյալ: Այսպես, օրինակ, համարվում է, որ գրավադրմամբ ապահովվածության ներքին և միջազգային սահմանափակումները կարող են կարևոր դեր խաղալ հատկապես ֆինանսապես թերզարգացած տնտեսություններում, որտեղ անկախ ֆինանսավորման հասանելիությունը սահմանափակ է: Մի շարք հետազոտողներ [6; 4; 13] ցույց են տալիս, թե այս սահմանափակումներն ինչպես կարող են հանգեցնել կապիտալի հետ գործառնությունների հաշվի ազատականացման անկանխատեսելի, իսկ երբեմն՝ անբարենպաստ հետևանքների: Ավելին, ներքին ֆինանսական հատվածի ոչ համարժեք կամ սխալ կառավարվող ազատականացումը հանդիսացել են ֆինանսական ինտեգրման հետ կապված ճգնաժամերի հիմնական գործոններից մեկը: Այս առումով, նոբելյան մրցանակի դափնեկիր Յոզեֆ Ստիգլիցը [16, p. 10], անդրադառնալով, վեճերի առարկա դարձած, գլոբալացման որոշ կողմերին, համարել է, որ կապիտալի շուկաների ազատականացումն առաջացող շուկայական տնտեսություններում, որն առաջ են մղել միջազգային հաստատությունները, կհանգեցնի տնտեսական կոլապսի: Միաժամանակ, Ստիգլիցը և Վայսը [17, pp. 912-927] գտնում են, որ լավ զարգա-

ցած ֆինանսական շուկան տնտեսության խնայողություններն ուղղորդում է դեպի շահավետ ներդրումներ: Փաստորեն, Ստիգլիցը, իրավացիորեն, ֆինանսական ինտեգրման գլխավոր նախադրյալը համարում է ինտեգրվող տնտեսության ֆինանսական հատվածի զարգացման մակարդակը:

Ռոսս Լևինը [11, p.2], երեք տասնամյակ առաջ կատարված իր ընդարձակ հետազոտության արդյունքում եզրակացրել է. «Տեսական և փորձառական աշխատանքների աճող ծավալը նույնիսկ թերահավատներին կմղի այն համոզմունքին, որ ֆինանսական շուկաների և հաստատությունների զարգացումը աճի գործընթացի որոշիչ և անքակտելի մասն է, կստիպի հրաժարվել այն կարծիքից, թե ֆինանսական համակարգը երկրորդական զբաղմունք է, որը պասիվորեն արձագանքում է տնտեսական աճին և արդյունաբերականացմանը»:

**Հետազոտության մեթոդաբանություն:** Նախքան ֆինանսական զարգացման տնտեսական աճի միջև փոխկապվածության դիտարկելը, անդրադարձ է կատարվել ՀՀ ֆինանսական զարգացման միտումներին, ընթացիկ վիճակին: Տասնամյակներ շարունակ գրականության մեծ մասը ֆինանսական զարգացումը ներկայացրել է ֆինանսական խորության երկու չափորոշիչներով.մասնավոր հատվածին տրամադրված վարկեր/ՀՆԱ հարաբերակցություն, ավելի պակաս չափով՝ արժեթղթերի շուկայական կապիտալացումը: Հաշվի առնելով այն, որ ժամանակի ընթացքում ֆինանսական հատվածները զարգացել են ամբողջ աշխարհում և դարձել բազմակողմանի, իսկ ֆինանսական համակարգերի զարգացումը՝ բազմաչափ գործընթաց, Արժույթի միջազգային հիմնադրամի փորձագետները, զարգացման առանձին ցուցիչների թերությունները հաղթահարելու նպատակով, ստեղծել են մի շարք համաթվեր, որոնք ամբողջացնում են ֆինանսական հաստատությունների և ֆինանսական շուկաների զարգացվածության պատկերը՝ խորության, հասանելիության և արդյունավետության տեսանկյունից: Մշակվել է ֆինանսական զարգացման համաթիվ, որի բուրգային կառուցվածքը ներկայացված է աղյուսակ 1-ում [20, p. 5]: Ֆինանսական համակարգի տարբեր կողմերն արտացոլելու համար ընտրված հիմնական ցուցանիշների հավաքածուն ներկայացված է աղյու-

սակ 2-ում: Սույն հետազոտության նպատակից ելնելով, նախ, ըստ աղյուսակ 1-ում ներկայացված համաթվերի, գնահատվել է ՀՀ ֆինանսական համակարգի զարգացման մակարդակը, այնուհետև կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծությամբ փորձ է արվել գնահատել տնտեսական աճի վրա ֆինանսական համակարգը բնութագրող համաթվերի ազդեցության աստիճանը: Նկատի ունենալով այն, որ ՀՀ ֆինանսական զարգացման համաթվերի հաշվարկը սկսվում է 1993 թվականից, օգտագործվել են Արժույթի միջազգային հիմնադրամի տվյալների բազայում առկա 1993-2019թթ. ժամանակահատվածի ժամանակային շարքերի տվյալները: Սույն հետազոտությունը դիտարկվել է չորս փոփոխական. նորմալացված ՀՆԱ (NGDP), ֆինանսական զարգացման համաթիվ (FD), ֆինանսական հաստատությունների համաթիվ (FI), Ֆինանսական շուկաների համաթիվ (FM): Տվյալների հավաքածուում բոլոր փոփոխականները նորմալացված են: Կախյալ փոփոխականը նորմալացված ՀՆԱ-ն է: Ելնելով վերոնշյալից, բազմակի ռեգրեսիայի հավասարումը կունենա հետևյալ տեսքը. $\mathrm{NGDP}_t = \mathrm{b}_0 + \mathrm{b}_1\mathrm{FD}_t + \mathrm{b}_2\mathrm{FM}_t + \mathrm{b}_3\mathrm{FI}_t + \mathrm{e},\ , t = \overline{1, n}$

*Աղյուսակ 1*

**Ֆինանսական զարգացման համաթվի բուրգը**

| Ֆինանսական զարգացում FD | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ֆինանսական հաստատություններ FI | | | Ֆինանսական շուկաներ FM | | |
| Խորություն FI | Հասանելիություն FIA | Արդյունավետություն FIE | Խորություն FMD | Հասանելիություն FM | Արդյունավետություն FME |

*Աղյուսակ 2*

**Ֆինանսական համակարգը բնութագրող հիմնական ցուցանիշները**

| ***Ֆինանսական հաստատություններ*** | |
|---|---|
| **Խորություն** | Մասնավոր հատվածին տրամադրված վարկեր/ ՀՆԱ |
| | Կենսաթոշակային ֆոնդի ակտիվներ/ՀՆԱ |
| | Փոխադարձ հիմնադրամի ակտիվներ/ՀՆԱ |
| | Ապահովագրավճարներ (կյանքի և ոչ կյանքի ապահովագրություն)/ ՀՆԱ |
| **Հասանելիություն** | Բանկի մասնաճյուղեր, 100,000 մեծահասակների հաշվով |

| | |
|---|---|
| | Բանկոմատներ 100,000 մեծահասակների հաշվով |
| **Արդյունավետություն** | Զուտ տոկոսային մարժա |
| | Վարկավորում-ավանդների սփրեդ |
| | Ոչ տոկոսային եկամուտ/ընդհանուր եկամուտ |
| | Ընդհանուր ակտիվների ընդհանուր ծախսեր |
| | Ակտիվների եկամտաբերություն |
| | Սեփական կապիտալի եկամտաբերություն |
| ***Ֆինանսական շուկաներ*** | |
| **Խորություն** | Ֆոնդային շուկայի կապիտալացում/ՀՆԱ |
| | Բաժնետոմսերի վաճառք/ՀՆԱ-ի |
| | Պետության միջազգային պարտատոմսեր/ՀՆԱ |
| | Ֆինանսական կորպորացիաների ընդհանուր պարտատոմսեր/ՀՆԱ նկատմամբ |
| | Ոչ ֆինանսական կորպորացիաների ընդհանուր պարտատոմսեր/ՀՆԱ |
| **Հասանելիություն** | Շուկայական կապիտալիզացման տոկոս՝ 10 խոշորագույն ընկերություններից դուրս |
| | Պարտատոմսեր թողարկողների ընդհանուր թիվը (ներքին և արտաքին, ոչ ֆինանսական և ֆինանսական կորպորացիաներ) |
| **Արդյունավետություն** | Ֆոնդային շուկայի շրջանառության հարաբերակցությունը (բաժնետոմսերը վաճառվում են մինչև կապիտալիզացիա) |

**Վերլուծություն:** Գծապատկեր 1-ում ներկայացված են ՀՀ ՀՀ ֆինանսական զարգացման, ֆինանսական հաստատությունների և շուկաների համաթվերը: Ինչպես երևում է, 1993թ. համեմատ, 2019թ. դրությամբ ՀՀ ֆինանսական համակարգի զարգացման նկատելի առաջընթաց է արձանագրվել, համաթիվը 0.08-ից հասել է 0.26-ի: Դրանում էական նպաստ է բերել ֆինանսական հաստատությունների զարգացումը, որի համաթիվը 0.14-ից հասել է 0.47-ի: Մինչդեռ ֆինանսական շուկաների զարգացումը եղել է աննշան. համաթիվը 0.01-ից հասել է 0.03-ի:




***Գծապատկեր 1. ՀՀ ֆինանսական զարգացման, ֆինանսական հասփապրությունների և շուկաների համաթվերը [24]***[1]

Որքանով են լավ կամ վատ գծապատկեր 1-ում ներկայացված համաթվերը: Համեմատության համար դիտարկենք առաջավոր տնտեսությունների կամ զարգացած շուկաների տվյալները, ինչպես նաև նաև աստիճանակարգի վերին 10 երկրների ֆինանսական զարգացման 2019 թվականի համաթվերը, որոնք ներկայացված են գծապատկեր 2-ում[2]: Ինչպես երևում է գծապատկերից, առաջավոր երկրներում ֆինանսական զարգացման համաթիվը 0.62 է, ֆինանսական հաստատություններինը՝ 0.69, ֆինանսական շուկաներինը՝ 0.54: ՀՀ-ինը համապատասխանաբար՝ 0.26, 0.47 և 0.03:

[1] Կազմել են հեղինակները:
[2] Կազմել են հեղինակները:




***Գծապատկեր 2. Ֆինանսական զարգացման համաթվերն առաջավոր տնտեսություններում [24][3]***

Ֆինանսական հաստատությունների բաղադրիչներից ճեղքվածքը մեծ է միայն խորության (FID) մասով.առաջավոր երկրներում 0.65 է, Հայաստանում՝ 0.13: Մյուս երկու համաթվերով Հայաստանի դիրքերը լավ են, ավելին, ֆինանսական հաստատությունների արդյունավետության մասով Հայաստանի ցուցանիշը գերազանցում է առաջավոր երկրների միջին ցուցանիշին (FIE) 0.7-ով (գծապատկեր 5), իսկ հասանելիության ցուցանիշով (FIA) զիջում է ընդամենը 0.5-ով:

ՀՀ ֆինանսական զարգացման համաթվի (ՖԶՀ) վրա նշանակալի ազդեցություն ունեցած ֆինանսական հաստատությունների զարգացման համաթիվ ձևավորող փոփոխականները տարբեր չափերով են նպաստել ֆինանսական հաստատությունների համաթվի վրա: Ա-

[3] Կազմել են հեղինակները:

մենամեծ ազդեցությունն ունեցել են ինչպես առևտրային բանկերի, այնպես էլ ֆինանսական կազմակերպությունների կողմից մասնավոր հատվածին տրամադրված վարկերը: Այսպես, օրինակ, 2020 թվականին ֆինանսական հատվածի կողմից մասնավոր հատվածին տրամադրված ներքին վարկերը կազմել են ՀՆԱ-ի 83.4%-ը (2019թ՝ 59.9%), այդ թվում, առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերինը՝ 69% (2019թ.՝ 57.1%) [23]: Մինչդեռ ապահովագրավճարները 2019 թվականին կազմել են ՀՆԱ-ի 0.75%-ը [1,2]: ՀՀ ֆինանսական հաստատությունների համաթվի և նրա բաղադրիչների (ենթահամաթվերի) շարժընթացը 1993-2019թթ. ժամանակահատվածում ներկայացված է գծապատկեր 3-ում:




***Գծապատկեր 3. ՀՀ ֆինանսական հաստատությունների և նրա բաղադրիչների համաթվերը [24]***[4]

Ինչպես երևում է գծապատկեր 3-ից, ֆինանսական հաստատությունների համաթվի (ՖՀՀ) վրա նշանակալի դրական ազդեցություն է ունեցել այդ հաստատությունների արդյունավետության ենթահամաթիվը, որը 1993 թվականի 0.39-ից 2019 թվականին հասել 0.71-ի: Այնուհետև ՖՀՀ-ի վրա էական ազդեցություն է ունեցել ֆինանսական հաստատությունների հասանելիության ենթահամաթիվը, որը նույն ժամանակահատվածում 0.09-ից հասել է 0.56-ի: Մինչդեռ պակաս ա-

[4] Կազմել են հեղինակները:

ռաջընթաց է արձանագրվել ֆինանսական հաստատությունների խորության ենթահամաթվի մասով: Ֆինանսական զարգացման համաթվի վրա գրեթե որևէ ազդեցություն չի ունեցել ֆինանսական շուկաների համաթիվը, ինչը երևում է գծապատկեր 4-ից:




***Գծապապրկեր 4. ՀՀ ֆինանսական շուկաների և նրա բաղադրիչների համաթվերը [24][5]***

ՀՀ ֆինանսական շուկաների բոլոր բաղադրիչները համեմատելու եզրեր չունեն առաջավոր երկրների համանման ցուցանիշների հետ, ավելին, արժեթղթերի շուկայի կառուցվածքն ինքնին ապացույցն է այն բանի, որ ֆինանսական շուկաները դեռևս զարգացման սկզբնական փուլում են: Այսպես, 2020 թ.-նին շուկայի ծավալը կազմել է 1531.1 միլիարդ դրամ, որից 29.1%-ը բաժին է հասել կորպորատիվ պարտատոմսերի շուկային, 8.8%-ը՝ բաժնետոմսերի շուկային, իսկ պետական պարտատոմսերինը կազմել է 61.2% [27]: Ըստ էության, կարելի է ասել, որ Հայաստանում անցած երեք տասնամյակում չի ձևավորվել ֆինանսական շուկա, ինչը հնարավորություն չի ընձեռում դիվեսիֆիկացնել ներքին խնայողությունները, որոնք հիմնականում պահպանվում են ավանդների տեսքով: 5-7 գծապատկերում ցույց է տրվել «ավանդական» փոփոխականներից մեկի և ԱՄՀ-ի մշակած

[5] Կազմել են հեղինակները:

համաթվերի կոռելյացիոն կապը: Չնայած ուժեղ կապի առկայությա-նը, այդուհանդերձ, համաթվերն ավելի համապարփակ գնահատման տեսանկյունից թվում են ավելի նպատակահարմար:




5ա. Ֆինանսական զարգացման համաթիվ-վարկեր մասնավոր հատվածին

5.բ.Ֆինանսական հաստատություններ-վարկեր իվ-մասնավոր հատվածին

5գ.Ֆինանսական շուկաների համաթիվ-վարկեր մասնավոր հատվածին

***Գծապատկեր 5. Ֆինանսական զարգացման և ֆինանսական հաստատությունների, ֆինանսական շուկաների համաթվերի 66և մասնավոր հատվածին բանկերի տրամադրած վարկերի (ՀՆԱ-ի %) միջև կոռելյացիան [23,24][6]***




6ա.Ֆինանսական հաստատությունների խորություն-վարկեր մասնավոր հատվածին

6բ.Ֆինանսական հաստատությունների արդյունավետություն-վարկեր մասնավոր հատվածին

6գ.Ֆինանսական հաստատությունների հասանելիություն-վարկեր մասնավոր հատվածին

***Գծապատկեր 6. Ֆինանսական հաստատությունների համաթվի բաղադրիչների և մասնավոր հատվածին բանկերի տրամադրած վարկերի (ՀՆԱ-ի %) միջև կոռելյացիան [23,24][7]***

[6] Կազմել են հեղինակները:

[7] Կազմել են հեղինակները:




7ա. ֆինանսական շուկաներ խորություն-վարկեր մասնավոր հատվածին




7բ. Ֆինանսական շուկաների հասանելիություն-վարկեր մասնավոր հատվածին

***Գծապատկեր 7. Ֆինանսական շուկաների համաթվի բաղադրիչների կոռելյացիան ավանդական ցուցանիշի հետ. մասնավոր հատվածին բանկերի տրամադրած վարկերի ծավալը ՀՆԱ-ի նկատմամբ (%)[23,24][8]***

Ինչպես երևում է 7-9 գծապատկերներից, գոյություն ունի ուժեղ և ուղղակի կապ գործոնների միջև, բացի ֆինանսական շուկաների հասանելիության գործոնից (գծապատկեր 9բ):

Միաժամանակ հարկ է նկատել, քանի որ փոփոխականների ժամանակային շարքերի տվյալներում հանդիպում են մի քանի միանման նշանակություններ, այսինքն՝ ձևավորում են կապակցված ռանգեր, ապա հաշվարկվել է Սպիրմենի գործակիցը՝ p-ն, որի հաշվարկային մեծությունները ցույց են տալիս գործոնների միջև կապի խտության աստիճանը:

ՀՀ տնտեսական աճի և ֆինանսական համակարգի համաթվերի շարժընթացը 1993-2019 թթ. ժամանակահատվածում ներկայացված է գծապատկեր 10-ում:

---

[8] Կազմել են հեղինակները:




***Գծապատկեր 10. ՀՀ Նորմալացված ՀՆԱ-ի (NGDP), ֆինանսական զարգացման (FD), ֆինանսական շուկաների (FM) և հաստատությունների (FI) համաթվերի շարժընթացը***

Հայաստանի պարագայում դժվար է քանակապես գնահատել տնտեսական աճի վրա ֆինանսական համակարգի զարգացման ազդեցությունը, քանի որ այդ համակարգը բնութագրող փոփոխականների մեծ մասի համար գոյություն չունեն երկար ժամանակային շարքերի տվյալներ, իսկ որոշների մասով երևույթն այնքան աննշան է, որ չափման ենթակա չէ: Այդուհանդերձ, հիմք ընդունելով երկրների ֆինանսական զարգացման գնահատման Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) մոտեցումները՝ փորձ է արվել գնահատել տնտեսական աճի վրա ֆինանսական համակարգը բնութագրող համաթվերի օգտագործմամբ: Նկատի ունենալով, որ դրանք նորմալացված ցուցանիշներ են, ապա ՀՆԱ-ի հավելաճի տվյալները նույնպես պետք է նորմալացնել, ինչն արվել է հիմք ընդունելով նորմալացման ԱՄՀ-ի ընթացակարգը.[20. P.15]

$$I_x = \frac{x - x_{min}}{x_{max} - x_{min}},\ I_x = 1 - \frac{x - x_{min}}{x_{max} - x_{min}}\ ,$$

որտեղ $x$-ը ելակետային տվյալներն են, $I_x$ –ը՝ փոխակերպված շարունակական 0-1 ցուցիչը: Ընթացակարգը նորմալացնում է ցուցանիշները, որպեսզի դրանք ունենան նույնական տիրույթ [0-1]: ՀՆԱ-ի ցուցանիշը նորմալացնելուց հետո, ՀՀ տնտեսական աճի և ֆինանսական զարգացման համաթվի փոխկախվածության գնահատման համար կատարվել է կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծություն: Այդ նպատակով օգտագործված տվյալները ներկայացված են աղյուսակ 3-ում:

*Աղյուսակ 3*

**Կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծության մեջ օգտագործված ժամանակային շարքերի տվյալները**

| | NGDP | FD | FI | FM | | NGDP | FD | FI | FM |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **1993** | 0.19 | 0.08 | 0.14 | 0.01 | **2007** | 0.99 | 0.13 | 0.25 | 0.01 |
| **1994** | 0.69 | 0.09 | 0.17 | 0.01 | **2008** | 0.75 | 0.15 | 0.28 | 0.02 |
| **1995** | 0.75 | 0.09 | 0.17 | 0.01 | **2009** | 0.00 | 0.16 | 0.3 | 0.02 |
| **1996** | 0.71 | 0.09 | 0.16 | 0.01 | **2010** | 0.58 | 0.17 | 0.32 | 0.02 |
| **1997** | 0.62 | 0.09 | 0.17 | 0.01 | **2011** | 0.67 | 0.19 | 0.36 | 0.02 |
| **1998** | 0.76 | 0.10 | 0.18 | 0.01 | **2012** | 0.76 | 0.2 | 0.39 | 0.02 |
| **1999** | 0.62 | 0.10 | 0.18 | 0.02 | **2013** | 0.62 | 0.21 | 0.4 | 0.02 |
| **2000** | 0.71 | 0.10 | 0.18 | 0.02 | **2014** | 0.63 | 0.22 | 0.41 | 0.02 |
| **2001** | 0.84 | 0.10 | 0.19 | 0.02 | **2015** | 0.61 | 0.22 | 0.41 | 0.03 |
| **2002** | 0.97 | 0.13 | 0.23 | 0.02 | **2016** | 0.51 | 0.23 | 0.42 | 0.02 |
| **2003** | 0.97 | 0.11 | 0.21 | 0.02 | **2017** | 0.76 | 0.23 | 0.43 | 0.02 |
| **2004** | 1.00 | 0.11 | 0.21 | 0.01 | **2018** | 0.69 | 0.25 | 0.45 | 0.03 |
| **2005** | 0.99 | 0.11 | 0.19 | 0.01 | **2019** | 0.77 | 0.26 | 0.47 | 0.03 |
| **2006** | 0.97 | 0.12 | 0.23 | 0.01 | | | | | |

Կազմել են հեղինակները: [23,24]

Վերոնշյալ փոփոխականների բաշխման բնութագրերը ներկայացված են կոռելյացիոն մատրիցում (աղյուսակ 4), որից երևում է, որ փոփոխականներն ուժեղ կոռելացված չեն:

*Աղյուսակ 4*

**Կախյալ և անկախ փոփոխականների կոռելյացիայի մատրից**

| | NGDP | FD | FI | FM |
|---|---|---|---|---|
| **NGDP** | 1 | -0.1443 | -0.1384 | -0.1648 |
| **FD** | -0.1443 | 1 | 0.9972 | 0.7705 |
| **FM** | -0.1384 | 0.9972 | 1 | 0.7568 |
| **FI** | -0.1648 | 0.7705 | 0.7568 | 1 |

Ստացվել է բազմակի ռեգրեսիայի հետևյալ հավասարումը.

$$\mathrm{NGDP} = 0.81 - 3.1FD - 1.5FM + 3.8FI,$$

Այսպիսով, Հայաստանի պարագայում տվյալները վկայում են, որ ֆինանսական զարգացման համաթվի ազդեցությունը տնտեսական աճի վրա չի ապացուցվում. պարզվեց, որ հետազոտվող իրավիճակում համախառն ներքին արդյունքի նորմալացված ցուցանիշի ընդհանուր փոփոխականության 3.1%-ով է բացատրվում ֆինանսական համակարգի համաթվերով՝ ֆինանսական զարգացման (FD), ֆինանսական հաստատությունների զարգացման (FI) և ֆինանսական շուկաների զարգացման (FN): Բացահայտվել է նաև, որ մոդելի հարաչափերը նշանակալի չեն: Կարելի է ենթադրել, որ կապիտալի շուկան, որը ներկայացնում է ֆինանսական համակարգը, իր զարգացման ընթացքում երկրի զարգացման ֆինանսավորման գլխավոր գործառույթը փոխարինել է երկրորդական գործառույթով, որը Յոզեֆ Շումպետերը նշել էր որպես երրորդ գործառույթ. «եկամտի աղբյուրների շուկա»:

**Եզրակացություններ:** Այսպիսով, ՀՀ ֆինանսական համակարգն անցած գրեթե երեք տասնամյակում որոշակի առաջընթաց է ունեցել: Ֆինանսական զարգացման համաթիվը 1993 թվականի 0.08-ից 2019 թվականին հասել է 0.26-ի: Դրան նպաստել է հատկապես ֆինանսական հաստատությունների ենթահամաթվի նշանակալի բարելավումը: Այսպես, ֆինանսական հաստատությունների արդյունավետության մասով ՀՀ-ի ցուցանիշը գերազանցել է առաջավոր երկրների խմբի միջին ցուցանիշին, իսկ ֆինանսական հաստատությունների հասանելիության ցուցանիշով գրեթե մոտեցել է նրանց մակարդակին:

Միաժամանակ, ֆինանսական շուկաների բոլոր հարաչափերով (խորություն, հասանելիություն և արդյունավետություն) անցած երեք տասնամյակում, որոշ բացառություններով, նշանակալի տեղաշարժեր չեն արձանագրվել, իսկ շուկաների արդյունավետության համաթիվը դեռ երբեք չի բարձրացել զրոյական մակարդակից: Կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծությամբ ստացված տվյալները վկայում են, որ Հայաստանում ֆինանսական զարգացման և տնտեսական աճի անմիջական փոխկապվածություն գոյություն չունի: Կապիտալի շուկան, ըստ էության, չի ֆինանսավորում զարգացումը: Առաջնահերթ է դիտարկվել ֆինանսական շուկայի խորության և հասանելիության բարելավումը, ինչով հնարավոր կլինի հասնել ոչ միայն բուն ֆինանսական համակարգի զարգացման նպատակներին, այլև կառաջանան ներքին խնայողությունների մոբիլիզացման լրացուցիչ հնարավորություններ, որոնք անհրաժեշտ են կայուն և տևական աճի ռեսուրսային ապահովման համար:

## Օգտագործված գրականության ցանկ


1. Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2020. ՀՀ ԱՎԿ, 2020, 621 էջ:
2. Պարենային ապահովություն և աղքատություն, ՀՀ ԱՎԿ 2020թ. հունվար-դեկտեմբեր, 109 էջ:
3. **Aghion, Ph., Banerjee, A.**, Volatility and Growth: Credit Constraints and Productivity-Enhancing Investment. NBER Working Paper No. w11349, 2005. 24p.
4. **Aghion, Philippe, Philippe Bacchetta, and Abhijit Banerjee**. 2004. Financial development and the instability of open economies. Journal of Monetary Economics 51(6): 1107-1106.
5. **Bagehot, W**. Lombard Street. Homewood, IL: Richard D. Irwin, 1873 (1962 Edition).176p.
6. **Caballero, R., Krishnamurthy, A.** International and Domestic Collateral Constraints in a Model of Emerging Market Crises. NBER Working Paper No7971. October 2000.34 p.

7. **Hicks, J..** A Theory of Economic History. Oxford: Clarendon Press, 1969.181p.
8. **Kose, A., Prasad, E., Rogoff, K., Shang-Jin Wei**, Financial Globalization and Economic Policies//Chapter 65 in Handbook of Development Economics, 2010. 67p.
9. **King, R., Levine, R.** "Financial Intermediation and Economic Development," inFinancial Intermediation in the Construction of Europe. eds. Colin Mayer and Xavier Vives. London: Centre for Economic Policy Research, 1993a, pp. 156-89.
10. **Levine, R.** 2005. "Finance and Growth: Theory and Evidence," Handbook of Economic Growth, in: Philippe Aghion & Steven Durlauf (ed.), Handbook of Economic Growth, edition 1, volume 1, chapter 12, pages 865-934, Elsevier.
11. **Levine, R.** Financial Development: Views and Agenda. Policy Research Working Paper No 1678. World Bank, October 1996. 69p.
12. **Lucas, R.** "On the Mechanics of Economic Development," Journal of Monetarv Economics July 1988, (22L), pp. 3-42.
13. **Mendoza, E., Quadrini, V, Rios-Rull, J-V.** Financial Integration, Financial Deepness and Global Imbalances. NBER WP No12909. February 2007. 46p.
14. **Merton, R., d Bodie, Z.** "A Conceptual Framework for Analyzing the Financial Enviromnent," in The Global Financial System: A Functional Perspective eds. Dwight B. Crane, et al., Boston, MA: Harvard Business School Press, 1995, pp. 3-31.
15. **Robinson, J**. "The Generalization of the General Theory," in the Rate of Interest and Other Essays London: MacMillan, 1952.170p.
16. **Stiglitz, J.** Globalization and its Discontents. NY.W.W. Norton & Company, 2003, 288p.
17. **Stiglitz, J.E. and Weiss, A.** (1983), “Incentive effects of terminations: applications to the credit and labor markets”, The American Economic Review, Vol. 73 No. 5, pp. 912-927.
18. **Steven Durlauf** (ed.), Handbook of Economic Growth, edition 1, volume 1, chapter 12, pages 865-934 Elsevier.

19. **Schumpeter, J**. Theorie der Wirtschaftlichen Entwicklung. Leipzig: Dunker & Humblot, 1912. [The Theory of Economic Development, 1912, translated by Redvers Opie.Cambridge, MA: Harvard University Press, 1934, 1949, 255p.]
https://archive.org/details/in.ernet.dli.2015.187354/page/n137/mode/2up
20. **Svirydzenka, K.**Introducing a New Broad-based Index of Financial Development. IMF Working Paper WP/16/5. January 2016, 41p.
21. **Wurgler, J.** (2000). Financial Markets and the Allocation of Capital, Journal of Financial Economics, 58, 187-214.
https://doi.org/10.1016/S0304-405X (00) 00070-2
22. World Investment Riport 2021. NY, UN, 2021, 256 p.
23. World Development Indicators
https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG
24. https://data.imf.org/?sk=F8032E80-B36C-43B1-AC26-93C5B1CD33B&sId=1481126573525
25. World Development Indicators,
https://data.worldbank.org/indicator/FD.AST.PRVT.GD.ZS?locations=AM
26. https://data.worldbank.org/indicator/FD.AST.PRVT.GD.ZS?locations=AM
27. Հայաստանի ֆոնդային բորսա (AMX)։ Տարեկան հաշվետվություն, 2020։
https://amx.am/uploads/publications/AMX%20annual%20report%202020_23.04.2021_optimized_2021-04-26_17-03-04.pdf

## ВЗАИМОСВЯЗЬ ФИНАНСОВОГО РАЗВИТИЯ И ЭКОНОМИЧЕСКОГО РОСТА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

**Гор Чатинян**
АГУ РА, к.э.н., доцент
**Мгер Варданян**
АУА, магистр Компьютерных и информационных наук

Целью данного исследования было изучение взаимосвязи между финансовым развитием и экономическим ростом в Республике

Армения с использованием данных временных рядов за период 1993-2019 гг. Согласно официальной статистике Республики Армения в базах данных Всемирного банка и Международного валютного фонда, состояние развития финансовой системы Республики Армения было ослабленным. Затем была рассмотрена взаимосвязь между финансовым развитием и экономическим ростом. Выявлено, что субиндекс финансовых рынков оказал негативное влияние на индекс финансового развития РА. По всем параметрам финансовых рынков (глубины, доступности и эффективности), за последние три десятилетия, за некоторыми исключениями, не наблюдалось положительных сдвигов, а индекс рыночной эффективности никогда не поднимался выше нуля. Данные, полученные в результате корреляционно-регрессионного анализа, показывают, что прямой зависимости между индексом финансового развития и экономическим ростом в Армении не существует: в исследуемой ситуации 3.1% общей вариабельности нормализованного ВВП объясняется изменением индексов финансового развития, развития финансовых институтов и развития финансовых рынков. Фактически, рынок капитала не финансирует развитие. Улучшение доступа и глубины финансовых рынков считается приоритетом, поскольку при прогрессе в этом направлении будут достигнуты не только цели развития самой финансовой системы, но и появится дополнительная возможность по мобилизации внутренних сбережений, необходимых для ресурсного обеспечения устойчивого и долговременного экономического роста.

**Ключевые слова:** финансовое развитие, финансовые институты, финансовые рынки, индекс финансового развития, финансовая интеграция, экономический рост.

# RELATIONSHIP OF FINANCIAL DEVELOPMENT AND ECONOMIC GROWTH IN THE REPUBLIC OF ARMENIA

**Gor Chatinyan**
PAARA, PhD in Economics, Associate Professor
**Mher Vardanyan**
AUA, Master of Science in Computer & Information Science

The aim of this research paper is to study the relationship between financial development and economic growth in the Republic of Armenia using time series data for the period of 1993-2019. According to the official statistics of the Republic of Armenia in the databases of the World Bank and the International Monetary Fund, the pace of development of the financial system of the Republic of Armenia was weakened. Then the relationship between financial development and economic growth was examined. It was revealed that the sub-index of financial markets had a negative impact on the financial development index of the Republic of Armenia. For all parameters of financial markets (depth, accessibility and efficiency), over the past three decades, with a few exceptions, there have been no positive shifts, and the market efficiency index has never risen above zero. The data obtained as a result of the correlation-regression analysis show that there is no direct relationship between the financial development index and economic growth in Armenia: in the studied situation, 3.1% of the total variability of the normalized GDP is explained by changes in the indices of financial development, the development of financial institutions and the development of financial markets. In fact, the capital market does not support development. Improving the access and depth of financial markets is considered a priority, since progress in this direction will not only achieve the goals of developing the financial system itself, but also there will be an additional opportunity to mobilize domestic savings necessary to provide resources for sustainable and long-term economic growth.

**Keywords:** financial development, financial institutions, financial markets, financial development index, financial integration, economic growth

*Տրվել է տպագրության՝ 22.10.2021թ.*
*Գրախոսվել է՝ 21.12.2021թ.*

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

# ՀՀ ԲԱՆԿԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊՈՐՏՖԵԼԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՊԱՐՏՔԱՅԻՆ ԿՈՐՍՏԻ ՊԱՀՈՒՍՏԻ ՄԻՋՈՑՈՎ

***Սուրեն Պարսյան***
*ՀՊՏՀ, Միկրոէկոնոմիկայի ամբիոն, տնտ. թ., դոցենտ*
*surenparsyan2017@gmail.com +374 77 440708*
***Հենրիկ Մանուկյան***
*ՀՖՀ, «ֆինանսներ և կառավարում» ֆակուլտետ, մագիստրոս*
*henrik.manukyan.h@gmail.com +374 95 480446*

*Սույն հոդվածը ներկայացնում է 2020 թվականի տարեվերջի դրությամբ ՀՀ բանկային համակարգի վարկային պորտֆելի գնահատումը՝ ակնկալվող պարտքային կորստի պահուստի տեսանկյունից: Դիտարկվում են նշված վարկային պորտֆելի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, տեսակարար կշիռը ՀՀ բանկերի ակտիվներում, ինչպես նաև վերջինիս կենտրոնացվածությունը ՀՀ բանկային համակարգում: Ուսումնասիրվում է վերոնշյալ վարկային պորտֆելի ակնկալվող պարտքային կորուստների պահուստի կառուցվածքը և անդրադարձ է կատարվում վերջինիս՝ նախորդ տարվա ցուցանիշի նկատմամբ փոփոխության հնարավոր պատճառներին, որոնցից գլխավորները պարտքային որակի նվազումն ու ՀՀ վարկարժանության գնահատականի անկումն են:*

***Հիմնաբառեր.*** *Վարկային պորտֆել, ՖՀՄՍ 9 «ֆինանսական գործիքներ», ակնկալվող պարտքային կորուստ, պարտքային որակ, ստանդարտ շեղում:*

### Ներածություն

Առևտրային բանկերի հիմնական գործառույթը միջոցներ ներգրավելու ու դրանք տեղաբաշխելու միջոցով շահույթ ստանալն է: Ի տարբերություն զարգացած ֆինանսական շուկաներում գործող բանկերի՝ ՀՀ բանկերի դեպքում միջոցների տեղաբաշխումը իրականացվում է գլխավորապես վարկեր տրամադրելու միջոցով: Վերջիններիս վերադարձելիությունը կարևոր նախապայման է, որպեսզի բանկերն

իրենց հերթին ի զորու լինեն վերադարձնել հաճախորդներից ներգրաված միջոցները: Ընդ որում, հաճախորդներից միջոցների ներգրավելու գործառույթը ՀՀ-ում թույլատրվում է միայն ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ԿԲ) կողմից լիցենզավորված բանկերին[1]՝ ի տարբերություն վարկ տրամադրելու գործառույթի, որը իրականացվում է ֆինանսական շուկայի այլ դերակատարների կողմից ևս:

ՖՀՄՍ 9 «ֆինանսական գործիքներ» ստանդարտը սահմանում է, որ ֆինանսական գործիքների, այդ թվում և տրամադրված վարկերի գծով, պետք է հաշվարկվի և ձևավորվի ակնկալվող պարտքային կորուստների (այսուհետ՝ ԱՊԿ) պահուստ: Համաձայն ՖՀՄՍ 9-ի՝ ԱՊԿ-ն ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում պարտքային կորուստների (դրամական պակասուրդների ներկա արժեքի) հավանականությամբ կշռված գնահատականն է[2, էջ 133], որը հաշվարկվում է ստորև նշված բանաձևով:

$$ԱՊԿ = EAD \times PD \times LGD \quad (1)$$

որտեղ

EAD – գումարի այն մեծությունն է, որ կհայտնվի վտանգի տակ տվյալ ակտիվի դեֆոլտի դեպքում,

PD – տվյալ ակտիվի դեֆոլտի հավանականությունն է,

LGD – ակտիվի առանց ապահովման միջոցի արժեքի մասնաբաժինն է:

Այսպիսով, այն հիանալի ազդակ կարող է հանդիսանալ ֆինանսական տեղեկատվություն օգտագործողների համար, որը ցույց է տալիս տվյալ ընկերության ֆինանսական գործիքների պարտքային որակը: Ինչ վերաբերում է ՀՀ առևտրային բանկերին, ապա նրանց դեպքում ԱՊԿ պահուստի մեծությունը և մասնաբաժինը վարկային պորտֆելի մեջ կարող է հուշել, թե որքանով է դրանց վերադարձելիությունն ապահովված, արդյոք այդ շարքում մեծ թիվ են կազմում արժեզրկված միավորները և այլն: Վերոնշյալ տեղեկատվությունը կօգնի ֆինանսական տեղեկատվություն օգտագործողներին գնահատել տվյալ բանկում ներդրում կամ գործարք կատարելու նպատակահարմարությունը:

ՀՀ բանկերի 2020 թվականի վարկային պորտֆելի մինչև այժմ կատարված վերլուծությունները[3] ուսումնասիրում են գլխավորապես

նշված վարկային պորտֆելի կառուցվածքային փոփոխությունները և աճի միտումներն առանց անդրադառնալու պորտֆելի պարտքային որակի գնահատմանը: Սույն հոդվածն առաջարկում է վերոնշյալ գնահատումն իրականացնել ՀՀ բանկերի ակտիվների, վարկային պորտֆելի և ԱՊԿ պահուստի բացարձակ մեծությունների և մասնաբաժինների փոփոխությունները դիտարկելու միջոցով:

Սույն հոդվածի կատարվող ուսումնասիրության մեջ օգտագործված, ՀՀ բանկերին առնչվող տվյալները ստացվել են բանկերի 2020 թվականի աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններից:

**Ուսումնասիրություն**

Նախքան ՀՀ բանկերի վարկային պորտֆելի բուն ուսումնասիրությանն անցնելը, դիտարկենք վարկային պորտֆելի մեծությունը և տեսակարար կշիռն ակտիվներում: Աղյուսակ 1-ում ներկայացված են ՀՀ բանկերի ակտիվների մեծությունը 31.12.20-ի դրությամբ:

***Աղյուսակ 1. ՀՀ բանկերի ակփիվները (հազար ՀՀ դրամ)***

| Հ/Հ | Բանկի անվանում | 31.12.2020 | 31.12.2019 | Աճ (%) |
|---|---|---|---|---|
| 1 | Ամերիաբանկ | 1,090,762,723 | 968,081,217 | 12.7 |
| 2 | Հայբիզնեսբանկ | 847,795,743 | 738,192,168 | 14.8 |
| 3 | Արդշինբանկ | 917,050,276 | 721,137,991 | 27.2 |
| 4 | Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ | 495,631,691 | 432,612,975 | 14.6 |
| 5 | Ինեկոբանկ | 387,775,479 | 339,113,468 | 14.3 |
| 6 | Կոնվերս բանկ | 332,436,914 | 325,628,525 | 2.1 |
| 7 | ՎՏԲ-Հայաստան բանկ | 333,754,414 | 307,295,325 | 8.6 |
| 8 | Հայէկոնոմբանկ | 320,789,927 | 280,682,526 | 14.3 |
| 9 | Արմսվիսբանկ | 386,139,335 | 282,149,473 | 36.9 |
| 10 | Յունիբանկ | 238,172,052 | 249,015,415 | (4.4) |
| 11 | Արարատբանկ | 248,881,437 | 222,446,304 | 11.9 |
| 12 | Էյչ-էս Բի Սի Բանկ Հայաստան | 238,949,623 | 213,576,353 | 11.9 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 13 | Արցախբանկ | 190,068,154 | 180,366,187 | 5.4 |
| 14 | Էվոկաբանկ | 201,420,317 | 165,117,507 | 22.0 |
| 15 | Այդի բանկ | 176,930,519 | 150,056,531 | 17.9 |
| 16 | Բիբլոս Բանկ Արմենիա | 103,115,844 | 111,468,810 | (7.5) |
| 17 | Մելլաթ բանկ | 77,641,843 | 64,622,830 | 20.1 |
| **Ընդամենը** | | **6,587,316,291** | **5,751,563,605** | **14.5** |

Աղյուսակ 2-ում ներկայացված է յուրաքանչյուր բանկի վարկերի մասնաբաժինը ՀՀ բանկերի ընդհանուր վարկային պորտֆելում դասավորված ըստ նվազման կարգի: Կուտակային սյունը ցույց է տալիս, թե վարկային պորտֆելի որ %-ն է կենտրոնացված ամենամեծ մասնաբաժին ունեցող «n» բանկերում:

***Աղյուսակ 2. ՀՀ բանկերի վարկային պորփֆելը 31.12.20-ի դրությամբ (հազար ՀՀ դրամ)***

| Հ/Հ | Բանկի անվանում | 31.12.20 | Մասնաբաժինը վարկային պորտֆելում (%) | Կուտա-կային (%) |
|---|---|---|---|---|
| 1 | Ամերիաբանկ | 696,495,523 | 17.0 | 17.0 |
| 2 | Հայբիզնեսբանկ | 635,054,512 | 15.5 | 32.5 |
| 3 | Արդշինբանկ | 634,160,979 | 15.5 | 48.0 |
| 4 | Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ | 328,035,951 | 8.0 | 56.1 |
| 6 | Կոնվերս բանկ | 229,595,621 | 5.6 | 61.7 |
| 5 | Ինեկոբանկ | 216,462,240 | 5.3 | 67.0 |
| 7 | ՎՏԲ-Հայաստան բանկ | 203,703,726 | 5.0 | 71.9 |
| 8 | Հայէկոնոմբանկ | 193,337,215 | 4.7 | 76.7 |
| 10 | Յունիբանկ | 156,575,090 | 3.8 | 80.5 |
| 11 | Արարատբանկ | 148,222,057 | 3.6 | 84.1 |
| 12 | Էյչ-էս Բի Սի Բանկ Հայաստան | 143,745,937 | 3.5 | 87.6 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 9 | Արմսվիսբանկ | 123,498,224 | 3.0 | 90.6 |
| 13 | Արցախբանկ | 118,074,936 | 2.9 | 93.5 |
| 14 | Էվոկաբանկ | 111,716,348 | 2.7 | 96.3 |
| 15 | Այդի բանկ | 94,522,560 | 2.3 | 98.6 |
| 16 | Բիբլոս Բանկ Արմենիա | 39,321,912 | 1.0 | 99.5 |
| 17 | Մելլաթ բանկ | 19,424,936 | 0.5 | 100.0 |
| **Ընդամենը** | | **4,091,947,767** | **100** | |
| **Միջին թվաբանական** (μ) | | **240,702,810** | **5.9** | |
| **Ստանդարտ շեղում** (σ) | | **204,558,308** | **5.0** | |

Նկատելի է, որ ՀՀ բանկերի ընդհանուր վարկային պորտֆելում առանձին բանկերի մասնաբաժիններն էապես տարբերվում են: Ընդ որում վարկային պորտֆելի 48%-ը կենտրոնացված է 3 բանկերում, ինչը խոսում է խոշոր կենտրոնացման մասին: Նույնն է վկայում նաև ցրվածքի գործակիցը[4], որի բանաձևը ներկայացված է ստորև:

$$Coefficient\ of\ Variance = \frac{\sigma}{\mu}\ (2)$$

որտեղ

σ – ստանդարտ շեղումն է,

μ – միջին արժեքն է:

(2)-րդ բանաձևի մեջ տեղադրելով ՀՀ բանկերի 31.12.20-ի դրությամբ վարկային պորտֆելի ստանդարտ շեղման և միջին թվաբանականի արժեքները՝ ցրվածքի գործակիցը ստացվում է 85%, ինչը վկայում է միջին թվաբանականի ոչ ներկայացուցչական լինելու մասին, այլ կերպ ասած, դիտարկվող միավորների միջև ցրվածքը զգալի է:

***Աղյուսակ 3. ՀՀ բանկերի վարկային պորտֆելի մասնաբաժինն ակտիվներում (%)***

| Հ/Հ | Բանկի անվանում | 31.12.20 | 31.12.19 |
|---|---|---|---|
| 1 | Ամերիաբանկ | 63.85 | 60.51 |
| 2 | Հայբիզնեսբանկ | 74.91 | 76.32 |
| 3 | Արդշինբանկ | 69.15 | 64.81 |
| 4 | Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ | 66.19 | 68.37 |
| 5 | Ինեկոբանկ | 55.82 | 70.37 |
| 6 | Կոնվերս բանկ | 69.06 | 69.54 |
| 7 | ՎՏԲ-Հայաստան բանկ | 61.03 | 61.48 |
| 8 | Հայէկոնոմբանկ | 60.27 | 62.74 |
| 9 | Արմսվիսբանկ | 31.98 | 34.24 |
| 10 | Յունիբանկ | 65.74 | 56.78 |
| 11 | Արարատբանկ | 59.56 | 61.10 |
| 12 | Էյչ-էս Բի Սի Բանկ Հայաստան | 60.16 | 55.68 |
| 13 | Արցախբանկ | 62.12 | 56.90 |
| 14 | Էվոկաբանկ | 55.46 | 61.51 |
| 15 | Այդի բանկ | 53.42 | 51.57 |
| 16 | Բիբլոս Բանկ Արմենիա | 38.13 | 30.97 |
| 17 | Մելլաթ բանկ | 25.02 | 19.45 |
| **Ընդհանուր** | | **62.12** | **61.96** |

Ընդհանուր մասնաբաժինը հաշվարկվել է տվյալ ամսաթվի դրությամբ բանկերի վարկային պորտֆելի մեծությունը հարաբերելով ընդհանուր ակտիվներում մեծությանը:

ՀՀ բանկերի ակտիվները 2020 թվականի տարեվերջին 2019 թվականի համադրելի օրվա համեմատ աճել են 14.5%-ով, իսկ վարկային պորտֆելը միևնույն ժամանակահատվածի համար՝ 14.8%-ով (31.12.19-ի դրությամբ ՀՀ բանկերի վարկային պորտֆելը կազմել է

3,563,943,284 հազար ՀՀ դրամ): Հետևաբար, տրամաբանական է, որ զգալի փոփոխություն չկա նաև ակտիվներում վարկերի ընդհանուր մասնաբաժնի ցուցանիշի մեջ դիտարկվող ժամանակահատվածի համար: ՀՀ բանկերի ակտիվների և վարկերի մեծության աճը որոշակիորեն պայմանավորված է ՀՀ դրամի արժեզրկման և արտարժույթի փոխարժեքի աճով (2020թ. տարեսկզբին ԱՄՆ դոլարի և եվրոյի փոխարժեքները 479.7 և 537.26 դրամի դիմաց տարեվերջին կազմել են համապատասխանաբար 522.59 և 641.11[5]): Տվյալ պարագայում արտարժույթով ակտիվների և վարկերի վերագնահատումից աճը հանգեցնում է դրամային արտահայտությամբ մեծության աճի:

Ինչպես արդեն նշվեց, վարկերի վերադարձելիության ցուցիչ կարող է ծառայել ՖՀՄՍ 9 «ֆինանսական գործիքներ»-ով սահմանվող ԱՊԿ պահուստի կառուցվածքն ու մասնաբաժինը բանկի վարկային պորտֆելում:

2020 թվականի ընթացքում վարկային պորտֆելի 14.8% աճի պայմաններում վարկերի գծով ԱՊԿ պահուստի ընդհանուր մեծությունը աճել է 37.3%-ով՝ 130,671,001 հազար ՀՀ դրամից դառնալով 179,435,137 հազար ՀՀ դրամ: Հետևաբար ընդհանուր առմամբ սպասելի է, որ կաճի նաև ԱՊԿ պահուստի մասնաբաժինը համախառն վարկային պորտֆելում:

***Աղյուսակ 4. ՀՀ բանկերի վարկերի գծով ԱՊԿ պահուստի մասնաբաժինը վարկային պորտֆելում 2019-20թթ. տարեվերջերին (%)***

| Հ/Հ | Բանկի անվանում | 31.12.20 | 31.12.19 |
|---|---|---|---|
| 1 | Ամերիաբանկ | 3.3 | 2.3 |
| 2 | Հայբիզնեսբանկ | 3.3 | 3.4 |
| 3 | Արդշինբանկ | 3.3 | 3.0 |
| 4 | Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ | 3.8 | 2.5 |
| 5 | Ինեկոբանկ | 4.8 | 2.6 |
| 6 | Կոնվերս բանկ | 3.7 | 2.0 |
| 7 | ՎՏԲ-Հայաստան բանկ | 10.5 | 10.6 |
| 8 | Հայէկոնոմբանկ | 1.7 | 1.2 |

| | | | |
|---|---|---|---|
| 9 | Արմսվիսբանկ | 4.8 | 2.1 |
| 10 | Յունիբանկ | 6.2 | 8.0 |
| 11 | Արարատբանկ | 3.4 | 2.4 |
| 12 | Էյչ-էս Բի Սի Բանկ Հայաստան | 4.6 | 4.1 |
| 13 | Արցախբանկ | 5.1 | 1.8 |
| 14 | Էվոկաբանկ | 3.5 | 2.8 |
| 15 | Այդի բանկ | 11.4 | 12.3 |
| 16 | Բիբլոս Բանկ Արմենիա | 2.0 | 3.1 |
| 17 | Մելլաթ բանկ | 1.8 | 0.6 |
| **Ընդհանուր մասնաբաժին** | | **4.2%** | **3.5%** |

Ինչպես և սպասելի էր, ՀՀ բանկերի վարկերի գծով ԱՊԿ պահուստի ընդհանուր մասնաբաժինը վարկային պորտֆելի համախառն հաշվեկշռային արժեքի մեջ աճել է 2020 թվականի ընթացքում՝ 3.5%-ից հասնելով 4.2%-ի: Վարկային պորտֆելի համախառն հաշվեկշռային արժեքը ստացվում է աղյուսակ 2-ում վարկերի զուտ հաշվեկշռային արժեքին գումարելով տվյալ ամսաթվի դրությամբ ձևավորված ԱՊԿ պահուստի մեծությունը:

Համաձայն ՖՀՄՍ 9 «ֆինանսական գործիքներ» ստանդարտի ֆինանսական գործիքները, որոնց գծով ձևավորվում է ԱՊԿ պահուստ, դասակարգվում են 3 փուլերում (stage)՝ կախված իրենց արժեքի չափման առանձնահատկությունից: Փուլ 1-ում ներառվում են այն ակտիվները, որոնց պարտքային որակը սկզբնական ճանաչումից հետո չի վատթարացել, փուլ 2-ում՝ այն միավորները, որոնց պարտքային որակը վատթարացել է, սակայն չկա արժեզրկման օբյեկտիվ վկայություն, իսկ փուլ 3-ում՝ այն ակտիվները, որոնց արժեզրկման վերաբերյալ օբյեկտիվ վկայությունն առկա է: Եթե փուլ 1-ում ներառված ակտիվների գծով ձևավորվում է 12-ամսյա ԱՊԿ պահուստ, ապա փուլ 2-ի և 3-ի ակտիվների դեպքում հաշվարկվում է ողջ կյանքի ընթացքում ԱՊԿ: Հասկանալու համար, թե ինչով կարող է պայմանավորված լինել ընդհանուր բանկային հատվածի վարկերի ԱՊԿ պահուստի աճը, պետք է նախ և առաջ ուսումնասիրել դրա գոյացման կառուցվածքը և վերջինիս փոփոխությունը 2019-20թթ. ընթացքում, որոնք համապատասխանաբար ներկայացված են աղյուսակ 5-ում և 6-ում:

***Աղյուսակ 5. ՀՀ բանկերի վարկերի գծով ԱՊԿ պահուստը՝ մասնատված ըստ փուլերի 31.12.20-ի դրությամբ (հազար ՀՀ դրամ)***

| Հ/Հ | Բանկի անվանում | Stage 1 | Stage 2 | Stage 3 |
|---|---|---|---|---|
| 1 | Ամերիաբանկ | 7,533,017 | 4,745,327 | 11,313,258 |
| 2 | Հայբիզնեսբանկ | 3,786,350 | 3,523,936 | 14,430,965 |
| 3 | Արդշինբանկ | 6068717 | 5358000 | 10122734 |
| 4 | Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ | 5,025,450 | 2,017,044 | 6,040,169 |
| 5 | Ինեկոբանկ | 2,119,261 | 3,153,381 | 5,612,832 |
| 6 | Կոնվերս բանկ | 2,039,885 | 1,351,761 | 5,458,898 |
| 7 | ՎՏԲ-Հայաստան բանկ | 2,529,539 | 4,590,452 | 16,827,133 |
| 8 | Հայէկոնոմբանկ | 2,070,775 | 420,858 | 885,862 |
| 9 | Արմսվիսբանկ | 2,316,491 | 750,505 | 3,169,260 |
| 10 | Յունիբանկ | 1,418,915 | 144,456 | 8,719,388 |
| 11 | Արարատբանկ | 828,124 | 562,820 | 3,842,224 |
| 12 | Էյչ-էս Բի Սի Բանկ Հայաստան | 597,360 | 929,423 | 5,391,499 |
| 13 | Արցախբանկ | 785,459 | 5,093,489 | 491,495 |
| 14 | Էվոկաբանկ | 993,103 | 832,848 | 2,264,433 |
| 15 | Այդի բանկ | 633,950 | 219,817 | 11,254,947 |
| 16 | Բիբլոս Բանկ Արմենիա | 299,313 | 218,431 | 294,336 |
| 17 | Մելլաթ բանկ | 167,750 | 9,163 | 180,534 |
| **Ընդամենը** | | **39,213,459** | **33,921,711** | **106,299,967** |

***Աղյուսակ 6. ՀՀ բանկերի վարկերի գծով ԱՊԿ պահուստի ըստ փուլերի ձևավորման փոփոխությունը 2019-20թթ. ընթացքում (հազար ՀՀ դրամ)***

| | 2020 | 2019 | Աճ (%) |
|---|---|---|---|
| Փուլ 1 | 39,213,459 | 25,855,779 | 51.7 |
| Փուլ 2 | 33,921,711 | 16,669,431 | 103.5 |
| Փուլ 3 | 106,299,967 | 88,145,791 | 20.6 |
| **Ընդամենը** | **179,437,157** | **130,673,020** | **37.3** |

Աղյուսակ 6-ը մեկնաբանելիս պետք է մտապահել, որ ՀՀ բանկերի վարկային պորտֆելը 2020թ. ընթացքում աճել էր 14.8%-ով, հետևաբար միջինում նույնչափ աճը փուլերից յուրաքանչյուրի համար կլիներ տրամաբանական: Այնուամենայնիվ, փաստացի գրանցված ցուցանիշները վկայում են, որ փուլ 1-ում եղած վարկերի գծով ձևավորված պահուստը մոտ կիսով չափ, իսկ փուլ 2-ի վարկերի դեպքում կրկնակի անգամ ավելացել է: Այժմ փորձենք հասկանալ նմանօրինակ աճի պատճառները:

Նախ նշենք, որ 2020թ. ընթացքում Առողջապահության միջազգային կազմակերպության կողմից համավարակ դասակարգված «COVID-19»-ի ֆինանսական շուկայի վրա տնտեսական վատթար ազդեցությանը հակազդելու նպատակով իրականացված միջոցառումների շրջանակներում ՀՀ մի շարք առևտրային բանկեր «վարկային արձակուրդ» տրամադրեցին վարկառուներին սկսած 3 ամսից (կախված բանկի վարած քաղաքականությունից առաջարկված «վարկային արձակուրդի» տևողությունը կարող է տարբերվել): Առաջնորդվելով ՖՀՄՍ-ներով՝ բազմաթիվ բանկեր կիրառում են այն հերքելի ենթադրությունը, որ վարկային վճարումների 30 օր և ավելի երկար ուշացումները վկայում են պարտքային որակի վատթարացման մասին և հետևաբար համապատասխան վարկերը պետք է վերադասակարգվեն փուլ 2-ում, ինչն էլ հանգեցնում է ԱՊԿ մեծության աճի, քանի որ փուլ 2-ի վարկերի գծով հաշվարկվում է ողջ կյանքի ընթացքում ԱՊԿ 12-ամսյայի փոխարեն: Ինչևէ, կորոնավիրուսի համավարակով պայմանավորված միջոցառումների շրջանակում այս սկզբունքին հետևելը տրամաբանական չէ, քանի դեռ վարկային մարումների ուշացումները պայմանավորված են բանկերի կողմից առաջարկված պայմաններով[6]: Հետևաբար, կարող ենք վստահ լինել, որ «վարկային արձակուրդներն» իրենց էությամբ ազդեցություն չեն ունեցել աուդիտ անցած հաշվետվություններում ներկայացված ԱՊԿ մեծության վրա:

Փոխարենը ԱՊԿ մեծության աճի գործում իր ազդեցությունն է ունեցել (1)-ին բանաձևում ներկայացված ԱՊԿ բաղադրիչներից դեֆոլտի հավանականության (PD) գնահատման ժամանակ օգտագործվող երկրի վարկարժանության ցուցանիշը, որը ՀՀ-ի դեպքում 2020 թվա-

կանի տարեվերջին տարեսկզբի համեմատ նվազել էր մեկ մակարդակով՝ համաձայն «Fitch» միջազգային վարկանշող գործակալության գնահատման[7]: Ելնելով այն տրամաբանական ենթադրությունից, որ ավելի ցածր վարկանիշին համապատասխանում է ավելի բարձր դեֆոլտի հավանականություն և այն փաստից, որ ՀՀ վարկանիշը հիմք է հանդիսանում ՀՀ-ում չվարկանշված ընկերությունների դեֆոլտի հավանականության գնահատման գործընթացում՝ կարող ենք եզրակացնել, որ ՀՀ արտաքին վարկանիշի նվազումը հանգեցրել է ԱՊԿ պահուստի որոշակի աճի:

Այլ հանգամանքների բացակայության պայմաններում ԱՊԿ պահուստի ընդհանուր մեծության աճը կարող ենք կապել երկրի բիզնես ոլորտի կամ բնակչության տնտեսական վիճակի վատթարացմամբ, ինչի ազդեցությամբ, հավանաբար, մի շարք վարկեր վերադասակարգվել են 2-րդ կամ 3-րդ փուլում:

Ուշագրավ է այն փաստը, որ ՀՀ 17 առևտրային բանկերի 2020 թվականի ֆինանսական հաշվետվություններից 15-ն արտաքին աուդիտի կողմից ստացել են դրական կարծիք, իսկ վերապահումով կարծիք ստացած 2 բանկերի դեպքում («Արմսվիսբանկ», «Արցախբանկ») վերապահումը վերաբերում էր ԱՊԿ պահուստի մեծության ոչ լիարժեք գնահատմանը: Ելնելով այս փաստից՝ առաջարկվում է համեմատել ՀՀ բանկերի կողմից վարկերի գծով նախքան աուդիտ անցնելը ձևավորված ԱՊԿ պահուստն աուդիտի կողմից հաստատված հաշվետվության ԱՊԿ մեծության հետ: 1-ին տվյալների խումբը կարող ենք ստանալ բանկերի հրապարակած 2020 թվականի 4-րդ եռամսյակի հաշվետվությունից, 2-րդը՝ աուդիտի եզրակացությամբ հաշվետվություններից: Նշված ուսումնասիրության արդյունքներն ամփոփված են աղյուսակ 7-ում:

***Աղյուսակ 7. ՀՀ բանկերի վարկերի գծով ԱՊԿ պահուստի մեծությունը 31.12.20-ի դրությամբ նախքան աուդիտ անցնելը և աուդիտի ստուգումից հետո (հազար ՀՀ դրամ)***

| Հ/Հ | Բանկի անվանում | Աուդիտից հետո | Նախքան աուդիտը | Տարբերություն |
|---|---|---|---|---|
| 1 | Ամերիաբանկ | 23,591,602 | 23,591,601 | 1 |
| 2 | Հայբիզնեսբանկ | 21,741,251 | 9,107,949 | 12,633,302 |
| 3 | Արդշինբանկ | 21,549,451 | 21,461,609 | 87,842 |
| 4 | Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ | 13,082,663 | 14,083,095 | (1,000,432) |
| 5 | Ինեկոբանկ | 10,885,474 | 10,885,475 | (1) |
| 6 | Կոնվերս բանկ | 8,850,544 | 9,129,029 | (278,485) |
| 7 | ՎՏԲ-Հայաստան բանկ | 23,947,124 | 24,824,600 | (877,476) |
| 8 | Հայէկոնոմբանկ | 3,377,495 | 2,185,367 | 1,192,128 |
| 9 | Արմսվիսբանկ | 6,236,256 | 6,545,593 | (309,337) |
| 10 | Յունիբանկ | 10,282,759 | 10,138,235 | 144,524 |
| 11 | Արարատբանկ | 5,233,168 | 5,348,938 | (115,770) |
| 12 | Էյչ-էս Բի Սի Բանկ Հայաստան | 6,918,282 | 6,918,282 | - |
| 13 | Արցախբանկ | 6,370,443 | 6,389,893 | (19,450) |
| 14 | Էվոկաբանկ | 4,090,384 | 4,090,384 | - |
| 15 | Այդի բանկ | 12,108,714 | 7,587,950 | 4,520,764 |
| 16 | Բիբլոս Բանկ Արմենիա | 812,080 | 812,080 | - |
| 17 | Մելլաթ բանկ | 357,447 | 327,668 | 29,779 |
| **Ընդամենը** | | **179,435,137** | **163,427,748** | **16,007,389** |

Դրական տարբերությունը նշանակում է, որ ի սկզբանե բանկը ձևավորել էր ավելի փոքր ԱՊԿ պահուստ, քան նախատեսում է ՖՀՄՍ 9 «ֆինանսական գործիքներ» ստանդարտը, ընդ որում նշեմ, որ ստան-

դարտը ԱՊԿ հաշվարկի խիստ ուղեցույց չի սահմանում, և հաշվարկի գործընթացը մշտապես ուղեկցվում է մասնագիտական դատողություններով, սակայն կարևոր է, որ հաշվարկը կատարելիս օգտագործվի ապագայամետ սցենար՝ հիմնված հաշվետու օրվա դրությամբ ողջամտորեն հասանելի և հիմնավոր տեղեկատվության վրա[2, էջեր 134-137]: Աղյուսակ 7-ից տեսանելի է, որ առավել խոշոր դրական տարբերություններն ի հայտ են եկել 3 բանկերի դեպքում («Հայբիզնեսբանկ», «Այդի» բանկ և «Հայէկոնոմբանկ»), իսկ 2 բանկի դեպքում («Արցախբանկ», «Արմսվիսբանկ») աուդիտի գնահատումով ԱՊԿ հաշվարկը օպտիմալ կերպով չէր կատարվել: Վերոնշյալը փաստում է, որ որոշ ՀՀ առևտրային բանկեր դեռևս դժվարությունների են բախվում վարկերի պարտքային որակը բնութագրող ԱՊԿ հաշվարկն իրականացնելիս, սակայն դա լուրջ հետևանքների տեղիք չի տալիս, քանի որ տարեկան ֆինանսական աուդիտի ժամանակ տրվում են համապատասխան ճշգրտումներ կամ բացահայտման միջոցով այդ մասին տեղեկացվում է ֆինանսական տեղեկատվություն օգտագործողին:

## Եզրակացություն

Ամփոփելով սույն ուսումնասիրությունը՝ կարող ենք փաստել, որ 2020 թվականի տարեսկզբի նկատմամբ նույն տարվա տարեվերջին ՀՀ բանկերի ակտիվներն ու վարկային պորտֆելն աճել են համապատասխանաբար 14.5%-ով և 14.8%-ով, ընդ որում աճը մասամբ պայմանավորված է ՀՀ դրամի արժեզրկմամբ:

ՀՀ բանկերի վարկային պորտֆելը շարունակում է զբաղեցնել գերակա մասնաբաժին ակտիվների շարքում, որը 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 62%: Նշված վարկային պորտֆելի գրեթե կեսը կենտրոնացված է 3 բանկերում:

Որպես ֆինանսական գործիք վարկերի վերադարձելիությունը նկարագրող ցուցիչի դերում կարող է հանդես գալ ՖՀՄՍ 9 «ֆինանսական գործիքներ» ստանդարտով սահմանվող ակնկալվող պարտքային կորստի պահուստի մեծությունը, որի ընդհանուր մեծությունը ՀՀ բանկերի վարկերի դեպքում 2020 թվականի ընթացքում աճել էր

37%-ով: Միևնույն ժամանակահատվածում աճել է նաև վերջինիս մասնաբաժինը ՀՀ բանկերի վարկային պորտֆելի համախառն հաշվեկշռային արժեքում և կազմում է 4.2% նախկին 3.5%-ի փոխարեն:

ՀՀ 17 առևտրային բանկերի 2020 թվականի տարեվերջի աուդիտ չանցած և աուդիտ անցած հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բանկերից 5-ը վարկերի պարտքային որակը բնութագրող ԱՊԿ հաշվարկը իրականացրել էին էական թերություններով: Այնուամենայնիվ, վերջինիս գծով տրվել են համապատասխան ճշգրտումներ կամ բացահայտվել աուդիտի եզրակացությունում:

ՀՀ բանկերի վարկային պորտֆելի ԱՊԿ պահուստի ուսումնասիրության արդյունքում եզրահանգում ենք, որ ՀՀ բանկերի վարկային պորտֆելի պարտքային որակը որոշակիորեն նվազել է՝ չնայած նշված պորտֆելի դրամային մեծությամբ աճի և 2020 թվականի ընթացքում տրամադրված «վարկային արձակուրդների»: ԱՊԿ պահուստի աճը մասնակիորեն պայմանավորված է նաև ՀՀ վարկարժանության գնահատականի նվազմամբ:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Բանկերի և բանկային գործունեության մասին ՀՀ օրենք, հոդված 4, https://www.arlis.am/documentview.aspx?docid=80071 (01.08.2021թ.)
2. The IFRS Foundation, IFRS 9 Financial Instruments, https://www.ifrs.org/content/dam/ifrs/publications/pdf-standards/english/2021/issued/part-a/ifrs-9-financial-instruments.pdf, (01.08.2021թ.)
3. RUMELS Management Solutions, 2019-2020թթ. ՀՀ բանկային համակարգի վարկային ներդրումները, https://banks.am/am/news/interviews/20868, (26.02.2021)
4. Հայես Ա., Coefficient of Variation (CV), 16.04.21, https://www.investopedia.com/terms/c/coefficientofvariation.asp, (01.08.2021թ.)

5. ՀՀ ԿԲ, Փոխարժեքների արխիվ, https://www.cba.am/AM/SitePages/ExchangeArchive.aspx?FilterDate=2020-12-31, (01.08.2021թ.)
6. Ազատ Մանուկյան, ՖՀՄՍ 9 և ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկը COVID-19-ի պայմաններում, 21.04.20, https://banks.am/am/news/interviews/19104, (01.08.2021թ.)
7. FitchRatings, Fitch Downgrades Armenia to 'B+'; Outlook Stable,05.10.20 https://www.fitchratings.com/research/sovereigns/fitch-downgrades-armenia-to-b-outlook-stable-05-10-2020, (01.08.2021թ.)

## ANALYSIS OF CREDIT PORTFOLIO OF RA BANKS THROUGH ECL RESERVE FOR 2020

**Suren Parsyan**
ASUE, Chair of Microecomics, PhD in Economics,
Associate Professor
**Henrik Manukyan**
UFAR, Faculty of Finance and Management,
Master student

This article presents the evaluation of the loan portfolio of the Armenian banking system with regard to ECL reserve as of the end of 2020. The change in the loan portfolio compared to the previous year, its proportion in the assets of Armenian banks, as well as its concentration in the Armenian banking system are considered. The structure of the loan portfolio's expected loss is studied as well as the possible reasons for the change of the latter compared to the previous year's index, the main ones being the reduction of the credit quality and the decrease of the RA credit rating.

**Keywords:** Loan portfolio, IFRS 9 "Financial Instruments", expected credit losses, credit quality, standard deviation.

# АНАЛИЗ КРЕДИТНОГО ПОРТФЕЛЯ БАНКОВ РА ЧЕРЕЗ РЕЗЕРВ ОЖИДАЕМЫХ КРЕДИТНЫХ УБЫТКОВ НА 2020 ГОД

**Сурен Парсян**
АГЭУ, кафедра микроэкономики, к.э.н., доцент
**Генрик Манукян**
ФУА, факультет Финансов и менеджмента, магистр

В данной статье представлен оценка кредитного портфеля банковской системы Армении с учетом резервов ожидаемых кредитных убытков по состоянию на конец 2020 года. Исследуются изменение кредитного портфеля по сравнению с предыдущим годом, его удельный вес в активах армянских банков, а также его концентрация в банковской системе Армении. Изучается структура ожидаемого убытка кредитного портфеля, а также возможные причины его изменения по сравнению с показателем предыдущего года, основными из которых являются снижение кредитного качества и снижение кредитного рейтинга РА.

**Ключевые слова:** кредитный портфель, МСФО 9 «Финансовые инструменты», ожидаемые кредитные убытки, кредитное качество, среднеквадратичное отклонение.

*Տրվել է փպագրության՝ 10.10.2021թ.*
*Գրախոսվել է՝ 15.12.2021թ.*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

***Աիդա Հովհաննիսյան***
*ԵՀ, Վանաձորի մասնաճյուղ*
*aidahovhannisyan93@gmail.com, +374 94 390555*

*Ներկայումս Հայաստանի և Թուրքիայի միջև գոյություն չունեն պետականորեն կարգավորվող ուղղակի առևտրատնտեսական հարաբերություններ: Փաստացի, երկու երկրների միջև արտաքին առևտուրը հիմնականում իրականացվում է հարևան երկրների տարածքներով (Վրաստան, Իրան): Նշենք, որ ՀՀ տնտեսության մեջ, հատկապես արտաքին առևտրում, մասնավորապես ներմուծման մեջ, Թուրքիան զգալի դերակատարություն ունի: Անկախ նրանից, որ ՀՀ-ի և Թուրքիայի միջև բացակայում են պաշտոնական դիվանագիտական և տնտեսական հարաբերությունները, արտաքին առևտրային հարաբերությունները հարևան երկրների միջև զարգանում են, իսկ վերջին շրջանում բուռն քննարկման առարկա են դարձել հայ-թուրքական սահմանի վերաբերյալ հարցադրումները:*

*Հետազոտության նպատակն է՝ համակողմանիորեն ուսումնասիրել ու վերլուծել հայ-թուրքական սահմանի վերաբացման ազդեցության դրական և բացասական հետևանքները, ինչպես նաև երկու երկրների միջև առավել արդյունավետ տնտեսական համագործակցության ուղիները:*

***Հիմնաբառեր.*** *սահմանի վերաբացում, էմբարգո, արտաքին առևտուր, տրանսպորտային ծախսեր, տարածաշրջան, երկաթուղային կապ, մրցունակություն:*

Հայաստանի և Թուրքիայի միջև առևտրատնտեսական կապերը հաստատվել են ՀՀ անկախության հռչակումից ու Թուրքիայի կողմից 1991 թվականին այդ փաստը պաշտոնապես ճանաչելուց անմիջապես հետո:

Սակայն 1993թ.-ին, ղարաբաղյան հակամարտությամբ պայմանավորված, Թուրքիան միակողմանիորեն փակել է Հայաստանի հետ սահմանը և էմբարգո սահմանել երկկողմ առևտրային հարաբերությունների վրա՝ դրանով ընդգծելով իր խիստ կողմնակալ՝ ադրբեջանամետ դիրքորոշումը:

Հետագայում՝ 1995թ.-ին, օդային սահմանը վերաբացվել է, իսկ ցամաքային սահմանի վերաբացման և դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը խոչընդոտում են Թուրքիայի կողմից առաջ քաշած նախապայմանները՝ մասնավորապես, Լեռնային Ղարաբաղի վերահսկողության տակ գտնվող շրջանների վերադարձ Ադրբեջանին, Թուրքիայի տարածքային ամբողջականության ճանաչում և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումից հրաժարում, որոնք էլ մշտապես անջրպետ են հանդիսացել երկու երկրների միջև հարաբերությունների վերջնական կարգավորման համար: 1991թ.-ից սկսած բազմաթիվ փորձեր են կատարվել երկկողմանի հարաբերությունների կարգավորման ուղղությամբ, սակայն դրանք բոլորն էլ անհաջողությամբ են պսակվել Թուրքիայի կողմից որդեգրած և շարունակական բնույթ կրող հակահայկական քաղաքականության պատճառով:

Հայ-թուրքական և՛ դիվանագիտական, և՛ առևտրատնտեսական հարաբերությունների կարգավորումն առանձնակի կարևորություն ունի առաջին հերթին տարածաշրջանում անվտանգություն և տնտեսական զարգացում ապահովելու տեսանկյունից, քանի որ երկու երկրների միջև փակ սահմանները տարածաշրջանում լարվածության առաջացման հիմք են հանդիսանում:

Այնուամենայնիվ, Թուրքիան պնդում է, որ սահմանների փակումը միջազգային իրավունքի տեսանկյունից չի կարող որակվել որպես շրջափակում կամ էմբարգո, քանի որ երկու հասկացությունն էլ ունեն կոնկրետ իրավական սահմանումներ և նշանակություն: Վերջինս հավաստիացնում է, որ Հայաստանի նկատմամբ առկա չեն սանկցիաներ՝ որպես հիմնավորում նշելով երկու երկրների միջև առկա տարաբնույթ կապերը:

Առևտրին զուգահեռ ընդլայնվում են նաև Թուրքիայի և Հայաստանի միջև մարդկային կապերը, ինչի մասին են վկայում Երևան-Ստամբուլ ուղևորափոխադրումներ իրականացնող կազմակերպությունների թվի աճը, ինչպես նաև երկու քաղաքների միջև չվերթների իրականացումը [1, p. 24]:

Այսպիսով, անկախության տարիներից ի վեր ՀՀ-ի և Թուրքայի միջև կայուն կերպով զարգացել և շարունակում են զարգանալ առևտրատնտեսական հարաբերություններ, որոնց տարեկան շրջանառությունը կազմում է շուրջ 200-270 մլն դոլար:

Թուրքիան շահում է, իսկ ՀՀ-ն՝ ավելի շատ վճարում ներկրման չարդարացված ծախսերի պատճառով: Հետևաբար, արտաքին առևտրային ճիշտ քաղաքականության իրականացման գործում երկու երկրների միջև առևտրատնտեսական պայմանները, ձևերը և հնարավորությունները անհրաժեշտ է ամրագրել առևտրատնտեսական համապատասխան պայմանագրերի միջոցով [2, էջ 173]:

Ներկայացված աղյուսակում բերված են 2009-2017թթ. ընթացքում ՀՀ-ի և Թուրքիայի միջև փոխադարձ առևտրի ցուցանիշների պաշտոնական տվյալները, բնականաբար ոչ պաշտոնական առևտուրն ավելի մեծ չափերի է հասնում (տես՝ աղյուսակ 1):

**Աղյուսակ 1**

**Հայաստան-Թուրքիա առևտրաշրջանառության պաշտոնական ծավալները 2009-2020թթ.** (մլն. դոլար)

| | 2009 | 2010 | 2011 | 2012 | 2013 | 2014 | 2015 | 2016 | 2017 | 2018 | 2019 | 2020 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ-ի ընդհանուր առևտրաշրջանառության ծավալները | 4001.94 | 4794.3 | 5480.97 | 5694.92 | 5956.83 | 5920.9 | 4740.85 | 5075.34 | 6425.52 | 7375.16 | 8154.07 | 7103.87 |
| Թուրքիայի տեսակարար կշիռը ՀՀ առևտրում % | 4.5 | 4.4 | 4.4 | 4.4 | 3.6 | 3.9 | 2.9 | 3.2 | 3.6 | 3.5 | 3.3 | 3.1 |
| Հայաստան-Թուրքիա առևտրային ծավալները | 179.15 | 212.1 | 241.8 | 214.5 | 212.4 | 233.84 | 138.46 | 164.29 | 230.24 | 255.2 | 270.23 | 178.62 |
| ՀՀ և Թուրքայի հետ արտաքին առևտրի դինամիկան % | 66.3 | 118.6 | 114.2 | 88.9 | 99.1 | 110.2 | 59.2 | 118.7 | 140.3 | 114.0 | 105.9 | 66.0 |
| Թուրքիայից Հայաստան ներմուծում | 177.95 | 210.87 | 240.75 | 213.61 | 210.85 | 232.35 | 136.97 | 163.79 | 229.26 | 252.68 | 268.0 | 178.13 |
| Հայաստանից Թուրքիա արտահանում | 1.2 | 1.23 | 1.04 | 0.92 | 1.59 | 1.49 | 1.49 | 0.5 | 0.98 | 2.52 | 2.23 | 0.49 |
| Առևտրային հաշվեկշիռը | -176.75 | -209.64 | -239.71 | -212.69 | -209.26 | -30.86 | -135.48 | -163.29 | -228.28 | -250.16 | -265.77 | -177.64 |

Աղյուսակի տվյալները փաստում են, որ 2009թ.-ից ի վեր ՀՀ-ի և Թուրքիայի միջև առևտրաշրջանառության ծավալները գերազանցել են 200 մլն ԱՄՆ դոլարը, ընդ որում առևտրաշրջանառության ծավալների ավելացումը տեղի է ունեցել բացառապես ներմուծման հաշվին: Հարկ է նաև նշել, որ հայ-թուրքական առևտրային հաշվեկշիռը մշտապես բնութագրվել է բացասական սալդոյով: Վիճակագրական տվյալները փաստում են, որ 2009-2020թթ. ընթացքում ներմուծումը գերազանցել է արտահանմանը մոտ 120 անգամ: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում բացասական սալդոն տատանվում է -176-ից մինչև -250 մլն ԱՄՆ դոլար: Ամենաբարձր բացասական սալդոն դիտվել է 2019թ.-ին -265 մլն ԱՄՆ դոլար:

Այսպես, Հայաստանի և Թուրքիայի միջև արտաքին ապրանքաշրջանառությունը 2009-2020թթ. ընթացքում ավելացել է գրեթե 2 անգամ, ընդ որում՝ արտահանումը նվազել է 40.8%-ով, իսկ ներմուծումն ավելացել է 50.6%-ով: Արտահանման ծավալները չեն գերազանցել 2.5 մլն դոլարը, այն դեպքում, երբ ներմուծումը վերջին 10 տարիներին կազմել է 170-260 մլն ԱՄՆ դոլար: Ընդ որում, Թուրքիայի խիստ խտրական քաղաքականության միջոցով թուրքական շուկան միշտ էլ անհասանելի է եղել հայաստանյան ապրանքների համար: Պատճառը ոչ թե հայկական արտադրանքի որակը կամ մրցակցային առավելություններն են, այլ Թուրքայի կողմից կիրառվող մաքսային քաղաքականության միջոցով իրականացվող սահմանափակումները, որի արդյունքում արհեստականորեն խոչընդոտվում է հայկական ապրանքների մուտքը թուրքական շուկա: Եվ չնայած այն հանգամանքին, որ երկու երկրներն էլ հանդիսանում են Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ, վերջինիս կանոնակարգերը մի երկրի դեպքում գործում են, մյուսի դեպքում՝ ոչ:

Ի տարբերություն Հայաստանի, որը ԱՀԿ պահանջների հիման վրա ներմուծվող ապրանքների համար սահմանում է մինչև 15% մաքսատուրք, Թուրքիան սահմանափակումներ է մտցնում ներմուծվող ապրանքների միայն կեսի վրա, իսկ երկրորդ կեսի համար հարկը հասնում է մինչև 225% -ի [3, p. 22]:

Ուսումնասիրելով Հայաստանի և Թուրքիայի միջև արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը, կարող ենք փաստել, որ ներմուծվող թուրքական արտադրանքի կառուցվածքում գերակշռում են քիմիական, նավթային, շինարարական, պլաստմասսե, կաշվե արտադրանքը, բանջարեղենը, հագուստը, տարատեսակ գործվածքները, տնտեսական ապրանքները, էլեկտրական և կենցաղային տեխնիկան: 2020 թվականին Թուրքիայից ներմուծված ապրանքախմբերում ամենաբարձր ցուցանիշով բնութագրվում է «Վառելանյութեր, նավթ և նավթամթերք» ապրանքային խումբը՝ 5.3 մլն ԱՄՆ դոլար:

Ներմուծման մեջ, բացի վերոնշյալից, մեծ տեղ են զբաղեցնում նաև «Լվացող և մաքրող միջոցներ», «Բամբակե գործվածքներ» և «Ալյումինե տրամատ և ձող» ապրանքախմբերը՝ ընդհանուր ավելի քան 17.5 մլն ԱՄՆ դոլար արժողությամբ:

Հարկ է նկատել, որ այդ նույն թվականին արտահանվել է միայն 11 ապրանքախումբ՝ թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, ոսկերչական իրեր, հեռահաղորդակցման սարքեր, էլեկտրական սարքեր, ավտոմատ կարգավորման սարքեր, մանրաթել օպտիկ և քուղ մանրաթելա-օպտիկ, ոսպնյակ և այլ օպտիկ տարրեր, ժամացույցներ, ժամացույցի գոտի, ժապավեն և դրանց մասեր, ձեռքով կատարված նկար, ճեպանկար և կոլաժներ: Արտահանման մեջ զգալի բաժինը զբաղեցրել է «Ժամացույցի գոտի, ժապավեն և դրանց մասեր» ապրանքախումբը՝ ընդամենը 186 հազ. ԱՄՆ դոլար արժողությամբ:

2020թ.-ին 2019թ.-ի համեմատ ընդհանուր առևտրաշրջանառությունը երկու երկրների միջև նվազել է՝ պայմանավորված 2020թ.-ի սեպտեմբերին սկսված ղարաբաղյան երկրորդ պատերազմով: Հաշվի առնելով պատերազմի ընթացքում Թուրքիայի բացահայտ աջակցությունն Ադրբեջանին՝ 2020թ.-ի հոկտեմբերի 20-ի ՀՀ կառավարության N1708-Ն որոշմամբ 2021 թվականի հունվարի 1-ից վեց ամսյա էմբարգո դրվեց Թուրքիայից ներմուծվող ապրանքների վրա: 2021թ.-ի հունիսի 24-ի N1048-Ն որոշմամբ թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծման ժամանակավոր արգելքը երկարացվեց ևս վեց ամսով: Մեր կարծիքով, սակայն, արգելքի սահմանումը այնքան էլ չի փոփոխել Թուրքիայից ապրանքների ներմուծման ծավալների ընդ-

հանուր պատկերը, քանի որ թուրքական ապրանքները մաքսային սահմանում վերապիտակավորվում են և որպես այլ երկրի արտադրանք ներկրվում՝ Հայաստան:

Այսպես, արցախյան վերջին պատերազմի արդյունքում Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեջանի ղեկավարների կողմից նոյեմբերի 10-ին ստորագրված հայտարարության 9-րդ կետը ամբողջությամբ նվիրված է տարածաշրջանում տնտեսական և տրանսպորտային կապերի ապաշրջափակման խնդրին. «9. Տարածաշրջանում բոլոր տնտեսական և տրանսպորտային կապերն ապաշրջափակվում են: Հայաստանի Հանրապետությունը երաշխավորում է տրանսպորտային կապերի անվտանգությունը Ադրբեջանի Հանրապետության արևմտյան շրջանների և Նախիջևանի Ինքնավար Հանրապետության միջև՝ երկու ուղղություններով քաղաքացիների, տրանսպորտային միջոցների և ապրանքների անխոչընդոտ տեղաշարժը կազմակերպելու համար: Տրանսպորտային հաղորդակցության հսկողությունն իրականացնում են ՌԴ ԱԴԾ Սահմանապահ ծառայության մարմինները: Կողմերի համաձայնությամբ կապահովվի Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը և Ադրբեջանի արևմտյան շրջանները կապող տրանսպորտային նոր ուղիների շինարարությունը» [4]:

Այսպիսով, կողմերը պարտավորվել են ապաշրջափակել տարածաշրջանի տնտեսական ու տրանսպորտային կապերը, ինչը մեր կարծիքով, կարող է նաև հիմք հանդիսանալ Կարս-Գյումրի-Նախիջևան--Մեղրի-Բաքու ճանապարհի շահագործման համար: Այդ ճանապարհը իհարկե որոշակի հնարավորություններ կընձեռնի Հայաստանին իր տնտեսության հետագա զարգացումն ապահովելու, ինչպես նաև Իրանի ու Ռուսաստանի հետ երկաթուղային կապ հաստատելու համար:

Դիտարկելով հայ-թուրքական հարաբերությունների բացառապես տնտեսական կողմը, նշենք, որ Կարս-Գյումրի-Նախիջևան-Մեղրի-Բաքու ճանապարհի շահագործման դեպքում Հայաստանը երկաթուղային կապ կունենա Իրանի հետ Ջուղայի միջոցով: Ներկայումս Իրանի հետ ՀՀ-ի հաղորդակցումը ավտոմոբիլային է, ճանապարհն անցնում է Մեղրիի լեռնային դժվար ռելիեֆ ունեցող շրջանով: Հեռա-

վորությունը Ջուլֆայից դեպի Երևան Կարս-Գյումրի-Նախիջևան-Մեղրի-Բաքու երկաթուղով կլինի 168 կմ, մինչդեռ հեռավորությունը Մեղրիից Երևան ճանապարհահատվածով 372 կմ է: Հայաստանից Իրան Հյուսիս-հարավ ճանապարհի շինարարության արժեքը գնահատվում է 2-3 միլիարդ ԱՄՆ դոլար: Կարս-Գյումրի-Նախիջևան-Մեղրի-Բաքու ամբողջ ճանապարհի վերականգնման արժեքը, կազմում է շուրջ 434 մլն ԱՄՆ դոլար, ինչը 5-6 անգամ պակաս է: Երկաթուղու միջոցով բեռնափոխադրումների իրականացումը կիանգեցնի Մեղրիի շրջանում Իրանի և Հայաստանի միջև մեքենաների հոսքի կրճատմանը, ինչը դրական ազդեցություն կունենա այս շրջանի էկոլոգիական միջավայրի վրա:

Ջուղայից Իրան ճանապարհի գործարկումը հիմնովին կփոխի Կարս-Գյումրի-Նախիջևան-Մեղրի-Բաքու երկաթուղու դերն ու նշանակությունը Հայաստանի համար, քանի որ բացի Իրանից Հայաստան ուղևորվող բեռներից, կիայտնվեն նաև բեռներ, որոնք Իրանից Հայաստանի տարանցիկ ճանապարհով կուղարկվեն դեպի Սևծովյան նավահանգիստներ: Այս դեպքում Հայաստանը կսկսի խաղալ տարանցիկ երկրի դեր [5, с. 17]:

Բացի այդ, սահմանների բացումը ուղղակիորեն կպահանջի, որ Հայաստանը և Թուրքիան նախաձեռնեն առևտրատնտեսական կապերի կարգավորման բանակցությունների գործընթացը, հաշվի առնելով այն, որ ԱՀԿ-ին (WTO) անդամակցության համար քվեարկելիս Թուրքիան վերապահում է արել նշելով, որ չի պատրաստվում կիրառել ԱՀԿ-ի օրենքներն ու կանոնները Հայաստանի հետ տնտեսական փոխհարաբերություններում: ԱՀԿ ստեղծման Մարաքեշի համաձայնագրի 13-րդ հոդվածով նախատեսվում է, որ ԱՀԿ բազմակողմ-պարտադիր համաձայնագրերը չեն կիրառվում որևէ Անդամի և որևէ այլ Անդամի միջև, եթե այդ Անդամներից որևէ մեկը նրանցից որևէ մեկի Անդամ դառնալու պահին չի համաձայնում այդ կիրառմանը [6]: Այսինքն՝ համապատասխան փաստաթղթերում Հայաստանը չի կարող նշվել ոչ ընդունող, ոչ էլ ուղարկող երկիր: Սակայն, ինչպես վկայում են վիճակագրական տվյալները, երկու երկրների միջև առևտրաշրջանառությունը շարունակում է զարգանալ, ընդ որում, թուրքական ապ-

ռանքները Հայաստանի մաքսային տարածքով մուտք են գործում հայկական շուկա:

Կարող ենք ենթադրել, որ Հայաստանի և Թուրքիայի միջև ուղղակի երկաթուղային հաղորդակցության բացմամբ, կկարգավորվեն նաև վերոնշյալ մաքսային քաղաքականության խնդիրները, և թուրքական շուկան կդառնա հասանելի Հայաստանի համար:

Միանշանակորեն, սահմանների վերաբացումը Թուրքիայի համար գրավիչ կարող է լինել տարանցիկ ճանապարհների առումով, մասնավորապես նկատենք, որ Կարս-Գյումրի երկաթուղու վերաշահագործման հնարավորություն կլինի:

Սահմանների վերաբացումն զարգացման հնարավորություններ է ստեղծում Թուրքիայի հյուսիս-արևելյան ռեգիոնների համար: Այդ տարածաշրջանի տնտեսական ցուցանիշները տարբերվում են Թուրքիայի մյուս տարածաշրջանների միջին ցուցանիշներց: 2020թ.-ի տվյալների համաձայն Հայաստանում մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն կազմում է 4177 դոլար, Թուրքիայում այս ցուցանիշը 10.807 դոլար է: Արևելյան շրջաններում Թուրքիայի այդ նույն ցուցանիշը շուրջ 5 անգամ ցածր է այդ նույն Թուրքիայի միջին ցուցանիշից: Սա նշանակում է, որ արևելյան շրջանները հինգ անգամ քիչ զարգացած են, քան միջին Թուրքիան և հետևաբար 2,5 անգամ քիչ է զարգացած, քան Հայաստանը: Ռեգիոնալ հեռանկարներից ելնելով՝ Հայաստանը Թուրքիայից առաջ է Թուրքիայի սահմանային շրջանների նկատմամբ: Այս պատճառով երկաթուղային հաղորդակցության վերականգնումը կնպաստի Թուրքիայի հյուսիս-արևելյան շրջաններում զբոսաշրջության և առևտրի զարգացմանը: Վերջինս կնպաստի այդ շրջաններում տնտեսական աճին և բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

Ճանապարհների մեծամասնությունը՝ ներառյալ ցամաքային և ծովային տրանսպորտը, Հայաստանը կապում են իր հիմնական առևտրային գործընկերների հետ միմիայն Վրաստանի միջոցով: Իր մենաշնորհային դիրքի պատճառով Վրաստանը հայաստանյան արտահանողներից և ներմուծողներից պաշտոնապես և ոչ պաշտոնապես մեծ գումարներ է գանձում: Իսկ բարձր առևտրային ծախքերը,

իրենց հերթին խոչընդոտ են հանդիսանում Հայաստանի արտաքին առևտրի համար: Համաձայն 2007թ. AEPLAC-ի կողմից իրականացված հետազոտության տվյալների՝ տրանսպորտային ծախքերը կազմում են ներմուծվող և արտահանվող ապրանքների անվանական արժեքի 20-25%-ը: Սա աշխարհի մասշտաբով ամենաբարձր ցուցանիշներից է, որ Հայաստանին մեկ մակարդակի վրա է դնում Մոնղոլիայի հետ միասին, որի հեռավորությունը մոտակա ափից, սակայն, 10 անգամ ավելի հեռու է, քան Հայաստանը [7, p.2]:

Այսպես, Թուրքիայի հետ սահմանի վերաբացման արդյունքում բեռնափոխադրման նոր հնարավորություններ կստեղծվեն Թուրքիայի տարածքով դեպի Եվրոպա և ավելի հեռու ուղևորվող բեռների համար, քանի որ Սև ծովի նավահանգիստների փոխարեն կօգտագործվեն Միջերկրական ծովի նավահանգիստները, ինչը էականորեն կնպաստի տրանսպորտային ծախսերի կրճատմանը և հայկական արտադրանքի մրցունակության բարձրացմանը: Որպես հայ-թուրքական սահմանի վերաբացման արդյունք, Վրաստանը ստիպված կլինի իջեցնել բեռնափոխադրումների ծախսերը, Հայաստանը հնարավորություն կստանա օգտվել Միջերկրածովյան նավահանգիստներից, ինչն էլ թույլ կտա զգալի խնայողություններ կատարել:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ սահմանի վերաբացումը ավելի շատ ազդեցություն կգործի Հայաստանի վրա, և այդ ազդեցությունը կունենա թե՛ դրական, և թե՛ բացասական հետևանքներ: Դրական հետևանք կլինի արտահանման տրանսպորտային ծախսերի նվազումը, որի շնորհիվ հասանելի կդառնան նոր շուկաներ և խթան կհանդիսանան ՀՀ տնտեսության զարգացման համար: Բացասական հետևանքներից հարկ է շեշտել թուրքական մեծ թվով մրցունակ ապրանքների ներխուժումը հայաստանյան շուկա, և տեղական արտադրողը մրցակցությանը դիմակայելու խնդրի առաջ կկանգնի: Չպետք է մոռանալ նաև ՀՀ քրդերի մեծաքանակ ներխուժման մասին: Բացի այդ, Թուրքիան համարվում է բավականին անկայուն և ոչ վստահելի առևտրային գործընկեր, սա կարող է հանգեցնել հայկական արտադրողների նկատմամբ առևտրի խտրական, ոչ արդար կանոնների կիրառման: Սակայն, Ադրբեջանն ու Թուրքիան ևս անմասն չեն մնա ա-

պաշրջափակման օգուտներից: Այսպես, Թուրքիան Ադրբեջանին կապող՝ Հայաստանով անցնող ամենակարճ ճանապարհի բացման դեպքում երկու երկրների միջև տրանսպորտային ծախսերը կկրճատվեն 10%-ով [8, p. 32]:

Հայ-թուրքական հարաբերությունների չկարգավորված բնույթը, մասնավորապես՝ փակ սահմանը, Հայաստանի ազգային անվտանգության համար ստեղծում է սպառնալիքներ և խոչընդոտում Հայաստանի կայուն զարգացման գործընթացին: Այդ հարաբերությունների չկարգավորվածությունն իր անմիջական բացասական ազդեցությունն է ունենում նաև տարածաշրջանում կայունության ամրապնդման, տարածաշրջանային համագործակցության զարգացման վրա [9]:

Սակայն, Թուրքիայի հետ այսօրվա հարաբերություններում Հայ Դատը չպետք է դառնա շահարկման թեմա, քանի որ պահանջատիրությունը հայ ժողովրդին, նրա սերունդներին պատկանող ազգային խնդիր է, որի լուծումը մնում է պատմությանն ու սերունդներին:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Kocharyan H. Opening armenian-turkish borders strategic implications for Armenia, American University of Armenia, Yerevan 2012
2. Թորոսյան Թ. Ծ. «Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացներում», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան 2012
3. Gulteking Punssmann B., Dizman A., Kirdar S. and Gevorgyan A. Review of legal issues between Armenia and Turkey, TEPAV and International Center for Human Development, Ankara-Yerevan 2012 https://www.tepav.org.tr/upload/files/1353684848-2.Review_of_Legal_Issues_between_Armenia_and_Turkey.pdf (15.09.2021թ.)
4. Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության նախագահի և Ռուսաստանի Դաշնության նախագահի հայտարարությունը, 10.11.2020,

https://www.primeminister.am/hy/press-release/item/2020/11/10/Announcement/ (21.07.2021թ.)
5. Наталия Мириманова «Восстановление железных дорог на южном кавказе: оценка потенциального экономического эффекта», International Alert, 2013
6. Առևտրի համաշխարհային կազմակերպության ստեղծման Մարաքեշի համաձայնագիր, 15 Ապրիլի 1994, https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=24400 (12.08.2021թ.)
7. Jrbashyan T., Barseghyan H., Sargsyan G., Slobodyanyuk V., Shaboyan A. STUDY OF THE ECONOMIC IMPACT ON THE ARMENIAN ECONOMY FROM RE-OPENING OF THE TURKISH ARMENIAN BORDERS IMPLICATIONS FOR EXTERNAL TRADE, AEPLAC Report, 2005
8. Polyakov Evgeny, Changing Trade Patterns after Conflict Resolution in the South Caucasus, World Bank, 2000
9. ՀՀ նախագահի հրամանագիրը «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին», ՆՀ-37-Ն 25.02.2007թ. https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=31189 (25.08.2021թ.)

## OPPORTUNITIES AND PROSPECTS FOR THE DEVELOPMENT OF TRADE AND ECONOMIC RELATIONS BETWEEN ARMENIA AND TURKEY

**Aida Hovhannisyan**
EU, Vanadzor Branch

Currently, there are no direct state trade and economic relations between the Republic of Armenia and the Republic of Turkey. In fact, foreign trade between the two countries is mainly carried out through the territories of neighboring countries (Georgia, Iran). It should be

noted that Turkey plays a significant role in the Armenian economy, especially in foreign trade, in particular in imports. Despite the absence of official diplomatic and economic relations between the two countries, foreign trade relations between our countries are developing, and recently the issues on the Armenian-Turkish border have become a topic of discussion.

The purpose of the study is to comprehensively study and analyze the positive and negative consequences of the impact of the reopening of the Armenian-Turkish border, as well as ways of more effective economic cooperation between the two countries.

**Keywords:** opening of borders, embargo, foreign trade, transportation costs, region, railway connection, competitiveness.

## ВОЗМОЖНОСТИ И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ТОРГОВО-ЭКОНОМИЧЕСКИХ СВЯЗЕЙ МЕЖДУ АРМЕНИЕЙ И ТУРЦИЕЙ

**Аида Оганнесян**
ЕУ, Ванадзорский филиал

В настоящее время между Республикой Армения и Турецкой Республикой отсутствуют прямые государственные торгово-экономические отношения. Фактически внешняя торговля между двумя странами в основном осуществляется через территории соседних стран (Грузия, Иран). Следует отметить, что Турция играет значительную роль в экономике Армении, особенно во внешней торговле, в частности в импорте. Несмотря на отсутствие официальных дипломатических и экономических отношений между двумя странами, внешнеторговые отношения между нашими странами развиваются, и в последнее время вопросы на армяно-турецкой границе стали горячей темой обсуждения.

Целью исследования является всестороннее изучение и анализ положительных и отрицательных последствий открытия армяно-

турецкой границы, а также путей более эффективного экономического сотрудничества между двумя странами.

***Ключевые слова:*** открытие границы, эмбарго, внешняя торговля, транспортные расходы, регион, железнодорожное сообщение, конкурентоспособность.

*Տրվել է փպագրության՝ 28.09.2021թ.*
*Գրախոսվել է՝ 01.12.2021թ.*

# ԵՐԵԽԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ.COVID-19 ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԹԱՔՆՎԱԾ ՃԳՆԱԺԱՄ

***Նարինե Տոնոյան***
*ԵՀ, Իրավագիտության ամբիոն, ի.գ.թ., դոցենտ*
*tnarik@rambler.ru, +374 91 200012*
***Լիանա Կարապետյան***
*ԵՀ, Իրավագիտության ամբիոն, մագիստրոս*
*lianakarapetyan97@gmail.com +374 77 547912*

*Սույն հոդվածի շրջանակներում քննարկվում է COVID-19-ի արդյունքում երեխաների նկատմամբ բռնության աճի և կանխարգելման հնարավոր միջոցների մասին: Խոսվում է այն հիմնական երեք ասպեկտների մասին, որոնք հատկապես համավարակի ընթացքում դարձան նախադրյալ ընտանեկան բռնության և դրա քողարկված ձևերի տարածման համար: Դրանք են՝ աղքատությունը, որպես մանկական աշխատանքի աճի նախադրյալ, ինքնամեկուսացումը և սահմանափակումները, որպես ընտանեկան բռնության քողարկման գործոն և կիբեռսպառնալիքները:*

***Հիմնաբառեր.*** *երեխաների նկատմամբ բռնություն, COVID-19, մանկական աշխատանք, ինքնամեկուսացում, ՅՈՒՆԻՍԵՖ*

«Մենք չպետք է թույլ տանք, որ այսօրվա երեխաները վերածվեն Covid-19 համավարակի սպիներով կորչող սերունդ, որոնք երկար ժամանակ կմնան այն բանից հետո, երբ այն անհետանա»
**Երեխաների նկատմամբ բռնության հարցով գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Նաջաթ Մաալա Մջիդ**

2020 թվականի հունիսի 18-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ), ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը (ՅՈՒՆԻՍԵՖ), ՅՈՒՆԵՍԿՕ-ն, ՄԱԿ-ի երեխաների նկատմամբ բռնության հարցերով գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչը և երեխաների նկատմամբ բռնության վերացման գլոբալ գործընկերությունը հրապարակել են նոր զեկույց՝ 2020 թվականին երեխաների

նկատմամբ բռնության կանխարգելման իրավիճակի վերաբերյալ գլոբալ զեկույց: Զեկույցի եզրակացությունները վկայում են բոլոր երկրներում այդ ռազմավարությունների իրագործումն ուժեղացնելու անհրաժեշտության մասին: Նոր զեկույցի համաձայն, աշխարհում երեխաների կեսը կամ տարեկան մոտ 1 միլիարդ երեխա տառապում է ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական բռնությունից, որը հանգեցնում է վնասվածքների, սահմանափակ հնարավորությունների և մահվան: Շեշտադրվեց հատկապես այն, որ ցանկացած ճգնաժամ կամ արտակարգ հանգամանքներ վատացնում են երեխաների նկատմամբ բռնության հետ կապված իրավիճակը, հենց դա է տեղի ունենում COVID-19 համաճարակի պայմաններում: Զեկույցի տվյալներով՝ աշխարհում բոլոր երեխաների կեսը տանը ենթարկվում է ֆիզիկական պատիժների: 2-ից 4 տարեկան երեխաների շրջանում այս ցուցանիշն ավելի բարձր է՝ 75%: Եվ գլոբալ համաճարակը միայն խորացնում է իրավիճակը:

COVID-19 համավարակը ավերիչ ազդեցություն է ունենում ամբողջ աշխարհի վրա: Կորոնավիրուսին զսպելու ջանքերը կենսական նշանակություն ունեն աշխարհի բնակչության առողջության համար, սակայն այն ունի նաև իր «թաքնված կողմը», այն է՝ երեխաներին բռնության ենթարկելու բարձր ռիսկայնություն, ներառյալ վատ վերաբերմունքը, գենդերային բռնությունը և սեռական շահագործումը: ՅՈՒՆԻՍԵՖ-ի գործադիր տնօրեն Հենրիետ Ֆորեն շեշտադրելով քննարկվող խնդրի արդիականությունը նշում է, «Երեխաների նկատմամբ բռնությունը միշտ համատարած է եղել, սակայն ներկայումս իրավիճակը կարող է զգալիորեն վատանալ: Մեկուսացման, դպրոցների փակման, տեղաշարժի սահմանափակումների արդյունքում չափազանց մեծ թվով երեխաներ ստիպված են մնալ բռնարարների հետ՝ չունենալով հասանելիություն այն վայրերին, որտեղ նրանք կարող են խուսափել այն վտանգներից, որոնք սովորաբար դպրոցներն են: Այս պայմաններում, ինչպես նաև ապագայի համար անհրաժեշտ է շտապ ընդլայնել երեխաների պաշտպանության ջանքերը, այդ թվում՝ սոցիալական ծառայությունների աշխատողներին նշանակելու և այդ ծա-

ռայությունները որպես երեխաների օգնության կարևորագույն համակարգեր ամրապնդելու միջոցով»:

Համաշխարհային բնակչության մեկ երրորդը գտնվում է կարանտինի մեջ COVID-19-ի կապակցությամբ, դպրոցների փակումն ազդել է ավելի քան 1,5 մլրդ երեխաների վրա: Փաստ է այն, որ շարժման սահմանափակումները, եկամտի կորուստը, մեկուսացումը, գերբնակեցումը, սթրեսի և անհանգստության բարձր մակարդակը մեծացնում են այն հավանականությունը, որ երեխաները տանը ենթարկվում են ֆիզիկական, հոգեբանական և սեռական բռնության, հատկապես այն երեխաները, ովքեր արդեն բռնի կամ անբարենպաստ ընտանեկան իրավիճակներում են: Դրա հետ մեկտեղ չնայած որ համացանցը շատ երեխաների համար դարձել են ուսուցման, աջակցության և խաղերի կենտրոն, այն նաև մեծացնում է նրանց կիբեռսպառնալիքների, ինտերնետում ռիսկային վարքագծի և սեռական շահագործման ենթարկվածությունը: Շատերի համար աճող տնտեսական խոցելիությունը կուժեղացնի երեխաների աշխատանքի, մանկական ամուսնությունների և երեխաների առևտրի վտանգը [1]: Այն խորանում է տնային տնտեսության վարման և ընտանիքի անդամների խնամքի պարտականությունների աճող բեռով, ինչպես նաև ապրուստի կորստի հետ կապված սթրեսով [2]:

Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված՝ աշխարհի տարբեր երկրներում տեղաշարժի խիստ սահմանափակումներ մտցվեցին, ամենուր տանը մնալու կոչեր էին: Կարճ ժամանակ անց առաջին հայտարարությունները եղան ընտանեկան բռնության դեպքերի աճի մասին: Ֆրանսիայում, օրինակ, կարանտինի 11-րդ օրն արդեն ահազանգերն ավելացել էին 30 տոկոսով, միայն Փարիզում՝ 36 տոկոսով:

***Հայաստանում,*** ըստ Ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության պետի տեղակալ, գնդապետ Նելլի Դուրյանի, ընտանեկան բռնությունների վերաբերյալ ահազանգերի թիվը 2019-ի մարտի 16-ից մայիսի 13-ը եղել է 301, իսկ այս տարվա նույն ժամանակահատվածում՝ 329: Այսինքն, այս տարի ահազանգերի թիվը 28-ով ավելի է [3]:

Այսպիսով, Covid-19 համավարակի ուղղակի ազդեցությունը երեխաների նկատմամբ բռնության աճի տեսանկյունից կքննարկենք **երեք ասպեկտներից**՝

1. **Աղքատություն- մանկական աշխատանքի աճի նախադրյալ**
2. **Ինքնամեկուսացում և սահմանափակումներ-ընտանեկան բռնության քողարկման գործոն**
3. **Կիբեռսպառնալիքներ**

Քննարկենք յուրաքանչյուր հիմնախնդիր առանձին վերցված: Այսպես, անժխտելի է այն, որ շատ երեխաների և նրանց ընտանիքների համար արագ զարգացող իրավիճակը նշանակում է *ընդհատված կրթություն, ընտանիքի անդամներից մեկի հիվանդություն և տնային տնտեսության եկամտի պոտենցիալ կորուստ*: COVID-19 համաճարակի հետ կապված շատ երկրներում դպրոցները փակ են, և երեխաները, որոնք մինչ այդ մասամբ ներգրավված էին մանկական աշխատանքում կամ նման ռիսկի են ենթարկվում, հնարավոր է այլևս երբեք դպրոց չվերադառնան: Շատ երեխաներ, ովքեր համատեղում են դպրոցը և աշխատանքը, կորցրել են իրենց պաշտպանական ուսումնական միջավայրը և այժմ կարող են ավելի շատ ժամեր աշխատել իրենց ընտանիքներին օգնելու համար: ՄԱԿ-ը 2021 թվականը հայտարարել է մանկական աշխատանքի վերացման միջազգային տարի: Այս տարվա ընթացքում կազմակերպվելիք միջոցառումներին մասնակցությունը հնարավորություն կտա ՄԱԿ-ի անդամ բոլոր պետություններին և գործընկերներին միավորել ջանքերը երեխաների աշխատանքի դեմ պայքարում: Նշված հիմնախնդրի կանխարգելման ռազմավարության մշակումը առավել քան կարևոր է, այդ է վկայում վիճակագրությունը, մասնավորապես այս տարի, ըստ գնահատականների, 42-ից մինչև 66 միլիոն երեխա կարող է ճգնաժամի հետևանքով հայտնվել ծայրահեղ աղքատության պայմաններում՝ համալրելով ևս մոտավորապես 386 միլիոն երեխաների շարքերը, որոնք 2019 թվականին արդեն գտնվում էին նման պայմաններում [4]:

Ինչ վերաբերում է ընտանեկան բռնությանը, փորձագետները ելնում են բռնության դեպքերի 20% աճի կանխատեսումից: Այսպիսով, գլոբալ առումով, սահմանափակող միջոցառումներով զուգորդված

յուրաքանչյուր ամիս սովորական վիճակագրությանը ավելացնում է մոտ 5 միլիոն դեպք, և կես տարի անց աշխարհում ավելանալու է 31 միլիոնով ավելի բռնության դեպք, քան համաճարակի նախորդ ժամանակահատվածում: Փորձագետները հայտնում են, որ 1,8 մլրդ երեխա ապրում է 104 երկրներում, որտեղ ընտանեկան բռնության կանխարգելման մեխանիզմները խախտվել են COVID-19 համաճարակի պատճառով: Օրինակ՝ դադարեցվել են անապահով ընտանիքներին պարբերաբար այցելող սոցիալական աշխատողների այցերը [5]:

COVID-19-ը կանգնեցնելու նպատակով ձեռնարկված կարանտինային միջոցառումները *աղջիկներին* բռնության ավելի մեծ ռիսկի են ենթարկում և զրկում են նրանց պաշտպանության հիմնական ծառայություններից օգտվելու հնարավորությունից: Այս մասին հայտնել է Plan International կազմակերպության տնօրենը, որը զբաղվում է Աֆրիկայի երկրներում երեխաների իրավունքներով:

Նա համեմատություն անցկացնելով նշեց, որ 2014 թվականին, երբ մոլեգնում էր Էբոլա վարակը, դպրոցների փակման պատճառով դեռահաս աղջիկներից շատերը նույնպես խոցելի դարձան շահագործման և բռնության համար: ՄԱԿ-ի հետազոտությունների համաձայն՝ միայն Սիեռա Լեոնեում դեռահասների հղիությունն այն ժամանակ ավելացել է 65 տոկոսով: Այսօր արդեն արձանագրվում են դեպքեր, երբ անչափահասներին պատանդ են պահում կորոնավիրուսից ինքնամեկուսացման ժամանակ: Արևմտյան Աֆրիկայում Էբոլայի համաճարակը 2014-2015 թվականներին հանգեցրել էր սեռական բռնության և դեռահասների հղիության կտրուկ աճի: Plan International-ի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ խոցելի աղջիկները, այդ թվում նրանք, ովքեր կորցրել են հարազատներին տենդի պատճառով, սկսել են ինտիմ ծառայություններ մատուցել սննդի և մաքուր ջրի համար վճարելու համար:

Երեխաների շահագործումը, այս տարածաշրջանում բժշկության ցածր մակարդակի հետ միասին, հանգեցրել է վաղ հղիության: Հարցված իրավապաշտպանները չեն ժխտում, որ նոր համաճարակը մայրցամաքում կրկին կարող է առաջացնել հարկադիր վաղ ամուսնությունների ալիք: «COVID-19-ը կործանարար ազդեցություն է գործում

իգական սեռի անձանց վրա, քանի որ կարանտինի պայմաններում նրանք ենթարկվում են բռնության ռիսկի և զրկված են պաշտպանության հիմնական ծառայություններից օգտվելու հնարավորությունից»,- պարզաբանել է Plan International կազմակերպության միջազգային աջակցության բաժնի տնօրեն Ռիչարդ Մորգանը, որը զբաղվում է Աֆրիկայի երկրներում երեխաների իրավունքների պաշտպանությամբ

Ինչ վերաբերում է կիբեռսպառնալիքներին, նշենք, որ կիբերհանցագործները կատարելագործել են քրեական միջոցները և մեթոդները՝ օգտագործելով COVID19-ի հետևանքով առաջացած սոցիալական, իրավական և հոգեբանական խնդիրները: Դպրոցական տարիքի երեխաները, ինչպես նոր, այնպես էլ արդեն ակտիվ համացանցի օգտատերերը, ավելի ու ավելի հաճախ են դառնում առցանց սեռական բնույթի հանցագործությունների թիրախ: Մասնավորապես, հանցագործները մուտք են գործում առցանց դասարաններ՝ «Zoom – bombing» անվանումը ստացած երևույթ և երեխաների նկատմամբ օգտագործում են սեքսուալ շանտաժ [6]:

2019 թվականին միայն ԱՄՆ-ում երեխաների նկատմամբ սեռական բռնության հետ կապված առցանց կոնտենտին 69 մլն հղում են հայտնաբերել, նշում են Human Rights Watch-ում: Եվրոպոլը կազմակերպությանը հայտնել է, որ COVID-19-ի տարածման շրջանում նկատվում է ինտերնետում նրանց ակտիվության ավելացում, ովքեր նման նյութեր են փնտրում: Իսկ օրինակ՝ Մեծ Բրիտանիայի երեխաների նկատմամբ դաժան վերաբերմունքի կանխարգելման ազգային ընկերության տվյալներով՝ COVID-19-ը «կատարյալ պայմաններ» է պատրաստել իրավախախտների համար՝ երեխաների նկատմամբ դաժանություն դրսևորելու համար: Human Rights Watch պորտալում նշում են, որ շատ ռեսուրսներ, ներառյալ Facebook-ը, Twitter-ը և YouTube-ը, ժամանակավորապես անցնում են կոնտենտի ավտոմատ մոդերացիայի, ինչը կարող է հանգեցնել ավելի շատ սխալների և հնարավորություն տալ պոտենցիալ վնասակար կոնտենտին:

Քննարկվածը ևս մեկ անգամ ընդգծում է, որ երեխաների պաշտպանությունը ամբողջ աշխարհում պետք է դառնա ընդհանուր գործ, որն ի զորու կլինի համախմբել մարդկանց: Անհրաժեշտ է շարունակել

և ընդլայնել աջակցությունը զարգացող երկրներին՝ շեշտը դնելով սոցիալական համակարգերի և երեխաների պաշտպանության համակարգերի վրա՝ հատուկ ուշադրություն դարձնելով առավել խոցելի երեխաներին: Ուսումնասիրության արդյունքում կարող ենք առանձնացնել հետևյալ առաջարկությունները՝

- Անհրաժեշտ է հետևողականորեն կազմակերպել առողջապահության, կրթության և խնամակալության մարմինների անձնակազմի ուսուցում COVID-19-ի հետ կապված երեխաների պաշտպանության ռիսկերի վերաբերյալ, ներառյալ սեռական շահագործման և բռնության կանխարգելման հարցերը և խնդիրների մասին անվտանգ հաղորդակցվելու ուղիները,
- Բացի այդ, երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ հանրային կրթության և իրազեկման արշավները պետք է խստացվեն, ներառյալ կանխարգելիչ միջոցառումները,
- Երեխաների, հատկապես դեռահասների ներգրավումը գնահատելու համար, թե ինչպես է COVID-19-ը ազդում նրանց վրա,
- Երկրների շուրջ 70 տոկոսը հայտնում է, որ միջոցներ են ձեռնարկել ճգնաժամի ժամանակ բռնությունից երեխաներին պաշտպանելու համար: Օրինակ, Վրաստանում ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ բացվել է մանկական թեժ գիծ 111՝ պանդեմիայի պայմաններում երեխաներին օգնելու համար: Զանգերին պատասխանում են բժիշկներն ու հոգեբանները: Ղազախստանում երեխաների և կանանց դեմ բռնության դեպքերի մասին կարելի է հայտնել WhatsApp հավելվածում, դրա համար առանձին հեռախոսագիծ է հատկացվել: Իսկ Ղազախստանի երեխաների իրավունքների պաշտպանության կոմիտեն համաճարակի սկսվելուց ի վեր ակտիվորեն տեղական մակարդակով տարածել է իր ներկայացուցիչների կոնտակտային տեղեկատվությունը [7]:

Ակնհայտ է, որ գլոբալ ճգնաժամը պահանջում է գլոբալ պատասխան-միջոցներ ձեռնարկել: Դրա համար անհրաժեշտ է վճռականորեն մոբիլիզացնել, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի ջանքերը, որպեսզի երաշխավորեն սոցիալական պաշտ-

պանությունը, առողջապահությունը, կրթությունը և մանկական ծառայությունների մատուցումը, ապահովեն երեխաների պատշաճ պաշտպանությունը և հնարավորություն ընձեռեն նրանց հաջողությամբ զարգանալ և լիարժեք իրականացնել իրենց ներուժը, երբ այս ճգնաժամը կավարտվի:

### Օգտագործված գրականության ցանկ


1. https://www.who.int/ru/news/item/18-06-2020-countries-failing-to-prevent-violence-against-children-agencies-warn
2. https://violenceagainstchildren.un.org/ru/news/
3. https://www.evnreport.com/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A5%D6%80%D5%A5%D5%B6/covid19-and-domestic-violence
4. COVID-19: Дети нуждаются в защите от детского труда сейчас как никогда! Всемирный день борьбы с детским трудом 12 июня 2020 հղումը՝ https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---europe/---ro-geneva/---sro-moscow/documents/publication/wcms_747578.pdf
5. Impact of the COVID-19 Pandemic on Family Planning and Ending Gender-based Violence, Female Genital Mutilation and Child Marriage
6. https://techcrunch.com/2020/03/26/norwegian-school-whereby/
7. https://www.belta.by/world/view/junisef-iz-za-pandemii-covid-19-vse-bolshe-detej-stanovjatsja-zhertvami-nasilija-403307-2020/


## НАСИЛИЕ В ОТНОШЕНИИ ДЕТЕЙ: СКРЫТЫЙ КРИЗИС ЭПИДЕМИИ COVID-19


**Нарине Тоноян**
ЕУ, кафедра Правоведения, к.ю.н., доцент
**Лиана Карапетян**
ЕУ, кафедра Правоведения, Магистр


В этой статье обсуждаются возможные меры по предотвращению роста насилия в отношении детей в результате

COVID-19. Речь идет о трех основных аспектах, которые стали предпосылкой распространения домашнего насилия и его скрытых форм, особенно во время эпидемии. Это: бедность как предпосылка роста детского труда, самоизоляция и ограничения как фактор сокрытия домашнего насилия և киберугрозы.

**Ключевые слова:** насилие в отношении детей, COVID-19, детская работа, самоизоляция, ЮНИСЕФ

## VIOLENCE AGAINST CHILDREN: THE HIDDEN CRISIS OF THE COVID-19 PANDEMIC

**Narine Tonoyan**
EU, Chair of Jurisprudence, PhD in Law, Associate Professor
**Liana Karapetyan**
EU, Chair of Jurisprudence, Master

This article discusses possible measures to prevent an increase in violence against children as a result of COVID-19. We are talking about three main aspects that have become a precondition for the spread of domestic violence and its hidden forms, especially during the epidemic. They are: poverty as a precondition for the growth of child labor, self-isolation, restrictions as a factor in concealing domestic violence, cyber threats.

**Keywords:** violence against children, COVID-19, child labor, self-isolation, UNICEF

*Տրվել է տպագրության՝ 06.09.2021թ.*
*Գրախոսվել է՝ 17.12.2021թ.*

# ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ CONTRA CONSTITUTIONEM (ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ)

***Արթուր Ղամբարյան***
*ՀՌՀ, Իրավունքի տեսության և սահմանադրական*
*իրավունքի ամբիոն, ի.գ.դ., պրոֆեսոր*
*artur.ghambaryan@gmail.com, +374 77 560080*

*Հոդվածի հիմնական նպատակն է ներկայացնելու Սահմանադրությանը հակառակ՝ սահմանադրական իրավունքի զարգացման ընդհանուր բնութագիրը:*

*Հոդվածի հիմնական խնդիրներն են՝ ներկայացնել contra constitutionem վարքագծի հասկացությունն ու իրավաչափության պայմանները, ցույց տալ պառլամենտի՝ արտակարգ և պետականապահպանությանը սպառնացող իրավիճակներում contra constitutionem վարքագծի անհրաժեշտությունը,*

*Հոդվածում contra constitutionem իրավունքի զարգացումը ներկայացվում է contra legem իրավունքի հայեցակարգի փիրույթում: Contra constitutionem իրավունքի զարգացման դեպքում պառլամենտը կոնկրետ իրավիճակում առաջնորդվում է ոչ թե սահմանադրության կոնկրետ նորմի պահանջներով, այլև պետականապահպան բնույթի սահմանադրական սկզբունքներով, որոնք ամրագրված են պետության հիմնադիր փաստաթղթերում:*

*Հեղինակը եզրակացնում է, որ contra constitutionem վարքագծի իրավաչափության պայմաններն են պետականապահպանության սկզբունքներից ելնելով անհրաժեշտության վիճակում գործելը ու սահմանադրությունում հրապապ փոփոխություններ կատարելու անհնարինությունը:*

***Հիմնաբառեր:*** *Contra legem իրավունքի զարգացում, contra constitutionem վարքագիծ, սահմանադրական դելիկտ, պառլամենտ:*

**1. Ընդհանուր դրույթներ**

*1.1.«Contra legem» իրավունքի զարգացման դոկտրինի ընդհանուր բնութագիրը*

Դոկտրինում «contra legem» եզրույթն օգտագործվում է տարբեր իրավական հասկացությունների հետ զուգակցված, որից կախված էլ պետք է որոշել, թե այդ ձևակերպումներով բնութագրվում է իրավաչա՞փ, թե՞ ոչ իրավաչափ վարքագիծը: Օրինակ՝ եթե օգտագործվում է contra legem իրավակիրառում [3, C. 92-99, 1, էջեր 75-76], contra legem մեկնաբանում [4, C. 327] կամ contra legem իրավունքի զարգացում [2, էջ 357] հասկացությունները, ապա խոսքն անկասկած իրավաչափ վարքագծի մասին է:

«Contra legem իրավակիրառում» հասկացությունը գործածվում է հատկապես դատարանների կողմից օրենքին հակառակ գործելու պարագայում, մինչդեռ՝ «contra legem իրավաստեղծում» ձևակերպումը (երբ իրավաստեղծ մարմինը, ելնելով իրավունքի սկզբունքներից, գործում է սահմանադրությանը կամ օրենքներին հակառակ) քիչ է հանդիպում: Օրինակ՝ ռուս հայտնի տեսաբան Ն. Կորկունովը նշում էր, որ սահմանադրական պետություններում կառավարությունները ստիպողական անհրաժեշտության դեպքում (օրինակ՝ պառլամենտն արտակարգ իրավիճակներում նիստ չի կարողանում հրավիրել) կարող են հրամանագրի ձևով ընդունել ընդհանուր որոշումներ, որոնք փոփոխում կամ վերացնում են օրենքները: Նա այդ հրամանագրերն անվանում է contra legem ակտեր կամ արտակարգ հրամանագրեր [5, C. 272]:

«Contra legem իրավունքի զարգացում» հասկացությունն ավելի տարողունակ է, որը կարող է ներառել contra legem իրավաստեղծումը, մեկնաբանումը և իրավակիրառումը:

«Contra legem» եզրույթը երբեմն օգտագործվում է ոչ թե իրավունքի զարգացման (իրավաչափ վարքագծի) համատեքստում, այլ՝ ցույց տալու վարքագծի հակաօրինականությունը: Հատկապես ժամանակակից սահմանադրական իրավունքի ռուս մասնագետները «contra legem» հասկացությունը գործածում են սահմանադրական դելիկտի իմաստով: Նրանք contra legem սահմանադրական դելիկտներ են հա-

մարում պաշտոնատար անձի ուղղակի արարքների կատարումը, որը de rigore juris (օրենքի տառով) խախտում է սահմանադրական արժեքը կամ սահմանադրական պարտականությունները [6, C. 272]: Այլ կերպ ասած՝ ի տարբերություն սահմանադրական նորմերի անուղղակի խախտումների, contra legem սահմանադրական դելիկտի դեպքում սուբյեկտը կատարում է ուղղակի արարքներ, որոնք էքսպլիցիտ խախտում են սահմանադրական արժեքները կամ պարտականությունները: Բերվում են contra legem սահմանադրական դելիկտի տարբեր օրինակներ: Այսպես՝ ԱՄՆ Սահմանադրության 2-րդ հոդվածը պարունակում է հայտնի «Advice and Consent Clause»-ը, որի համաձայն՝ նախագահը միջազգային պայմանագրերի կնքման, դեսպաններ, այլ նախարարներ և հյուպատոսներ, Գերագույն դատարանի դատավորներ նշանակելու իր լիազորությունները իրականացնում է Սենատի խորհրդով և հավանությամբ: Հետևաբար, կհամարվի, որ նախագահն իր լիազորությունները ոչ պատշաճ է կատարել, եթե նշված գործողություններից որևէ մեկը կատարի առանց Սենատի «խորհրդի և հավանության» նախնական ստացման [7, C. 113, 6, C.144-145]:

Ակնհայտ է, որ իրավունքի զարգացումը չի կարող ընթանալ դելիկտների տրամաբանությամբ, ուստի contra legem իրավունքի զարգացմանն ուղղված վարքագիծը բացառապես իրավաչափ վարքագծի հարթությունում է: Contra legem իրավունքի զարգացման հայեցակարգի շրջանակում է գտնվում նաև contra constitutionem[1] [8] իրավունքի զարգացումը:

*1.2. Contra constitutionem իրավունքի զարգացումը սահմանադրական իրավունքի դոկտրինում*

Հետխորհրդային պետությունների իրավունքի տեսությունում contra legem իրավունքի զարգացման դոկտրինը քիչ թե շատ քննարկվել է, սակայն նույնը չի կարելի ասել contra constitutionem սահմանադրական իրավունքի զարգացման մասին: Միայն վերջին շրջանում առանձին սահմանադրագետներ բանավիճում են այն մասին, թե դատարանները իրավասու են արդյոք կիրառել իրավունքի բարձրագույն

---

[1] «Contra constitutionem» ձևակերպումը լատիներենից նշանակում է սահմանադրությանը հակառակ:

սկզբունքները (առաջնորդվել այդ սկզբունքներով), եթե դրանք հակասում են Սահմանադրության տեքստում ուղղակիորեն ամրագրված նորմերին:

Օրինակ, Լ. Բ. Բեռլյավսկին և Ս. Ն. Դանիխնոն իրենց մենագրություններում մեջբերում են Տ. Գ. Մարշակովայի (ՌԴ սահմանադրական դատարանի պաշտոնաթող դատավոր) և Վ. Դ. Զորկինի (ՌԴ սահմանադրական դատարանի նախագահ) 2004թ. բանավեճից հատված. «Վ. Դ. Զորկինը վստահ է, որ Սահմանադրության նորմատիվային բովանդակությունը տրամաբանորեն ամբողջական է և բավարար է ՌԴ սահմանադրական դատարանի իրավասության ներքո գտնվող ցանկացած գործ լուծելու համար: Այլ կերպ ասած, իրավունքի սկզբունքները պետք է բխեցվեն Սահմանադրության պոզիտիվ սկզբունքների և նորմերի մեկնաբանման և տրամաբանական զարգացման միջոցով: Այս մոտեցումը հնչել է ի հակառակ Թ. Գ. Մորշակովայի կարծիքին, ով պնդում էր, որ ՌԴ սահմանադրական դատարանի դատավորի համար արդարության գաղափարը և իրավունքի բարձրագույն սկզբունքները պետք է վեր լինեն Սահմանադրությունից. եթե որոշակի գործով Սահմանադրական դատարանի գործունեության սովորական ընթացակարգերին հետևելը հանգեցնում է ակնհայտ անարդարության, ապա այս Բարձր դատարանի դատավորը, հանուն իրական արդարադատության, պարտավոր է «իրավունքի բարձրագույն սկզբունքները» վեր դասել Սահմանադրության նորմերից» [9, С. 381]:

Տ. Մորշակովան, ըստ էության, խոսում է contra constitutionem իրավունքի զարգացման մասին, թեև այս տերմինը չի օգտագործվում: Լ. Բ. Բեռլյավսկին և Ս. Ն. Դանիխնոն Մորշակովայի դիրքորոշումը համարում են Ռադբրուխյան բանաձևի փոփոխված տարբերակը:

«Contra constitutionis որոշում» ձևակերպումը էքսպլիցիտ ձևով օգտագործվում է Ս. Ա. Բելովի և Ս. Ա. Մանչոսովի 2020թ-ին հրապարակած մենագրության մեջ: Հեղինակներն իրավացիորեն կարծում են, որ contra constitutionem իրավունքի զարգացման ուսմունքի իրավափիլիսոփայական հիմքը իրավաբանական իրավըմբռնումն է (յուսնատուրալիզմը, բնական իրավունքի հայեցակարգը): Նրանք

նշում են. «Հակասահմանադրական որոշումը կարող է արդարացվել միայն պոզիտիվ իրավակարգի սահմաններից դուրս՝ «բնական իրավունքի», արդարության, բարոյականության և այլն նորմերում, որոնք դատարանին որոշ դեպքերում պատվիրում են չենթարկվել Սահմանադրությանը: Այլ կերպ ասած՝ նման արդարացումը ենթադրում է իրավունքի հասկացության վերաբերյալ ոչ պոզիտիվիստական մոտեցում, որը հակիրճ արտահայտվում է Ռադբռուխյան բանաձևում, որի համաձայն՝ անարդար իրավունքը իրավունք չէ» [10, C. 160-161]:

Չնայած հեղինակներն ընդունում են, որ 20-րդ դարի երկրորդ կեսին յուսնատուրալիզմը ինչպես իրավաբանական տեսությունում, այնպես էլ դատական պրակտիկայում տարածվածության նոր շրջադարձ է ապրել, սակայն կարծում են, որ նրա դոգմաները բնավ չի կարելի համարել համընդհանուր ճանաչում ստացած: Այդ իսկ պատճառով կարծում են, որ contra constitutionis որոշում կայացնելը նույնիսկ տեսականորեն շատ դժվար է արդարացնել, առավել ևս, այն ըստ էության պատճառաբանել [10]:

Նշված հեղինակներն ինքնին չեն բացառում contra constitutionem սահմանադրական իրավունքի զարգացման հնարավորությունը, սակայն այդ հարցին մոտենում են բնական և արդարացված զգուշությամբ: Միանգամայն իրատեսական է հեղինակների գնահատականը, ըստ որի contra constitutionem որոշումների կայացումը պահանջում է հատուկ խիզախություն և ընդունված որոշման ճշմարտացիության նկատմամբ հատուկ հավատ: Դատարանը contra constitutionem որոշումը կարող է ընդունել միայն ծայրահեղ անարդարության դեպքում, և անթույլատրելի են համարում «երբ դատարանը փորձում է անտեսել Սահմանադրության տառը՝ հանուն կասկածելի բարոյական իդեալի» [10]:

***2. Պառլամենտի՝ contra constitutionem վարքագծի ընդհանուր բնութագիրը***

*2.1. Պառլամենտի իրավասպեղծ և իրավակիրառ վարքագիծը*

Պառլամենտը, իր գործառույթները և լիազորությունները իրականացնելիս, դրսևորում է ինչպես նորմաստեղծ, այնպես էլ իրավակի-

րառ վարքագիծ: Առաջին հերթին պառլամենտը օրենսդիր մարմին է, որի նորմաստեղծ (օրինաստեղծ) գործունեության արդյունքը նորմատիվ բնույթի իրավական ակտերն են (օրինակ՝ օրենքները): Պառլամենտն իրականացնում է նաև իրավակիրառում, որի արդյունքում ընդունվում են անհատական իրավական ակտեր, օրինակ՝ պառլամենտի կողմից անձին պաշտոնի նշանակելը (ընտրելը):

Պառլամենտի կողմից՝ նորմաստեղծ գործունեության ընթացքում սահմանադրական նորմերով ղեկավարվելը միայն լայն իմաստով կարող է համարվել իրավակիրառում, այն դասական իմաստով իրավակիրառում չէ, քանի որ դրա արդյունքում ընդունվում են ոչ թե անհատական, այլ նորմատիվ բնույթի իրավական ակտեր: Այս դեպքում պառլամենտի նորմաստեղծ գործունեությունը կարգավորող նորմերն իրացվում են օգտագործման կամ կատարման ձևով: Եթե խոսքը պառլամենտի հայեցողական լիազորությունների մասին է, ապա պառլամենտը, ղեկավարվելով այդ լիազորությունն ամրագրող նորմերով, դրանք իրացնում է *օգտագործման* ձևով, իսկ կաշկանդված լիազորությունների (փաստակազմի առկայության դեպքում, նա պարտավոր է իրացնել իր լիազորությունը) դեպքում՝ *կատարման* ձևով:

Սույն հետազոտության առարկայի տեսանկյունից կարևոր է այն, որ պառլամենտը, նորմաստեղծ և իրավակիրառ վարքագիծ դրսևորելիս, ղեկավարվում է հիմնականում սահմանադրական նորմերով: Հաշվի առնելով ասվածը՝ սույն հոդվածում կօգտագործվի առավելապես «պառլամենտական վարքագիծ» եզրույթը, որը ներառում է ինչպես նորմաստեղծ, այնպես էլ իրավակիրառ վարքագիծը:

*2.2. Պառլամենտի՝ contra constitutionem վարքագծի հասկացությունը*

Պառլամենտի՝ contra constitutionem սահմանադրական իրավունքի զարգացում ասելով նկատի ունենք իրավաստեղծման և իրավակիրառման այն իրավիճակները, երբ սահմանադրությունում առկա է պառլամենտի կողմից որոշակի վարքագիծ դրսևորելու մասին կոնկրետ նորմ, սակայն պառլամենտը, ելնելով պետականապահպանա-

կան բնույթի սահմանադրական սկզբունքների[2] (արժեքների) հրատապ իրացման (պահպանման) անհրաժեշտությունից, չի հնազանդվում սահմանադրական կոնկրետ նորմում ամրագրված պահանջին (չի դրսևորում պահանջվող վարքագիծը) կամ դրա փոխարեն կատարում է այլ գործողություն: Այլ կերպ ասած՝ contra constitutionem իրավունքի զարգացման (այսուհետ՝ contra constitutionem վարքագծի) դեպքում պառլամենտը, հայտնվելով պետականապահպանության վիճակում, հրաժարվում է գործել սահմանադրական կոնկրետ նորմի հիման վրա: Պառլամենտի contra constitutionem վարքագիծը թեև հակառակ է սահմանադրական կոնկրետ նորմի պահանջներին, սակայն համապատասխանում է պետականապահպանության սկզբունքների հաղորդած ուղղությանը: Ընդ որում՝ պետականապահպանության սկզբունքներն ուղղակի (էքսպլիցիտ) կամ անուղղակի (իմպլիցիտ) արտացոլված են տվյալ պետության հիմնադիր փաստաթղթերում, օրինակ՝ պետութենաստեղծ հռչակագրերում, սահմանադրության նախաբանում կամ անփոփոխելի հոդվածներում[3]:

Ասվածն ունի պարզ բացատրություն՝ սահմանադրությունը, որը հիմնականում պետութենաստեղծ ակտ է և պետականապահպանու-

---

[2] Այս բաժնում «պետականապահպանության սկզբունք» հասկացությանը զուգահեռ կօգտագործվի նաև «սահմանադրական սկզբունք» հասկացությունը:

[3] Պետականապահպանության սկզբունքների թեման առանձին ուսումնասիրության կարիք ունի, սակայն այս փուլում պետք է նշել մի քանի հանգամանք: Նախ, գոյություն ունեն սահմանադրական սկզբունքներ, որոնց պետականապահպան բնույթն ակնհայտ է, օրինակ՝ ինքնիշխանության, պետական տարածքի ամբողջականության ապահովման, պետության (պետական մարմինների) կողմից ներքին և արտաքին անվտանգության ապահովման գործառույթների իրականացման մասին սահմանադրական դրույթները: Երկրորդ՝ որոշ սկզբունքներ, թեև ինքնին չունեն էքսպլիցիտ պետականապահպան բնույթ, սակայն կոնկրետ իրավիճակում կարող են ստանալ նման երանգ: Երրորդ՝ յուրաքանչյուր պետություն ունի իրեն հատուկ պետականապահպան (ազգապահպան) դրույթներ (գաղափարներ): Օրինակ՝ Հայաստանի անկախության հռչակագրի 11-րդ կետում ամրագրված է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դրույթը, որը հայերի համար ունի պետականպահապան (ազգապահպան) նշանակություն:

թյան նորմատիվ հիմքն է, չի կարող արգելել պառլամենտին գործել սահմանադրական այն նորմերին հակառակ, որոնք թեև առանձին վերցված, ինքնին վիճելի չեն, սակայն ծայրահեղ անհրաժեշտության իրավիճակում կարող են կոնֆլիկտի մեջ մտնել պետականապահպանության սկզբունքների հետ: Հանուն սահմանադրական կոնկրետ նորմի պահպանման չի կարելի վտանգել ողջ սահմանադրական և պետական համակարգը:

Եթե պառլամենտը գործում է սահմանադրական *կոնկրետ* նորմին հակառակ, սակայն ղեկավարվում է պետականապահպանության հիմքում ընկած սահմանադրական սկզբունքով, ապա ինչքանո՞վ է ճիշտ գործածել «սահմանադրությանը հակառակ վարքագիծ» ձևակերպումը:

*Խորքային հարթությունում* սահմանադրական կոնկրետ նորմերին հակառակ, սակայն սահմանադրական սկզբունքների սահմանած ուղղությանը համապատասխան իրականացվող վարքագիծը շատ ավելի սահմանադրական է, քան որևէ այլ վարքագիծ: Սահմանադրական սկզբունքների վեկտորին համապատասխանող վարքագիծն առավել քան սահմանադրական է, այն պարզ և հայտնի պատճառով, որ սահմանադրական սկզբունքները սահմանադրականության հիմքն են, սահմանադրական նորմերի (նախագծի դրույթների) սահմանադրականությունը որոշելու, իսկ առանձին դեպքերում նաև՝ այդ դրույթների պետականակշռության (պետականապահպանության որոշման) չափանիշ են [11]:

Մյուս կողմից՝ նման բացատրության պարագայում խիստ վիճելի է, երբ «սահմանադրությանը հակառակ» է անվանվում մի վարքագիծ, որը համապատասխանում է սահմանադրական սկզբունքների սահմանած վեկտորին, թեև հակառակ է կոնկրետ սահմանադրական նորմերին:

Այս ձևակերպման օգտագործումն արդարացվում է այլ տեսանկյունից, որը ենթադրում է մակերեսային հիմնավորում:

*Տեսանելի (մակերեսային) հարթությունում* «սահմանադրությանը հակառակ վարքագիծ» ձևակերպման գործածությունն արդարացված է այնքանով, որքանով, պառլամենտը կատարում է *սահմանադրական*

*կոնկրետ* նորմին հակառակ գործողություն, որը, թեև սահմանադրական սկզբունքների սահմանած ուղղության շրջանակներում է, սակայն սահմանադրության հոդվածում ամրագրված որոշակի կանոնին հակառակ գործելու *կոնկրետության* հաշվին այդ վարքագիծն առերևույթ (prima facie) տեսանելի է (ակներև է) որպես սահմանադրությանը հակառակ վարքագիծ[4]:

Պառլամենտի contra constitutionem վարքագծի կապակցությամբ պետք է կատարել որոշ հստակեցումներ:

*Նախ*՝ contra constitutionem վարքագծի մասին տեսական դատողություններն անհամատեղելի են սահմանադրության սակրալիզացման հետ, քանի որ սահմանադրության տեքստը սրբացնողները կարծում են, որ սահմանադրության տեքստում չեն կարող լինել այնպիսի նորմեր, որոնց իրացումը կարող է վնասել պետության սահմանադրական սկզբունքներին և խաթարել պետականության հիմքերը: Մինչդեռ, սահմանադրության ինքնաբավությունը չի բացառում սահմանադրության նորմերի և դրանց իրացման հետևանքների անկատարությունը, այլ նշանակում է, որ սահմանադրության ներքին անկատարությունները լուծելու համար սահմանադրությունն օժտված է սեփական ինքնապաշտպանական միջոցներով (ռեսուրսներով):

Պառլամենտի contra constitutionem վարքագիծն այդ ինքնապաշտպանական միջոցներից մեկն է. չէ՞ որ պառլամենտն այս դեպքում գործում է անմիջապես պետականապահպանության հիմքում ընկած սահմանադրական սկզբունքներին համապատասխան:

*Երկրորդ*՝ contra constitutionem վարքագիծը (հատկապես իրավակիրառ բնույթի գործողությունները) պետք է տարբերել տեքստուալ ամրագրում ունեցող սահմանադրական *կոնկրետ* նորմերի կոլիզիաների լուծումից, որի դեպքում պառլամենտը կոլիզիոն նորմերի հիման վրա նախապատվություն է տալիս միմյանց հակասող սահմանադրական նորմերից որևէ մեկին: Օրինակ՝ սահմանադրական մի նորմը հա-

---

[4] Ընդ որում, սահմանադրական հատուկ նորմերն ունեն ուղղակի (անմիջական ամրագրում), ի տարբերություն իրավական սկզբունքների, որոնք ընդհանրական են և հաճախ սահմանադրության տեքստում անմիջականորեն ամրագրված չեն:

կասում է ավելի բարձր աստիճանակարգության վրա գտնվող սահմանադրական մեկ այլ նորմին, որի դեպքում պառլամենտը Lex superior կանոնի հիման վրա նախապատվություն է տալիս ավելի բարձր ուժ ունեցող սահմանադրական նորմին:

Contra constitutionem վարքագծի դեպքում պառլամենտը գործ ունի ոչ թե սահմանադրական *կոնկրետ* նորմերի կոլիզիայի հետ, այլ կոնկրետ իրավիճակում գործում է սահմանադրական նորմին հակառակ, որն արդարացվում է հրատապության պայմաններում պետականապահպանության սկզբունքների վեկտորին համապատասխան գործելու անհրաժեշտությամբ:

*Երրորդ*՝ պառլամենտի contra constitutionem վարքագիծը, թեև contra legem իրավունքի զարգացման հայեցակարգի շրջանակներում է, սակայն նրա համեմատությամբ ունի որոշ առանձնահատկություններ: Սահմանադրությանը (սահմանադրական կոնկրետ նորմին) հակառակ գործելուն իրավաչափություն են հաղորդում ոչ թե պարզապես իրավունքի ընդհանուր սկզբունքները, այլ *պետականապահպանության սկզբունքները և դրանց* համապատասխան՝ հրատապ գործելու անհրաժեշտությունը (այս մասին հաջորդիվ):

*2.3. Contra constitutionem վարքագծի իրավաչափության պայմանները*

**(a) Ընդհանուր նկարագիրը:** Վերը նշվածից արդեն իսկ պարզ էր, որ contra constitutionem վարքագծի դեպքում պառլամենտը, թեև գործում է սահմանադրության կոնկրետ նորմերին հակառակ, սակայն դա չի համարվում սահմանադրության խախտում: Առաջին հայացքից թվում է՝ «Սահմանադրությանը հակառակ, բայց սահմանադրությունը չխախտող արարքը» ձևակերպումը անհեթեթություն (նոնսենս) է, մինչդեռ եթե ասվածը բանաձևենք իրավաբաններին առավել հայտնի ձևակերպումներով, ապա կարելի է ասել, որ contra constitutionem վարքագիծը հակադրվում է սահմանադրության տառին, սակայն պահպանում է սահմանադրության ոգին:

Հաջորդ հարցն այն է, թե արդյո՞ք պառլամենտն իրավասու է, նույնիսկ ամենաբարի նպատակներից ելնելով, դրսևորել սահմանադ-

րությանը հակառակ վարքագիծ: Այս հարցին կարելի է պատասխանել ռեալիզմի կամ կեղծավորության դիրքերից:

Ն. Կորկունովը, ելնելով իրատեսականության և ազնվության դիրքերից, նախ ընդունում էր contra legem հրամանագրերի գոյությունը, այնուհետև նշում էր. «Այդ հրամանագրի հրապարակումն ինքնին իրավախախտում է, որն արդարացվում է միայն անհրաժեշտության պահանջներով» [12, C. 272]: Վ. Հեսենը ատենախոսության մեջ նույնպես խոսում է contra legem հրամանագրերի մասին և նշում, որ, ի տարբերություն praeter legem-ի հրամանագրերի, contra legem-ի հրամանագրերի ընդունման համար անհրաժեշտ է, որ օրենսդիր իշխանությունը պատվիրակի նման հրամանագրի ընդունումը [13, C. 55]:

Խորհրդային ժամանակաշրջանում Ա. Վիշինսկին, ում Վ. Ներսեսյանցը բնութագրում է «խորհրդային ողջ պատմության նողկալի դեմքերից մեկը» [14, C. 450], Ն. Կորկունովի՝ վերը նշված միտքը մեկնաբանել է այնպես, թե իբրև կապիտալիստական երկրներում, ի տարբերություն Խորհրդային Միության, օրենքի գերակայությունը գործնականում գոյություն չունի, իսկ հրամանագրի համեմատությամբ օրենքի գերակայությունը միայն տեսական դատողություն է: Նա նշում էր, որ բուրժուական իրավագետ Ն. Կորկունովը նույնիսկ ընդունում էր, որ երբեմն առանց սահմանադրության խախտման հնարավոր չէ, այնուհետև՝ կապիտալիստական առանձին պետությունների օրինակով փորձում էր ցույց տալ, թե այդ երկրների կառավարությունները ինչպես են, ի հեճուկս սահմանադրության, հրամանագրեր ընդունելու եղանակով իրականացնում օրինաստեղծ գործունեություն՝ շրջանցելով պառլամենտին [15, C. 321]:

Ա. Վիշինսկու երեսպաշտությունն ապացուցվում է այն պատմական փաստով, որ նույն ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահությունը, որն իրականացնում էր պետության գլխի գործառույթները, 1936թ. Սահմանադրությամբ թեև այլևս օժտված չէր օրենք ընդունելու լիազորությամբ, սակայն ի հեճուկս Սահմանադրությանը, փաստացի ընդունում էր «հրամանագրեր, որոնք կարող էին պարունակել նոր իրավական նորմեր և **փոխել գործող օրենքը**» [16, C. 159]:

Այսպիսով, եթե Ն. Կորկունովը ազնվորեն և բացահայտ ընդունում էր, որ երբեմն օրենքին հակառակ գործելն անհրաժեշտություն է, ապա Ա. Վիշինսկին խորհրդային պետական իրավունքի առաջին դասագրքում կեղծավորաբար գովերգում և կուռքացնում էր խորհրդային օրինականությունը, այն պայմաններում, երբ իրականում ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահությունը՝ Սահմանադրությանը հակառակ, օրենքներում կատարում էր փոփոխություններ:

Եթե վերադառնանք պառլամենտի՝ contra constitutionem վարքագծի իրավաչափության հարցին, ապա դրա պատասխանը, թվում է, պարզ է՝ պառլամենտը կաշկանդված է հիմնադիր իշխանության կամքով և օրինաստեղծ գործունեության ընթացքում պարտավոր է հնազանդվել սահմանադրական պահանջներին՝ անկախ նրանից, թե այդ գործողության կատարումը պետականապահպանության տեսանկյունից ինչ հետևանքներ կարող է առաջացնել: Սակայն այս հարցին միաշերտ պատասխան տալը պարունակում է սխալվելու բարձր ռիսկ, ուստի պատասխանը պետք է լինի բազմաշերտ, քանի որ իրավաքաղաքական կյանքն ինքնին տարաշերտ է:

**(b) Անհրաժեշտության և հրատապության պայմանները**: Պառլամենտի contra constitutionem վարքագծի բնորոշումից հստակ է, որ իրավաչափությունը ներհատուկ է այս վարքագծին: Դրան իրավաչափություն է հաղորդում այն, որ պառլամենտը գործում է անհրաժեշտության և հրատապության վիճակում:

1) Անհրաժեշտության վիճակում գործելը: Դա ենթադրում է այնպիսի իրավիճակ, երբ պառլամենտը կանգնում է դիլեմայի առջև՝ դրսևորել սահմանադրական կոնկրետ նորմից բխող վարքագիծը, սակայն շեղվել պետականապահպանության սկզբունքների հաղորդած ուղղությունից՝ վտանգելով ողջ պետական համակարգի գործունակությունը և գոյությունը, թե՞ գործել սահմանադրական կոնկրետ նորմին հակառակ, սակայն պետականապահպանության սկզբունքների հաղորդած ուղղությանը համապատասխան (պետականապահպանության անհրաժեշտություն):

Ընդ որում այս անհրաժեշտությունը պետք է լինի ծայրահեղ, այսինքն՝ այն պետականապահպանության սկզբունքների վեկտորի ուղ-

ղությանը համապատասխան չգործելու դեպքում վտանգվում է պետական համակարգի գոյությունը կամ գործունակությունը: Բացի այդ, «արտակարգ իրավիճակը պետք է լինի իսկական: Պետք է լինի ակնհայտ և առկա վտանգ, ավելին՝ այն պետք է լինի լայնածավալ» [17, C. 267]:

Գիտակցում ենք, որ պետական մարմինների՝ ծայրահեղ անհրաժեշտության վիճակում գործելու վերաբերյալ հարցերը պահանջում են համակողմանի դոկտրինալ ուսումնասիրություն, որի արդյունքներում միայն հնարավոր կլինի սահմանադրությունում նախատեսել ծայրահեղ անհրաժեշտության (ճգնաժամային) վիճակին համապատասխան գործելու համակողմանի կարգավորումներ: Նման կարգավորումների բացակայության պայմաններում՝ պետականապահպանության սպառնալիքի դեպքում պառլամենտը բոլոր դեպքերում կգործի սահմանադրական կոնկրետ նորմերին հակառակ՝ հանուն պետականապահպանության:

Ընթերցողի մոտ կարող է ծագել բնական հարց՝ XXI դարում այդ ի՞նչ ճգնաժամային վիճակներ են հնարավոր, որը հեղինակին թույլ է տալիս մաքիավելիզմը հիշեցնող ոճով խոսել պետականապահպանության վիճակի և սահմանադրությանը հակառակ գործելու անհրաժեշտության մասին: Նման իրավիճակների հիպոթետիկ օրինակներ կներկայացվեն հաջորդիվ, իսկ այժմ նշենք, որ XXI դարն օժտված է պետություններին և հասարակություններին աներևակայելի և անկանխատեսելի վիճակների առջև կանգնեցնելու ներուժով: Օրինակ՝ Հայաստանում քչերը իրատեսական կհամարեին, որ միևնույն տարում (2020թ.) կարող էր գործողության մեջ դրվեն ինչպես արտակարգ դրության (COVID -19 դեմ պայքարի հիմքով), այնպես էլ ռազմական դրության (Ադրբեջանի նախաձեռնած հարձակման հիմքով) ռեժիմները: Ընդ որում, 2020թ-ի ապրիլին՝ արտակարգ դրություն հայտարարելուց մի քանի օր առաջ, ՀՀ իշխանությունները նշանակել էին Սահմանադրության անցումային դրույթներում (մինչև 2018թ-ի հեղափոխությունը նշանակված՝ ՀՀ սահմանադրական դատարանի յոթ դատավորների պաշտոնավարման ժամկետը կրճատելու մասին դրույթ-

ներում) փոփոխություններ կատարելու հանրաքվե, որը չեղարկվեց (այս մասին հաջորդիվ):

Սրան կարելի է ավելացնել ֆանտաստիկ ֆիլմեր հիշեցնող դրվագների կանխատեսումը, երբ ինքնավարության բարձր աստիճան ձեռք բերած արհեստական բանականությունը, պետությունների զենքերի կառավարմամբ, պատերազմ է հայտարարում հենց այդ պետություններին և հասարակություններին: XXI դարի իրավական համակարգերը պետք է առնվազն դոկտրինալ քննարկումների հարթությունում պատրաստ լինեն ոչ իրական թվացող սցենարներին:

Իրավաքաղաքական համակարգերի անկանխատեսելիության վրա քիչ ազդեցություն չունի նաև այն, որ XXI դարում քաղաքական իշխանության ղեկը երբեմն փոխանցվում է այնպիսի դերակատարների, ինչպիսիք են՝ գերբնական ազդեցությամբ ժողովրդահաճո խուսքով աչքի ընկնող (պոպուլիստ) լրագրողները, արկածախնդիր դերասանները, թշնամական պետության գործակալները, ովքեր իրենց՝ իրավական և բարոյական սահմանափակումներից զուրկ մտածողության և դիրքորոշումների հետևանքով պետությանը և հասարակությանը կարող են կանգնեցնել աներևակայելի ճգնաժամերի առաջ:

Ծայրահեղ անհրաժեշտությունն ինքնին ներառում է նաև հրատապության վիճակը, սակայն contra constitutionem վարքագծի հրատապության պայմանը կմեկնաբանվի այլ իմաստով:

2) Հրատապության վիճակում գործելը: Դա ենթադրում է այնպիսի իրավիճակ, երբ, պառլամենտը զրկված է սահմանադրական փոփոխությունների ճանապարհով հրատապ փոփոխել այն կարգավորումները, որոնք տվյալ իրավիճակում պարունակում են պետականապահպանմանը սպառնացող ռիսկեր: Սովորական պայմաններում պառլամենտը, եթե հանդիպում է այնպիսի սահմանադրական նորմի, որը կոնկրետ իրավիճակում վտանգում է պետաիրավական համակարգի գործունակությունը, ապա հնարավորություն ունի նախաձեռնելու սահմանադրական փոփոխություններ:

**(c) Բարձր դատարանի սանկցիան**: Contra constitutionem սահմանադրական իրավունքի զարգացմանն իրավաչափություն հաղորդող՝ հրատապության և անհրաժեշտության պայմաններն ինչքան էլ

փորձենք բանաձևել, միևնույն է՝ դրանք «կաուչուկային» հասկացություններ են: Մյուս կողմից՝ պառլամենտը քաղաքական մարմին է, ուստի քաղաքական մեծամասնությունը contra constitutionem սահմանադրական իրավունքի զարգացման կոնցեպտի քողի ներքո կարող է քաղաքական շարժառիթներից ելնելով, շրջանցել սահմանադրական կոնկրետ նորմերը: Այլ կերպ ասած՝ այս մոտեցումն իշխող քաղաքական ուժի համար կարող է ստեղծել պարարտ հող, պետականության պահպանման պատրվակով սահմանադրական կոնկրետ նորմերը շրջանցելու եղանակով բացարձականացնելու իրենց իշխանությունը: Նման վտանգը կանխելու միակ քիչ թե շատ իրատեսական լուծումը contra constitutionem իրավունքի զարգացումը՝ իրավունքի փիլիսոփայության մթնոլորտում գործող բարձր դատարանի (որին դեռևս անվանում են Սահմանադրական դատարան) սանկցիայով իրականացնելն է:

Հեռատես պետական գործիչները կունենան խիզախություն իրենց օրենսդրական քաղաքականության օրակարգում ընդգրկելու այնպիսի հարցեր, որոնց լուծմամբ անհրաժեշտության և հրատապության պայմաններում հայտնված պառլամենտը հնարավորություն կունենա դիմելու սահմանադրական դատարան contra constitutionem վարքագծի սանկցիա ստանալու նպատակով: Ընդ որում, սահմանադրական դատարանն այս պարագայում պետք է գործի արտահերթ և արագացված կարգով:

Սահմանադրական դատարանը պառլամենտին սահմանադրական կոնկրետ նորմերին հակառակ գործելու սանկցիա տալու հարցը քննարկելիս որպես իրավաչափության չափանիշ պետք է ընդունի պետականապահպանության սկզբունքները, որոնք ուղղակի կամ անուղղակի արտացոլված են տվյալ պետության հիմնադիր փաստաթղթերում՝ պետութենաստեղծ հռչակագրերում, սահմանադրության նախաբանում կամ այն հոդվածներում, որոնք վերաբերում են պետության ինքնիշխանությանը և պետությանը ներհատուկ հատկանիշներին: Պետականապահպանության տիրույթում են նաև այնպիսի մասշտաբի վտանգները, որոնք սպառնում են պետության սոցիալական հիմքի գոյությանը:

Իրավունքի փիլիսոփայության մթնոլորտում գործող բարձր դատարանը միակ մարմինն է, որն ունակ է վերքաղաքական մոտեցմամբ և պետականապահպանության դիրքերից գնահատելու և սանկցավորելու հրատապության և անհրաժեշտության պայմաններում գործող պառլամենտի վարքագիծը[5]:

Ի դեպ, սահմանադրական դատարանի սանկցիայով սահմանադրությանը հակառակ գործելու գաղափարը նորություն չէ՝ այն այսօր էլ ունի կիրառություն: Խոսքը նրա մասին է, երբ սահմանադրական դատարանը նորմատիվ իրավական ակտը ճանաչում է սահմանադրությանը հակասող և անվավեր, սակայն նկատի ունենալով, որ Սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահին նորմն անվավեր ճանաչելն պետության կամ հանրության համար անխուսափելիորեն կառաջացնի ծանր հետևանքներ, իր որոշմամբ հետաձգում է այդ ակտի իրավական ուժը կորցնելը (Տե՛ս «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 19-րդ մասը): Այս իրավիճակում դատարանը մի կողմից՝ հաստատում է նորմատիվ իրավական ակտի՝ Սահմանադրությանը հակասելու փաստը, մյուս կողմից՝ թույլատրում է իրավակիրառողին շարունակել իրացնել հակասահմանադրական նորմատիվ իրավական ակտը, այսինքն՝ թույլատրում է նրան կատարել Սահմանադրությանը հակասող գործողություններ:

Եթե խոսենք ուղիղ, ապա Սահմանադրական դատարանը contra constitutionem գործելու սանկցիա տալով, որոշակի ժամկետով վավերացնում է պառլամենտի՝ Սահմանադրության կոնկրետ նորմին հակառակ գործելու վարքագիծը:

**(d) Հիպոթետիկ օրինակներ**: Ենթադրում ենք, որ բնականոն կյանքով ապրող մարդու վախերը կամ ինքնապահպանության բնազդները ենթագիտակցաբար մարդուց օտարում են ճգնաժամային իրավիճակների մասին մտքերը, սակայն ընթերցողը կակընկալի անհրաժեշտության և հրատապության իրավիճակում պառլամենտի contra

[5] Բարձր դատարանին նման գործառույթի վերապահումը ենթադրում է այդ դատարանի կազմի և կառուցվածքի հայեցակարգային փոփոխություն:

constitutionem վարքագծի հիպոթետիկ իրավիճակներ, ուստի ներկայացնենք խոստացված օրինակները[6]:

Ենթադրենք «Օսման» կայսրությունը փլուզվում է, որի հիման վրա ձևավորվում է Հայքի Դաշնային Հանրապետությունը, որի հիմնադիր Սահմանադրության համաձայն՝ քրեական օրենսդրություն ընդունելու բացառիկ իրավասությունը վերապահված է դաշնային պառլամենտին: Հայքի Սահմանադրության անցումային դրույթներով նախատեսված է, որ դաշնային պառլամենտը քրեական օրենսգիրքն ընդունում է Սահմանադրության ընդունումից հետո՝ մեկ տարվա ընթացքում, իսկ «Օսման» կայսրության ժամանակ ընդունված քրեական օրենսգիրքն ուժը կորցնում է նոր քրեական օրենսգիրքն ուժի մեջ մտնելու պահից, բայց ոչ ուշ քան Սահմանադրությունն ընդունելուց հետո մեկ տարի անց:

Ներքաղաքական բարդ իրավիճակով պայմանավորված Հայքի դաշնային պառլամենտը մի քանի անգամ լուծարվել է, որի հետևանքով չի կարողացել Սահմանադրությամբ սահմանված ժամկետում ընդունել քրեական օրենսգիրքը:

«Օսման» կայսրության ժամանակ ընդունված քրեական օրենսգրքի գործողությանը մնացել է երկու ամիս, որը լրանալուց հետո Սահմանադրության ուժով քրեական օրենսգրքի գործողությունը կդադարի, իսկ դա նշանակում է, որ հասարակական վտանգավորության բոլոր արարքները՝ սպանություններ, մարդու դեմ ուղղված այլ վտանգավոր արարքներ, հափշտակություններ և այլն փաստացի կհամարվեն թույլատրված արարքներ:

Ելնելով պետականության և հասարակության պաշտպանության անհրաժեշտությունից և գիտակցելով քրեաիրավական արգելքների բացակայության պետականակործան ազդեցությունը, Դաշնության սուբյեկտները որոշում են, որ յուրաքանչյուր սուբյեկտի օրենսդիր մարմինն ինքն իր համար պետք է ընդունի քրեական օրենսգիրք: Դաշնության սուբյեկտների օրենսդիր մարմինները քաջ գիտակցում են, որ քրեական օրենսգիրքն ընդունում են Սահմանադրության կար-

[6] Այս հիպոթետիկ օրինակներում կօգտագործվեն պետությունների պայմանական անվանումներ:

գավորումներին հակառակ (այդ իրավասությունը վերապահված է դաշնային պառլամենտին), սակայն այս իրավիճակում նման վարքագիծը չի կարող համարվել սահմանադրական դելիկտ, քանի որ երկրում քրեական օրենսգրքի (հատկապես հատուկ մասի) բացակայությունն անկասկած կառաջացնի պետականապահպանությանն ուղղված սպառնալիք:

Այս հիպոթետիկ օրինակում ծայրահեղ անհրաժեշտության վիճակն այն է, որ առանց քրեաիրավական արգելքների հասարակությունը կվերադառնա բացարձակ ազատության վիճակին, պետությունը զրկված կլինի հասարակական անվտանգությունն ապահովելու գործառույթն իրականացնելու հնարավորությունից՝ վերածվելով անկենդան մարմնի: Քրեաիրավական արգելքների բացակայության պայմաններում կստեղծվի անիշխանություն:

Հրատապության պայմանն այն է, որ ստեղծված քաղաքական իրավիճակում Դաշնային պառլամենտը հնարավորություն չի ունեցել հրատապ կազմակերպելու «Օսման» կայսրության քրեական օրենսգրքի գործողությունը դադարեցնելու մասին Սահմանադրության անցումային դրույթով նախատեսված ժամկետը փոփոխելու գործընթաց:

Վերը նշված օրինակին փոքր-ինչ նմանվող վիճակում հայտնվել է նաև Խորհրդային Ռուսաստանը իր ձևավորման սկզբնական փուլում: Այսպես՝ Ռուսաստանի Սոցիալիստական Դաշնային Խորհրդային Հանրապետության 1918թ-ի Սահմանադրության (հիմնական օրենքի) 49-րդ հոդվածի համաձայն՝ քրեական օրենսդրություն ընդունելու իրավասությունը վերապահված էր Խորհուրդների Համառուսաստանյան համագումարին և Համառուսաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեին (համարվում էին ներկայացուցչական մարմիններ՝ Ա.Ղ.), մինչդեռ 12.12.1919թ-ին «Քրեական իրավունքի ղեկավար սկզբունքներն» ընդունվել էին ՌՍՖՍՀ Արդարադատության ժողովրդական կոմիսարիատի որոշմամբ: Վ. Մ. Սիռիխն այս կապակցությամբ նշում է.

*«Երկուսուկես տարի շարունակ քրեական օրենսդրության ընդհանուր հարցերով գործում էին միայն հակասահմանադրական*

*«ՌՍՖՍՀ-ի քրեական իրավունքի ղեկավար սկզբունքները», որոնք ընդունվել էին Արդարադատության ժողկոմի 12.12.1919թ. որոշմամբ, մինչդեռ այդ պահին գոյություն ունեցող ՌՍՖՍՀ Սահմանադրության համաձայն՝ քրեական օրենսդրության հարցերը կազմել են պետության ներկայացուցչական մարմինների իրավասությունը» [18, С. 167]:*

ՌՍՖՍՀ Արդարադատության ժողովրդական կոմիսարիատի որոշումը չենք կարող համարել contra constitutionem իրավաչափ վարքագիծ: Բանն այն է, որ Ղեկավար սկզբունքների բացակայությունը կամ դրանց անվավերությունը պետականապահպանության համար սպառնալից վիճակ չէր կարող ստեղծել, քանի որ դրանք միայն «ապագա քրեական օրենսգրքի ընդհանուր մասի նախատիպն էին» [19,С. 28], այսինքն դրանք չէին պարունակում հանցակազմեր (քրեաիրավական արգելքներ), ուստի դրանց բացակայությունը չէր կարող երկրում ստեղծել անիշխանության վիճակ: Կարևոր է նաև այն, որ այդ ժամանակաշրջանի իրավասու ներկայացուցչական մարմինները նոր քրեական օրենսգիրքը չէին ընդունում հիմնականում կուսակցական շարժառիթներից ելնելով:

Փորձենք նկարագրել մեկ այլ իրավիճակ: Այսպես՝ Արամե Հանրապետության հարևան երկու թշնամական պետությունները նախաձեռնում են հարձակվել Արամեի Հանրապետության վրա՝ վստահ լինելով, որ համատեղ ուժերով ունակ են զավթելու իրենց պետությունները ցամաքային տարածքով միացնող՝ Արամեի ինքնիշխան տարածքի մի հատվածը:

Արամե Հանրապետությունը, գիտակցելով հարձակման անմիջական և իրական վտանգը և ինքնուրույն դիմակայելու անկարողությունը, հրատապ ռազմական աջակցություն է հայցում Իվանե Հանրապետությունից: Վերջինս Արամեի Հանրապետությանը հայտնում է, որ պատրաստ է հրատապ զինվորական աջակցություն ցույց տալ և կանխել հարձակումը, եթե Արամե և Իվանե Հանրապետությունների միջև կնքվի երկարաժամկետ և լայնածավալ ռազմական համագործակցության պայմանագիր, մասնավորապես, որով Իվանե Հանրապետությունը իրավունք է ստանում Արամե Հանրապետության տարածքում տեղադրել ռազմական բազաներ:

Պառլամենտական կառավարման ձև ունեցող Արամե Հանրապետության Սահմանադրության համաձայն՝ Հանրապետության օրենքները ստորագրում է Հանրապետության Նախագահը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ պառլամենտի նախագահը: Արամեի պառլամենտը հրատապության ռեժիմով ընդունում է Իվանե Հանրապետության հետ ռազմական համագործակցության միջազգային պայմանագիրը վավերացնելու մասին օրենքը, սակայն այդ օրհասական օրերին՝ մինչև Հանրապետության Նախագահի կողմից օրենքը ստորագրելը պառլամենտի նիստի ժամանակ Արամե Հանրապետության Նախագահը և պառլամենտի նախագահը ազգայնական-ահաբեկչական ուժերի կողմից սպանվում են[7]:

Երկրում ստեղծված քաղաքական իրավիճակի պայմաններում հնարավոր չէ հրատապ կազմակերպել Հանրապետության Նախագահի և պառլամենտի նախագահի նոր ընտրություններ, որի հետևանքով միջազգային պայմանագիրը վավերացնելու մասին օրենքի ստորագրման գործընթացն անորոշ ժամկետով կարող է հետաձգվել: Իվանե Հանրապետությունը պնդում է, որ աջակցություն կտրամադրվի միջազգային իրավական հիմքերի առկայության պարագայում, այսինքն՝ միայն պայմանագրի վավերացման իրավաբանական գործընթացն ավարտելուց հետո:

Իրավիճակի հրատապությունը թույլ չի տալիս սպասել Հանրապետության Նախագահի և պառլամենտի նախագահի ընտրություններին: Իրատեսական չէ նաև Սահմանադրությունում կատարել փոփոխություններ և նախատեսել, որ ծայրահեղ իրավիճակներում միջազգային պայմանագիրը վավերացնելու մասին օրենքը կարող է ուժի մեջ մտնել, առանց Նախագահի ստորագրման, իրավունքի ուժով:

---

[7] ՀՀ-ում տեղի է ունեցել նմանատիպ ողբերգական դեպք: 1999թ-ի հոկտեմբերի 27-ին մի խումբ անձինք մուտք են գործել ՀՀ ազգային ժողով և Կառավարության հարց ու պատասխանի ժամանակ սպանել են երկրի երկրորդ և երրորդ դեմքերին՝ ՀՀ ազգային ժողովի նախագահին և ՀՀ վարչապետին, 6 պետական գործչի, հրազենով վիրավորել 8 անձի և 91 անձ պատանդ վերցրել:

Արամե Հանրապետությունը այս իրավիճակում կանգնում է ծայրահեղ անհրաժեշտության վիճակում: Կամ որոշում է պահպանել Հանրապետությունը Սահմանադրության կարգավորումները և սպասել Նախագահի ընտրություններին, որից հետո միայն ավարտին հասցնել միջազգային պայմանագրի վավերացման մասին օրենքի ստորագրման և հրապարակման գործընթացը: Այս դեպքում, առանց Իվանե Հանրապետության աջակցության, Արամե Հանրապետությունը կկորցնի իր տարածքի զգալի մասի նկատմամբ ինքնիշխանությունը: Կամ գործում է Սահմանադրության կարգավորումներին հակառակ, այսինքն՝ առանց Նախագահի ստորագրման, սակայն Սահմանադրական դատարանի սանկցիայով միջազգային պայմանագրի մասին օրենքը համարվում է ուժի մեջ մտած և հրապարակվում է:

**3. Եզրակացություն**

Պառլամենտի contra constitutionem իրավաչափ վարքագիծը contra legem իրավունքի զարգացման հայեցակարգի շրջանակներում է: Ի տարբերություն contra legem իրավունքի զարգացմանը, սահմանադրական կոնկրետ նորմին հակառակ գործելուն իրավաչափություն են հաղորդում պետականապահպանության սկզբունքները, ինչպես նաև դրանք ծայրահեղ անհրաժեշտության ու հրատապության վիճակում պահպանելը: Contra constitutionem վարքագծի դեպքում պառլամենտը, թեև գործում է սահմանադրությանը հակառակ, սակայն դա չի համարվում սահմանադրության խախտում:

Քաղաքական իշխանության կողմից սահմանադրական կոնկրետ նորմերին հակառակ գործելու մասին դոկտրինը նեղ քաղաքական (կուսակցական) շահերին չծառայեցնելու նպատակով պետք է նախատեսել, որ պառլամենտը contra constitutionem վարքագիծ կարող է դրսևորել միայն իրավունքի փիլիսոփայության տրամաբանությամբ գործող բարձր դատարանի նախնական սանկցիայով:

# ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## Օգտագործված գրականության ցանկ


1. Ղամբարյան Ա. Իրավունքի և օրենքի կոլիզիաները իրավունքի փիլիսոփայությունում, Գիտական Արցախ: 2021. № 1(8),
2. Հովհաննիսյան Գ., Ընդհանուր իրավագիտություն և իրավունքի մեթոդաբանություն, Ե.: 2020,
3. Федотов А. В. Возможно ли применение contra legem в демократическом правовом государстве?, Журнал российского права. 2002. № 8,
4. Общая теория государства и права, Академический курс в 3-х томах, Т. 2. Отв. Ред. Марченко М. Н. М.: 1998,
5. Коркунов Н. М. Указ и закон, Диссертация, СПб.:1894,
6. Лесив Б. Реалии и потенциал конституционного контроля над действиями и решениями властей: сравнительное исследование, Сравнительное конституционное обозрение, 2020. № 6 (139),
7. Сорокин М. Ю. В поисках "политического" конституционализмав России (роль несудебной интерпретации основного закона), Закон, 2020. № 1,
8. Aaron X. Fellmeth and Maurice Horwitz Guide to Latin in International Law, Oxford University Press 2011, https://www.oxfordreference.com/view/10.1093/acref/9780195369380.001.0001/acref-9780195369380-e-430 (18.08.2021)
9. Берлявский Л. Г., Данихно С. Н., Классификация источников конституционного права: вопросы теории и практики, М.: Юрлитинформ, 2019,
10. Белов С. А., Манжосов С. А., Доктрина прецедента в конституционном и международном правосудии, Научное электронное издание, Санкт-Петербург, 2020,
11. Гамбарян А. С. Декларация о независимости Армении: непроходимая гарантия охраны государственности, Юридический аналитический журнал, 2020, Т. 15. № 2,
12. Коркунов Н. М. Указ и закон, Диссертация. СПб.: 1894,
13. Гессен В.М., Основы конституционного права, Петроград. 1917,

14. Нерсесянц В. С., Философия права: Учебник для вузов. М.: Норма, 2005,
15. Советское государственное право, Под общ. ред. А. Я. Вышинского, Академия наук СССР. М.: 1938,
16. Кукушкин Ю.С., Чистяков О. И., Очерк истории Советской Конституции, М.: Политиздат, 1987,
17. Дворкин Р. О правах всерьез, Пер. с англ.; Ред. Л. Б. Макеева, М.: 2004,
18. История суда и правосудия в России: в 9 т., отв. ред. В. В. Ершов, В. М. Сырых, 2021, Т. 6: Судоустройство и судопроизводство РСФСР периода становления советской власти (1917–1920 годы): монография / В. М. Сырых; отв. ред. С. А. Колунтаев, М.: Норма, 2020,
19. Курс уголовного права: в 5 т. Общая часть. Т. 1: Учение о преступлении. Под ред. Кузнецовой Н.Ф., Тяжковой И.М. М.: Зерцало, 2002,

## DEVELOPMENT OF CONSTITUTIONAL LAW CONTRA CONSTITUTIONEM (GENERAL CHARACTERISTICS)

**Artur Ghambaryan**
RAU, Department of Theory of Law and Constitutional Law
Doctor of Law, Professor

The main purpose of the article is to present the general characteristics of the development of constitutional law contrary to the Constitution.

The main objectives of the article are to present the concept of contra constitutionem behavior and the conditions of legality, to show the necessity of the parliament's contra constitutionem behavior in situations threatening emergency and statehood protection,

In the article, the development of law contra constitutionem is presented in the field of the concept of law contra legem. In the case of the development of the law Contra constitutionem, the Parliament in a particular situation is guided not by the requirements of a specific norm of the Constitution, but by the constitutional principles of statehood protection enshrined in the constituent documents of the State.

The author concludes that the conditions for the legality of behavior contra constitutionem are to act in a state of necessity, based on the principles of statehood protection and the impossibility of making urgent changes to the Constitution.

**Keywords:** Development of law Contra legem, conduct contra constitutionem, Constitutional tort, Parliament.

## РАЗВИТИЕ КОНСТИТУЦИОННОГО ПРАВА CONTRA CONSTITUTIONEM (ОБЩАЯ ХАРАКТЕРИСТИКА)

**Артур Гамбарян**
РАУ (Славянского), кафедра Теории права и
конституционного права д.ю. н., профессор

Основная цель статьи: представить общую характеристику развития конституционного права вопреки Конституции.

Основные задачи статьи: представить понятие поведения contra constitutionem и условия правомерности, показать необходимость поведения contra constitutionem парламента в ситуациях, чрезвычайно угрожающих сохранению государства. В статье развитие права contra constitutionem представляется в области концепции права contra legem. В случае развития права contra constitutionem парламент в конкретной ситуации руководствуется не требованиями конкретной нормы Конституции, а конституционными принципами, сохраняющими государственность и закрепленными в учредительных документах государства.

Автор делает вывод, что условия правомерности поведения contra constitutionem – действовать в состоянии необходимости, исходя из принципов сохранения государственности и невозможности внесения срочных изменений в Конституцию.

**Ключевые слова:** развитие права Contra legem, поведение Contra constitutionem, парламент, конституционный деликт.

*Ընդունվել է փպագրության՝ 08.10.2021*
*Գրախոսվել է՝ 02.12.2021*

# ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ՝ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱԿԱՌԱԿ ՎԱՐՔԱԳԻԾԸ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԵԼԻԿՏ, ԹԵ CONTRA CONSTITUTIONEM ՎԱՐՔԱԳԻԾ

***Արթուր Ղամբարյան***
*ՀՌՀ, Իրավունքի տեսության և սահմանադրական*
*իրավունքի ամբիոն, ի.գ.դ., պրոֆեսոր*
*artur.ghambaryan@gmail.com, +374 77 560080*

*Հոդվածի նպատակն է բացահայտել ՀՀ ազգային ժողովի կողմից contra constitutionem վարքագծի (սահմանադրական իրավունքի զարգացման) իրավաչափության հարցերը:*

*Հոդվածի հիմնական խնդիրներն են՝ «Nemo iudex in sua causa» իրավական սկզբունքի համատեքստում քննարկել 2020թ-ի սահմանադրական փոփոխությունների նախագծի սահմանադրականությունը որոշելու հարցով ՀՀ ազգային ժողովի՝ ՀՀ Սահմանադրության կոնկրետ հոդվածների պահանջներին հակառակ գործելու, այսինքն՝ ՀՀ սահմանադրական դատարան չդիմելու իրավաչափության հարցերը:*

*Հոդվածում հեղինակը քննարկում է ՀՀ ազգային կողմից 2020թ. սահմանադրական փոփոխությունների նախագիծը, առանց սահմանադրական դատարանի դիմելու, ընդունելու իրավաչափությունը: Հեղինակը այն որակում է ոչ թե contra constitutionem իրավունքի զարգացում, այլ՝ ՀՀ Սահմանադրության խախտում, քանի որ ՀՀ ազգային ժողովի վարքագիծն ուղղված չէր պետականապահպանության սկզբունքները ծայրահեղ անհրաժեշտության վիճակում պահպանելու նպատակին:*

*Հոդվածում քննարկվում է ՀՀ ազգային ժողովի վարքագծի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի 29.04.2021թ. ՍԴՈ-1590 որոշումը, որով նա «ողջամիտ բացառության» կանոն ներմուծելով, արդարացրել է ՀՀ ազգային ժողովի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասող վարքագիծը, այսինքն՝ առանց ՀՀ սահմանադրական դատարա-*

*նի նախնական վերահսկողությանը դիմելու, 2020թ սահմանադրական փոփոխություններն ընդունելը:*

*Հեղինակը եզրակացնում է, որ ՀՀ ազգային ժողովի վարքագծի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի 29.04.2021թ. ՍԴՈ-1590 որոշմամբ արտահայտված դիրքորոշման հիմնվարումները վիճելի են և չեն արդարացնում ՀՀ ազգային ժողովի կողմից ՀՀ Սահմանադրությանը հակառակ գործելը:*

***Հիմնաբառեր:*** *ՀՀ ազգային ժողով, պառլամենտ, սահմանադրական փոփոխություններ, սահմանադրական վերահսկողություն, «Nemo iudex in sua causa» իրավական սկզբունք:*

**1. ՀՀ Սահմանադրությունը փոփոխելիս ՀՀ ազգային ժողովի՝ ՀՀ Սահմանադրությանը հակառակ վարքագիծը**

*1.1. Ընդհանուր դրույթներ*

Սահմանադրական իրավունքի պատմության մեջ եղել են դեպքեր, երբ քաղաքական իշխանության դերակատարները տարբեր արդարացումներով, ի հակառակ սահմանադրական կոնկրետ կարգավորումների, սահմանադրությունում կատարել (նախաձեռնել) են սահմանադրական փոփոխություններ: Օրինակ՝ Ֆրանսիայի Սահմանադրության 89-րդ հոդվածով Նախագահը կարող է Սահմանադրությունում փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնել միայն այն բանից հետո, երբ այդ նախագիծը հավանության է արժանացել խորհրդարանի երկու պալատների կողմից: Մինչդեռ Ֆրանսիայի Նախագահ Շառլ դը Գոլը 1962թ-ին, ի հակառակ Սահմանադրության 89-րդ հոդվածի կարգավորման, Սահմանադրության փոփոխությունների նախագիծը, առանց պառլամենտի քննարկմանը ներկայացնելու, դրեց հանրաքվեի: Նա իր վարքագիծն արդարացնելու համար հղում էր կատարում Սահմանադրության 11-րդ հոդվածի վրա, որը Նախագահին իրավունք է տալիս հանրային իշխանության կազմակերպման վերաբերյալ ցանկացած օրենքի նախագիծ դնել հանրաքվեի: Նրա մեկնաբանմամբ Սահմանադրության 11-րդ հոդվածում օգտագործվող «օրենք» հասկացությունը «Սահմանադրություն» հասկացության հոմանիշն է, քանի որ ցանկացած Սահմանադրություն պարտադիր

կապված է հանրային իշխանության կազմակերպման հետ [5, С. 95-96]:

Երբեմն ծագում են այնպիսի ոչ ստանդարտ իրավիճակներ, երբ մի կողմից՝ սահմանադրական նորմը պառլամենտին պարտավորեցնում է մինչև կոնկրետ հարցի լուծումը նախապես դիմել սահմանադրական դատարան և ստանալ նրա դիրքորոշումը, մյուս կողմից՝ այն հարցը, որը պետք է քննարկվի սահմանադրական դատարանում, անմիջապես վերաբերում է սահմանադրական դատարանի դատավորներին, ուստի սահմանադրական դատարանի դատավորների կողմից այդ հարցի քննարկմանը մասնակցելը կարող է հակասության մեջ մտնել «Nemo iudex in sua causa» (ոչ ոք չի կարող դատավոր լինել իր գործով) սկզբունքի հետ: ՀՀ ազգային ժողովը 2020թ-ին հանդիպել է նման իրավիճակի:

Սույն բաժնում կքննարկենք 2020թ-ին ՀՀ ազգային ժողովի կողմից, ի հակառակ ՀՀ Սահմանադրության իմպերատիվ պահանջների (առանց նախապես ՀՀ սահմանադրական դատարան դիմելու), ՀՀ Սահմանադրության անցումային դրույթներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ հարցը և դրա իրավաչափության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումը:

*1.2. ՀՀ Սահմանադրության 168-րդ և 169-րդ հոդվածներին հակառակ գործելը. contra constitutionem վարքագի՞ծ, թե՞ սահմանադրական դելիկտ*

Հայաստանում 2018թ-ի հեղափոխությունից հետո նոր քաղաքական իշխանության և ՀՀ սահմանադրական դատարանի միջև ծագեց բացահայտ հակամարտություն, որը լուծելու նպատակով ՀՀ ազգային ժողովի քաղաքական մեծամասնությունը, ՀՀ սահմանադրական դատարանի կազմը փոփոխելու նպատակով, 2020թ-ի հունիսի 22-ին նախաձեռնեց ՀՀ Սահմանադրության անցումային դրույթի փոփոխության գործընթաց[1], որով նախատեսվում էր կրճատել նախորդ իշխանությունների օրոք ընտրված (նշանակված) ՀՀ սահմանադրական

[1] ՀՀ Սահմանադրության անցումային դրույթները կարող են փոփոխվել ՀՀ ազգային ժողովի կողմից:

դատարանի նախագահի և վեց դատավորների պաշտոնավարման ժամկետները (այսուհետ՝ 2020թ.փոփոխություններ)[2]:

Իրավական կազուսն այն էր, որ մի կողմից՝ ՀՀ Սահմանադրության 168-րդ հոդվածը և 169-րդ հոդվածի 2-րդ մասն իմպերատիվ սահմանում են, որ ՀՀ ազգային ժողովը, մինչև սահմանադրական փոփոխությունների նախագիծն ընդունելը, այդ հարցով պարտավոր է դիմել ՀՀ սահմանադրական դատարան[3] [1], մյուս կողմից՝ ՀՀ Սահմանադրության այդ փոփոխություններն անմիջապես վերաբերում էին ՀՀ սահմանադրական դատարանի ինը դատավորներից յոթի պաշտոնավարման ժամկետի կրճատմանը, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնանկությանը:

Ինչպե՞ս պետք է վարվեր ՀՀ ազգային ժողովը՝ ղեկավարվե՞ր ՀՀ Սահմանադրության 168-րդ և 169-րդ հոդվածներով և 2020թ. փոփոխությունների նախագծի՝ Սահմանադրության համապատասխանության հարցը որոշելու համար դիմե՞ր ՀՀ սահմանադրական դատարան, թե՞ ի հակառակ ՀՀ Սահմանադրության այդ հոդվածների պահանջների, սահմանադրական փոփոխություններն ընդուներ՝ առանց ՀՀ սահմանադրական դատարան դիմելու:

Այդ ժամանակահատվածում երկրում առկա քաղաքական իրողությունները հիմք էին տալիս առանց բարդության կանխատեսելու, որ ՀՀ ազգային ժողովը չէր դիմի ՀՀ սահմանադրական դատարան, քանի որ գիտակցում էր, որ Դատարանն ամենայն հավանականությամբ այդ փոփոխությունները կճանաչեր ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածին (իրավական պետության սկզբունքին) հակասող:

Ինչպես և սպասվում էր՝ ՀՀ ազգային ժողովը ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին որոշման նախագիծը չընդունեց (քվեարկությամբ նման որոշում չկայացվեց): Այնուհետև՝ ՀՀ ազգային ժողովը, առանց ՀՀ սահմանադրական դատարան դիմելու, 2020թ.

---

[2] ՀՀ սահմանադրական դատարանի ինը դատավորից երկուսն ընտրվել էին 2018թ-ի հեղափոխությունից հետո:

[3] Կանոնակարգի 86-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է նշված հարցով Սահմանադրական դատարան դիմելու մասին որոշման նախագիծը քվեարկության դնելու ոչ թե հայեցողություն, այլ պարտականություն:

փոփոխությունների նախագիծն ընդունեց երկրորդ ընթերցմամբ[4]: Այսինքն՝ ՀՀ ազգային ժողովը ՀՀ սահմանադրական դատարան դիմելու որոշում չկայացրեց և ՀՀ Սահմանադրությունում կատարեց փոփոխություններ, ինչը նշանակում է, որ նա գործեց ՀՀ Սահմանադրության 168-րդ և 169-րդ հոդվածների պահանջներին հակառակ:

Եթե հարցի քաղաքական տեսանկյունը հստակ է, ապա նույնը չի կարելի ասել իրավական կողմի մասին: Չկա որևէ հստակ բացատրություն, թե ՀՀ ազգային ժողովը ի՞նչ իրավական հիմնավորմամբ որոշում չկայացրեց ՀՀ սահմանադրական դատարան դիմելու մասին: Միայն կարող ենք նշել, որ ՀՀ ազգային ժողովի նիստին ՀՀ արդարադատության նախարարը ՀՀ սահմանադրական դատարանին չդիմելը բացատրել է հետևյալ կերպ.

*«Սահմանադրական դատարանը սահմանադրության փոփոխությունների նախնական վերահսկողության ինստիտուտի կիրառման շրջանակներում գործելու է ուղիղ շահերի բախման իրավիճակում, հետևաբար, վտանգված է սահմանադրական արդարադատության իրականացումն այդ շրջանակներում» [3] :*

ՀՀ ազգային ժողովի՝ վերը նկարագրված վարքագիծը կարելի՞ է արդյոք համարել contra constitutionem իրավունքի զարգացում, այսինքն՝ կարելի է արդյոք այն որակել իրավաչափ վարքագիծ: Հարցի պատասխանը հստակ է՝ հոդվածի առաջին բաժնում ներկայացված չափանիշների տեսանկյունից ՀՀ ազգային ժողովի վարքագիծը չի կարող համարվել contra constitutionem իրավունքի զարգացում, քանի որ ՀՀ ազգային ժողովի վարքագիծը պայմանավորված չէր պետականապահպանության սկզբունքները ծայրահեղ անհրաժեշտության վիճակում իրացնելու թելադրանքով: Թեև ՀՀ սահմանադրական դատարանի յոթ դատավորների մասնակցությամբ այդ նախագծի սահմանադրականության քննարկումը կարող էր կոնֆլիկտ ստեղծել «Nemo iudex in sua causa» իրավունքի սկզբունքի հետ, սակայն այս սկզբունքը տվյալ դեպքում պետականապահպան բնույթ չուներ, ուս-

[4] Սահմանադրական այս փոփոխություններն ընդունելուց հետո ՀՀ սահմանադրական դատարանի երեք դատավորի լիազորությունները, պաշտոնավարման ժամկետը լրանալու հիմքով, դադարեցվեց:

տի դրա իրացման անհրաժեշտությունը չէր կարող արդարացնել ՀՀ ազգային ժողովի՝ սահմանադրական կոնկրետ նորմին հակառակ գործելու վարքագիծը: Այս դեպքում գործ ունենք պարզ սահմանադրական դելիկտի հետ:

Միևնույն ժամանակ, ՀՀ ազգային ժողովի վարքագծի իրավաչափությանն անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը, որը հայտնել է նշվածի համեմատությամբ տարբերվող մոտեցում:

**2. ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումը**

*2.1. Ընդհանուր դրույթներ*

ՀՀ ազգային ժողովի ընդդիմությունը 2020 թվականի օգոստոսի 18-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան և, ի թիվս այլ հարցերի, բարձրացրել է նաև այն հարցը, որ ՀՀ ազգային ժողովը խախտել է ՀՀ Սահմանադրությունը, երբ 2020թ. փոփոխությունների նախագծի սահմանադրականությունը որոշելու համար չի դիմել ՀՀ սահմանադրական դատարան և դրանք ընդունել է առանց ՀՀ սահմանադրական դատարանի որոշման:

ՀՀ սահմանադրական դատարանը 11.02.2021թ. ՍԴԱՈ-27 աշխատակարգային որոշմամբ այս պահանջի մասով գործի վարույթը կարճել է այն հիմնավորմամբ, որ դիմողը, ըստ էության, վիճարկում է 2020թ. փոփոխությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը: Մինչդեռ, ՀՀ Սահմանադրությունը չի նախատեսում ՀՀ սահմանադրական դատարանի՝ ուժի մեջ մտած Սահմանադրության դրույթների նկատմամբ սահմանադրական վերահսկողություն իրականացնելու լիազորություն:

ՀՀ սահմանադրական դատարանն անկասկած ճիշտ է, որ ինքը գործող օրենքով օժտված չէ ներսահմանադրական կոլիզիաների դեպքում սահմանադրական նորմը lex superior կանոնի հիման վրա անվավեր ճանաչելու լիազորությամբ: Սակայն, զարմանալին այն է, որ ՀՀ սահմանադրական դատարանը 29.04.2021թ. գործն ըստ էության լուծող ՍԴՈ-1590 որոշման մեջ այնուամենայնիվ անդրադարձավ այն հարցին, որի վերաբերյալ վարույթը ՍԴԱՈ-27 որոշմամբ կարճել էր: ՀՀ սահմանադրական դատարանն այդ հարցի բովանդակությանն

անդրադառնալը բացատրեց «խորհրդարանական հանրապետությունում ընդդիմության հանդեպ հարգանքով»:

Ստացվում է, որ ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ ազգային ժողովի կողմից 2020թ. փոփոխությունների հարցով ՀՀ սահմանադրական դատարան չդիմելու հարցը մի կողմից՝ որակել է իր իրավասությունից դուրս գտնվող հարց և վարույթը կարճել է (ՍԴԱՈ-27 աշխատակարգային որոշում), մյուս կողմից՝ գործն ըստ էության լուծող որոշմամբ բովանդակային առումով գնահատել է ՀՀ ազգային ժողովի վարքագիծը (ՍԴՈ-1590 որոշում):

*2.2. ՀՀ սահմանադրական դատարանի գնահատականը ՀՀ Սահմանադրության 168-րդ և 169-րդ հոդվածներին հակառակ գործելու վերաբերյալ*

ՀՀ սահմանադրական դատարանը ՍԴՈ-1590 որոշմամբ 2020թ. փոփոխությունների նախագծի սահմանադրականության որոշման համար ՀՀ ազգային ժողովի կողմից ՀՀ սահմանադրական դատարան չդիմելը որակել է որպես իրավաչափ վարքագիծ: Այդ նպատակով ՀՀ սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված իմպերատիվ կանոնից նախատեսեց «ողջամիտ բացառություն», որի համաձայն՝ ՀՀ ազգային ժողովը որոշ դեպքերում կարող է, առանց ՀՀ սահմանադրական դատարանի նախնական վերահսկողության, ՀՀ Սահմանադրությունում կատարել փոփոխություն: ՀՀ Սահմանադրության տեքստում նման բացառություն նախատեսված չէ, ուստի փորձենք հասկանալ դրա սուբստանցիոն հիմնավորումները:

Ներկայիս գերակայող մոտեցման համաձայն՝ ՀՀ սահմանադրական դատարանի դատավորները նիցշեական «գերմարդիկ» չեն, ուստի իրենք իրենցից չեն կարող բխեցնել կանոններ (այն էլ Սահմանադրության կոնկրետ նորմերին հակառակ) և դրանք պարտադրել հասարակությանը:

Հայաստանում հերքվում են նաև իրավական ռեալիզմի դոկտրինի այնպիսի ծայրահեղ դրսևորումները, որոնցով հնարավոր կլիներ սահմանադրական դատարանին դիտարկել որպես սուվերեն դատա-

րան և պնդել, որ դատարանը իրավունք ստեղծելիս կաշկանդված չէ որևէ իրավունքով, իսկ սահմանադրությունը մեկնաբանելիս «իրավաբանորեն ազատ է, այսինքն՝ կամայականորեն որոշում է սահմանադրության բովանդակությունը» [4, С. 53]: Հայաստանի իրավական ավանդույթներին օտար է այն պնդումը, որ «դատարանն իր որոշումը հիմնավորելիս չի հիմնվում Սահմանադրության՝ ի սկզբանե սահմանված բարձրագույն ուժի վրա և հենց դատարանի որոշումն է սահմանադրությանը հաղորդում բարձրագույն իրավաբանական ուժ» [5, С.102]:

Այսպիսով, ՀՀ սահմանադրական դատարանի դատավորները հատկապես սահմանադրական նորմերում չնախատեսված բացառությունները (ավելի ճիշտ՝ սահմանադրական կոնկրետ նորմին հակադրվող կանոնները) չեն կարող բխեցնել իրենք իրենցից: Եթե սահմանադրական իրավունքի զարգացումն ընթանում է այնպիսի ճանապարհով, որով սահմանադրական դատարանը մակաբերում է սահմանադրական իմպերատիվ կանոնին հակառակ դրույթ (բացառություն), ապա դրա ներմուծումը պետք է ունենա սուբստանցիոն հիմնավորումներ, դրա համար առավելագույնս պետք է օգտագործել իրավական (սահմանադրական) սկզբունքների պոտենցիալը:

*2.3. «Ողջամիտ բացառության» վավերականությունը*

ՀՀ սահմանադրական դատարանի սահմանած «ողջամիտ բացառության» վավերականությունը գնահատելու համար պետք է հասկանալ, թե սահմանադրական իմպերատիվ նորմից արված բացառությունը ի՞նչ սուբստանցիայից է բխում, ՀՀ սահմանադրական դատարանը այդ բացառությունը ի՞նչ իրավական (սահմանադրական) սկզբունքից է մակաբերել: Չէ՞ որ իրավունքի փիլիսոփայության մթնոլորտում աշխատող դատարանը վստահաբար գիտակցում է, որ ոչնչից ոչինչ չի առաջանում և ամեն մի երևույթ ունի իր պատճառը: Դատարանի ՍԴՈ-1590 որոշման մեջ կարդում ենք.

*«Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սահմանադրական փոփոխությունների նախագծերի սահմանադրականության պարփադիր նախնական վերահսկողությունը սահմանված է Սահմանադրությամբ, Սահմանադրական դափարանն այս կանոնը համարում է պարփադիր*

*կարգավորման ենթակա,* ***բացառությամբ այն դեպքերի, երբ այդ կանոնի կիրառումը կարող է հանգեցնել Սահմանադրության փոփոխությունների նախագծերի սահմանադրականության պարտադիր նախնական վերահսկողության ինստիտուտի ներդրման նպատակներին հակառակ արդյունքի*** *(ՍԴՈ-1590 որոշման 5.7 կետ):*

*Այն իրավիճակում, երբ Սահմանադրության փոփոխությունների նախագծի սահմանադրականության պարտադիր նախնական վերահսկողության նպատակին այդ ինստիտուտի կիրառմամբ հնարավոր չէ հասնել, նշված սահմանադրական կանոնից հնարավոր է ողջամիտ բացառություն, որը բացառիկ միջոց է և կիրառելի է միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանի կողմից նախագծի սահմանադրականության ստուգումը* ***սահմանադրական արդարադատության առանցքային ընթացակարգային երաշխիքների և սկզբունքների պահպանմամբ անհնար է*** *(ՍԴՈ-1590 որոշման 5.8 կետ)»:*

ՀՀ սահմանադրական դատարանը «ողջամիտ բացառության» հիմքում դրել է երկու բացատրություն: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նկատմամբ նախնական դատական վերահսկողությունը կարելի է շրջանցել, եթե՝

1) ՀՀ սահմանադրական դատարան դիմելը կարող է հանգեցնել պարտադիր նախնական վերահսկողության ինստիտուտի նպատակին հակառակ արդյունքի.

2) անհնարին է պահպանել սահմանադրական արդարադատության առանցքային ընթացակարգային երաշխիքները և սկզբունքները:

**(a) Սահմանադրական պարտադիր նախնական վերահսկողության ինստիտուտի նպատակին հակառակ արդյունքին հանգեցնելու ռիսկը**: ՀՀ սահմանադրական դատարանը որևէ կերպ չի բացահայտել, թե 2020թ. փոփոխություններով ՀՀ սահմանադրական դատարան դիմելն ինչու պետք է առաջացներ սահմանադրական դատական վերահսկողության ինստիտուտի նպատակին հակառակ արդյունք: Փորձենք դա հասկանալ ինքնուրույն:

Դրա համար նախ պետք է պարզել, թե ըստ ՀՀ սահմանադրական դատարանի՝ որո՞նք են նախնական վերահսկողության ինստիտուտի նպատակները, այնուհետև՝ հասկանալ, թե սույն դեպքով ՀՀ ազգային ժողովի կողմից ՀՀ սահմանադրական դատարան դիմելը կարող էր արդյոք հանգեցնել այդ նպատակներին հակառակ արդյունքի:

ՀՀ սահմանադրական դատարանը որոշման 2.4-րդ կետում նշել է Սահմանադրության փոփոխությունների նախագծերի նկատմամբ նախնական վերահսկողություն իրականացնելու երեք նպատակ՝

1) կանխել Սահմանադրության փոփոխությունների արդյունքում Սահմանադրության տեքստում հնարավոր ներքին կոլիզիաների առաջացումը.

2) կանխել Սահմանադրության՝ հատվածական շահերի սպասարկման նպատակով կատարվող փոփոխությունները, որոնք հակասության մեջ կարող են լինել Սահմանադրությամբ ամրագրված արժեքների և սկզբունքների հետ.

3) հնարավորություն ընձեռել Ազգային ժողովի պատգամավորներին և հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող քաղաքացիներին Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ տեղեկացված որոշում կայացնել:

Եթե ՀՀ ազգային ժողովը դիմեր ՀՀ սահմանադրական դատարան, ապա թվարկված նպատակներից ո՞րը կվտանգվեր, կամ ո՞ր նպատակին հակառակ արդյունք կառաջանար:

Միգուցե ՀՀ սահմանադրական դատարանը «ողջամիտ բացառություն» նախատեսելիս նկատի է ունեցել, որ սույն գործով ՀՀ ազգային ժողովի պատգամավորներին հնարավորություն չի ընձեռնվի Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ տեղեկացված որոշում կայացնել (երրորդ նպատակը): Պատասխանն ակնհայտորեն բացասական է, քանի որ նախնական սահմանադրական վերահսկողության նպատակի մեջ կարևորվում է պատգամավորների՝ Նախագծի վերաբերյալ տեղեկացված որոշում կայացնելու հարցը: Դա նշանակում է, որ եթե ՀՀ ազգային ժողովը դիմեր ՀՀ սահմանադրական դատարան, և վերջինս որոշեր, որ Սահմանադրության

2020թ.փոփոխությունները հակասում են Սահմանադրության անփոփոխ դրույթներին, ապա դրանով իսկ ինքնին կապահովեր պատգամավորների տեղեկացված որոշում կայացնելու իրավունքը:

Ինչ վերաբերում է նախնական սահմանադրական վերահսկողության երկրորդ նպատակին (կանխել հատվածական շահերի սպասարկումը), ապա ՀՀ սահմանադրական դատարան չդիմելը ինքնին հակասում է այդ նպատակին, բայց ոչ՝ հակառակը: Բանն այն է, որ քաղաքական իշխանությունը ՀՀ Սահմանադրության 2020թ. փոփոխություններին նախորդող ժամանակաշրջանում նախաձեռնեց լայնածավալ ոտնձգություններ դատարանների, այդ թվում՝ ՀՀ սահմանադրական դատարանի նկատմամբ (օրինակ՝ ՀՀ վարչապետի հայտարարության հիման վրա ՀՀ բոլոր դատարանների մուտքերն արգելափակելը), ուստի ունենք բավարար հիմքեր, ենթադրելու, որ ՀՀ Սահմանադրության 2020թ. փոփոխությունները մեծ հաշվով կոչված էին սպասարկելու քաղաքական իշխանության՝ ոչ ցանկալի դատավորներից ազատվելու հատվածային շահերին: Ուստի ՀՀ ազգային ժողովի քաղաքական մեծամասնության կողմից ՀՀ սահմանադրական դատարան դիմելու որոշում չկայացնելն ամենայն հավանականությամբ նպատակ ուներ առանց խոչընդոտի ապահովելու քաղաքական շահերի իրականացումը:

Այսպիսով, ՀՀ սահմանադրական դատարանի նշած երկու բացատրություններից առաջինը «ողջամիտ բացառությանը» վավերականություն չի հաղորդում, քանի որ չկա որևէ փաստ այն մասին, որ ՀՀ ազգային ժողովի կողմից ՀՀ սահմանադրական դատարան դիմելը կիսակասեր սահմանադրական փոփոխությունների նկատմամբ սահմանադրական վերահսկողության նպատակներին կամ կառաջացներ դրանց հակառակ արդյունքներ:

**(b) Սահմանադրական արդարադատության առանցքային երաշխիքների և սկզբունքների պահպանման անհնարինությունը**: Սահմանադրության փոփոխությունների նախագծի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով պառլամենտի կողմից ՀՀ սահմանադրական դատարան դիմելու «ողջամիտ բացառության» երկրորդ հիմնավորումը վերաբերում է սահմանադրական արդարա-

դատության առանցքային ընթացակարգային երաշխիքների և սկզբունքների պահպանման անհնարինությանը:

«Ողջամիտ բացառության» այս հիմնավորումը թվում է, թե սուբստանցիոն է, քանի որ ՀՀ սահմանադրական դատարանը, կարծեք, փորձել է այդ բացառությունը *մեծ հաշվով* մակաբերել «Nemo iudex in sua causa (ոչ ոք չի կարող իր գործով լինել դատավոր)» իրավունքի ընդհանուր սկզբունքից:

ՀՀ սահմանադրական դատարանն այս հարցն սկսել է քննարկել պոզիտիվ-իրավական նորմերի վերլուծությունից, այնուհետև փաստել է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում ամրագրված չէ *իր գործով դատավորի* մասնակցության անհնարինության մասին դրույթ: Բարձր դատարանը նշել է, որ օրենսդիրը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 16-րդ հոդվածում դատավորի՝ դատավարության կողմի նկատմամբ կանխակալ վերաբերմունք ունենալը համարել է գործի քննությանը մասնակցելու անհնարինության հիմք, սակայն դատավորի՝ գործի ելքով ուղղակիորեն շահագրգռված լինելու հնարավորության հանգամանքը, **այսինքն՝ իր գործով լինել դատավոր** (ընդգծումը՝ հեղ.), քննությանը մասնակցելու անհնարինության հիմք չի համարել (ՍԴՈ-1590 որոշման 5.10-րդ կետ): Բարձր դատարանն այնուհետև նշել է.

*«**Օրենսդրի կողմից նման իրավիճակի կարգավորված չլինելը (իր գործով դատավոր լինելու արգելքի բացակայությունը՝ հեղ.) չի կարող ծառայել որպես թույլտվություն** Սահմանադրական դատարանի դատավորի սահմանադրական առաքելության իրականացման ընթացքում շահերի այնպիսի հնարավոր բախումների կենտրոնում հայտնվելու համար, որոնք սասանում են սահմանադրական արդարադատության նկատմամբ հանրային վստահությունը՝ հանրության մոտ հիմնավոր կասկած հարուցելով սահմանադրական արդարադատությունը Սահմանադրական դատարանի դատավորների անհատական շահերին ծառայեցնելու մտահոգությամբ (Ընդգծումը՝ հեղ.)»:*

ՀՀ սահմանադրական դատարանը փաստորեն նշել է, որ իր գործով դատավոր լինելու օրենսդրական ուղիղ արգելքի բացի պայման-

ներում[5] դատավորը չի կարող մասնակցել իր գործի քննությանը, եթե նա հայտնվել է շահերի այնպիսի հնարավոր բախումների կենտրոնում, որը սասանում է սահմանադրական արդարադատության նկատմամբ հանրային վստահությունը (1), կամ սահմանադրական արդարադատությունը կախվածության մեջ է դրվում Սահմանադրական դատարանի դատավորների՝ քննության առարկա հարցի նկատմամբ անձնական վերաբերմունքից և գործի ելքով սուբյեկտիվ շահագրգռվածությունից (2):

ՀՀ սահմանադրական դատարանը խուսափել է հստակ և ուղիղ նշելուց, որ (1) և (2) դատողությունների հիմքը «իր գործով դատավոր լինելու արգելքի» մասին բնական իրավունքի և սահմանադրականության սկզբունքն է, որն ունի գործողության լայն ոլորտ. այն չի սահմանափակվում միայն դատական վարույթով: Օրինակ՝ «Nemo iudex in sua causa» իրավունքի սկզբունքի խորապատկերում կարող են քննարկվել հետևյալ հարցերը՝ պետական մարմինը ինքն իր համար կարո՞ղ է արդյոք վարձատրության չափ սահմանել, կամ օրենսդիրը կարո՞ղ է արդյոք ինքն իր համար իրավասություն սահմանել կամ Նախագահը կարո՞ղ է ինքն իրեն ներում շնորհել, կամ իրավասու դատարանը կարո՞ղ է արդյոք քննարկել դատավորների աշխատավարձի չափը նվազեցնող օրենքի սահմանադրականությունը և այլն [7]: Օրինակ՝ Ռուսական սահմանադրական իրավունքի դոկտրինում այս սկզբունքի խորապատկերում քննարկվում է ՌԴ սահմանադրական դատարանին, իր իրավասությանը վերաբերող հարցերով, օրենսդրական նախաձեռնության լիազորություն վերապահելու նպատակահարմարությունը, որի կապակցությամբ հայտնի սահմանադրագետ Ս. Ավագյանը նշում է.

---

[5] Իրավունքի փիլիսոփայության դատարանին՝ իրավունքի այս սկզբունքի օրենսդրությամբ ամրագրված չլինելը չպետք է մտահոգի, քանի որ այն իրավունքի աքսիոմատիկ պահանջներից է: ՀՀ սահմանադրական դատարանն իր բնույթի ուժով պետք է գործի իրավունքի փիլիսոփայության ծիրում: ՀՀ-ում իրավունքի զգացողությունը էլ ավելի կվտանգվի, եթե ծայրահեղական պոզիտիվիզմը հետևողականորեն մուտք գործի նաև այս դատարան:

*«Ինչպե՞ս վարվել, եթե Սահմանադրական դատարանը ներկայացրել է օրինագիծը, որն ընդունվել է, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցողներից մեկը նրա առջև դնում է այդ ակտի սահմանադրականության գնահատման հարցը: Ստացվում է, որ Սահմանադրական դատարանն ակամայից կդառնա «սեփական գործով դատավոր» [6, C. 609]:*

Ո՞վ է «Nemo iudex in sua causa» իրավունքի սկզբունքի հասցեատերը, օրինակ՝ ՌԴ Պետական Դուման կարո՞ղ է արդյոք, «Nemo iudex in sua causa» սկզբունքը վկայակոչելով, հրաժարվել ՌԴ սահմանադրական դատարանի ներկայացրած օրինագիծը քննարկելուց: Այս հարցն առանձին քննարկման թեմա է, իսկ սույն հոդվածում մեզ հետաքրքրում է այն, թե ով պետք է գնահատի և որոշի դասական իմաստով դատավորի՝ իր գործին մասնակցելու անհնարինությունը:

ՀՀ իրավական համակարգում դատավորի՝ իր գործին մասնակցության անհնարինության հարցերը (բացարկ, ինքնաբացարկ և այլն) գնահատում և որոշում է ոչ թե նրա մասնակցության անհնարինության հարցը բարձրաձայնող սուբյեկտը, այլ դատարանը կամ դատավորը, որի առջև բարձրաձայնում են դատավորի մասնակցության անհնարինության հարցը:

Վերադառնանք քննարկվող գործին: ՀՀ Սահմանադրության 2020թ. փոփոխություններն իրոք անմիջականորեն վերաբերում էին բարձր դատարանի յոթ դատավորների պաշտոնավարման ժամկետի կրճատմանը, ուստի այդ դատավորների մասնակցությամբ գործը քննելը կարող էր «Nemo iudex in sua causa» սկզբունքի հետ առաջացնել կոնֆլիկտ: Թեև ՀՀ սահմանադրական դատարանը «ողջամիտ բացառությունը» էքսպլիցիտ ձևով չի մակաբերել «Nemo iudex in sua causa» իրավունքի սկզբունքից, սակայն այն, մեծ հաշվով, ձևակերպել է իմպլիցիտ ձևով:

Բայց կոնկրետ դեպքում ո՞վ է «Nemo iudex in sua causa» իրավունքի սկզբունքի հասցեատերը, այսինքն՝ ո՞վ պետք է գնահատեր և որոշեր այս սկզբունքի կիրառության հարցը՝ ՀՀ ազգային ժողովը, թ՞ե ՀՀ սահմանադրական դատարանը:

ՀՀ սահմանադրական դատարանը ՍԴՈ-1590 որոշման մեջ հետևողական դիրքորոշում արտահայտելու դեպքում պետք է ընտրեր հետևյալ ճանապարհներից մեկը:

*Տարբերակ առաջին*՝ ՀՀ սահմանադրական դատարանը փաստում է, որ ՀՀ *սահմանադրական դատարանում* (չշփոթել դատավորի մասնակցության անհնարինության ինստիտուտի հետ) այդ հարցի քննարկումն անհնարին էր, այնուհետև ճանաչում է ՀՀ ազգային ժողովի՝ ՀՀ սահմանադրական դատարան չդիմելու իրավաչափությունը:

Այս տարբերակի դեպքում ՀՀ սահմանադրական դատարանը կհանդիպեր ՀՀ սուբստանցիոն իրավաբանական հիմնավորումներ ներկայացնելու դժվարության հետ, քանի որ «Nemo iudex in sua causa» սկզբունքը կիրառելի է ոչ թե ՀՀ սահմանադրական դատարանին, այլ դատավորին վարույթից հեռացնելու հարցը քննելիս: Հետևապես, այս տարբերակի ընտրության դեպքում, ՀՀ սահմանադրական դատարանը ինչ էլ որ նշեր, դա կնշանակեր, որ նա ըստ էության անվստահություն է հայտնում ոչ թե ՀՀ սահմանադրական դատարանի յոթ դատավորներին, այլ ինքն իրեն:

Ուստի, այս տարբերակը կարելի էր ընտրել այն ժամանակ, երբ ՀՀ սահմանադրական դատարանը հանդես գար որպես «ինքնիշխան դատարան», ով կամայականորեն սահմանում է ՀՀ սահմանադրական դատարանի գործառույթի իրականացման անհնարինության մասին նոր կանոն, որը հակադրվում է ՀՀ Սահմանադրության տեքստին (ինչպես նշվեց՝ նման դոկտրինը հայկական իրավական ավանդույթներին օտար է):

*Տարբերակ երկրորդ*՝ ՀՀ սահմանադրական դատարանը վկայակոչում է *դատավորի*՝ գործի քննությանը մասնակցելու անհնարինության մասին կանոնը: Այս տարբերակի դեպքում ՀՀ սահմանադրական դատարանի դատավորի՝ գործի մասնակցության անհնարինությունը գնահատում և որոշում է ոչ թե ՀՀ ազգային ժողովը, այլ ՀՀ սահմանադրական դատարանը[6], ուստի ՀՀ ազգային ժողովը պետք է

---

[6] «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորի՝ գործի քննությանը մասնակցելու անհնարինության հարցը Սահմանա-

դիմեր ՀՀ սահմանադրական դատարան, այնուհետև՝ նրա առջև բարձրաձայներ յոթ դատավորների մասնակցության անհնարինության հարցը:

ՀՀ սահմանադրական դատարանը ո՞ր ճանապարհն ընտրեց: Նրա դիրքորոշումը, ցավոք, հետևողական չէ, որի պատճառով անորոշ է այն հարցի պատասխանը, թե վերջին հաշվով նա հիմք է ընդունել ՀՀ սահմանադրական դատարանի գործառույթի իրականացման անհնարինությո՞ւնը, թ՞ե ՀՀ սահմանադրական դատարանի դատավորի մասնակցության անհնարինությունը:

Մի կողմից՝ ՀՀ սահմանադրական դատարանը ՍԴՈ-1590 որոշման մեջ վկայակոչել է ՀՀ սահմանադրական դատարանի դատավորի՝ գործին մասնակցելու անհնարինության մասին դրույթը: Դա նշանակում է, որ ՀՀ ազգային ժողովը, անկախ դատավորների անաչառության վերաբերյալ իր կասկածներից, պարտավոր էր դիմել ՀՀ սահմանադրական դատարան, այնուհետև նրա առջև բարձրացնել յոթ դատավորների՝ գործին մասնակցելու անհնարինության հարցը:

Մյուս կողմից՝ ՀՀ սահմանադրական դատարանը ընդունել է, որ խոսքը գնում է հենց ՀՀ սահմանադրական դատարանի գործառույթի իրականացման անհնարինության մասին, քանի որ տվյալ գործի փաստերի համաձայն՝ 2020թ-ի փոփոխություններով ՀՀ ազգային ժողովը ի սկզբանե չէր դիմել ՀՀ սահմանադրական դատարան:

Եթե նա ընտրել է ՀՀ սահմանադրական դատարանի գործառույթի իրականացման անհնարինության տարբերակը, ապա ՍԴՈ-1590 որոշման մեջ ինչ՞ու է խոսում ՀՀ սահմանադրական դատարանի դատավորի մասնակցության անհնարինության մասին: Եթե նույնիսկ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 16-րդ հոդվածում՝ իր գործով դատավոր լինելու արգելքն ամրագրված լիներ որպես՝ քննությանը մասնակցելու անհնարինության հիմք, ապա, միևնույնն է, նշված հոդվածն այս գործով չէր կարող վկայակոչվել, քանի որ 2020թ-ին ՀՀ ազգային ժողովը չէր դիմել ՀՀ սահմանադրական դատարան, ուստի չէր էլ կարող բարձրաձայնել առան-

դրական դատարանը լուծում է գործը քննության ընդունելու մասին աշխատակարգային որոշման շրջանակներում:

ծին դատավորների՝ գործին մասնակցելու անհնարինության հարց: Այս գործի փաստական հանգամանքները ստիպում են ընդունել, որ ՀՀ ազգային ժողովը 2020թ-ի փոփոխություններով ՀՀ սահմանադրական դատարան չդիմելով ըստ էության անվստահություն է հայտնել սահմանադրական այդ ինստիտուտին, իսկ ՀՀ սահմանադրական դատարանը ՍԴՈ-1590 որոշմամբ ՀՀ ազգային ժողովի վարքագիծը վավերացրել է (ճանաչել է սահմանադրական):

Ի դեպ, եթե ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ վավերացվում է սահմանադրական մարմինների՝ անձնական շահագրգռվածության հիմքով գործառույթների իրականացման անհնարինության թեզը, ապա դրանով ստեղծվում է սահմանադրական ինստիտուտների փոխհարաբերությունները կազմաքանդելու մեծ վտանգ: Օրինակ՝ ՀՀ ազգային ժողովը նույն հիմնավորումներով կարող է Հանրապետության նախագահի ստորագրմանը չուղարկել Նախագահի աշխատավարձը նվազեցնելու մասին օրենքը (որի գործողության ժամկետն այնպիսին է, որ կիրառվելու է միայն այդ պահին գործող Նախագահի նկատմամբ): Ի՞նչն է բացառում, որ ՀՀ ազգային ժողովը այս դեպքում էլ շրջանառի Հանրապետության նախագահի անձնական շահագրգռվածության թեզը:

Իրերի ճիշտ դասավորվածության դեպքում ՀՀ ազգային ժողովը պետք է դիմեր ՀՀ սահմանադրական դատարան, այնուհետև՝ հիմք ընդունելով «Nemo iudex in sua causa» սկզբունքը, նրա առջև բարձրացներ այդ դատավորների մասնակցության անհնարինության հարց (այդ փուլում չկարևորելով դատավորների քվորումի խնդիրը):

Եթե պատկերացնենք, որ ՀՀ սահմանադրական դատարանը հաստատել է, որ ՀՀ սահմանադրական դատարանի ինը դատավորներից յոթը ունեն անձնական շահագրգռվածություն (առկա է մասնակցության անհնարինություն), ապա այդ ժամանակ բարձր դատարանը պետք է կիրառելի համարեր «արդարադատության անհրաժեշտության» կանոնը, որի էությունն այն է, որ արդարադատության բացակայությունը (դատավորներին վարույթից հեռացնելով արդարադատությունից հրաժարվելը) ավելի վատ է, քան շահագրգիռ դատավորին մասնակցությամբ արդարադատության իրականացումը: Այլ

կերպ ասած՝ ՀՀ սահմանադրական դատարանի դատավորների շահագրգռվածության մասին բարձրաձայնելուց հետո, բարձր դատարանի շահագրգիռ դատավորներն այս կանոնի հիմքով պետք է մասնակցեին գործի քննությանը, որի պայմաններում հնարավոր կլիներ իրականացնելու լայն իմաստով սահմանադրական արդարադատություն:

Եթե պատկերացնենք, որ շահագրգիռ դատավորներն այնուամենայնիվ որոշեին չմասնակցել գործի քննությանը[7], ապա քվորումի բացակայության հիմքով այս գործով սահմանադրական դատավարություն չէր կարող իրականացվել: Այս ամենից հետո ՀՀ ազգային ժողովին այլ բան չէր մնա, քան ՀՀ սահմանադրական դատարանի լռությունը մեկնաբանել (համարել) որպես Սահմանադրության փոփոխությունների սահմանադրականության մասին ենթադրյալ սանկցիա և անխոչընդոտ կերպով երկրորդ ընթերցմամբ ընդունել Սահմանադրության փոփոխությունները[8]:

Ի դեպ, քայլերի նման հաջորդականության մասին ակնարկել էր նաև Վենետիկի հանձնաժողովը.

*«Սահմանադրական դատարանը պետք է, մասնավորապես, դրսևորի ծայրահեղ ինքնազսպում և Դատարանին առնչվող փոփոխությունները քննելիս խուսափի դատավորների անձնական շահերի գերադասման անգամ տպավորություն ստեղծելուց» [2]:*

---

[7] «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել քվեարկությանը և քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը:

[8] «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասում նախատեսված է նմանվող կարգավորում: Նշված հոդվածի համաձայն՝ եթե Սահմանադրական դատարանը քննարկվող հարցի վերաբերյալ ձայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում կամ եզրակացություն չի ընդունում, ապա դիմումը համարվում է մերժված, որի մասին հայտարարվում է նիստերի դահլիճում:

Այս հարցով Վենետիկի հանձնաժողով դիմել էր իշխող քաղաքական ուժը, սակայն առանց սպասելու Հանձնաժողովի կարծիքին, իրականացրել էր իր պլանավորածը: Այդ իսկ պատճառով Հանձնաժողովն ափսոսանք է հայտնել այն մասին, որ Վենետիկի հանձնաժողովի կարծիքի ընդունման օրը Հայաստանի Հանրապետության խորհրդարանում ներկայացվել է սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկ, որն ըստ Հանձնաժողովի գնահատականի՝ չէր համապատասխանում իրենց կարծիքում ներկայացված առաջարկություններին:

ՀՀ սահմանադրական դատարանի հետ հակամարտող քաղաքական իշխանության համար առաջարկվող քայլերի հաջորդականությունն ընդունելի չէր կարող համարվել: Քաղաքական նպատակահարմարությունը պահանջում էր ընտրել և վավերացնել անհետևողական վարքագծի տարբերակը:

Մինչդեռ իրավական մտածողության գերակայության դեպքում այս ոչ ստանդարտ իրավիճակի լուծման ելման կետը (կանխավարկածի ձևաչափով) պետք է լիներ այն, որ ՀՀ սահմանադրական դատարանի դատավորները, որոնց վստահված է պետության կարևորագույն հարցերի լուծումը, օժտված են վերանձնային մոտեցում ցուցաբերելու բացառիկ ունակությամբ և կարողությամբ[9]:

*2.4. «Ողջամիտ բացառության» կիրառման պայմանը*

Հնարավոր են այնպիսի բացառիկ իրավիճակներ, երբ դատական համակարգի որևէ դատավորի մասնակցությունը տվյալ գործին կարող է խախտել «Nemo iudex in sua causa» սկզբունքը: Օրինակ՝ դատավորների վեթթինգի մասին օրենսդրության իրավաչափությունը վիճարկելու, կամ դատավորի անձեռնմխելիության մասին օրենսդրա-

---

[9] Քաղաքական տեսանկյունից ասվածը կորակվեր միամտություն: Միայն հետագայում պետք է պարզվեր է, որ իշխող քաղաքական ուժի համար օդի և ջրի պես անհրաժեշտ էր ունենալ 2018թ-ի հեղափոխությունից հետո նշանակված դատավորների կազմով Սահմանադրական դատարան, որպեսզի պետքի դեպքում կարողանա սահմանադրական վերահսկողության մեխանիզմով անխոչընդոտ անցկացնել պետականապահպանության տեսանկյունից մտահոգիչ միջազգային պայմանագրեր:

կան դրույթները վիճարկելու գործերին ցանկացած դատավորի մասնակցությունը կնշանակի, որ նա մասնակցում է նաև իր գործի քննությանը, քանի որ օրենսդրական այդ դրույթները վերաբերում են նաև իրեն:

Ինչպես նշվեց նման դեպքերում գործում է «արդարադատության անհրաժեշտության» կանոնը, ըստ որի՝ արդարադատության բացակայությունն ավելի վատ է, քան շահագրգիռ դատավորի մասնակցության արդարադատության իրականացումը: Եվրոպական որոշ հեղինակավոր մասնագիտական կառույցներ տարբեր առիթներով դիրքորոշում են հայտնել այն մասին, որ սահմանադրական արդարադատություն իրականացնող դատարանի դատավորների շահերի բախումը հիմք չէ դատավորներին վարույթից հեռացնելու համար, եթե դրա հետևանքով այդ օրենքի նկատմամբ հնարավոր չի լինի իրականացնել սահմանադրական արդարադատություն:

ԱՄՆ դատական պրակտիկայում հանդիպել են դեպքեր, երբ դատավորը դատարաններում վիճարկել է իր աշխատավարձի կամ նյութական հատուցումների չափերը նվազեցնելու մասին օրենքների սահմանադրականությունը: Այս գործերին մեկ այլ դատավորի մասնակցությունը «Nemo iudex in sua causa» սկզբունքի հետ մտնում էր կոնֆլիկտի մեջ, քանի որ այդ օրենքը վերաբերում է նաև գործը քննող դատավորի աշխատավարձին (նյութական հատուցումներին), սակայն ամերիկյան դատարանները ներմուծել են «անհրաժեշտության» կանոնը, որը թույլատրում է դատավորին մասնակցել նման գործերի քննությունը, քանի որ եթե բոլոր դատավորները վարույթից հեռացվեն, ապա չի լինի որևէ մեկը, ով այդ գործով որոշում կկայացնի [7]:

Եթե ՀՀ սահմանադրական դատարանը հաստատեր յոթ դատավորների մասնակցության անհնարինությունը, ապա նման դեպքում պարզ էր դառնում, որ Դատարանն այդ գործով որոշում չէր կարող կայացնել, ուստի այս պարագայում նույնպես պետք է գործեր «արդարադատության անհրաժեշտության» կանոնը, որը պահանջում է դատական իշխանության իրականացում նույնիսկ անձնական շահագրգռվածություն ունեցող դատավորների մասնակցությամբ (չշփո-

թել այն իրավիճակի հետ, երբ դատավորներն իրենք հրաժարվում են մասնակցել դատական նիստին):

Մինչդեռ քննարկվող գործով ՀՀ սահմանադրական դատարանն «արդարադատության անհրաժեշտության» կանոնի փոխարեն նախատեսել է հակառակ՝ արդարադատությունից «ողջամիտ բացառության» կանոնը: ՀՀ սահմանադրական դատարանը, գիտակցելով, որ «ողջամիտ բացառության» կանոնը սահմանելիս հակառակվել է ոչ միայն ՀՀ Սահմանադրության կոնկրետ կարգավորումներին, այլև ընդհանուր ճանաչում ունեցող չափանիշներին, նախատեսել է այդ կանոնի կիրառման ոլորտը սահմանափակող այնպիսի պայման, որով փորձել է այդ բացառությանը հաղորդել անկրկնելի (**Sui generis**) բնույթ:

ՀՀ սահմանադրական դատարանը նշել է.

*«Սահմանադրության փոփոխությունների նախագծերի սահմանադրականության պարտադիր նախնական վերահսկողության կանոնից որևէ բացառություն չի կարող համարվել ողջամիտ, եթե ստուգման ենթակա նախագիծը վերաբերում է Սահմանադրական դատարանի դատավորներից բացի այլ անձանց իրավունքներին և ազատություններին: Այս դեպքում Սահմանադրության փոփոխությունների նախագիծը Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրականության պարտադիր նախնական ստուգման չենթարկելը չի կարող գնահատվել որպես ողջամիտ բացառություն՝ անկախ Սահմանադրական դատարանի դատավորների՝ նախագծի սահմանադրականության ստուգման առնչությամբ շահերի փաստացի կամ հնարավոր բախման իրավիճակում գտնվելու հանգամանքից»:*

ՀՀ սահմանադրական դատարանը փորձել է ցույց տալ, որ իր քննած գործով թեև 2020թ. փոփոխությունների նախագծի նկատմամբ վերահսկողություն չի իրականացվել, սակայն դա պայմանավորել է այն հանգամանքով, որ ՀՀ Սահմանադրության անցումային դրույթների փոփոխությունները վերաբերում էին բացառապես (անմիջապես) ՀՀ սահմանադրական դատարանի դատավորներին: Այս պարագայում ստեղծվում էր այնպիսի տպավորություն, որ Սահմա-

նադրության անցումային այդ դրույթներն իրենց բնույթով ոչ թե նորմատիվ, այլ անհատական ակտեր էին:

**3. Եզրակացություն**

ՀՀ ազգային ժողովը 2020թ-ին, առանց նախապես ՀՀ սահմանադրական դատարան դիմելու (ի հակառակ ՀՀ Սահմանադրության իմպերատիվ պահանջների), ՀՀ Սահմանադրության անցումային դրույթներում կատարեց փոփոխություններ: Նման կարգով ՀՀ Սահմանադրությունում փոփոխություններ կատարելը չի կարող համարվել contra constitutionem իրավունքի զարգացում, քանի որ ՀՀ ազգային ժողովի վարքագիծը պայմանավորված չէր պետականապահպանության սկզբունքները ծայրահեղ անհրաժեշտության վիճակում իրացնելու հանգամանքով:

ՀՀ սահմանադրական դատարանի յոթ դատավորների մասնակցությամբ 2020թ. փոփոխությունների նախագծի քննարկումը թեև կարող էր կոնֆլիկտ ստեղծել «Nemo iudex in sua causa» իրավունքի սկզբունքի հետ, սակայն այս սկզբունքը տվյալ դեպքում պետականապահպան բնույթ չուներ, ուստի դրա իրացման անհրաժեշտությունը չէր կարող արդարացնել ՀՀ ազգային ժողովի՝ սահմանադրական կոնկրետ նորմին հակառակ գործելու վարքագիծը:

ՀՀ սահմանադրական դատարանը 29.04.2021թ.ՍԴՈ-1590 որոշմամբ 2020թ. փոփոխությունների նախագծի սահմանադրականության որոշման հարցով ՀՀ սահմանադրական դատարան դիմելու իմպերատիվ կանոնից «ողջամիտ բացառություն» նախատեսելով՝ վավերացրեց (սահմանադրականացրեց) ՀՀ ազգային ժողովի անգործությունը:

ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1590 որոշմամբ սահմանած «ողջամիտ բացառությունը» սուբստանցիոն հիմնավորումը մեծ հաշվով «Nemo iudex in sua causa» իրավունքի սկզբունքն է, սակայն նա այս սկզբունքը ճիշտ չի կիրառել:

# ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## Օգտագործված գրականության ցանկ


1. ՀՀ սահմանադրական դատարանի 29.04.2021 թվականի ՍԴՈ-1590 որոշումը,
2. Վենետիկի հանձնաժողովի կարծիք, 2020 թվականի հունիսի 19, գրավոր ընթացակարգով, որը փոխարինել է 123-րդ լիագումար նիստին https://www.moj.am/legal/view/article/1341/?fbclid=IwAR16UWbLGMrFZUYPU0f6vfCBwymTmgMjMTRXpbE85sgCV9mqgal-enEVCrM (18.08.2021)
3. ՀՀ ազգային ժողովի 22.06.2020թ-ի նիստի Թիվ 1 սղագրություն: http://www.parliament.am/transcript.php?AgendaID=3938&day=22&month=06&year=2020&lang=arm#22.06.2020 (18.08.2021)
4. Тимошина Е. В. Судья как новый суверен: волюнтаристская теория толкования Мишеля Тропера, Вестник Российского университета дружбы народов, Серия: Юридические науки, 2016, № 2,
5. Тропер М. Конституционное толкование, пер. с фр. М.В. Антонова, Правоведение, 2012, № 4,
6. Авакьян С. А., Конституционное право России, Учебный курс: Т. 2. 5 - е изд., перераб. и доп. М.: Норма: ИНФРА-М, 2014,
7. Vermeule, Adrian. Contra Nemo Iudex in Sua Causa: The Limits of Impartiality. The Yale Law Journal. (2012). VL. 122,

# CONDUCT OF THE NATIONAL ASSEMBLY OF THE REPUBLIC OF ARMENIA AGAINST THE CONSTITUTION OF THE REPUBLIC OF ARMENIA: CONSTITUTIONAL TORT OR CONDUCT CONTRA CONSTITUTIONEM

**Artur Ghambaryan**
RAU, Department of Theory of Law and Constitutional Law
Doctor of Law, Professor

The purpose of the article is to identify issues of legality of behavior contra constitutionem (development of constitutional law) by the National Assembly of the Republic of Armenia.

The main objectives of the article are: in the context of the legal principle "Nemo iudex in sua causa" to discuss the legality of the actions of the National Assembly of the Republic of Armenia against the requirements of specific articles of the Constitution of the Republic of Armenia to determine the constitutionality of the draft constitutional amendments of 2020, that is, not to apply to the Constitutional Court of the Republic of Armenia.

The author discusses the legality of the adoption by the National Assembly of Armenia of the draft constitutional amendments of 2020 without applying to the Constitutional Court. The author supposes it to be a violation of the Constitution of the Republic of Armenia, and not a development of law contra constitutionem,since the behavior of the National Assembly of the Republic of Armenia was not aimed at preserving the principles of protecting statehood in a state of extreme necessity.

The article discusses the decision of the Constitutional Court of the Republic of Armenia dated 29.04.2021. on the conduct of the National Assembly of the Republic of Armenia, by which, by introducing the rule of "reasonable exclusion", he justified the conduct of the National Assembly of the Republic of Armenia contrary to the Constitution of the Republic of Armenia, that is, without recourse to the preliminary control

of the Constitutional Court of the Republic of Armenia, the adoption of constitutional amendments in 2020.

The author concludes that the justifications of the position of the Constitutional Court of the Republic of Armenia regarding the conduct of the National Assembly of the Republic of Armenia, expressed by the decision SDO-1590 of 29.04.2021, are controversial and do not justify the actions of the National Assembly of the Republic of Armenia against the Constitution of the Republic of Armenia.

**Keywords**: RA National Assembly, Parliament, constitutional amendments, constitutional control, legal principle "Nemo iudex in sua causa".

## ПОВЕДЕНИЕ НАЦИОНАЛЬНОГО СОБРАНИЯ РА ПРОТИВ КОНСТИТУЦИИ РА: КОНСТИТУЦИОННЫЙ ДЕЛИКТ ИЛИ ПОВЕДЕНИЕ CONTRA CONSTITUTIONEM

**Артур Гамбарян**
РАУ, кафедра Теории права и
конституционного права, д.ю.н., профессор

Цель статьи – выявить вопросы правомерности поведения contra constitutionem (развития конституционного права) Национальным Собранием РА.

Основными задачами статьи являются: в контексте правового принципа "Nemo iudex in sua causa" обсуждение вопросов правомерности действий Национального Собрания РА против требований конкретных статей Конституции РА по определению конституционности проекта конституционных изменений 2020 года, т.е. без обращения в Конституционный суд РА.

В статье автор обсуждает правомерность принятия Национальным Собранием Армении проекта конституционных изменений 2020 года без обращения в Конституционный суд. Автор называет это не развитием права contra constitutionem, а нарушением

Конституции РА, поскольку поведение Национального Собрания РА не было направлено на сохранение принципов сохранения государственности в состоянии крайней необходимости.

В статье рассматривается решение Конституционного суда РА от 29.04. 2021г. о поведении Национального Собрания РА, которым он, введя правило «разумного исключения», оправдал противоречащее Конституции РА поведение Национального Собрания РА, то есть, без обращения в Конституционный суд РА для предварительного контроля, принятие конституционных изменений 2020г.

Автор заключает, что обоснования позиции Конституционного суда РА относительно поведения Национального Собрания РА, отраженного в решении СДО-1590 от 29.04.2021 г., спорны и не оправдывают действия Национального Собрания РА против Конституции РА.

**Ключевые слова:** Национальное Собрание РА, парламент, конституционные изменения, конституционный контроль, правовой принцип «Nemo iudex in sua causa».

*Տրվել է տպագրության՝ 08.10.2021թ.*
*Գրախոսվել է՝ 02.12.2021թ.*

# ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՇՏՊԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՀԱՎԱՔԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

***Կարեն Բատիկյան***
*ԵՀ, Իրավագիտության ամբիոն, ի.գ.թ.*
*karen-batikyan@rambler.ru, +374 99 779677*

*Գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, մեղադրյալի պաշտպանությունն իրականացնող փաստաբանին չի տրամադրում ապացուցման գործընթացին մասնակցելու իրական հնարավորություն: Գործող իրավակարգավորման համաձայն՝ պաշտպանը չի կարող ապացույցներ հավաքել նախաքննության մարմնի հետ հավասար պայմաններում, ինչը խախտում է մրցակցության սկզբունքը: Հոդվածում հեղինակը վերլուծել է պաշտպանի՝ գործող քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան ապացույցներ ձեռք բերելու լիազորությունները և փորձել է բացահայտել դրա անարդյունավետությունը: Հղում կատարելով մի շարք դատավարագետների տեսական կարծիքներին, ինչպես նաև իր գործնական փորձին՝ հեղինակը եկել է այն եզրակացության, որ քրեական դատավարությունում պաշտպանը փաստացի զրկված է ապացույցներ հավաքելու լիազորությունից և օրենքի այդ դրույթը կրում է զուտ դեկլարատիվ բնույթ: Հոդվածի վերջում հեղինակը ներկայացրել է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով սահմանված քննարկվող հարցի առաջադեմ օրենսդրական լուծումը, որի համաձայն՝ ապացույցներ հավաքող դատավարական սուբյեկտների շարքին են դասվել նաև տուժողը, մեղադրյալը և պաշտպանը:*

***Հիմնաբառեր***. *Պաշտպան, ապացույց, ապացուցման գործընթաց, մրցակցություն, ապացույց հավաքել, քրեական դատավարություն*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածը հռչակում է, որ քրեական դատավարությունն իրականացվում է

մրցակցության սկզբունքի հիման վրա: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ քրեական դատավարությանը մասնակցող կողմերը քրեական դատավարական օրենսդրությամբ օժտված են իրենց դիրքորոշումը պաշտպանելու հավասար հնարավորություններով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածը սահմանում է, որ պաշտպանը քրեական գործով վարույթի ընթացքում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը և նրանց ցույց է տալիս իրավաբանական օգնություն՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով:

Մեջբերված օրենսդրական նորմերի վերլուծությունը բերում է այն եզրահանգման, որ պաշտպանը՝ որպես դատավարության կողմ, կրում է քննիչի, դատախազի և դատարանի նույն լիազորությունները ապացույցներ հավաքելու և քրեական գործին կցելու առումով: Սակայն այդ մտայնությունը քննադատության չի կարող ենթարկվել, եթե անդրադառնում ենք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածով սահմանված պաշտպանի իրավունքների վերլուծությանը: Հիշյալ հոդվածի 1-ին մասի 5-ից 7-րդ կետերում օրենսդիրը ներկայացրել է պաշտպանի այն լիազորությունները, որոնք կապված են քրեական դատավարության ընթացքում պաշտպանի կողմից պաշտպանյալի օգտին տեղեկություններ ձեռք բերելուն: Նշված հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում նշված է, որ պաշտպանն իրավունք ունի ձեռք բերել նյութեր, դրանք ներկայացնել քրեական գործին կցելու և հետազոտելու համար: Ստացվում է, որ պաշտպանի կողմից ձեռք բերվածը քրեադատավարական առումով ապացույց չի հանդիսանում, այն ընդամենը նյութ է, որը կարող է կցվել քրեական գործին և հետազոտվել, այսինքն՝ ամեն դեպքում պաշտպանի ձեռք բերված նյութին ապացույցի նշանակություն տալու իրավասությունը դրված է վարույթն իրականացնող մարմնի վրա: Այս պարագայում պաշտպանը հանդես է գալիս որպես միջնորդ որևէ տեղեկություն քննիչին փոխանցելու առումով, որի ապացուցողական արժեքը որոշելը դրված է պաշտպանի դատավարական հակառակորդի վրա: Բնականաբար, հակադարձ շահերի պայմաններում վարույթն իրականացնող մարմինը գերադասելու է ներկայացված նյութին չտալ ապացուցողական նշանակություն:

Բերված փաստարկն առավել ակնառու է դառնում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի համատեքստում: Նշված հոդվածի համաձայն՝ քրեական դատավարության ընթացքում ապացույցները հավաքվում են քրեադատավարական օրենքով նախատեսված քննչական և դատական գործողությունների կատարման ճանապարհով: Այս ձևակերպմամբ քրեական դատավարությանը մասնակցող պաշտպանը իսպառ զրկվում է ապացուցման գործընթացին մասնակցելուց, իսկ մրցակցության սկզբունքը ընդունում է դեկլարատիվ բնույթ:

Քրեական դատավարության ընթացքում պաշտպանի կողմից ապացույցներ հավաքելու հիմնախնդիրը միշտ գտնվել է դատավարագետների ուշադրության կենտրոնում: Սահմանադրությամբ և քրեական դատավարության օրենսգրքով մրցակցության սկզբունքի հռչակումից ի վեր վիճելի է մնում հիմնական հարցը՝ արդյո՞ք իրականում հավասար են դատավարության կողմերը և ունե՞ն միևնույն հնարավորությունները ներկայացնելու իրենց դիրքորոշումը:

Մի շարք դատավարագետների կարծիքով՝ ՀՀ քրեական դատավարությունը ոչ թե մրցակցային տիպի է, այլ՝ խառը, որը բացառում է պաշտպանին ապացույցներ հավաքող ինքնուրույն դատավարական սուբյեկտ դառնալու հնարավորությունը: Ակնհայտ է, որ մրցակցության սկզբունքը գործում է միայն տեսականորեն, քրեական դատավարությունում հռչակված հավասարությունը կրում է ձևական բնույթ և անընդմեջ տեղի է ունենում մրցակցության սկզբունքի խեղաթյուրում: Միայն այն հանգամանքը, որ օրենսդիրը պաշտպանին չի օժտել քննիչի հետ հավասար հնարավորություններով ապացույցներ հավաքելու առումով, վկայում է դատավարության մասնակիցների անհավասար պայմաններում գտնվելու մասին: Գործնականում, պաշտպանն իր ձեռք բերած նյութը քրեական գործին կցելու, հետազոտելու և ապացույցի նշանակություն տալու վերաբերյալ իրավունք ունի այդ հարցով միայն միջնորդություն ներկայացնել վարույթն իրականացնող մարմնին, այսինքն՝ այս պարագայում պաշտպանի կողմից իրականացվող իրավական օգնություն ցուցաբերելու հեռանկարը, այն որակյալ դարձնելու հանգամանքն օրենսդիրը կապել է քրեական գործի

քննության ընթացքում հակադարձ շահ հետապնդող քննիչի կամքի հետ:

Այս դատողության հետ չհամաձայնողները կարող են վկայակոչել քրեադատավարական մի շարք նորմեր, որոնք վարույթն իրականացնող մարմնի համար պարտականություն են սահմանում հավասարապես մեղադրյալին մեղադրող և արդարացնող փաստական հանգամանքների պարզելու վերաբերյալ: Սակայն, դարձյալ անհրաժեշտ է ընդգծել տեսության և գործնականի տարբերակվածության հանգամանքը: Անառարկելի է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածը սահմանում է, որ քրեական դատավարությունն իրականացվում է նաև, որպեսզի ոչ մի անմեղ անձ հանցանքի կատարման մեջ չկասկածվի, չմեղադրվի և չդատապարտվի, սակայն այս խնդրի լուծումը գործնականում այլ կերպ է իրականացվում, քանի որ դատավարության կողմերն ըստ էության ունեն հակադիր դատավարական նպատակներ և մի կողմի նպատակի իրագործումը հակառակորդ կողմի հետ պայմանավորելը իրատեսական համարվել չի կարող:

Այս առումով, մեր հետ կհամաձայնեն մեղադրանքի կողմում հանդես եկող պաշտոնատար անձինք և առավել ևս պաշտպանները, որ մեղադրյալին արդարացնող կամ հանցանքը որևէ կերպ մեղմացնող փաստական տեղեկությունները քրեական գործին կցելու և դրանց ապացուցողական նշանակություն տալու վերաբերյալ բազմաթիվ միջնորդություններ քննիչի և դատախազի կողմից մերժվում են, որոնք հետագայում դրական լուծում են ստանում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությամբ:

Ապացույցներ հավաքելու կողմերի հավասարության ձևական լինելու մասին է վկայում նաև ապացույցների հավաքման օրենսդրական կարգավորումը: ՀՀ քրեական դատավարության 125-րդ հոդվածի համաձայն՝ ապացույցները հավաքվում են միայն քննչական և դատական գործողությունների եղանակով, իսկ պաշտպանը իրավասու է միայն քրեական գործին կցելու և հետազոտելու համար ձեռք բերել նյութեր (ոչ թե ապացույցներ), հարցման ենթարկել մասնավոր անձանց, ստանալ փաստաթղթեր, բնութագրեր, տեղեկանքներ, հարց-

նել մասնագետների կարծիքը: Օրենսդրական նորմերի վերլուծությունից ակնհայտ է, որ պաշտպանը չի մտնում ապացույց հավաքող դատավարական սուբյեկտների կազմի մեջ և իրեն վերապահված լիազորությունների շրջանակում համարվում է տեղեկատվություն հավաքող, որը, ապացույցի դատավարական կարգավիճակ կարող է ստանալ միայն քննիչի ցանկության դեպքում: Մեր կարծիքով՝ օրենսդիրը նպատակային չի օգտագործել «ապացույց» տերմինը, քանի որ քրեական դատավարական օրենքի տեսանկյունից ապացույցի հասկացությունը ավելի լայն է տրված և հակառակ պարագայում պաշտպանն իրականում հնարավորություն կստանար մեղադրանքի կողմի հետ հավասարապես մասնակցել ապացուցման գործընթացին:

Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ մասում նշված է, որ պաշտպանը ապացույցներ է հավաքում նյութեր, փաստաթղթեր և այլ տեղեկություններ ստանալու, անձանց հարցման ենթարկելու, բնութագրեր, տեղեկանքներ, այլ փաստաթղթեր պահանջելու եղանակով: Այստեղ հատկանշական է, որ օրենսդիրը կիրառել է ապացույց եզրույթը, սակայն այս դեպքում ևս ապացույցներ հավաքելու գործիքակազմը համընկնում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգին և ՌԴ քրեադատավարական օրենքը ևս պաշտպանին իրական հնարավորություն չի ընձեռում մեղադրանքի կողմի հետ միասին մասնակցել ապացույցների հավաքման գործընթացին:

Դատավարական մրցակցության տեսանկյունից առավել առաջադիմական է Ղազախստանի քրեական դատավարության օրենսգիրքը, որը պաշտպանին ավելի իրական հնարավորություն է տալիս մասնակցել ապացույցների հավաքման գործընթացին:

Մասնավորապես, Ղազախստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 70-րդ հոդվածը սահմանում է, որ պաշտպանը իրավաբանական օգնություն ցուցաբերելու ընթացքում լիազորված է հավաքել և տրամադրել իրեր, փաստաթղթեր, տեղեկություններ և այլ նյութեր, որոնք պարտադիր պետք է կցվեն քրեական գործի նյութերին:

Մինչդատական վարույթում, դատավարական ապացուցման գործընթացում պաշտպանի կարգավիճակի վերաբերյալ դատավարագետների կողմից ներկայացվել են տարբեր տեսակետներ: Մի մասը կարծում են, որ քրեական դատավարության ձևից ելնելով, ապացույցների հավաքման լիազորությունը բացառապես պետական-իշխանական է և պաշտպանն ընդհանրապես ապացույցների հավաքման սուբյեկտ չի կարող հանդիսանալ: (Ա. Դավլեթով, Լ. Յուսուպովա):

Պ. Լուպինսկայան գտնում է, որ պաշտպանն օժտված է ապացույցներ հավաքելու իրավասությամբ, հետևաբար՝ այդ գործընթացը մեղադրյալի և պաշտպանին վերագրելը ընդամենը պայմանական է:

Ստացվում է, որ պաշտպանը մեղադրանքի կողմի համեմատ հավասար իրավունքներով օժտված չէ և մինչդատական վարույթի ամենակարևոր գործընթացից՝ ապացույցներ հավաքելու լիազորությունից փաստացի զրկված է: Պաշտպանը իրականում կարող է միայն տեղեկություն հավաքել, որի ապացույց դառնալու հավանականությունը դուրս է նրա լիազորություններից: Ակնհայտ է, որ սա հակասում է քրեական դատավարության մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքին, քանի որ պաշտպանի ձեռքբերված տեղեկությունը ապացույց դարձնելու գործընթացում վերջինս կախյալ վիճակում է գտնվում նախաքննական մարմնի կայացրած որոշումից, որն իր հերթին էապես կարող է ազդել գործով վերջնական օբյեկտիվ որոշում կայացնելու վրա:

Ապացուցման սկզբնական փուլում, պաշտպանի կողմից միայն ապացույցի հավաքման գործընթացին մասնակցելը, հիմնավորում է քրեական դատավարությունում նրա անհավասար կարգավիճակը, ինչպես նաև մրցակցության և կողմերի հավասարության սկզբունքների խեղաթյուրումը: Հետաքննիչը, քննիչը, դատախազը և դատարանը լիազորված են ոչ միայն հավաքել ապացույցներ, այլ նաև իրականացնել դրանց ստուգում և գնահատում, հետևաբար պաշտպանին՝ իր կողմից հավաքված ապացույցների ստուգման և գնահատման իրավունքից զրկելը, նսեմացնում է նրա դատավարական կարգավիճակը:

Փաստաբանական աշխատանքի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ քննչական մարմինները շահագրգռված չեն քրեական գործին կցել այն տեղեկությունները և առարկաները, որոնք ներկայացվում են պաշտպանի կողմից, այդ իսկ պատճառով նմանաբնույթ միջնորդությունները մերժվում են: Որոշ բացառություններով, նույն իրավիճակն է նաև դատաքննության փուլում: Դատարանները հիմնականում չեն վստահում պաշտպանների կողմից ներկայացրած տեղեկություններին, դրանք համարելով սուբյեկտիվ: Օրինակ, խորհրդակցական սենյակի գաղտնիության խախտման մասին պաշտպանի ներկայացրած փաստաբանական հարցումը վերադաս դատական ատյանը չի ընդունում, հաշվի առնելով, որ այն ստացվել է առանց սուտ տեղեկություն ներկայացնելու համար քրեական օրենքով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացվելու, իսկ փաստաբանական հարցման ենթարկված անձին դատարանում հարցաքննելու պաշտպանական կողմի միջնորդությունը դատարանը մերժում է՝ պատճառաբանելով, որ ներկայացված տեղեկությունը սուբյեկտիվ է, քանի որ պաշտպանն ամեն կերպ փորձում է հասնել դատավճռի բեկանման:

Օրենսդիրը սահմանելով դատավարության կողմերի հավասարության իրավունքը և պաշտպանին օժտելով իրեր, առարկաներ, տեղեկություններ ձեռք բերելու, մասնավոր անձանց հարցման ենթարկելու իրավասությամբ, չի ներկայացրել այդ գործողությունների կատարման դատավարական կարգը, ինչի հետևանքով գործնականում առաջանում են վեճեր, ինչին հաջորդում են պաշտպանի կողմից հավաքված տեղեկությունները գործին չկցելու չհիմնավորված որոշումներ: Այսպես, խորհրդակցական սենյակի գաղտնիության խախտման վերաբերյալ օրինակում, դատարանը, դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասում նշել է. «Պաշտպանական կողմի ներկայացրած մասնավոր հարցումը՝ առաջին ատյանի դատարանի կողմից խորհրդակցական սենյակի գաղտնիությունը խախտված լինելու վերաբերյալ, դատարանը որպես ապացույց չի ընդունում...»: Գտնում ենք, որ ներկայացված ձևակերպումը ճիշտ չէ, իսկ այդպիսի որոշումն անօրինական է:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 371-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է, որ դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասում ցույց են տրվում՝ այն ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, **ինչպես նաև այս կամ այն ապացույցն անարժանահավատ համարելու փաստարկները**: Օրենքի այս դրույթից ելնելով՝ գտնում ենք, որ դատարանի կողմից գնահատման են ենթակա դատաքննության ընթացքում հետազոտված բացառապես բոլոր փաստական տեղեկությունները, դատարանը յուրաքանչյուր տեղեկություն պարտավոր է գնահատման ենթարկել թույլատրելիության, վերաբերելիության և արժանահավատության տեսանկյունից, ինչպես նաև դրանց բավարարությունը և փոխկապակցվածությունը համակցության մեջ: Ներկայացված օրինակում դատարանը, պաշտպանական կողմի ներկայացրած փաստական տեղեկությունը կարող էր համարել ոչ վերաբերելի, անթույլատրելի, անարժանահավատ, անբավարար, սակայն իրավասու չէր այն չընդունել որպես ապացույց:

Տարածված կարծիքի համաձայն՝ պաշտպանին ընձեռած լիազորությունը նրան հնարավորություն է ստեղծում անարգել հանդիպել տուժողին, վկաներին և նպատակաուղղված նրանց ուղղորդել մեղադրյալի համար բարենպաստ ցուցմունքներ տալուն, փորձագետին՝ կեղծ եզրակացություն կազմելուն կամ այդ նպատակով կաշառել նշված անձանց: Երաշխիքների բացակայությունը, որ «անբարեխիղճ փաստաբանը իր լիազորությունները կկիրառի ոչ թե ի օգուտ այլ՝ ի չարը, իրենից լուրջ վտանգ է ներկայացնում, քանի որ խեղաթյուրում է քրեական դատավարության էությունը »[1, с. 32]:

Այս կապակցությամբ պետք է համաձայնել Օ. Բաևի այն տեսակետի հետ, որ պաշտպանության տակտիկական միջոցների օրինականությունն առաջին հերթին հանգում է նրան, որ փաստաբանն իրավունք չունի օգտագործել քրեական և քրեադատավարական օրենքով միանշանակ արգելված միջոցները՝ ցուցմունքներ կորզել բռնությամբ, սպառնալիքներով և անօրինական այլ միջոցներով, դրդել սուտ մատնության, ստիպել վկային կամ տուժողին կեղծ ցուցմունք տալուն [2, с. 80]:

Պաշտպանի կողմից ներկայացրած տեղեկությունները պետք է դիտարկվեն օրինականության տեսանկյունից, եթե այդ տեղեկությունը ստացվել է օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ և թույլ չի տրվել սուբյեկտիվ իրավունքի չարաշահում, դատարանները պարտավոր են այդ տեղեկությունները հետազոտել և դատական ակտում պատճառաբանված գնահատականի արժանացնել այն: Այդ պարագայում, թերևս, կապահովվի մրցակցության սկզբունքի ապահովումը:

Ներկայացվող խնդիրն իր առաջադեմ օրենսդրական լուծումն է գտել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում: Օրենսդիրը հաշվի առնելով դատավարության մասնակիցների մրցակցության հավասարությունն ապահովելու գաղափարը, օրենսգրքի նախագծում, ապացույցներ հավաքող դատավարական սուբյեկտներ է դիտարկել նաև տուժողին, մեղադրյալին և պաշտպանին: Գործող օրենսգրքով սահմանված՝ նյութեր ձեռք բերելու իրավունքը, նախագծով փոխվել է ապացույցներ ձեռք բերելու իրավասությամբ: Մասնավորապես, Նախագծի 43-րդ հոդվածի 13-րդ կետը սահմանում է, որ մեղադրյալն իրավունք ունի վարույթին կցելու և հետազոտելու համար ներկայացնել ապացույցներ: Նախագծի 49-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պաշտպանն իրավունք ունի ձեռք բերել և ներկայացնել ապացույցներ վարույթին կցելու և հետազոտելու համար:

Նախագծով օրենսդիրը նաև լուծել է պաշտպանական կողմի ներկայացրած ապացույցներն այսպես ասած վարույթն իրականացնող մարմնի կողմից «տնօրինելու» խնդիրը, որպեսզի այն չունենա զուտ հայտեցողական ընթացակարգ: Համաձայն դրա՝ պաշտպանական կողմի ներկայացրած ապացույցները կարելի է դասակարգել Նախագծի 96-րդ հոդվածով սահմանված «արտավարութային փաստաթղթեր» ապացույցի տեսակին, իսկ ապացույցների թույլատրելիությունը եւ դրանց օգտագործման սահմանափակումները ներկայացնող 97-րդ հոդվածն սահմանում է, որ վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, ներառյալ՝ վարույթի մասնավոր մասնակիցների ներկայացրած ապացույցները, համարվում են թույլատրելի, քանի դեռ պատշաճ իրավական ընթացակարգով հակառակը չի հաստատվել:

Այսպիսի ձևակերպմամբ օրենսդիրը վարույթ իրականացնող մարմնին ուղղակիորեն պարտավորեցնում է ընդունել պաշտպանական կողմի ներկայացրած, գործին վերաբերելի ցանկացած ապացույց, որի թույլատրելիության, արժանահավատության հիմնավորելու պարտականությունը կրելու է նույն վարույթ իրականացնող մարմինը: Այսպիսի մոտեցումն իր դրական ազդեցությունն է ունենալու երկու իմաստով, առաջին՝ պաշտպանական կողմը լիարժեք ներգրավվելու է ապացույցների ձեռք բերման գործընթացում, և երկրորդ՝ ներկայացված ապացույցի հետագա դատավարական ստուգումն ու հետազոտումը զերծ կպահի պաշտպաններին չարաշահելու իրենց սուբյեկտիվ իրավունքը և վարույթ իրականացնող մարմնին կներկայացվեն միայն օբյեկտիվ և իրական ապացույցներ:

### Օգտագործված գրականության ցանկ


1. Твердова Е. В. Незаконное противодействие расследованию со стороны отдельных адвокатов//Рос. следователь 2007, N9
2. Баев О. Я., Злоупотребление правом в досудебном производстве по уголовным делам. М., 2014.


## PROBLEMS OF GATHERING EVIDENCE BY A LAWYER IN CRIMINAL PROCEEDINGS


**Karen Batikyan**
EU, Chair of Jurisprudence, PhD in Law



The current Criminal Procedure Code of the Republic of Armenia does not provide a defense representative with a real opportunity to participate in the proof process. In particular, under the current legal regulations, a lawyer cannot obtain evidence on an equal footing with the body conducting the proceedings, which violates the principle of competition. The author analyzes the power of the defense attorney to

obtain evidence under the current Criminal Procedure Code and tries to reveal its inefficiency.

Citing the theoretical opinions of a number of forensic experts, as well as his practical experience, the author concludes that in criminal proceedings the defense is de facto deprived of the power to gather evidence; the provision of law is purely declarative. At the end of the article, the author presents the advanced legislative solution of the issue under discussion in the draft of the new RA Criminal Procedure Code, which considers the victim, the accused and the defense counsel as evidence-gathering subjects.

**Keywords:** Lawyer, evidence, proof process, competition, evidence gathering, criminal proceedings

## ПРОБЛЕМЫ СБОРА ДОКАЗАТЕЛЬСТВ АДВОКАТОМ В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ

**Карен Батикян**
ЕУ, кафедра Правоведения, к.ю.н.

Действующий Уголовно-процессуальный кодекс Республики Армения не предоставляет адвокату, представляющему обвиняемого, реальную возможность участия в процессе доказывания. В частности, согласно действующим правовым нормам, адвокат не может получать доказательства наравне с органом дознания, что нарушает принцип конкуренции. В статье автор проанализировал полномочия адвоката - защитника на получение доказательств в соответствии с действующим Уголовно-процессуальным кодексом и попытался выявить ее неэффективность. Ссылаясь на точки зрения ряда процессуалистов, а также на свой практический опыт, автор пришел к выводу, что в уголовном судопроизводстве адвокат - защитник де-факто лишен полномочий сбора доказательств; положение закона носит чисто декларативный характер. В конце статьи автор представил прогрессивное законодательное решение обсуждаемого вопроса в

проекте нового Уголовно-процессуального кодекса РА, в котором потерпевший, обвиняемый и защитник рассматриваются как субъекты сбора доказательств.

**Ключевые слова:** адвокат - защитник, доказательства, процесс доказывания, конкуренция, сбор доказательств, уголовный процесс.

*Տրվել է տպագրության՝ 11.10.2021թ.*
*Գրախոսվել է՝ 20.12.2021թ.*

# ԵՐԵԽԱՅԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԻՑ

***Դավիթ Թումասյան***
*ՀՀ ոստիկանության կրթահամալիր, ի.գ.թ., դոցենտ*
*davidtumasyan@gmail.com, +374 93 003095*

*Սույն հոդվածի շրջանակներում քննարկվում է ընտանիքում երեխաների նկատմամբ բռնության խնդրի հիմնական ասպեկտները և դրա դրսևորման ձևերը: Երեխաների նկատմամբ բռնությունը տարբեր ձևերով տարածված է ժամանակակից աշխարհի բոլոր երկրներում և երեխայի պաշտպանությունն արդիական է ամենուրեք, հատկապես՝ ընտանիքում: Հոդվածում քննարկվում է բռնությունից տուժող երեխաների դեպքում անվերապահորեն կիրառվող և միմյանց հետ փոխկապակցված հիմնարար սկզբունքները, «Երեխայի նկատմամբ բռնություն» եզրույթի տեսական սահմանումը, ընտանիքում բռնության տեսակներն ըստ ներպետական իրավական կարգավորման, երեխայի նկատմամբ բռնության կանխարգելումը, վիճակագրությունը և այլն:*

***Հիմնաբառեր.*** *երեխա, ընտանիքում բռնություն, երեխայի նկատմամբ բռնություն, բռնության կանխարգելում, «4 P» սկզբունք:*

Հանրահայտ է, որ երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր անձ, և բոլոր երեխաները ենթակա են պաշտպանության: Սակայն դա չի նշանակում, որ 18 տարին չլրացած բոլոր անձանց պետք է միանման վերաբերվել՝ անգամ հստակորեն պատկերացնելով նրանց խոցելիության մասին: Նման մոտեցումը պետք է հիմնված լինի և բխի երեխայի լավագույն շահից[1]:

[1] «Երեխայի լավագույն շահը» երեխայի իրավունքների երաշխավորման սկզբունքներից է, որի առանցքում նրա բարեկեցության ապահովումն է՝ նպատակ ունենալով առավելագույնս երաշխավորել երեխայի անվտանգությունը, ինչպես նաև նրա առաջնահերթ կարիքների բավարարումն է ու խնամքը: Ըստ Երեխաների իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի՝

Բռնությունից տուժող երեխաների պարագայում անվերապահորեն պետք է հարգվեն փոխկապակցված հետևյալ սկզբունքները՝

ա) արժանապատվություն. յուրաքանչյուր երեխա յուրօրինակ և բարձրարժեք մարդկային էակ է, և որպես այդպիսին՝ նրա անհատական արժանապատվությունը, հատուկ կարիքները, հետաքրքրությունները և անձնական կյանքը պետք է հարգվեն և պաշտպանվեն.

բ) խտրականության բացառում. յուրաքանչյուր երեխա արդարացի և հավասար վերաբերմունքի իրավունք ունի՝ անկախ իր, իր ծնողի կամ օրինական ներկայացուցչի ռասայից, ծագումից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գույքային դրությունից, հաշմանդամությունից, ծննդյան կամ այլ կարգավիճակից.

գ) երեխայի լավագույն շահ. յուրաքանչյուր երեխա իրավունք ունի պահանջելու, որպեսզի իր լավագույն շահին առաջնային ուշադրություն դարձվի: Դա ներառում է պաշտպանության և ներդաշնակ զարգացման հնարավորությունների իրավունքը: [1, էջ 101-103]

Բռնության ենթարկված ցանկացած երեխայի նկատմամբ հարգանքը և նրա իրավունքների պաշտպանությունը ոչ միայն հանգեցնելու են երեխայի նկատմամբ բռնության դեպքերի նվազման, այլ նաև երեխաների պաշտպանության արդյունավետության բարձրացման:

«Երեխայի նկատմամբ բռնություն» եզրույթի համապարփակ և միատեսակ սահմանում և մեկնաբանություն գոյություն չունեն: Տարբեր միջազգային փաստաթղթերում, տարբեր պետությունների օրենսդրությունում և մասնագիտական գրականությունում այն ունի տարաբնույթ մեկնաբանություններ, դրսևորումներ, հատկանիշներ և կարգավորումներ:

1999թ.-ին Առողջության համաշխարհային կազմակերպության Երեխաների նկատմամբ բռնության կանխարգելման խորհուրդը ձևա-

---

«երեխայի լավագույն շահը» գնահատելը նշանակում է գնահատել բոլոր այն տարրերը, որոնք անհրաժեշտ են երեխայի կյանքում որևէ միջամտություն իրականացնելու համար: Ընդ որում, այդ որոշումն անհատական է, քանի որ յուրաքանչյուր դեպք և յուրաքանչյուր երեխա անհատ է և պահանջում է առանձնահատուկ մոտեցում:

կերպել է «երեխայի նկատմամբ բռնություն» հետևյալ սահմանումը. «Երեխաների նկատմամբ բռնությունը նշանակում է երեխայի առողջության, կյանքի, զարգացման, ինքնության իրական կամ պոտենցիալ վտանգման հանգեցնող ֆիզիկական և/կամ հուզական դաժանության, սեռական բնույթի գործողություններ կամ անտեսման կամ բարձիթողության արարքներ՝ օգտվելով կարգավիճակից կամ պաշտոնից բխող լիազորություններից և չարաշահելով երեխայի վստահությունը»: [2] Այստեղ ուշադրությունը չի կենտրոնացվում բռնության դիտավորյալ բնույթի վրա, մինչդեռ իրավաբանական գրականության մեջ բռնության պարտադիր պայմաններից մեկը դիտավորությունն է[2]: [3, էջ 5-6] Հենց դիտավորությամբ են բռնությունը բնութագրում նաև դատական պրակտիկայում[3]:

Ամփոփ կարելի է նշել, որ երեխայի նկատմամբ բռնություն ասելով՝ պետք է հասկանալ **ուժի կամ իշխանության դիտավորյալ գործադրում՝ սպառնալիքի կամ գործողության միջոցով, խմբի կամ անհատի կողմից, որն իրական կամ պոտենցիալ վնաս է հասցնում երեխայի առողջությանը, գոյատևմանը, զարգացմանը կամ արժանապատվությանը՝ որպես գործողության անմիջական կամ հնարավոր հետևանք** [4, էջ 8-9]:

Փաստացի երեխայի նկատմամբ բռնությունն իրենից ներկայացնում է ֆիզիկական և/կամ հուզական դաժան վերաբերմունքի, սեռա-

---

[2] Այս համատեքստում ըստ բռնության գործադրման կանխամտածվածության աստիճանի՝ առանձնացնում են կանխամտածված և պատահական բռնություններ: Կանխամտածված բռնությունը ֆիզիկական ուժի կամ իշխանության (դիրքի չարաշահման) նպատակադրված գործածումն է այլ անձի կամ որևէ խմբի ու համայնքի նկատմամբ, ինչն արդյունքում հանգեցնում է վերոնշյալների վնասման, մահվան, հոգեբանական վնասման, զարգացման խանգարման կամ դեպրիվացիայի (զրկանքի): Պատահական բռնություն ասելով՝ նկատի ունենք, որ մի կողմից անձի կողմից կիրառվող բռնությունը չի ընկալվում որպես այդպիսիք, մյուս կողմից՝ բռնություն գործադրողն ի սկզբանե չի ունենում տուժողին վնասելու մտադրություն:

[3] Օրինակ՝ Արևիկ Սահակյանի և Ծովինար Սահակյանի վերաբերյալ թիվ ԱՐԴ/0176/01/11 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2012թ.-ի նոյեմբերի 1-ի որոշումը:

կան ոտնձգության, անտեսման, առևտրային և այլ շահագործման բոլոր տեսակները, ինչը հանգեցնում է երեխայի առողջության, գոյատևման, զարգացման կամ արժանապատվության ակնհայտ կամ հնարավոր վնասի [5]:

Հարկ է նշել, որ ցանկացած բռնություն երեխայի նկատմամբ խիստ վտանգավոր է՝ անկախ բռնության ծանրության աստիճանից, քանի որ երեխաները շատ սուր են տանում այն: Սակայն բռնության որոշ տեսակներ առաջացնում են երեխայի մոտ խորքային փոփոխություններ, ազդում նրա նորմալ զարգացման ու ձևավորման, սոցիալիզացիայի, ընտանիք կազմելու ցանկության և այլ հարցերի վրա:

Երեխայի նկատմամբ բռնության ցանկացած դրսևորում հանգեցնում է սթրեսային կամ հոգետրավմատիկ արձագանքի[4] [6, էջ 128; 4 էջ 39]:

Բոլոր բացասական հետևանքները կրկնապատկվում կամ եռապատկվում են այն դեպքերում, երբ բռնությունն իրականացվում է ընտանիքի անդամի կողմից, այսինքն այն անձի կողմից, ով պետք է երեխային պաշտպանի այլ անձանց բռնությունից, աջակցի երեխային դժվարին իրավիճակներում, ում երեխան պետք է կարողանա դիմի կարիքի առկայության դեպքում [7, էջ 48]:

Փաստ է, որ երկար ժամանակ երեխան ընկալվել է որպես ընտանիքի «անլեզու հավելված», և այդ ժամանակահատվածում երեխային վերաբերում էին որպես առարկայի կամ ստրուկի, ով իրավունք չուներ հակադրվել ծնողներին՝ անգամ նրա ամուսնության, ուսման, աշխատանքի ընտրության և այլ կարևոր հարցերում, իսկ դաստիարակության ֆիզիկական մեթոդները, ներառյալ՝ դաժան ծեծը, հանդիսանում

[4] Այն գործոնները, որոնք մարդու մոտ խթանում են սթրեսային արձագանքը, կոչվում են սթրեսորներ: Առօրյա կյանքում մարդը բախվում է բազմաթիվ սթրեսորների, որոնք առաջ են բերում բազմատեսակ սթրեսային ռեակցիաներ՝ ծայրահեղ դրականից մինչև չափազանց բացասական և կործանիչ: Այսինքն, սթրեսը որպես այդպիսին կարող է լինել թե՛ դրական, թե՛ բացասական: Բացասական սթրեսը կոչվում է դիսթրես (կոնֆլիկտ, կորուստ, կարևոր վերջնաժամետի մոտեցում), դրականը՝ էվսթրես (մեծ գումարի շահում, կորած մտերիմի անսպասելի վերադարձ, մրցանակի ստացում):

էին դաստիարակության ընդունված և առավել արդյունավետ միջոց: [7, էջ 48] Երկար ժամանակ երեխայի նկատմամբ բռնությունն անգամ չէր համարվում ընտանիքում բռնության տարատեսակ՝ թողնվելով ծնողների կամ երեխային դաստիարակող այլ մեծահասակների կամայականությանը:

Ընտանիքում բռնությունը ժամանակակից հասարակության ամենասուր հիմնախնդիրներից է, որը հատուկ է բոլոր երկրներին առանց բացառության: Եվ երեխաները կամա, թե ակամա հանդիսանում են ընտանիքի այն անդամները, ովքեր ընտանիքի այլ անդամների համեմատ առավել շատ են տուժում ընտանիքում բռնությունից: Երեխան կարող է լինել ընտանիքում բռնության թե՛ ուղղակի, թե՛ անուղղակի ենթարկված անձ:

Ընտանիքը հասարակության զարգացման և շարունակական գոյության գրավականն է: Այն իր մեջ պարունակում է բնական ու հասարակական տարրեր: Բնական տարրերը դրսևորվում են մարդկային ցեղի վերարտադրության ձևով, իսկ հասարակական տարրերը դրսևորվում են նրանով, որ ընտանիքի անդամների փոխհարաբերությունները հասարակական հարաբերություններ են: Սրանով իսկ ընտանիքը կատարում է երկու հիմնական ֆունկցիա՝ կենսաբանական և սոցիալական: Ընտանիքի կենսաբանական ֆունկցիան անփոփոխ է մնացել նրա գոյության ողջ ընթացքում, մինչդեռ սոցիալական ֆունկցիան հասարակական զարգացմանը զուգընթաց մշտապես ենթարկվում է փոփոխությունների [8, էջ 12-13]:

Ընտանիքի այսընկալումը խոչընդոտում է հավատալ, որ որոշ ընտանիքներում առկա է բռնություն, որն իրականացվում է նաև ընտանիքի ամենափոքր անդամների նկատմամբ: Սակայն բռնության դեպքերն իրական են...

2017թ.-ի դեկտեմբերի 13-ի «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընտանիքում բռնություն է համարվում սույն օրենքով սահմանված ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բնույթի բռնի արարքը, ինչպես նաև

անտեսումը, որը կատարվել է ընտանիքի անդամների միջև: Նույն օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է «ընտանիքի անդամներ» հասկացությունը և որպես այդպիսիք հանդիսանում են՝

ա. անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը (այդ թվում՝ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձը), նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (նաև որդեգրված, խորթ, հոգեզավակ), որդեգրող ծնողի ամուսինը, ամուսնու ծնողները, նախկին ամուսնու ծնողները,

բ. համատեղ բնակվող տատ, պապ, քույր և եղբայր (նաև համամայր կամ համահայր), ամուսնու քույր, ամուսնու եղբայր, ինչպես նաև ամուսնու ծնողների, քրոջ և եղբոր համար՝ փեսան և հարսը:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընտանիքում բռնության տեսակներն են՝

1) ֆիզիկական բռնություն՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված ծեծը և այլ բռնի գործողությունները, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը, դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելը.

2) սեռական բռնություն՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված՝ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունները.

3) հոգեբանական բռնություն՝ դիտավորությամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, այդ թվում՝ ֆիզիկական, սեռական կամ տնտեսական բռնություն գործադրելու իրական սպառնալիքը, դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ կատարելը, որոնք անձի մեջ հիմնավոր վախ են հարուցում իր կամ ընտանիքի անդամի անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին, արժանապատվության պարբերական նվաստացումը, սոցիալական ծայրահեղ մեկուսացումը, հղիության արհեստական ընդհատման հարկադրանքը.

4) տնտեսական բռնություն՝ անձին հարկադրված նյութական կախվածություն ստեղծելու կամ իշխելու նպատակով նրան գոյության անհրաժեշտ միջոցներից (սնունդ, հագուստ, կացարան, դեղորայք)

զրկելը, սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելը, անձի կրթություն ստանալու կամ աշխատանքի ընտրության ազատության իրավունքները սահմանափակելը.

5) անտեսում՝ ծնողի կամ օրինական ներկայացուցչի կողմից երեխայի կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում, կրթություն), իսկ չափահաս աշխատունակ զավակների կողմից իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում) դիտավորությամբ չբավարարելը, եթե ծնողը կամ օրինական ներկայացուցիչը կամ չափահաս աշխատունակ զավակները տիրապետում են պատշաճ տեղեկատվության և հնարավորությունների, և եթե համապատասխան ծառայությունները նրանց համար հասանելի են:

Ընտանիքում բռնությունը բռնության տարատեսակ է, որի առանձին դրսևորումներ քրեորեն պատժելի են, իսկ որոշ դրսևորումներ էլ հանրորեն վտանգավոր հետևանքների նվազ կարևորության պատճառով հանցագործություն չեն համարվում: Ընտանիքում բռնության քրեորեն պատժելի տեսակները, ամրագրված են ՀՀ քրեական օրենսգրքում՝ ներառելով նաև երեխաների նկատմամբ կատարված բռնությունների որոշ դրսևորումներ: Առհասարակ երեխայի նկատմամբ բռնության հանցավոր դրսևորումները, պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ երեք խմբերի՝

1 – միայն երեխաների նկատմամբ կատարվող հանցագործություններ, օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 106-րդ[5], 132.2-րդ[6], 141-րդ[7], 142-րդ[8], 166-րդ[9], 168-րդ[10] և այլ հոդվածներ,

2 – հանցագործություններ, որտեղ արարքն անչափահասի նկատմամբ կատարելը համարվում է հանցագործության ծանրացնող հանգամանք, օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ[11], 124-րդ[12], 138-րդ[13] և այլ հոդվածներ,

3 – հանցագործություններ, որտեղ երեխաների առնչությամբ որևէ առանձնահատկություն նախատեսված չէ, օրինակ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ[14], 112-րդ[15], 118-րդ[16] և այլ հոդվածներ [9, էջ 12]:

Վերը նշված բոլոր հանցագործությունները կարող են իրականացվել և փաստացի իրականացվում են նաև ընտանիքի անդամների կողմից: Այդ մասին վկայում է ՀՀ քննչական կոմիտեի կողմից կիսամյակային և տարեկան կտրվածքով հրապարակվող ընտանիքում բռնության վերաբերյալ գործերի քննության վիճակագրությունը: Այս-

---

[5] Մոր կողմից նորածին երեխայի սպանությունը

[6] Երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա ղեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինգը կամ շահագործումը

[7] Սեռական հարաբերությունը տասնվեց տարին չլրացած անձի հետ կամ սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ

[8] Անառակաբարո գործողությունները

[9] Երեխային պոռնկության կամ պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելը

[10] Խնամքը ստանձնելու նպատակով երեխայի առքը կամ ստանձնողի խնամքին հանձնելու նպատակով երեխայի վաճառքը

[11] Ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը

[12] Վեներական հիվանդությամբ կամ այլ սեռավարակներով վարակելը

[13] Բռնաբարությունը

[14] Սպանությունը

[15] Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը

[16] Ծեծը

պես, 2016-2020թթ.-ի ընտանիքում բռնության վերաբերյալ գործերի և տուժողների վերաբերյալ վիճակագրությունը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 1. ՀՀ քննչական կոմիտեի վարույթում 2016-2020թթ.-ի ընթացքում ընտանիքում բռնության վերաբերյալ գործերի քննության արդյունքների մասին**

| | | **2016թ.** | **2017թ.** | **2018թ.** | **2019թ.** | **2020թ.** |
|---|---|---|---|---|---|---|
| Քննված գործեր | ընդհանուր | 359 | 458 | 519 | 635 | ***730*** |
| Քննված գործերի աճը նախորդ տարվա համեմատ | թվերով | - | 99 | 61 | ***116*** | 95 |
| | տոկոսներով | - | 27.6% | 13.3% | ***22.4%*** | 15% |
| Տուժող ճանաչված անձինք | | 237 | 341 | 493 | 536 | ***597*** |
| որից երեխաներ | թվերով | 49 | 41 | 66 | 84 | ***92*** |
| | տոկոսներով | ***20.7%*** | 12% | 13.4% | 15.7% | 15.4% |
| Տուժող ճանաչված երեխաներն ըստ տարիքի | մինչև 12 | 20 | 17 | 25 | 39 | ***53*** |
| | 12-14 | 2 | 9 | 8 | ***15*** | ***15*** |
| | 14-16 | ***25*** | 14 | 24 | 13 | 17 |
| | 16-18 | 2 | 1 | 9 | ***17*** | 7 |

Ինչպես երևում է Աղյուսակ 1-ից, ընտանիքում բռնությունից տուժող ճանաչված երեխաների թիվը կայուն աճում է 2017թ.-ից: Տարբեր տարիներին երեխաների տարիքային տարբեր խմբեր են հանդիսացել առավել խոցելի ընտանիքում բռնության դեպքերի առնչությամբ, սակայն վերջին տարիներին առավել խոցելի են դարձել մինչև 12 տարեկան երեխաները, ինչը պայմանավորված է նաև վերջիններիս վերաբերյալ մասնավոր մեղադրանքով քրեական գործերը հանրային մեղադրանքի կանոններով քննելու պայմանով: Եթե անդրադառնանք բռնության տեսակներին, ապա երեխաների նկատմամբ առավել տարածված են ֆիզիկական, հետո՝ սեռական բռնությունները: Ընդ որում,

սեռական բռնության տուժող են հիմնականում ճանաչվում 14-15 տարեկան աղջիկները (սեռական բռնության տուժողների կեսից ավելին):

Հետաքրքրական է երեխաների նկատմամբ բռնության դեպքերի վիճակագրությունը, որը նույնպես վարում է ՀՀ քննչական կոմիտեն և որոնք ներկայացված են Աղյուսակ 2-ում: Այդ տվյալների համաձայն՝

**Աղյուսակ 2. ՀՀ քննչական կոմիտեի վարույթում 2016-2020թթ.-ի ընթացքում երեխայի նկատմամբ բռնության վերաբերյալ գործերի քննության արդյունքների մասին**

| | | 2016թ. | 2017թ. | 2018թ. | 2019թ. | 2020թ. |
|---|---|---|---|---|---|---|
| Քննված գործեր | ընդհանուր | 200 | 265 | 317 | **360** | 328 |
| Քննված գործերի աճը/ նվազումը նախորդ տարվա համեմատ | թվերով | - | 65 | 52 | 43 | -32 |
| | տոկոսներով | - | **32.5%** | 19.6% | 13.6% | -8.9% |
| Տուժող ճանաչված երեխաներ | | 175 | 202 | 305 | 336 | 328 |
| Տուժողների աճը/ նվազումը նախորդ տարվա համեմատ | թվերով | - | 27 | **103** | 31 | -8 |
| | տոկոսներով | - | 15.4% | **51%** | 10.2% | -2.4% |
| Տուժող ճանաչված երեխաներն ըստ տարիքի | մինչև 12 | 47 | 75 | 157 | 169 | **180** |
| | 12-14 | 14 | 25 | 43 | **61** | 33 |
| | 14-16 | 72 | 71 | 69 | 63 | **73** |
| | 16-18 | 42 | 31 | 36 | **43** | 42 |

Ինչպես երևում է երեխաների նկատմամբ ընդհանուր բռնությունների թիվը վերջին տարիներին նվազում է, սակայն այդ համատեքստում առավել մտահոգիչ է դառնում ընտանիքում երեխաների նկատմամբ բռնության դեպքերի աճը: 2020թ.-ի առնչությամբ դա բացատրվում է ՔՈՎԻԴ-ի համաճարակով պայմանավորված ինքնամեկուսացմամբ, ինչը հանգեցրել էր շփումների սահմանափակման բակում, դպրոցներում, զվարճանքի և հանգստի վայրերում: Տրամաբանական է, որ այդ սահմանափակումներն անդրադարձել են հանցագործությունների թվի նվազման վրա, սակայն ընտանիքում երեխաները

դարձել էին առավել խոցելի և ծնողների կամ ընտանիքի այլ անդամների բացասական հույզերը երբեմն հանգեցնում էին երեխաների նկատմամբ բռնության:

Երեխային՝ որպես ընտանիքում բռնության ենթարկված դիտարկելը, հանդիսանում է այս երևույթի դեմ պայքարի առաջին քայլը:

Երեխայի պաշտպանությունն ընտանիքում պետք է լինի ցանկացած բռնությունից, սակայն ընտանիքում բռնության դեպքում երեխաները դառնում են մեծահասակների միջև կոնֆլիկտի քավության նոխազ, երբեմն գործիք՝ միմյանց վնասելու համար և այլն:

Երեխան կարող է բռնության ենթարկվել ընտանիքի ցանկացած անդամի կողմից, երբ ընտանիքի այլ անդամների առջև ծագում է բարդ իրավիճակ՝ կողմնապահության, արդարության, անձնական մոտեցման ու սուբյեկտիվիզմի բախման հետևանքով:

Երեխայի պաշտպանությունն ընտանիքում բռնությունից առաջնահերթ պետք է սկսվի հենց ընտանիքից, որտեղ երեխայի համար կստեղծվի անվտանգ մթնոլորտ խնամքի և դաստիարակության համար: Ինչպես ցանկացած բռնության, այնպես էլ բռնության այս տեսակի դեպքում պետք է կիրառվի կանխարգելման «4 P» սկզբունքը՝

- բռնության կանխում (prevention),
- տուժողների պաշտպանություն և աջակցություն (protection and assist),
- բռնության դեպքի արդյունավետ քննություն (prosecution),
- համագործակցություն (partnership):

Երեխաների բռնությունների դեմ պայքարի համար համագործակցությունն առավել կարևորվում է՝ հաշվի առնելով դերակատարների բազմազանությունն ու գործառույթների առանձնահատկությունները: Համագործակցությունը պետք է լինի փոխադարձ շահի, փոխկապակցվածության, փոխազդեցության համաձայնեցված գործողությունների շղթա, որտեղ գործում է ոչ թե խնդիրը մի կառույցից մյուսին փոխանցելը («ֆուտբոլի գնդակի էֆեկտ»), այլ մասնագետների միջև համաձայնեցված աշխատակարգ, որը թույլ է տալիս ծառայությունների մատուցումն ընտանիքի/երեխայի համար դարձնել ինտեգրված,

այլ խոսքով՝ համատեղ աշխատանք: Նման ինտեգրման համար առնչվող կառույցներն անցնում են մի քանի փուլերով՝

- փոխադարձ ճանաչում. ով ինչ է առաջարկում,
- համակարգում. ով ինչ պետք է անի իր առաջարկների շրջանակում,
- համագործակցություն. ումից ինչ է պահանջվում,
- կարիքի և առաջարկի համաձայնեցում,
- ծառայությունների մատուցման համատեղ աշխատանք կամ միջմասնագիտական համագործակցություն [10, էջ 91]:

Այս համատեքստում հատուկ կարևորվում է ՀՀ կառավարության 2015թ.-ի սեպտեմբերի 10-ի «Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը սահմանելու մասին» N1044-Ն որոշումը, որի դերակատարներն են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, ՀՀ կրթության, գիտության, սպորտի և մշակույթի, ՀՀ առողջապահության, ՀՀ արդարադատության նախարարությունները, ՀՀ ոստիկանությունը, ՀՀ մարզպետարաններ ու այլ նախարարություններ և մարմիններ:

Վերը նշված բոլոր և այլ մարմինների համատեղ նպատակաուղղված աշխատանքը կարող է հանգեցնել երեխաների արդյունավետ պաշտպանությանն անգամ հենց այն անձանցից, ովքեր պետք է պաշտպանեին այդ երեխային: Ավելին, մի քանի դեպքերով օրենքով սահմանված գործունեության պատշաճ իրականացումը և դրա նկատմամբ վերահսկողությունը կարող է արդյունավետ խթան լինել ընտանիքի ներսում ընտանիքի անդամների վարքի փոփոխության ու երեխայի պաշտպանության համար:

Երեխաների պաշտպանությունն ընտանիքում բնությունից առողջ սերունդ և երիտասարդություն ունենալու գրավականներից է, որի վրա պետք է պատշաճ ուշադրություն դարձնել:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Թումասյան Դ. Տուժողի կարգավիճակի առանձնահատկությունները քրեական դատավարությունում. Երևան, 2020

2. https://www.who.int/ru/news-room/fact-sheets/detail/child-maltreatment, դիտման ամսաթիվ՝ 27.03.2021թ
3. World report on violence and health/ Edited by Etienne G. Krug, WHO, 2002
4. Մարաբյան Ս., Թումասյան Դ., Գևորգյան Դ. Երեխաների նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները. Երևան, 2019
5. Report of the Consultation on Child Abuse Prevention, 29–31 March 1999, WHO, Geneva. Geneva, World Health Organization, 1999 (document WHO/HSC/PVI/99.1).
6. Селье Г. Стресс без дистресса. М., Прогресс, 1982
7. Титова Т.А. Конвенция о правах ребенка в системе общей регламентации прав человека. Диссертация на соискание ученой степени доктора юридических наук. Екатеринбург, 2000
8. Ղարախանյան Գ.Հ. ՀՀ ընտանեկան իրավունք. Երևան, ԵՊՀ հրատ., 2008
9. Մարաբյան Ս., Թումասյան Դ., Գևորգյան Դ. Երեխաների նկատմամբ բռնության բնութագիրը և քննության առանձնահատկությունները. Երևան, 2019
10. Բռնություններից երեխաների պաշտպանության համակարգված կազմակերպումը, Երևան, 2019

## ЗАЩИТА РЕБЕНКА ОТ НАСИЛИЯ В СЕМЬЕ

**Давид Тумасян**
Образовательный комплекс Полиции РА,
к.ю.н., доцент

В статье рассматриваются основные аспекты проблемы насилия в семье в отношении детей и способы его проявления. Насилие в отношении детей в различных формах широко распространено во всех странах современного мира и защита ребенка актуальна везде, особенно – в семье. В статье рассматриваются безоговорочно

взаимосвязанные базовые принципы в отношении детей-жертв насилия, теоретическое определение термина «насилие в отношении ребенка», виды насилия в семье согласно внутреннему правовому регулированию, предотвращение насилия в семье, статистика и др.

**Ключевые слова:** ребенок, насилие в семье, насилие в отношении детей, предотвращение насилия, принцип «4 Р».

## PROTECTING A CHILD FROM DOMESTIC VIOLENCE

**Davit Tumasyan**
Police Educational Complex of RA, PhD in Law,
Associate Professor

The article discusses the main aspects of the problem of domestic violence against children and the ways of its manifestation. Violence against children in various forms is widespread in all countries of the modern world and child protection is actual everywhere, particularly– in the family. The article discusses the unconditionally interrelated basic principles in relation to child victims of violence, the theoretical definition of the term "violence against a child", types of domestic violence according to domestic legal regulation, prevention of domestic violence, statistics, etc.

**Keywords:** child, domestic violence, violence against children, prevention of violence, the "4 P" principle.

*Տրվել է տպագրության՝ 06.09.2021թ.*
*Գրախոսվել է՝ 17.12.2021թ.*

# ՄՏԱՎՈՐ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

***Վարազդատ Սուքիասյան***
*ՀՌՀ, Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոն, ի.գ.թ.*
*varazdatsukiasyan@gmail.com*
***Աննա Խաչատրյան***
*ՀՌՀ, Իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոն, մագիստրանտ*
*annakhatchatryan7@gmail.com, +374 98 684003*

*Մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների պաշտպանությունը Հայաստանի Հանրապետությունում կարևոր է իրականացնել՝ ելնելով վերջիններիս որպես իրավունքի լիարժեք սուբյեկտի ինքնուրույնության սկզբունքից: Սա ենթադրում է, որ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաները պետք է հնարավորինս ընդգրկված լինեն իրենց վերաբերելի հարցերում որոշումների կայացման գործընթացներում: Չնայած առկա բարդություններին, այնուամենայնիվ, նրանց իրավունքների պաշտպանությունը պետք է իրականացվի ամբողջությամբ և որևէ իրավունք չպետք է սահմանափակվի խտրականության հիմքով: Որոշ իրավունքների պաշտպանությունը հնարավոր է իրականացնել միայն խելամիտ հարմարեցումների միջոցով, որոնց շնորհիվ էլ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաները կներգրավվեն համայնք:*

***Հիմնաբառեր.*** *Մտավոր հաշմանդամություն, երեխայի իրավունքներ, ինքնուրույնության սկզբունք, խելամիտ հարմարեցումներ, խտրականության արգելք:*

Մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաները՝ անկախ հաշմանդամությունից, ունեն իրենց վերաբերող հարցերի շուրջ կարծիքներն ազատ արտահայտելու, իրենց վերաբերող հարցերում որոշում կայացնելու, կրթություն ստանալու, համայնքում ապրելու, մշակութա-

յին արժեքներին հաղորդակցվելու, հանգստի, կամքի ու նախասիրությունների հարգման, սպորտային և ժամանցային միջոցառումներին մասնակցելու և մի շարք այլ իրավունքներ: Մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաներն իրենց առողջական վիճակի պատճառով հաճախ են խտրականության և անհավասար վերաբերմունքի զոհ դառնում՝ այսպիսով զրկվելով իրավունքներից կամ իրավունքներից օգտվելու հնարավորությունից: Երեխայի տարբերակումը մյուս երեխաներից, հիմք ընդունելով նրա հոգեկան առողջությունը և մտավոր կարողությունները, վերացնելով կամ սահմանափակելով նրա՝ իրավունքի լիարժեք սուբյեկտ լինելու՝ այլ անձանց հետ հավասար իրենց իրավունքներից և ազատություններից օգտվելու և այդ իրավունքներն ու ազատություններն իրացնելու հնարավորությունը, համարվում է խտրականություն, ինչն արգելվում է: Խտրականության արգելքը սահմանվում է թե ներպետական օրենսդրությամբ, թե միջազգային իրավական ակտերով:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը [1] 29-րդ հոդվածով ամրագրում է խտրականության արգելքը, իսկ խտրականության հիմքերի՝ հանգամանքների մեջ հստակորեն նշում է *հաշմանդամությունը*: Այսինքն՝ սա այն հիմնարար դրույթն է, որով պետք է բացառվի խտրականությունը մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան [2] իր հերթին թե ընդհանուր պարտավորություններն ամրագրող 4-րդ հոդվածում, թե «հավասարությունը և խտրականության բացառումը» վերտառությամբ 5-րդ հոդվածում օգտագործում է «*հաշմանդամության պատճառով խտրականություն*» հասկացությունը, որը 2-րդ հոդվածի հասկացություններում բացվում է հետևյալ կերպ. «հաշմանդամության պատճառով ցանկացած տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որոնց նպատակն է սահմանափակել կամ նվազագույնի հասցնել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ճանաչումը, կիրառումը կամ դրանցից օգտվելը քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ ցանկացած այլ ոլորտում՝ մյուսների հետ հավասար հիմունքներով: Այն ընդգրկում է խտրականության բոլոր ձևերը՝ նե-

բառյալ անհրաժեշտ հնարավորությունների տրամադրման մերժումը»:

Իսկ «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը [3] հաշմանդամություն ունեցող երեխայի նկատմամբ խտրականության արգելքը նախատեսում է 4-րդ հոդվածով, սակայն «երեխաների իրավահավասարությունը» վերտառությամբ, իսկ խտրականության հիմքը՝ ի տարբերության ՀՀ Սահմանադրության և Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի, նախատեսում է «*առողջական վիճակը*»՝ ամրագրելով, որ «երեխաներն ունեն հավասար իրավունքներ՝ անկախ... առողջական վիճակից... »: Միևնույն մոտեցումն է ցուցաբերված նաև Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայում [4], որի 2-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ «մասնակից պետությունները հարգում և ապահովում են սույն Կոնվենցիայով նախատեսված բոլոր իրավունքները՝ իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուր երեխայի համար, առանց որևէ խտրականության, անկախ երեխայի ... *առողջական վիճակից* ... »: Անկախ իրավական փաստաթղթերում խտրականության հիմքի ձևակերպման մեջ օգտագործվող հասկացությունից՝ հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների և ազատությունների պաշտպանության բնույթը և մակարդակը չպետք է նվազեն:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում սահմանել է, որ խտրականությունը նշանակում է համեմատաբար նմանատիպ իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ վերաբերմունքի տարբերակում՝ առանց օբյեկտիվ և ողջամիտ արդարացման [5]: Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականությանը և դրանով պայմանավորված պետության պոզիտիվ պարտավորությանն անդրադառնալիս Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ մեկնաբանելով հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք սոցիալական ներառման վերաբերյալ՝ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի Հանձնարարական թիվ 1592 (2003)-ը և «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան «գտել է, որ առկա է եվրոպական և համաշխարհային համաձայնություն՝ հաշմանդամություն ունե-

ցող անձանց խտրական վերաբերմունքից պաշտպանելու անհրաժեշտության վերաբերյալ» [6]: Բացի այդ, կարևորվել է, որ «հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրենց իրավունքները լիարժեք իրականացման հնարավորության ընձեռնման ձախողումը գնահատվում է որպես խտրականության դրսևորում [7]: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն առաջին անգամ բողոքաբերի հանդեպ խտրական վերաբերմունքը որակել է որպես հաշմանդամության հիմքով խտրականություն «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 14-րդ հոդվածի մասով (Անձի ազատությունը և անվտանգությունը) [8]:

Նախկինում ամբողջ աշխարհում հաշմանդամությունը ընկալվում էր որպես «անկարողություն», որի պատճառով անձի կենսական գործունեությունը սահմանափակվում է, ըստ այդմ հաշմանդամություն ունեցող անձը դիտարկվում էր որպես հիվանդ/պացիենտ, որի վիճակի բարելավմանն ուղղված գործողությունները պետք է հիմնականում կրեին բժշկական և/կամ բարեգործական բնույթ (բարեգործական օգնություն): Հաշմանդամության ընկալման այս մոդելը կոչվում է բժշկական կամ առողջապահական մոդել: Այս մոդելի պարագայում անձը զրկվում է իր կյանքի համար ինքնուրույն որոշումներ կայացնելու և սեփական ընտրությունը կատարելու հնարավորությունից և մշտապես կախվածություն է ձեռք բերում իր հարազատներից, խնամակալներից, այն հաստատությունների աշխատակիցներից, որտեղ գտնվում է: Այս մոդելի կիրառման դեպքում խտրականության հարցի քննարկումը կարող էր ընթանալ միայն բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելիս անձի իրավունքների և ազատությունների շուրջ: Սակայն հաշմանդամության ընկալումը այսօր հիմնվում է սոցիալական և իրավունքահեն մոդելների վրա, որոնց պարագայում հաշմանդամությունը սահմանվում է որպես անձի առողջական խնդիրների հետևանքով ձեռք բերած ֆունկցիոնալ սահմանափակումների և միջավայրային և վերաբերմունքի, արգելքների, խոչընդոտների փոխազդեցության հետևանք, և հաշմանդամություն ունեցող անձի իրավունքները պետք է ամրագրված լինեն օրենսդրությամբ և իրագործվեն մարդու կենսագործունեության բոլոր ոլորտներում՝ ա-

ռանց խտրականության [9]: Այս մոդելները հաշմանդամություն ունեցող անձանց ինքնուրույնությունն ապահովող մոդելներ են: Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան 1-ին հոդվածում հաշմանդամություն ունեցող անձանց հասկացությունը տալիս առաջնորդվում է այս մոդելներով՝ ամրագրելով, որ «հաշմանդամություն ունեցող անձինք են համարվում նրանք, որոնք երկար ժամանակ տառապում են ֆիզիկական, հոգեկան, մտավոր և նյարդային հիվանդություններով, որոնք տարբեր արգելքների հետ փոխազդեցության արդյունքում կարող են խոչընդոտել, որ նրանք լիակատար և արդյունավետ մասնակցեն հասարակական կյանքին մյուսների հետ հավասար հիմունքներով»: Հաշվի առնելով այս մոդելները՝ Հայաստանի Հանրապետությունում մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների պաշտպանությունը կքննարկվի հետևյալ 2 ուղղություններով. 1) մտավոր հաշմանդամություն ունեցող երեխայի՝ որպես իրավունքի լիարժեք սուբյեկտի ինքնուրույնությունը, 2) մտավոր հաշմանդամություն ունեցող երեխայի ներառումը համայնք՝ խելամիտ հարմարեցումների միջոցով:

**(1) Մտավոր հաշմանդամություն ունեցող երեխայի՝ որպես իրավունքի լիարժեք սուբյեկտի ինքնուրույնությունը**

Մտավոր հաշմանդամություն ունեցող երեխայի՝ որպես իրավունքի լիարժեք սուբյեկտի ինքնուրույնության ապահովումը Հայաստանի Հանրապետությունում առավել բարդ է, քանի որ նույնիսկ գոյություն ունեցող ներկա իրավական կարգավորումները բավարար չեն: Քննարկենք հոգեբուժական հաստատությունում հոսպիտալացման դեպքը: Մինչև 2020 թվականի սկիզբը այս առումով օրենքն ընդհանրապես որոշում կայացնելու, իր ազատ կամքն արտահայտելու հարցերում երեխայի ինքնուրույնության որևէ մակարդակ չէր սահմանում («Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդված, երեխան առանց օրինական ներկայացուցչի համաձայնության հոգեբուժական հաստատություն կարող է հոսպիտալացվել միայն դատարանի վճռով՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով): Արդյուն-

քում ստեղծվում էր մի իրավիճակ, երբ անչափահասի բուժման համար պահանջվում էր միայն իր օրինական ներկայացուցչի համաձայնությունը, և անչափահասի հոսպիտալացումը դատական վերահսկողության առարկա չէր դառնում՝ անկախ վերջինիս տարիքից, իր կարծիքն արտահայտելու ունակությունից և օրինական ներկայացուցչի՝ անչափահասի շահերից գործելուց, ինչի արդյունքում՝ ստացիոնար հետազոտման և բուժման համար բավարար էր միայն անչափահասի օրինական ներկայացուցչի համաձայնությունը: Այսպիսով, խախտվում էր Սահմանադրության 37-րդ հոդվածը, որի համաձայն՝ երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում: Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի դիմումը քննելու արդյունքում Սահմանադրական դատարանը փաստել է, որ բժշկական միջամտության ենթարկելու գործընթացի շրջանակներում հոգեկան խանգարում ունեցող երեխայի իրավունքները պետք է պատշաճ ձևով երաշխավորվեն օրենքով, եթե երեխայի տարիքը և հոգեկան խանգարման բնույթը թույլ են տալիս, որ վերջինս արտահայտի իր կամքը և գիտակցի իր նկատմամբ կատարվող բժշկական միջամտության բնույթն ու հետևանքները: Այս կարգավորման պարագայում ստացվում էր մի իրավիճակ, երբ թեև անձի վիճակը կարող էր թույլ տալ նրան արտահայտել իր կամքը, սակայն 18 տարին չլրացած լինելու փաստի ուժով անձը զրկվում էր իր կամքն արտահայտելու հնարավորությունից: Այսպիսով, Սահմանադրական դատարանի կողմից «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի այս դրույթը հակասահմանադրական ճանաչվելուց հետո [10] 2021 թվականի հունվարին օրենքի այս հոդվածը փոփոխվեց և լրացվեց հետևյալ կերպ. 16 տարին լրացած երեխայի հոգեբուժական միջամտություն ստանալու կամ դրանից հրաժարվելու վերաբերյալ գրավոր իրազեկված համաձայնությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, տալիս է երեխան, եթե՝ 1) բժիշկ-հոգեբույժի կարծիքով՝ 16 տարին լրացած երեխան ունակ է հասկանալու հոգեբուժական միջամտության կամ դրա բացակայության հնարավոր հետևանքները. 2) այդ տեղեկությունները

չեն վնասի 16 տարին լրացած երեխային. 3) կդյուրացնեն նրան հոգեբուժական օգնության և սպասարկման տրամադրումը:

Այսպիսով, նման փոփոխությունը լուծել է միայն 16-18 տարեկան երեխաների՝ գրավոր իրազեկված համաձայնություն տալու հարցը, իսկ մինչև 16 տարեկան երեխաների դեպքում խնդիրը դեռևս առկա է, և նույն հոդվածի մեկ այլ պարբերություն ամրագրում է, որ 16 տարին չլրացած երեխայի գրավոր իրազեկված համաձայնությունը տալիս է նրա օրինական ներկայացուցիչը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Այսինքն՝ ստացվում է, որ մինչև 16 տարեկան երեխայի դեպքում հոգեբուժական օգնությունը և սպասարկումն իրականացնելիս նրա կարծիքն ամրագրելը պարտադիր է, բայց ոչ միշտ է հաշվի առնվում, թեև նա ամբողջությամբ հասկանում, գիտակցում և ընկալում է այդ միջամտությունների բնույթը և հետևանքները:

Ընդհանրապես, վերջին շրջանում ՄԻԵԴ նախադեպային որոշումների [11] ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Եվրոպական դատարանը Կոնվենցիայի խախտում է ճանաչել այնպիսի դեպքերում, երբ հաշմանդամություն ունեցող անձանց զրկել են գործունակությունից և տեղավորել համապատասխան հաստատություններ:

*Ստանևն ընդդեմ Բուլղարիայի* գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է. *առանց դիմումատուի նախնական համաձայնության՝ նրան մտավոր խանգարումներով անձանց սոցիալական օգնության կենտրոնի խնամքին հանձնելու որոշումն անվավեր է Բուլղարիայի օրենսդրության համաձայն: Այդ եզրակացությունը ինքնին բավարար էր Դատարանի համար որոշելու, որ դիմումատուին ազատությունից զրկելը հակասում է 5-րդ հոդվածին: Ամեն դեպքում, այդ միջոցն օրինական չի եղել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով, քանի որ այդ հոդվածում սահմանված բացառություններից ոչ մեկը կիրառելի չէր, ներառյալ 5-րդ հոդվածի 1(ե) կետը՝ «հոգեկան հիվանդ անձին» ազատությունից զրկելը: Սույն գործով ճշմարիտ է, որ Դիմումատուի գործունակության սահմանափակման դատավարության ընթացքում տրված բժշկական փորձաքննության եզրակացությունը նշում էր այն խանգարումները, որով նա տառապում էր: Այնուամենայնիվ, ավելի քան երկու տարի էր անցել այն բժշկական փորձաքննության եզրա-*

*կացության, որի վրա հենվում էին իշխանությունները և դիմումատուին կենտրոնի խնամքին հանձնելու միջև, որի ընթացքում նրա խնամակալը չէր ստուգել արդյոք նրա վիճակում որևէ փոփոխություն տեղի ունեցել է և չէր հանդիպել կամ խորհրդակցել նրա հետ: Այդ ժամանակահատվածը չափազանց մեծ էր և 2000թ. տրված բժշկական եզրակացությունը չէր կարող համարվել դիմումատուի հոգեկան առողջության վիճակի հիմնավոր արտացոլում կենտրոնի խնամքին հանձնելու ժամանակ (2002թ.): Անհրաժեշտ է նկատել, որ ներպետական իշխանությունները որևէ հոգեբուժական եզրակացություն պատվիրելու որևէ իրավական պարտավորություն չէին կրում կենտրոնի խնամքին հանձնելու ժամանակ: Բժշկական նոր եզրակացության բացակայությունը ինքնին բավարար էր եզրակացնելու համար, որ դիմումատուին կենտրոնի խնամքին հանձնելն օրինական չի եղել: Ի հավելումն, չի հաստատվել, որ դիմումատուն վտանգ էր ներկայացնում իր կամ այլոց համար: Դատարանը նաև թերություններ է նկատել դիմումատուին կենտրոնի խնամքին հանձնելու համար հիմք հանդիսացած խանգարումների առկայության գնահատականների հետ կապված: Չնայած նա եղել է հոգեբույժի հսկողության ներքո, հսկողության նպատակը կանոնավոր ընդմիջումներով գնահատելը չի եղել, թե արդյոք դեռ անհրաժեշտ է պահել նրան սոցիալական օգնության կենտրոնում 5-րդ հոդվածի 1(ե) կետի իմաստով: Իսկապես, համապատասխան օրենսդրությունը այդպիսի գնահատականների վերաբերյալ որևէ դրույթ չի պարունակում: Դիմումատուին կենտրոնի խնամքին հանձնելը չի իրականացվել «օրենքով նախատեսված ընթացակարգերին համապատասխան» և արդարացված չէ (ե) ենթակետով կամ 5-րդ հոդվածի 1-ին կետի ենթակետերից որևէ մեկով:*

Հաշվի առնելով այն, որ բազմաթիվ երկրների իրավական համակարգերում խնամակալներին իրավունք է վերապահված հաշմանդամություն ունեցող անձանց տեղավորել համապատասխան հաստատություններում, Եվրոպական դատարանը համակարծիք չէ այդ իրավակարգավորման հետ, և պետությունները պետք է վերանայեն իրենց օրենսդրություններն այնպես, որ խնամակալի համաձայնությունը չհավասարեցվի հաշմանդամություն ունեցող անգործունակ անձի հա-

մաձայնությանը: Նմանատիպ նոր կարգավորումը, հաշմանդամություն ունեցող անձի կամարտահայտությանը կտա բավականին բարձր իրավաբանական կշիռ:

**(2) Մտավոր հաշմանդամություն ունեցող երեխայի ներառումը համայնք՝ խելամիտ հարմարեցումների միջոցով**

Հատկապես մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների ներառումը համայնք առավել քան բարդ է: Դրան նպաստում են մի շարք *արտաքին* և *ներքին* հանգամանքներ:

Ներքին հանգամանքները կապված են երեխայի՝ իր մտքերը, ցանկությունները, զգացողությունները արտահայտել չկարողանալու և դրա հետևանքով լարված իրավիճակում հայտնվելու հետ: Օրինակ՝ Ֆրանսիայում այս նպատակով սկսել են կիրառել «Insension» արհեստական բանականությունը, որը հնարավորություն է տալիս ավելի արագ և ճշգրիտ հասկանալ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխայի զգացողությունները, կարիքները, ցանկությունները, անհանգստությունները: Արհեստական բանականությունը վերլուծում է երեխայի դիմագծային ժեստերը, նրա շարժումները: Պետք է հաշվի առնել, որ նման միջոցները կիրառվում են լուրջ և բարդ մտավոր հաշմանդամության դեպքերում [12]:

Արտաքին հանգամանքներն՝ ի տարբերություն ներքինի, ավելի շատ են և պայմանավորված են *հասարակության ընկալումներով* և *պետության կողմից* յուրաքանչյուր երեխային անհրաժեշտ մակարդակի *առանձնահատուկ մոտեցում չցուցաբերելու* հետ: Օրինակ՝ հասարակության շրջանում բազմաթիվ հարցումների արդյունքում պարզվել է, որ մարդիկ մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաներին հատուկ, այլ ոչ հանրակրթական դպրոցում սովորելը ավելի են նախընտրում, քանի որ կարծում են, որ մտավոր հաշմանդամությամբ երեխան ի վիճակի չէ սովորել հանրակրթական դպրոցի ծրագրով, իրեն լավ չի զգա հանրակրթական դպրոցում, կզգա առանձնացված մյուսներից, այլ աշակերտների վատ վերաբերմունքից խուսափելու կամ այլ աշակերտների վրա բացասական ազդեցությունից խուսափելու համար

պետք է հաճախի հատուկ դպրոց, հասարակությունը պատրաստ չէ ընդունել նրանց, նրանք վտանգավոր են շրջապատի համար և այլն [13]: Նման մոտեցումների արմատներն ամենից առաջ կապված են մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց մասին կարծատիպերի հետ, ինչը պետք է փոխվի:

Մյուս կողմից, ներկա պահին Հայաստանի Հանրապետությունում միայն հատուկ դպրոցն է տրամադրում հատուկ ուսուցում և մոտեցում, միայն հատուկ դպրոցում են առկա հարմարեցված միջավայրի պայմաններ, հատուկ դպրոցում ուսուցիչները ավելի պատրաստված են մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների հետ աշխատելուն: Նույնը վերաբերում է նաև նրանց հանգստի, ժամանցի, տարատեսակ սպորտային և մշակութային միջոցառումներին մասնակցելու իրավունքներին: Ուստի նրանց ներգրավումը համայնք և իրավունքների իրացումը պետության կողմից մեծ ջանքեր է պահանջում, որը պետք է կրի համակարգային բնույթ:

Մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների ապահովման և նրանց՝ համայնք ներառման տեսանկյունից կարևոր են ներդրվող խելամիտ հարմարեցումները: Խելամիտ հարմարեցումների հասկացությունը ՀՀ-ում առաջին անգամ 2013 թվականին տրվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» օրենքի նախագծով [14], համաձայն որի՝ խելամիտ հարմարեցումները (շտկումներ)՝ հաշմանդամություն ունեցող անձանց կրթության և ուսուցման, աշխատանքի, հաղորդակցման, մշակութային, մարզական գործունեության և այլ մասնակցության ձևերի ապահովմանն ու դրանց կազմակերպմանը նպաստող պայմանները և հարմարեցումներն են, որոնք ստեղծվում են հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձի անհատական կարիքները: Սակայն ներկա պահին շրջանառվող «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի նախագծով խելամիտ հարմարեցումը բնորոշվում է որպես «անհրաժեշտ և համապատասխան փոփոխությունների և հարմարեցումների (շտկումների) կատարում, որոնք չեն առաջացնում անհամաչափ կամ անհարկի բեռ և ուղղված են հաշմանդամություն ունեցող անձի մար-

դու իրավունքներից և հիմնական ազատություններից մյուսների հետ հավասար հիմունքներով օգտվելուն» [15]:

Եթե որպես օրինակ դիտարկենք կրթության իրավունքը, ապա տվյալ դեպքում հարմարեցումների չափանիշները կլինեն. այն բավարարում է ուսանողի կարիքները, թույլ է տալիս ուսանողին մասնակցել նույն գործողություններին/ միջոցառումներին, ինչ մյուսները, թույլ է տալիս աշխատել դասարանում և ինքնուրույն շարժվել, ապահովում է ուսանողի անվտանգությունը, հարգում է ուսանողի արժանապատվությունը: «Խելամտությունը» իր հերթին գնահատվում է՝ ըստ բազմաթիվ չափանիշների, ինչպիսիք են՝ հարմարեցումների արժեքը, ազդեցությունը կազմակերպության վրա, կատարվող հարմարեցումների հաճախականությունը և սպասվող տևողությունը, դրա ազդեցությունը այլ ուսանողների վրա, հարմարեցումների այլընտրանքների բացակայությունը կամ առկայությունը:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում չնայած արդեն տեղի ունեցած մի շարք իրավական փոփոխություններին և քաղաքականության բարելավմանը, այնուամենայնիվ, ներկա պահին մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների՝ որպես իրավունքի լիարժեք սուբյեկտների իրավունքներն ու դրանց ապահովումը, մնում են լուրջ մարտահրավերներ, որոնց հաղթահարումը պահանջում է շարունակական աշխատանք թե՛ պետության, թե՛ հասարակության անդամների կողմից:

## Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն, ընդունվել է՝ 06.12.2015, https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510, վերջին այցելությունը կայք՝ 21.09.2021:
2. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիա, ընդունվել է՝ 13.12.2006, http://www.un.am/res/UN%20Treaties/III_15.pdf, վերջին այցելությունը՝ 21.09.2021:

3. «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, համարը՝ ՀՕ-59, ընդունվել է՝ 29.05.1996, https://www.arlis.am/documentview.aspx?docid=149836, վերջին այցելությունը կայք՝ 21.09.2021:
4. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա, ընդունվել է՝ 20.11.1989, https://www.arlis.am/documentview.aspx?docID=60503, վերջին այցելությունը կայք՝ 21.09.2021:
5. Եվրոպական դատարանի վճիռը «Willis ընդդեմ Միացյալ Թագավորության» գործով, գանգատ թիվ 36042/97, § 48, ECHR 2002-IV, և 2005թ. հոկտեմբերի 25-ի Եվրոպական դատարանի վճիռը «Okpisz ընդդեմ Գերմանիայի» գործով, գանգատ թիվ 59140/00, § 33:
6. ՄԻԵԴ-ի որոշումը Glor v. Switzerland, 2009 թիվ 13444/04 գործով: Հասանելի է https://www.legislationline.org/download/id/7066/file/ECHR_Glor_v._Switzerland_2009_en.pdf հղումով:
7. ՄԻԵԴ-ի դիրքորոշումը: Հասանելի է https://laweuro.com/?p=9212 և
8. https://www.legislationline.org/download/id/7067/file/ECHR_Cam_v_Turkey_2016_en.pdf հղումներով:
ՄԻԵԴ-ի որոշումը Guberina v. Croatia, 2016 թիվ 23682/13 գործով: Հասանելի է http://hudoc.echr.coe.int/eng?i=001-161530 հղումով:
9. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, «Հաշմանդամության գնահատման համակարգի բարեփոխումներ», https://www.mlsa.am/?page_id=13139, վերջին այցելությունը կայք՝ 21.09.2021:
10. ՍԴՈ-1504, ընդունվել է 30.01.2020, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=138724, վերջին այցելությունը կայք՝ 21.09.2021:
11. The right of people with disabilities to live independently and be included in the community, հասանելի է https://rm.coe.int/16806da8a9#P327_43536 հղումով:

12. https://fr.euronews.com/2020/02/10/l-intelligence-artificielle-aide-les-handicapes-mentaux-a-mieux-se-faire-comprendre, վերջին այցելությունը կայք՝ 21.09.2021:
13. Լիլիթ Աբովյան, Սերոժ Ալավերդյան, Բելլա Կարապետյան, Գրիգոր Հակոբյան, Գայանե Ղուկասյան, Դիանա Մուրադովա, Անի Նավասարդյան, Լիլիկ Ստեփանյան, Հաշմանդամություն ունեցող երեխաների հանդեպ վերաբերմունքը Հայաստանում, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, 2014 թվական: https://www.unicef.org/armenia/media/1871/file, վերջին այցելությունը՝ 21.09.2021:
14. https://mlsa.am/wp-content/uploads/2017/05/22.03.2013_Naxagic_hashm_orenq.pdf, վերջին այցելությունը՝ 21.09.2021:
15. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի նախագիծ,Կ-860-09.02.2021,17.03.2021-ԱՍ-011/1, http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=12313&Reading=1, վերջին այցելությունը՝ 21.09.2021:

## PROTECTION OF THE RIGHTS OF MENTALLY DISABLED CHILDREN IN THE REPUBLIC OF ARMENIA

**Varazdat Sukiasyan**
RAU, Institute of Law and Politics, Department of Criminal Law and Criminal Proceedings,
**Anna Khachatryan**
RAU, Chair of Theory of Law and Constitutional Law, Master

The protection of the rights of children with mental disabilities as a full subject of rights in Armenia is important to realize - based on the principle of autonomy. This means that children with mental disabilities should be involved in relevant decision-making processes as much as possible. Despite the difficulties the protection of their rights must be fully implemented, no right should be restricted on the basis of discrimination.

Some rights can be protected only through reasonable accommodations that will allow children with mental disabilities to be included in the community.

***Keywords***. Mental disability, children's rights, the principle of autonomy, reasonable accommodation, principle of non-discrimination.

## ЗАЩИТА ПРАВ ДЕТЕЙ С УМСТВЕННОЙ ОТСТАЛОСТЬЮ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

**Вараздат Сукиасян**
РАУ, институт Права и политики, кафедра Уголовного права и уголовно-процессуального права, к.ю.н
**Анна Хачатрян**
РАУ, кафедра Теории права и конституционного права, магистр

Защита прав детей с умственной отсталостью в Республике Армения может осуществляться на основе принципа автономии последней как полноправного субъекта права. Это означает, что дети с умственной отсталостью должны как можно больше вовлекаться в процессы принятия решений, которые относятся к ним. Несмотря на трудности, защита их прав должна осуществляться в полном объеме, поскольку никакие права не должны ограничиваться на основании дискриминации. Некоторые права можно защитить только путем разумных приспособлений, которые позволят вовлечь в общество детей с умственной отсталостью.

***Ключевые слова:*** Умственная отсталость, права детей, принцип автономии, разумное приспособление, принцип недискриминации.

*Տրվել է տպագրության՝ 06.09.2021թ.*
*Գրախոսվել է՝ 17.12.2021թ.*

# ԵԳԻՊՏԱՀԱՅ «ՓԻՒՆԻԿ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ

***Մյասնիկ Եսոյան***
*ԵՀ, Միջազգային հարաբերությունների ամբիոն*
*ՀՀ ԳԱԱ, Պատմության ինստիտուտ, պ.գ.թ., դոցենտ*
*esoyan-87@mail.ru, +374 94 100359*

*«Փիւնիկ» ազգային, գրական և քաղաքական պարբերականի կարևորագույն խնդիրներից մեկը թուրքական լծից հայրենիքի ազատագրումն է եղել: Եգիպտահայ պարբերականին մշտապես մտահոգել է Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում տիրող իրադրությունը, ուստի պարբերաբար իր հրապարակումներով փորձել է ընթերցողին ներկայացնել արևմտահայության ծանր իրավիճակը: Բացի այդ, Եգիպտահայ պարբերականն իր էջերում բարձրացրել է եգիպտահայության հուզող կենսական խնդիրներն ու պահանջները՝ փորձելով գործուն դեր ունենալ եգիպտահայության հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացման գործում:*

***Հիմնաբառեր.*** *պարբերական, արևմտահայություն, հայդուկ, օսմանյան իշխանություններ, քուրդ:*

«Փիւնիկ» ազգային, գրական և քաղաքական երկշաբաթաթերթը պատկանում է ազգային-դեմոկրատական ուղղություն ունեցող այն պարբերականների թվին, որոնց արծարծած կարևորագույն խնդիրներից մեկը՝ թուրքական լծից հայրենիքի ազատագրումն է: Պարբերականը խմբագրում էր ազատագրական շարժման գաղափարների ջատագով, հրապարակախոս, հասարակական գործիչ Սմբատ Բյուրատը /Տեր Ղազարյանց/: «Փիւնիկն» ունեցել է երկու շրջան. առաջինը՝ 1899 թ. Կահիրեում, երկրորդը՝ 1901-1903 թթ. Ալեքսանդրիայում: Առաջին շրջանը փակվում է 1899 թ. նոյեմբերի սկզբին խմբագրի և տպարանատիրոջ միջև ինչ-որ թյուրիմացության պատճառով, որն ի վերջո վերածվեց դատական գործի[2, էջ 320]: Երկրորդ շրջանում «Փիւնիկը» հրատարակվել է 1901 թ. հունիսի 8-ից մինչև 1903 թ. հուլիս ամիսը նախ որպես շաբաթաթերթ, հետո՝ եռօրյա և վերջում՝ օրաթերթ: «Փիւնիկ» պարբերականի նպատակն է եղել սերմանել առողջ

գաղափարներ հայ ազգի բարոյական և մտավորական մակարդակը բարձր պահելու համար: Բացի այդ, պարբերականն իր առջև խնդիր է դրել վառ պահել մայր հայրենիքի վերակենդանացման հույսը, միավորել աշխարհի տարբեր երկրներում հաստատված հայ գաղթականներին այդ գաղափարի շուրջ: «Անաչառ քննադատի աչքով դիտել իրերն ու զատել ազգային շարժումները, ժողովուրդը կեղեքողը, շահագործողը, ըլլայ ռամիկ, ըլլայ տոհմիկ, դիմակազերծ ընել, ահա «Փիւնիկ»-ի նշանաբանն ու ուղղութիւնը[1, № 1, 1899, էջ 2]»,- ասված է առաջին համարի առաջնորդող հոդվածում:

Պարբերականի նյութերը զետեղված են տեղական լուրեր, ազգային քրոնիկ, մարգարիտներ, արտաքին, քննադատական, քաղաքական և այլ բաժիններում: Պարբերականին աշխատակցել են Երվանդ Օտյանը, Միհրան Տամատյանը, Միհրան Գալֆայանը, Շավարշ Հովվյանը և ուրիշներ:

«Փիւնիկ»-ի առաջին տարվա համարներում պարբերաբար տպագրվում է խմբագրի «Լեռնականի մը ծոցատետրը» հուշագրությունը Հայկ-Լևոն ծածկանունով: Այն հայրենիքն ու հարազատ ժողովրդին օտարի լծից ազատագրված տեսնելու հույսով ապրող աքսորականի հոգեկան ծանր ապրումների նկարագրությունն է [3, էջ 344]: Մասնավորապես, աքսորականը ներկայացնում է մոր հուշերը 1862 թ. Զեյթունի ապստամբության մասին: Այդ ժամանակ նա ընդամենը 5 ամսական երեխա էր, երբ Մարաշի կառավարիչ Ազիզ փաշան չերքեզ գաղթականների և այլ բազիբոզուկների հետ միասին հարձակվեց Զեյթունի ուղղությամբ: Այդժամ մայրը ստիպված է եղել իրեն թողնել Զեյթուն քաղաքի հյուսիսարևմտյան մասում գտնվող Ճռազոն կոչված վայրում, քանի որ ստիպված էր թուրքերի դեմ կռվող ամուսնուն և երեց որդուն՝ Գևորգին, զենք և սնունդ մատակարարել: Աքսորականի մայրը հուշերում նկարագրում է, թե ինչպես քաղաքում գտնվող տարեց հայ կանայք լացակումած պատսպարվում էին եկեղեցիներում, աղոթում ու աղերսում, որ այդ արհավիրքը ավարտվի: Եվ երբ երեկոյան լուր հասավ, որ «թշնամի բանակը ցիր ու ցան եղած, մայրս վերադառնալուն գտած է զիս այն տեղը, խոր քունի մեջ ընկղմած [1, № 2, 1899, էջ 12]»: Մեկ այլ հոդվածում աքսորականը նկարագրում է Զեյթունի ի-

րենց տունը, այգին, քաղաքը շրջապատող լեռնային տեսարանները [1, № 5, 1899, 6-8 էջեր]:

Եգիպտահայ պարբերականն իր էջերում բարձրացրել է եգիպտահայությանը հուզող կենսական խնդիրներն ու պահանջները՝ փորձելով գործուն դեր ունենալ եգիպտայության հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացման գործում: Պարբերականը ցավով նշում է, որ եգիպտահայությունը ընդհանուր առմամբ ազգային խնդիրներով շատ չի հետաքրքրվում, ազգային թերթերի բաժանորդներ չեն գրանցվում[1, № 8, 14-15 էջեր]: «Փինիկ»-ը դժգոհում է, որ Կահիրեում շատ հայեր իրենց երեխաներին հայկական ազգային դպրոցներ չեն ուղարկում՝ նախապատվությունը տալով օտար՝ մասնավորապես անգլիական դպրոցներին: «Ինչ անուն պիտի տար այն ախտին, որով վարակուած է Գահիրէի հայությունը՝արծաթապաշտություն, օտարամոլություն [1, № 7, 1899, 5-6 էջեր]»,- ցավով նշում է հոդվածագիրը:

1899 թ. հունիսի 19-23 Կահիրեի Ազգային երկսեռ վարժարանում անցկացվեցին ավարտական քննությունները, որոնց արդյունքները բավականին գոհացուցիչ էին, սակայն ներկա էին ընդամենը մի քանի ծնող: Հունիսի 25-ին վարժարանի սրահում տեղի ունեցավ մրցանակաբաշխության արարողությունը, որի ընթացքում աշակերտները հանդես եկան ազգային երգերով, հայերեն և այլալեզու ոտանավորներով: Հայալեզու պարբերականը հիացմունքով նկարագրում է վարժարանում թևածող դրական մթնոլորտը [1, № 7,1899, 15-16 էջեր]:

Մեկ այլ հոդվածում պարբերականն ուրախությամբ հաղորդում է, որ 1901 թ. գարնան երկրորդ եռամսյակում Ալեքսանդրիայի հայ համայնքը բավականին աշխուժացել և հիմնադրել է մի քանի ընկերություններ: Մասնավորապես, ապրիլին մի խումբ հայ երիտասարդներ հիմնադրեցին 25 անդամից բաղկացած «Հայ Նուագուծեաց խումբը», որի նապատակն էր եվրոպական տարբեր նվագարաններով ստեղծագործել հայ և արևմտյան համադրելի երաժշտական համարներ: Մայիսի սկզբներին հիմնադրվեց «Արուեստասիրաց» ընկերությունը, որի նպատակն էր եգիպտահայ համայնքի շրջանում սեր և հետաքրքրություն սերմանել գեղարվեստի նկատմամբ[1, № 1, 1901, էջ 6]:

Պարբերականը նշում է, որ եգիպտահայությունը ակտիվ մասնակցություն ցուցաբերեց 1896 թ. հայկական կոտորածներին հաջորդած Վան քաղաքում և շրջակա գյուղերում սովը հաղթահարելու գործում՝ գումար հատկացնելով Վանի հայ բնակչությանն օժանդակելու համար բացված ազգային հանգանակությանը: Մասնավորապես, 1899 թ. ապրիլի 9-ին հայ դերասանական խումբը Կահիրեում ներկայացրեց Մ. Պեշիկթաշլյանի Արշակ Բ ողբերգությունը և 1850 դրուշ հասույթից 450 դրուշը փոխանցեց ազգային հանգանակությանը [1, № 2, 1899, էջ 17]: Եգիպտահայ Պետրոս Կարապետյանը, ում միջոցներով իրականացվում էր Կիպրոսի և Իզմիրի որբանոցներում գտնվող 8 հայ որբերի խնամքը, 50 անգլիական ոսկի ուղարկեց Կ. Պոլսի Ազգային պատրիարքարան Վանի և Զեյթունի հայ սովյալներին օժանդակելու համար: Սանոսյան ծխախոտի գործարանի աշխատակիցները 205 դրուշ հատկացրեցին Վանի հայ բնակչությանը օգնելու համար [1, № 3, 1899, էջ 15]: 1899 թ. մայիսի 18-ին Կահիրեի Օպերայի շենքում իտալական դերասանական խումբը ներկայացում բեմադրեց, որի հասույթը նույնպես փոխանցվեց Վանի հայ սովյալներին [1, № 5, 1899, էջ 13]: 12-րդ համարում պարբերականը հրապարակում է Արաբկիրի որբանոցի կարիքների հոգալու համար նվիրապետություն արած 52 եգիպտահայերի անունները և գումարի չափը [1, № 12, 1899, էջ 17]:

«Փինիկ»-ի քննարկած մյուս կարևոր խնդիրներից է սահմանադրության գործադրման հարցը: Բարձրացվում են օրենքների կիրառման, կարգ ու կանոնի հաստատման պահանջները [3, էջ 346]: Պարբերականը մեծապես արժևորել է Ալեքսանդրիայի թաղային խորհրդի գործունեության լուսաբանումը: 1902 թ. թաղային խորհրդի ընտրությունների նախօրյակին պարբերաբար կոչ էր անում եգիպտահայությանը ակտիվորեն մասնակցել ընտրություններին [1, № 43, 1902, 6-7 էջեր]: Մարտի 23-ին տեղի ունեցած ընտրություններն ավարտվում են սահմանադրականների հաղթանակով: Սակայն, այդ խորհուրդը կարճ կյանք է ունենում, քանի որ ատենապետ ընտրված Պողոս Նուբար փաշան այն լուծարում է և փոխարենը նոր անդամներից կազմում է խնամակալություն, որին ժողովուրդը դեմ էր: Սահմանադրության գործադրման պահանջով Ալեքսանդրիայում կազմակերպվում են բո-

ղոքի ցույցեր, որոնցից մարդաշատը 1902 թ. հունիսի 23-ին Պիրամիդ թատրոնում հրավիրված հանրահավաքն էր, որտեղ ելույթ ունեցավ նաև Սմբատ Բյուրատը [1, № 2, 1902, էջ 10]:

Եգիպտահայ պարբերականը տեղեկատվություն է տրամադրել Եգիպտոսի տեսարժան վայրերի, Եգիպտոսում տիրող իրավիճակի մասին: Մասնավորապես, պարբերականը տեղեկություններ է հաղորդում Եգիպտոսի Քարնաքի տաճարի մասին, որը կառուցվել է մ.թ.ա. 240-րդ դարում որպես առաջին սրբավայր՝ ի պատիվ եգիպտացիների նախնիների գլխավոր աստված Ամոնի: Հետագա դարերի ընթացքում Եգիպտոսի թագավորները տաճարը հարստացնում են նորանոր հոյակերտ շինություններով: Հոդվածագիրը ցավով նշում է, որ դարերի ընթացքում տեղի ունեցած պատերազմների ու բնական աղետների պատճառով այսօր տաճարի ավերակներն են միայն մնացել [1, № 1, 1899, էջ 16]: Մինչև 1895 թ. տաճարի 2/3-ը թաղված էր հողաշերտի տակ, և միայն ֆրանսիացի հնագետ Պ.Ժ. Լըկրենին հաջողվեց երեք տարվա պեղումներից հետո երևան հանել տաճարի մեծ գավիթը, Ռամսես 3-րդի տաճարն ու բազմաթիվ արձաններ [1, № 2, 1899, էջ 7]:

«Սուեզի ջրանցքը» հոդվածում պարբերականը ներկայացնում է ջրանցքի կառուցման ընթացքը, ջրանցքը կառուցած ֆրանսիացի գործարար Ֆերդինանդ դը Լեսսեպսի գործունեությունը: Հոդվածագիրն իրավացիորեն նշում է, որ ջրանցքի շինարարությունը առաջացրեց Անգլիայի նախանձը, և Եգիպտոսի անկախությունը դրանից հետո սահմանափակվեց [1, № 3, 1899, 5-7 էջեր]: Պարբերականը հաղորդում է, որ 1901 թ. գարնանը Եգիպտոսում ժանտախտի տարածման կապակցությամբ կառավարությունը անհապաղ կտրուկ միջոցներ է ձեռնարկել տարածումը կանխելու համար [1, № 3, 1901, էջ 8]:

Եգիպտահայ պարբերականին մշտապես մտահոգել է Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում տիրող իրադրությունը, ուստի պարբերաբար իր հրապարակումներով փորձել է ընթերցողին ներկայացնել արևմտահայության ծանր դրությունը: Պարբերականը պարբերաբար նշում է, որ թեև 1878 թ. Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով Բ.Դուռը պարտավորվեց բարենորոգումներ անցկացնել Արևմտյան Հայաս-

տանում, այնուհանդերձ արևմտահայության դրությունը 20 տարվա ընթացքում չի բարելավվել, ընդհակառակը՝ վատթարացել է [1, № 6, 1899, էջ 5]:

1890 թ. Գում Գափուի ցույցից հետո լարված սպասողական իրավիճակ էր տիրում Մարաշ քաղաքում: Այդ անորոշության մեջ տեղի ունեցավ մի դեպք, որը փոխեց իրերի դրությունը: Քաղաքի հայաշատ թաղի /Ծեքեր-Տերեի/ փողոցներից մեկում հայտնաբերվեց հայատյաց ոմն մոլեռանդ թուրքի դիակը: Մարաշի մուսուլման բնակչությունն այդ սպանության մեղավորությունը հայերին վերագրեց: Իր հերթին քաղաքի կառավարիչ Սալիհ փաշան հեռագիր հղեց Հալեպի կուսակալ Արիֆ փաշային: Վերջինս հայերին պատժելու համար երկու օր անց եկավ Մարաշ և մարդահամար անցկացրեց քաղաքի ազգաբնակչության իրական պատկերի մասին պատկերացում կազմելու համար: Մարդահամարի արդյունքում պարզվեց, որ Մարաշում կա 8800 տուն, որի կեսը պատկանում էր հայերին, մյուս կեսը՝ թուրքերին [1, № 3, 1899, 9-10 էջեր]:

Պարբերականը տեղեկացնում է, որ խմբագրությունը 1899 թ. մարտի 15-ին Զեյթունից նամակ է ստացել, որում նշվում է, որ ցորենի սղության հետևանքով ժողովուրդը հայտնվել է ծանր վիճակում, մինչդեռ տեղային իշխանությունները թույլ չեն տալիս դժգոհության ալիք բարձրանա: Միևնույն ժամանակ պարբերականը նշում է, որ այս աղետի միակ մխիթարական կողմը Ս. Աստվածածին վանքի մեջ 50 որբերի համար նոր որբանոցի բացումն է [1, № 1, 1899, էջ 15]: Զեյթունից ստացված լուրերի համաձայն լեռնականների սոցիալ-տնտեսական դրությունը շարունակում էր ծանր մնալ, տեղային իշխանությունները պարբերաբար հեղափոխական գործիչներ էին փնտրում՝ ահ ու սարսափ տարածելով ժողովրդի շրջանում: Բացի այդ, պարբերականը տեղեկացնում է, որ բազմաթիվ հայեր շարունակում էին գաղթել Կրետե կղզի, և նրանցից շատերն արդեն կալվածքներ էին գնել՝ երկարատև հաստատվելու նպատակով [1, № 12, 1899, 16-17 էջեր]:

«Տարօնեն լուրեր» հոդվածում պարբերականը տեղեկացնում է, որ 1899 թ. սեպտեմբերի 8-ին Բիթլիսի իշխանությունները 1500 զինվոր են ուղարկել Մշո Ցնորք գյուղում թաքնված 8 հայ հայդուկներին

ձերբակալելու համար: Թուրքական զորքը ավերում և կողոպտում է 500 հայաբնակ տներից բաղկացած գյուղը, բռնաբարության ենթարկում հայ կանանց: Տեղի ունեցած անհավասար ընդհարումների ընթացքում հայ հայդուկները սպանվում են, իսկ թուրքերը Մուշ քաղաքում սպանում են ևս 3 հայի: «Այս դեպքից հետո Մշոյ դաշտի հայերն ահի ու սարսափի մէջ են [1, № 14, 1899, էջ 13]»,- նշում է պարբերականը: Ցնորք գյուղի ճանապարհին թուրքական զորքը Աղբյուր Սերոբի՝ իբր Բերդակ գյուղում թաքնված լինելու պատճառաբանությամբ խուզարկություն է իրականացնում, որը նույնպես ուղեկցվում է կողոպուտով և թալանով: Այս նույն ժամանակահատվածում Երիշթեր և Ասվարիճ գյուղերում ընթրիքի ժամանակ երկու քուրդ սպանում են հայ համագյուղացիներին: Ի պատասխան սպանված հայ գյուղացիների ընտանիքների բողոքների՝ Մուշի տեղային իշխանությունները սպանվածների որդիներին իբրև խռովարարների բանտարկում են: Խութեցի քրդերը Ս. Աղբերկա վանքում սպանում հայր Ղազար վարդապետին և երեք միաբաններին՝ կողոպտելով եկեղեցու գույքը: Բացի այդ, պարբերականը ավելացնում է, որ հայ-քրդական բախումներ տեղի են ունեցել Մուշի Բաբշեն և այլ գյուղերում [1, № 14, 1899, 13-14 էջեր]:

Սպաղանք, Հելենք, Խաստուր, Շուշնամերկ, Սիրնադ գյուղերում կողոպուտ ու ավերածություններ իրականացնելուց հետո թուրքական զորքը քրդերի աջակցությամբ հայդուկներին փնտրելու պատրվակով խուզարկություններ և ավերածություններ իրականացրեց Բերդակ գյուղում, որի ընթացքում սպանվեց 3, վիրավորվեց՝ 7 հայ գյուղացի: «Եւրոպան միջամտելու համար դեռ պիտի սպասուի որ բոլոր հայերը ջարդու՞ին [1, № 3, 1901, էջ 5]»,- վրդովված ավելացնում է հոդվածագիրը:

Լրաքաղ կատարելով Կ. Պոլսի թերթերից՝ պարբերականը հայտնում է, որ 1899 թ. մայիսին Բիթլիսի գյուղերից մեկում հայերը 5 թուրք են սպանել, որի պատճառով 7 հայ է ձերբակալվել [1, № 6, 1899, էջ 15]: «Մատնիչը» հոդվածում էլ պարբերականը հաղորդում է, որ 1899 թ. բնիկ արաբկիրցի Գեղամ Վարդանյանի մատնության հետևանքով ձերբակալություններ սկսվեցին Էրզրումից մինչև Արաբկիր ընկած տարածքներում: Երզնկայում, Բաղեշում, Տևրիկում և Սեբաստիայում

բանտարկվեցին բազմաթիվ ուսուցիչներ, առևտրականներ: Այս դեպքերից հետո հայազգի դավաճանը, վարձատրվելով օսմանյան իշխանությունների կողմից, 10-15 զինվորների ուղեկցությամբ շրջում էր Խարբերդի գյուղերում և ահ ու սարսափ տարածում հայ ժողովրդի շրջանում [1, № 9, 1901, 5-6 էջեր]:

1899-1902 թթ. թուրք-քրդական վայրագությունների զոհ դարձավ նաև Սասունի և Մուշի հայությունը: Հղում անելով անգլիական «Թայմս» թերթում տպագրված լուրերը՝ պարբերականը 8-րդ համարում հաղորդում է, որ քրդերը կողոպտել են Սասունի վանքը, սպանել վանքի վանահորն ու երկու վանականներին, ինչպես նաև հրդեհել հայկական 5 գյուղեր՝ սպանելով 150 հայի և առևանգելով 20 հայ կանանց: «Վիեննայեն եկած գեռագիր մը ջարդուած հայերուն թիւը 800-ի կհասցնէ [1, № 8, 1899, էջ 18]»: 1900 թ. գարնանը Մշո դաշտը պատվեց արյունով [1, № 38, 1902, 4-5 էջեր]: Մեկ ամսվա ընթացքում սպանվեց 106 հայ[1]: 1900 թ. հուլիսի 8-ին քրդական 1000 հոգանոց հրոսակախմբերը կրակի մատնեցին Տալվորիկ և Գեյլիգուզան գյուղերի միջև ընկած տարածքը՝ չխնայելով երեխաներին, ծերերին և կանանց: Մասնավորապես, տանջամահ անելով սպանեցին ալևոր Տ. Պետրոս քահանային: Քրդական հրոսակախմբերի առաջնորդներից մեկը մեծ ոխ ուներ Սպաղանքի գյուղապետի դեմ և հրամայեց վերջինիս կնոջը կտոր-կտոր անել՝ փորի մեջից հանելով մի քանի ամսական երեխային: Սպաղանքը հրի մատնելուց հետո քուրդ հրոսակները կոտորածներ կազմակերպեցին Եղարդի և Ձորերի գյուղերում: Հոդվածագիրը հեգնանքով դիմում է առաջադեմ մարդկությանը, թե մի՞թե դրանք մասնավոր դեպքեր են, և ինքը պատասխանում. «Ո՛չ, տե՛արք, 1892-1893 թթ. դեպքերի կրկնությունն է, որին շուտով կհետևեն 1894-1896 թթ. Կոտորածները [1, № 39, 1902, 4-6 էջեր]»:

Հղում անելով եվրոպական թերթերին՝ պարբերականը տեղեկացնում է, որ արևելահայերից բաղկացած խումբը, որը մեկնում էր

---

[1] Մասնավորապես Արակ գյուղում սպանվեց 10 հոգի, Հավատուրիկում՝ 4, Կարներում՝ 7, Բիֆշիձում՝ 10, Հուննայում՝ 17, Բերդակում՝ 2, Աշուարինջում՝ 6, Ախջոյում՝ 4, Ցրոնքում՝ 2, Կոռվոնում՝ 30 և Մոկունք գյուղում 20 հայ: Տե՛ս «Փինիկ», 1902, № 38, էջ 5:

Վանի ազատագրական շարժմանն աջակցելու համար, ճանապարհին մարտի է բռնվել թուրքական զորքերի հետ և նահանջել է՝ մարտի դաշտում թողնելով 10 զոհ: Բացի այդ, պարբերականը տեղեկություններ է հաղորդում, որ թուրք ոստիկանները համիդիե քրդական ջոկատների հետ մեկտեղ հայ նշանավոր հայդուկ Աղբյուր Սերոբին հայտնաբերելու պատրվակով Բաղեշի գյուղերում բազմաթիվ ավերածություններ և սպանություններ են իրականացրել, կողոպտել են Մուշ և Սասուն քաղաքների միջև գտնվող Ս. Աղբրիկ վանքը՝ սպանելով վանահորն ու երկու եկեղեցականներին [1, № 10, 1899, էջ 17]:

1901 թ. գարնանը օսմանյան իշխանությունները ձերբակալեցին Զեյթունի եպիսկոպոսին, քահանաներին, մեծ թվով ուսուցիչների ու տեղափոխեցին Մարաշ: Մի քանի շաբաթ բանտարկված մնալուց հետո 600 ոսկի կաշառքի դիմաց նրանց մեծ մասը ազատ արձակվեց [1, № 1, 1901, էջ 8]: Լրաքաղ կատարելով այլ թերթերից՝ պարբերականը հաղորդում է, որ 1901 թ. Վանում և շրջակա գյուղերում տիրող անիշխանությունը աղետալի վիճակ է ստեղծել, ինչի կապակցությամբ Կ. Պոլսի Ազգային պատրիարքարանը բողոքներ է ներկայացրել տեղի ունեցած խժդժությունների առթիվ: 1901 թ. հունիսին Մահմուդ աղա Բոյբեքի գլխավորած 500 հոգանոց հրոսակախումբը հարձակվեց Ալպիս գյուղի վրա, ուր 72 հայ ընտանիք էր ապրում: Հայերին հաջողվեց փախչել մոտակա Քեֆերտիս գյուղը՝ բախումների արդյունքում տալով 4 զոհ /3 տղամարդ և 1 կին/: Մի քանի օր անց վերոնշյալ հրոսակախումբը հրի մատնեց Քեֆերտիս գյուղը՝ սպանելով ևս 5 հայ [1, № 42, 1902, 5-7 էջեր]: 1901 թ. ամռանը Շերիֆ աղայի եղբոր սպանության պատճառով Հավատորեկ, Մառնինկ, Առախ, Բերդակ և Մոկունք գյուղերը մեծ ավերածությունների ենթարկվեցին, իսկ գյուղացիների մեծ մասը սպանվեց [1, № 15, 1901, էջ 7]:

Զեյթունի և Սասունի շուրջ օղակը գնալով սեղմվում էր, քանի որ օսմանյան իշխանությունները քաղաքները շրջապատող բարձունքներում և կիրճերում զորանոցներ և բերդեր էին կառուցում: 1901 թ. հուլիսի 3-ին համիդիե ջոկատները կանոնավոր զորքերի հետ համատեղ վերսկսեցին ավերածություններն ու կոտորածները Մշո դաշտում, որի արդյունքում շատ գյուղեր՝ մասնավորապես հայաշատ կարևոր կենտ-

րոն Շեխաղան գյուղը ամբողջությամբ ավերվեց: Պարբերականը ցավով նշում է, որ այս ամենից հետո Եվրոպան դարձյալ լռում է [1, № 16, 1901, էջ 3]:

1901 թ. հուլիս-օգոստոս ամիսներին քրդերը սպանեցին ավելի քան 100 հայ գյուղացիների: Գոթանլի գյուղի քուրդ ցեղապետ Շերիֆ աղայի սպանությունը պատճառաբանելով՝ քրդերը կողոպտեցին գյուղը, այրեցին դաշտերը և բանտարկեցին 40 հայ գյուղացիների [1, № 19, 1901, էջ 15]: Հղում անելով ֆրանսիական «Թան» օրաթերթում Հայաստանի մասին տպագրված հոդվածը՝ պարբերականը հաղորդում է, որ 1901 թ. սեպտեմբերի 1-ին Բիթլիսի վալին 8 վաշտ զորք է ուղարկել Մուշ: Հոդվածագիրը նշում է, որ Մուշում և Սասունում նույն իրավիճակն է, ինչ 1894-1896 թթ. կոտորածների նախօրյակին և մտավախություն է հայտնում, որ հնարավոր է նոր կոտորածներ տեղի ունենան: Բացի այդ, հոդվածագիրն ավելացնում է, որ օսմանյան իշխանություններն ոչ միայն չեն իրականացնում Բեռլինի 61-րդ հոդվածով նախատեսված հայկական բարենորոգումները, այլև նոր սպանություններ և կոտորածներ են կազմակերպում [1, № 19, 1901, 9-11 էջեր]:

1901 թ. վերջերին և 1902 թ. սկզբներին Կիլիկիայում և Արևմտյան Հայաստանի վիլայեթներում արևմտահայության դրությունը շարունակում էր աղետալի մնալ: Մարաշից հասած լուրերը փաստում էին, որ սպանությունները գնալով ավելի հաճախակի էին դառնում: Միայն դեկտեմբերի սկզբներին Մարաշում 15 հայ սպանվեց: Պարբերականը ցավով նշում է, որ թուրք մարդասպանները ինչպես միշտ շարունակում են անպատիժ մնալ[1, № 32, 1901, էջ 5]:

1901 թ. նոյեմբերի սկզբին Անդրանիկը մի խումբ հայդուկների և զինված գյուղացիների հետ մտնում են Մուշից ոչ հեռու գտնվող Ս. Առաքելոց վանքն ու այն վերածում ինքնապաշտպանական ամրոցի: Այս դեպքի առնչությամբ պարբերականը տեղեկացնում է, որ օսմանյան իշխանությունները ստահոդ լուրեր են տարածում, թե իբր հայ ավազակախումբը Անդրանիկի գլխավորությամբ վանքում 60 պատանդ է պահում, և Մշո եպիսկոպոսի խնդրանքով թուրքական զորախմբեր են ուղարկվել պատանդներին ազատելու համար: Հոդվածագիրը միևնույն ժամանակ ավելացնում է, որ Կ. Պոլսից հասած լուրերի հա-

մաձայն օսմանյան իշխանությունները խնդրել են Հայոց պատրիարքարանին միջամտել և Անդրանիկի ու իր զորաջոկատի կյանքի ապահովման երաշխավուրության պայմանով համոզել վերջիններիս զենքը վայր դնել և լքել Օսմանյան կայսրության տարածքը [1, № 32, 1901, 4-5 էջեր]: Հավելենք, որ Անդրանիկն օսմանյան իշխանությունների ոչ մի պայման չի ընդունում, և նոյեմբերի 27-ին հայդուկները, սպիտակ սավաններով փաթաթված, աննկատ հեռանում են վանքից: Ս. Առաքելոց վանքի կռիվը մեծ տպավորություն թողեց Տարոնի և Սասունի հայության վրա և զգալիորեն բարձրացրեց արևմտահայության մարտական ոգին:

Արևմտահայության օրհասական դրությունը ներկայացնելուն զուգահեռ եգիպտահայ պարբերականը համայն հայությանը կոչ է անում չհուսահատվել: «Հայերը, դարերի ընթացքում բազմիցս ենթարկվելով հալածանքների և հարստահարումների, մշտապես ապրելով բնաջնջումի սարսափի տակ, շարունակում են ապրել՝ պահպանելով ազգային ինքնությունը, մշակույթը: Հոդվածագիրը շեշտում է, որ չնայած հայերը և Արևելյան Հայաստանում և Արևմտյան Հայաստանում շարունակում են ճնշումների ենթարկվել, կրթական հաստատություններ են փակվում, մամուլը գրաքննության տակ է, այնուհանդերձ չպետք է հուսահատվել [1, № 15, 1902, 1-3 էջեր]»,- ընդգծում է պարբերականը: Բացի այդ, պարբերականը ավելացնում է, որ 1880-ական թթ. հակահրեական հալածանքները ստիպեցին Ռուսաստանի հրեա երիտասարդ մտավորականությանը թողնել իրենց ուսումը, գնալ Պաղեստին, զբաղվել գյուղատնտեսությամբ, և այդպես սկիզբ առավ սիոնական շարժումը: Աշխարհի տարբեր երկրներից հրեաները սկսեցին վերադառնալ Պաղեստին, հողեր գնեցին և ի վերջո խորը արմատներ գցեցին իրենց հայրենիքում: Պարբերականը գտնում է, որ հայ ժողովուրդը պետք է հետևի հրեաների օրինակին և սկսի վերադառնալ Մայր հայրենիք, իսկ դրա համար անհրաժեշտ է սիոնիզմի նման գաղափարախոսություն [1, № 7, 19014-5 էջեր]:

**Օգտագործված գրականության ցանկ**

1. «Փյունիկ», Կահիրե, 1899-1903:
2. Թոփուզյան Հ. Խ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1978:
3. Հայ պարբերական մամուլի պատմություն 1900-1922, հ. 2, Երևան, 2017:

## АРМЯНО-ЕГИПЕТСКОЕ ИЗДАНИЕ «ПЮНИК»

**Мясник Есоян**
ЕУ, кафедра Международных отношений,
НАН РА, институт Истории, к.и.н., доцент

Основной целью общественно-политического и литературного журнала «Пюник» было освобождение Родины от турецкого ига. Армяно-египетское периодическое издание всегда было обеспокоено ситуацией в Западной Армении и Киликии, поэтому в своих публикациях оно регулярно пыталось представить читателю тяжелое положение проживающих там армян. Кроме того, периодическое издание поднимало на своих страницах жизненно важные вопросы и требования египетских армян, пытаясь играть активную роль в стимулировании общественной и политической жизни Египта.

**Ключевые слова:** Журнал, Армяне, Гайдук, Османские власти, Курды.

## THE EGYPTIAN-ARMENIAN "PYUNIK" PERIODICAL

**Myasnik Esoyan**
EU, Chair of International Relations
NAS RA, Institute of History, PhD in History, Associate Professor

One of the most important issues of "Pyunik" national, literary and political periodical is the liberation of the homeland from the Turkish yoke.

The Egyptian-Armenian periodical has always been concerned about the situation in Western Armenia and Cilicia, so it has regularly tried to present the difficult situation of Western Armenians to the reader through its publications. In addition, the Egyptian-Armenian periodical raised the vital issues and demands of the Egyptian-Armenians in its pages, trying to play an active role in activating the public and political life of Egypt.

**Keywords**. Periodical, Western Armenians, Hayduk, Ottoman authorities, Kurds.

*Տրվել է տպագրության՝ 12.10.2021թ.*
*Գրախոսվել է՝ 01.12.2021թ.*

# ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ԵՎ ԱՄՆ-Ի ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

***Արտակ Հովհաննիսյան***
*ԵՀ, Գյումրու մասնաճյուղ, պ.գ.թ., դոցենտ*
*artakh76@mail.ru, +374 55 012070*

*21-րդ դարում դեռևս չլուծված է մնում համաշխարհային հասարակությանը հուզող ամենաբարդ թնջուկներից մեկը՝ արաբա-իսրայելական հակամարտությունը: Առաջանալով 1947թ. որպես իսրայելա-պաղեստինյան խնդիր՝ հակամարտությունը հետագա տարիներին վերաճեց արաբա-իսրայելականի՝ իր ոլորտը ուղղակի կամ անուղղակի կերպով ներառելով Մերձավոր Արևելքի գրեթե բոլոր երկրներին, ինչպես նաև համաշխարհային գերտերություններին, որոնք ունեն իրենց ռազմավարական շահերը այս ռեգիոնում:*

***Հիմնաբառեր.*** *Պաղեստին, Իսրայել, ՄԱԿ-ի բանաձև, Թրուման, Երուսաղեմ, ազգային օջախ, «մեծամասնության ծրագիր», Բալֆուրի հռչակագիր, Ռուզվելտ, Էլլինգի մեմորանդում*

Ներածություն: Պաղեստինյան հակամարտությունը՝ հանդիսանալով ամենաբարդ ազգամիջյան թնջուկներից մեկը, առաջացել է 1947թ. որպես իսրայելա-պաղեստինյան խնդիր, սակայն հետագայում վերաճել է տարածաշրջանային խնդրի՝ իր ոլորտը ուղղակի կամ անուղղակի կերպով ներառելով Մերձավոր Արևելքի գրեթե բոլոր երկրներին, ինչպես նաև համաշխարհային գերտերություններին, որոնք ունեն իրենց ռազմավարական շահերը այս ռեգիոնում: Այս առումով, ցայսօր միջազգային դիվանագիտության օրակարգում են մնում հակամարտության լուծմանն ուղղված ջանքերը և քննարկվող հարցի արդիականությունը շարունակում է մնալ համաշխարհային գերակա խնդիրներից մեկը:

**Նպատակ և արդիականություն**: Հոդվածում նպատակ է դրվել ներկայացնել Մերձավոր Արևելքում ամենաբարդ, տևական և վտանգավոր ազգամիջյան խնդրի՝ պաղեստինյան հակամարտության առա-

ջացման պատճառներն ու սկիզբը և դրա հանդեպ աշխարհի թիվ մեկ գերտերության՝ ԱՄՆ-ի դիրքորոշումը, որը շատ ու շատ կողմերով կանխորոշում է տարածաշրջանային այլ զարգացումների, միջպետական հարաբերությունների, տարբեր երկրների շահերի ու դիրքավորումների, ինչպես նաև համաշխարհային այլ ուժային կենտրոնների հետ հարաբերությունների բնույթը:

**Հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը**: Արաբաիսրայելական հակամարտության ուսումնասիրությամբ զբաղվել են հայկական, ռուսական, արևմտյան և արաբական արևելագիտական դպրոցների ականավոր ներկայացուցիչները: Խնդրո առարկա հարցին իրենց աշխատություններում անդրադարձել են Ն. Հովհաննիսյանը, Ե. Աբգարյանը, Ս.Ավանեսովը, Ա. Թոփալյանը, Ռ. Կարապետյանը, Շ. Կարամանուկյանը, Հ. Սարգսյանը, Ա. Հովհաննիսյանը:

Մինչև 1947թ. Պաղեստին աշխարհագրական տարածքը իր մեջ ներառնում էր Հորդանանը, Իսրայելը, Հորդանան գետի արևմտյան ափը, Ղազայի հատվածը՝ այսինքն այն տարածքները, որոնք առաջին աշխարհամարտից հետո Ազգերի Լիգայի որոշմամբ հանձնվել էին Անգլիային:[1] «Պաղեստինի առաջին բաժանումը եղավ 1922թ, երբ Անգլիան առանձնացրեց Անդրիորդանանը»[2]: Ուստի զարմանալի չէ, որ ժամանակին Իսրայելի շատ ազդեցիկ ուժեր /Հերուտ կուսակցություն, Լիկիուդ…/, Պաղեստինի 1947թ. բաժանումը անվանեցին որոշում Արևմտյան Պաղեստինի բաժանման մասին: Իսրայելի կառավարող շրջանակները, ավելի ուշ արեցին անգամ արևմտյան քաղաքագետներին շշմեցնող հայատարարություններ, թե՝ «արդեն գոյություն ունի Պաղեստինյան արաբական պետություն, որպիսին է Հորդանանը»[3]: 1946 թ. Հորդանանի անկախությունից հետո Պաղեստինի աշխարհագրական անվանումը սկսեց տարածվել Հորդանան գետից արևմուտք՝ մինչև Միջերկրական ծով և Սինայի թերակղզի ընկած տարածքների վրա:

1917թ. նոյեմբերի 2-ին Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարը հանդես եկավ հայտարարությամբ, որը պատմության մեջ մտել է Բալֆուրի հռչակագիր անվամբ:[4] Հռչակագրում ասվում էր. «Նորին մեծության կառավարությունը բարեհաճությամբ ծանոթանա-

լով Պաղեստինում հրեական ժողովրդի համար ազգային օջախ ստեղծելու գաղափարին՝ հայտարարում է, որ բոլոր ջանքերը կներդնի այդ ծրագրի իրականացման գործում: Միաժամանակ ոչինչ չի արվի սահմանափակելու գոյություն ունեցող ոչ հրեական համայնքի իրավասությունները Պաղեստինում»:[5] Հռչակագրի ընդունման պահին Պաղեստինի բնակչության 91 տոկոսը կազմում էին արաբները, իսկ 9 տոկոսը հրեաները:[6] Հռչակագիրը որոշակի առումով հակասության մեջ էր մտնում այն պայմանավորվածության հետ, որ ձեռք էր բերվել առաջին համաշխարհային պատերազմի տարիներին անգլիական զորքերի հրամանատար Հենրի Մակմահոնի և Մեքքայի շերիֆ Հուսեյն ալ-Հաշիմիի միջև, համաձայն որի արաբները պատերազմի ավարտից հետո ստանալու էին անկախություն, իսկ Պաղեստինը մտնում էր այն տարածքների մեջ, որոնք պետք է ստանային անկախություն:[7]

Ազգերի Լիգայի կողից Անգլիային տրված մանդատի որոշ հոդվածներ վերաբերում էին հրեական ազգային օջախ ստեղծելու մտադրություններին:[8] Մանդատի երկրորդ հոդվածում ասվում էր. «Մանդատ ստացած պետությունը պետք է պայմաններ ստեղծի հրեական ազգային օջախի ստեղծման և ինքնակառավարման ինստիտուտների զարգացման համար»:[9] Իսկ հոդված չորրորդում ասվում էր. «Սիոնիստական կազմակերպությունները ճանաչվում են որպես օրինական հրեական գործակալություններ»:[10] Սիոնիստական գաղափարախոսության հիմնական դրույթները ընդունվեցին 1897թ. օգոստոսի 30-ի Բազելի կոնգրեսում[11]: Ցյուրիխի հրեական գործակալությունը համագործակցելու էր բրիտանական կառավարության հետ»:[12] Վերոհիշյալ իրադարձություններից հետո սկսվում է հրեաների զանգվածային հոսքը Պաղեստին: Այդ ժամանակ Պաղեստինում ծառայող բրիտանական բանակի սպա Ստերլինգը իր հուշերում գրում է.«Ես զարմացած եմ Թել-Ավիվ քաղաքի արագ աճի վրա: Հրեաները մեկ ակր հողի դիմաց, որի արժեքն է 90 ֆունտե, վճարում են 300.000 ֆունտ»:[13] Արդյունքում՝ մինչև 1929թ. Պաղեստինի հրեական բնակչության թիվը հասավ 156.840 մարդու, իսկ արաբական բնակչության թիվը կազմում էր 744.250 մարդ:[14] Ստեղծվել էր խիստ լարված ի-

րադրություն, որը հաշվի առնելով, բրիտանական կառավարությունը 1939թ. մայիսին հրապարակեց իր հայտնի Սպիտակ գիրքը, որում ասվում էր.«Նորին մեծության կառավարությունը հայտնում է, որ հրեական պետության ստեղծումը Պաղեստինում չի հանդիսանում իր վարած քաղաքականության մի մասը»:[15] Նույնիսկ ի հայտ եկան Պաղեստինի բաժանման ծրագրեր:[16] Հրեական կազմակերպությունները խիստ քննադատության ենթարկեցին «Սպիտակ գիրքը» և 1942թ. մայիսի 11-ին Նյու-Յորքի Բիլթմոր հյուրանոցում հրավիրված հրեական 667 պատվիրակներից բաղկացած կոնգրեսը պահանջեց իրականացնել Բալֆուրի հռչակագիրը և Անգլիային տրված մանդատի համապատասխան հոդվածները:[17] Սիոնիստական ղեկավարների մի մասի ուշադրությունը շրջվեց դեպի ԽՍՀՄ, իսկ մեծամասնությունը հույսը սկսեց կապել ԱՄՆ-ի հետ: Սկսվել էր երկրորդ համաշխարհային պատերազմը և Մերձավորարևելյան քաղաքականությունը ԱՄՆ-ի համար դառնում էր հրամայական անհրաժեշտություն:[18] Դեռ 1918թ. օգոստոսի 31-ին ԱՄՆ-ը ճանաչել էր Բալֆուրի հռչակագիրը[19], իսկ 1922թ. ԱՄՆ-ի կոնգրեսը հայտարարեց, որ հավանություն է տալիս Պաղեստինում հրեական ազգային օջախի ստեղծման ծրագրերին:[20] Երկրորդ համաշխարհայինի տարիներին, ինչպես իրավացիորեն նշում է Ն. Հովհաննիսյանը. «ԱՄՆ-ը ձգտում էր կանխել Մերձավոր Արևելքի զավթումը ֆաշիստների կողմից, ուժեղացնել սեփական դիրքերը ի հաշիվ Անգլիայի և Ֆրանսիայի, ինչպես նաև բաց դռների քաղաքականության կարգախոսի տակ ուժեղացնել սեփական տնտեսական դիրքերը՝ արաբական արևելքում ստեղծելով ուժեղ պլացդարմ հետպատերազմյան շրջանում հարձակողական քաղաքականություն վարելու համար»:[21] 1942թ. մայիսի 8-ին ընդունվեց ԱՄՆ-ի պետքարտուղարության Մերձավոր Արևելքի բաժնի վարիչ Էլլինգի մեմորանդումը, որը ԱՄՆ-ի հետաքրքրությունները Մերձավոր Արևելքում բաժանում էր 3 էլեմենտների՝ քաղաքական, ռազմական և տնտեսական:[22] ԱՄՆ-ի նախագահ Ռուզվելտի կարծիքին էր, որ «Մերձավոր Արևելքը պետք է պահել անառիկ, անկախ այն բանից ԽՍՀՄ-ը կպարտվի, թե՝ ոչ»:[23] Ռուզվելտը 1944թ. հոկտեմբերի 15-ին հայտարարեց, որ «Պետք է գտնել ուղիներ և միջոցներ Պաղեստի-

նում դեմոկրատական հրեական համագործակցություն ստեղծելու համար, հենց որ դա հնարավոր լինի»:[24] 1946թ. հոկտեմբերին ԱՄՆ-ի նորընտիր նախագահ Թրումենը առաջարկեց թույլատրել 100.000 հրեաների բնակվել Պաղեստինում:[25]

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո պաղեստինյան հարցը նորից դարձավ միջազգային դիվանագիտական շրջանակներում քննարկվող առաջնահերթ խնդիրներից մեկը: 1946թ. ապրիլին ստեղծվեց անգլո-ամերիկյան կոմիտե, որը զբաղվելու էր Պաղեստինի հարցերով: Կոմիտեն հայտարարեց, որ. «Ընդունում է Տրումենի առաջարկությունը թույլատրել 100,000 հրաեների մուտքը Պաղեստին, բայց միաժամանակ մերժում է արաբների և հրեաների պահանջը այդ ժողովուրդների համար ստեղծելու ազգային պետություններ: Կոմիտեն մերժում է Պաղեստինի բաժանումը, որպես հարցի լուծման ուղի և առաջարկում է անգլիական մանդատի շարունակման փոխարեն իրագործել այս տարածքը ՄԱԿ-ի հովանավորության տակ դնելը, մինչև անհանդուրժողականությունը արաբների և հրեաների միջև վերանա»:[26] Սակայն արդեն 1946թ. հոկտեմբերին Թրումենը հայտարարեց, որ. «Հրեական պետության ստեղծումը թույլատրելի է Պաղեստինի այն հատվածում, որը գտնվում է հրեական գաղութաբնակների տնտեսական և քաղաքական ոլորտում: ԱՄՆ-ը առաջարկեց Պաղեստինը բաժանել արաբական և հրեական ինքնուրույն պետությունների: Անգլիական նախագիծը նախատեսում էր ստեղծել Պաղեստինյան ֆեդերացիա՝ բաղկացած 4 նահանգներից՝ արաբական, հրեական /որն ունենալու էր մասնակի ինքնուրույնություն/,Նեգեվ և Երուսաղեմ»:[27] 1946թ. դեկտեմբերի 31-ի մարդահամարի տվյալներով Պաղեստինում ապրում էր 1.972.560 մարդ, որից 1.203.780-ը արաբներ էին, 145.060-ը՝ քրիստոնյաներ, 15.490-ը՝ դրուզներ և 608.230-ը՝ հրեաներ:[28]

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի արտակարգ նստաշրջանում, որը տեղի ունեցավ, 1947թ. ապրիլի 28-ից՝ մայիսի 15-ը, ստեղծվեց հատուկ հանձնաժողով, Կանադայի, Չեխոսլովակիայի, Գվատեմալայի, Նիդեռլանդների, Պերուի, Շվեդիայի, Ուրուգվայի, Հարավսլավիայի, Հնդկաստանի, Իրանի, Ավստրալիայի ներկայացուցիչներից, որը

պետք է ներկայացներ ծրագրեր պաղեստինյան հարցի լուծման վերաբերյալ: Հատուկ հանձնաժողովը ուղևորվեց Պաղեստին:[29]

ԱՄՆ-ի քաղաքականությունը Պաղեստինի հարցում անգլո-ամերիկյան կոնվենցիայի ստորագրումից սկսած՝ 1924թ. և ընդհուպ մինչև 2-րդ աշխարհամարտը բավականին բարդ և զգուշավոր էր: Ձգտելով հաստատվել այստեղ՝ ԱՄՆ-ը հենվում էր տեղի սիոնիստական կազմակերպությունների վրա՝ խուսափելով պաշտոնական ընդդիմությունից անգլիական կառավարության հանդեպ, բայց միաժամանակ հրահրում էր հակաանգլիական տրամադրություններ: «Որպեսզի թուլացնի Անգլիայի և Ֆրանսիայի քաղաքական և տնտեսական դիրքերը, պետք էր գաղութային հարցերում նրանց հարված հասցնել: ԱՄՆ-ը փորձում էր դա անել Ասիայի և Աֆրիկայի երկրների՝ Անգլիայից և Ֆրանսիայից գաղութային կախվածության վերացման միջոցով: Գաղութների դուրս գալը Անգլիայի և Ֆրանսիայի ենթակայությունից ճանապարհ կհարթեր ԱՄՆ-ի քաղաքականության համար, իսկ բաց դռների քաղաքականությունը ուղի կհարթեր ամերիկյան կապիտալի համար»: [30]

«Պաղեստինյան հարցը մտցնելով ՄԱԿ՝ անգլիական կառավարությունը իրեն ոչ մի պարտավորությամբ կաշկանդված չէր զգում և նախօրոք գնահատում էր ՄԱԿ-ի ցանկացած հնարավոր որոշում՝ սոսկ որպես խորհրդատվական»:[31]

Պարզ էր, որ Անգլիան այդպիսի քայլերով հույս ուներ ժամանակ շահել և պահել իր ազդեցությունը Պաղեստինում: Մյուս կողմից, արաբները առաջարկելով Անգլիայի մանդատի դադարեցում, «նկատի ունեին, որ Պաղեստինում պետք է ստեղծվի միայն արաբական պետություն՝ մոռանալով այն ակնհայտ իրողությունը, որ Պաղեստինը փաստացիորեն կար որպես երկու ինքնուրույն համայնքների /արաբական և հրեական/ կոնգլոմերատ»:[32] Իսկ սիոնիստական կազմակերպություններն իրենց հերթին պահանջում էին Պաղեստինում ստեղծել միայն հրեական պետություն: Ավելին՝ նրանք ծրագրում էին սիոնիստական զինված ուժերի օգնությամբ վտարել արաբներին Պաղեստինից:

ԱՄՆ-ի դիրքորոշումը ՄԱԿ-ի նստաշրջանում առաջին հայացքից թվում էր անորոշ և չպարզված: Այսպես, ԱՄՆ-ը սկզբում դեմ արտահայտվեց հրեական համայնքի ներկայացուցիչների հրավիրմանը ՄԱԿ, բայց այնուհետև 180 աստիճանով փոխեց իր դիրքորոշումը՝ պահանջելով հակառակը: Այս ամենը, ինչպես նաև Պաղեստինի ապագայի վերաբերյալ հետագա առաջարկությունները, ուղղված էին Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի դիրքերի ամրապնդմանը:

Այս ընթացքում, Պաղեստինյան հարցերով ՄԱԿ-ի հատուկ հանձնաժողովը առաջ քաշեց երկու ծրագրեր: Առաջինը, որը կոչվում էր «մեծամասնության ծրագիր»[33] և առաջարկվել էր Կանադայի, Պերուի, Գվատեմալայի, Նիդեռլանդների, Չեխոսլովակիայի և Ուրուգվայի ներկայացուցիչների կողմից, նախատեսում էր Պաղեստինը տնտեսական միասնության պահպանման հիմքի վրա բաժանել արաբական և հրեական ինքնուրույն պետությունների՝ Երուսաղեմը թողնելով միջազգային հսկողության տակ:

Երկրորդ ծրագիրը, որ առաջարկվել էր Հնդկաստանի, Իրանի և Հարավսլավիայի ներկայացուցիչների կողմից և կոչվում էր «փոքրամասնության ծագիր»[34], նախատեսում էր ստեղծել միասնական պաղեստինյան պետություն՝ կազմված 2 ինքնավար մասերից՝ Երուսաղեմ մայրաքաղաքով: Այս նախագիծը պաշտպանում էին ԽՍՀՄ-ը և արաբական երկրները:

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 2-րդ նստաշրջանում՝ 1947թ. սեպտեմբերի 16-նոյեմբերի 29-ը, բախումը այս 2 ծրագրերի միջև ավելի ակնառու դարձավ: ԱՄՆ-ի կառավարությունը պայքարում էր ոչ այնքան 2-րդ ծրագրի դեմ, որքան Անգլիայի դիրքորոշման դեմ:[35] Միաժամանակ ԱՄՆ-ը ձգտում էր հասնել իր անմիջական մասնակցությամբ Պաղեստինում ոստիկանական ուժերի ստեղծման՝ «կամավորական սկզբունքների» հիման վրա, որոնք պետք է այստեղ գտնվեին մինչև Պաղեստինի անկախության հռչակումը: Ակնհայտ է, որ այս ամենը ուղղված էր տարածաշրջանում ԱՄՆ-ի դիրքերի ամրապնդմանը, տարածաշրջան, որը ԱՄՆ-ը միշտ դիտել և դիտում է որպես իր տնտեսական և քաղաքական հետաքրքրությունների կենտրոններից մեկը:[36]

1947թ. նոյեմբերի 29-ին ՄԱԿ-ի ԳԱ ձայների 2/3 առավելությամբ ընդունեց 181-րդ բանաձևը՝ Պաղեստինում անգլիական մանդատը դադարեցնելու մասին: Ըստ այդ բանաձևի՝ Պաղեստինը բաժանվեց արաբական և հրեական մասերի՝ պահպանելով տնտեսական միասնությունը: Բանաձևին կողմ քվեարկեցին 33 երկիր, այդ թվում նաև ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը, դեմ քվեարկեցին 14 պետություն, իսկ 10-ը՝ այդ թվում նաև Անգլիան, ձեռնպահ մնացին:[37]

«Գլխավոր Ասամբլեայի որոշման համաձայն՝ Անգլիայի մանդատային իրավասությունները Պաղեստինում դադարեցվելու էին 1948թ. մայիսի 15-ին, իսկ անգլիական զորքերի դուրսբերումը իրականացվելու էր մինչև 1948թ. օգոստոսի մեկը»:[38]

Համաձայն ՄԱԿ-ի 181-րդ որոշման, արաբական պետությունը կազմելու էր 11.1 հազ. կմ$^2$, Պաղեստինի տարածքի 42 տոկոսը, ներառյալ Արևմտյան Գալիլեան, Ակկո /Ակրա/ և Նազարեթ քաղաքները, երկրի արևելյան մասը՝ Էզդրելոնյան բարձունքներից մինչև Բերսեբա, Ղազան, ինչպես նաև Յաֆֆան, որն ունենալու էր անկլավի կարգավիճակ:[39] Հրեական պետությունը ունենալու էր 14.1 հազ. կմ2 տարածք, կամ Պաղեստինի տարածքի 56 տոկոսը, ներառյալ Հայֆան, Թել-Ավիվը, Արևելյան Գալիլեան, Էզդրելոնյան բարձունքների մի մասը: Երուսաղեմին և Բեթղեհեմին տրվում էր միջազգային կարգավիճակ: 1948թ. սեպտեմբերի 11-ին ՄԱԿ-ի 194-րդ բանաձևը կրկին հաստատեց Երուսաղեմի միջազգային կարգավիճակը:[40]

Առաջարկվող արաբական պետության մեջ ապրում էին 811.000 արաբ և 10.000 հրեա, իսկ հրեական պետության մեջ՝ 499.000 հրեաներ և 435.000 արաբներ:[41]

Երուսաղեմում բնակչության թիվը կազմում էր 205.000 մարդ, որից 105.000-ը արաբ, իսկ 100.000-ը հրեա: 1947թ. վերջին Պաղեստինի բնակչությունը կազմում էր 1.845.000 մարդ, որից 1.237.000-ը արաբ, իսկ 608.000-ը / 33 տոկոս/ հրեա: Բանաձևը ընդունելու պահին Պաղեստինի հողային տարածքների 93 տոկոսը պատկանում էր արաբներին և միայն 7 տոկոսը՝ հրեաներին:[42] Այսպիսի պայմաններում, արաբները բնականաբար չէին կարող ընդունել Պաղեստինի այսօրինակ բաժանումը: Գլխավոր Ասամբլեայի ընդունած բանաձևը նա-

խատեսում էր անգլիական զորքերի դուրս բերումից հետո, մոտ 2 ամսվա ընթացքում, Ժամանակավոր Խորհուրդների կողմից կազմակերպել Սահմանադիր ժողովի ընտրություններ և մշակել դեմոկրատական Սահմանադրության նախագիծ: Սակայն դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, որ հնարավոր չէ իրականացնել ՄԱԿ-ի բանաձևը: Արդեն 1947թ. նոյեմբերին սիոնիստական ադմինիստրացիան Պաղեստինում իր տրամադրության տակ ուներ զգալի զինված ուժեր, որոնք իրականացնելու էին պաղեստինյան արաբներին վտարելու գործընթացը:

«Հրեական ոստիկանության /Խագանա/ կանոնավոր զինուժը կազմում էր 16.000 մարդ»[43], չհաշված Ազգային ռազմական կազմակերպության /Իրգուն Ցվայ Լեումի-5.000 մարդ/ և Պալմահան / զինված վերաբնակիչները՝ 2.100 մարդ/ [44]:

Սիոնիստների այս զինուժին պետք է դիմադրեր «Արաբական ազատագրական բանակը» Ֆավզի ալ-Կաուկաջի գլխավորությամբ, որն ուներ սոսկ 6.000 զինվոր: ՄԱԿ-Ի Անվտանգության Խորհուրդը 1948թ. մարտ-ապրիլ ամիսներին քննարկեց պաղեստինյան հարցը: ԱՄՆ-ի ներկայացուցիչները հայտարարեցին, որ անհնար է իրականցնել ՄԱԿ-ի 1947թ. նոյեմբերի 29-ի որոշումը: ԱՄՆ-ը առաջարկեց Պաղեստինը մտցնել ՄԱԿ-ի հովանու ներքո, որը երկրամասը կառավարելու համար պետք է նշանակեր գեներալ-նահանգապետ:

Սակայն ԱՄՆ-ում կային նաև այլ տեսակետներ: «Ամերիկյան սենատոր Օստինը 1948թ. ապրիլին առաջարկեց Պաղեստինում ՄԱԿ-ի դրոշի ներքո կամ նրա փոխարեն օգտագործել ԱՄՆ-ի ոստիկանական ուժերը՝ ռազմական գործողությունները կանխելու համար: ՄԱԿ-ի խնամակալությունը այս դեպքում կվերածվեր ԱՄՆ-ի խնամակալության»[45]:

ԱՄՆ-ի նախաձեռնությամբ 1948թ. ապրիլ-մայիսին հրավիրվեց ԳԱ հատուկ նստաշրջան, որտեղ ԱՄՆ-ը առաջ քաշեց Պաղեստինի ժամանակավոր կառավարման մի շարք ծրագրեր՝ այդ թվում նաև գերագույն կոմիսարի նշանակում: Ընդ որում, գեներալ նահանգապետի «ժամանակավոր կառավարումը» պետք է տևեր այնքան ժամանակ, քանի դեռ վերջինս չէր հասել հրեաների և արաբների միջև խաղաղ

համագործակցության և ինքնավարության այնպիսի ձևի հաստատման, որը ընդունելի կլիներ և արաբների, և հրեաների կողմից:[46] Հարկ ենք համարում ընդգծել, որ ԱՄՆ-ի վերոհիշյալ քաղաքականությունը, ընդհանուր գծերով, Անգլիայի վարած քաղաքականության կրկնօրինակումն էր, միայն գլխավոր դերակատարի փոփոխությամբ: Այսպիսի պայմաններում, Անգլիան անսպասելիորեն մայիսի 14-ին հայտարարեց իր մանդատի դադարեցման և զորքերի դուրսբերման մասին:

«Հաշվարկը կայանում էր նրանում, որ սկսված արաբա-իսրայելական պատերազմի ընթացքում, արաբները Անգլիայի օգնությամբ կհասնեն հաղթանակի, որից հետո այստեղ կձևավորվի անգլո-արաբական միություն»[47]:

Ինչպես տեսնում ենք, Անգլիան մի վերջին անգամ փորձում էր այս կամ այն կերպ Պաղեստինը պահել իր հսկողության տակ: Այս քայլով Անգլիան լուրջ հարված հասցրեց ԱՄՆ-ի ծրագրերին: Նույն օրը՝ 1948թ. մայիսի 14-ին, Հրեական Ազգային Խորհուրդը՝ կազմված հրեական գործակալության ներկայացուցիչներից, հռչակեց Իսրայելի անկախությունը: Այս ակտը անմիջապես ճանաչվեց ԱՄՆ-ի կողմից:

«ԱՄՆ-ի նախագահ Թրումենը ճանաչեց Իսրայելի անկախությունը դրա հռչակումից 5 րոպե անց»: Թրումենը միաժամանակ խոստացավ ցանկացած քաղաքական և տնտեսական բնույթի օգնություն Իսրայելին, որոնք վերջինիս կարող են պետք գալ մոտակա ամիսներին:

**Եզրակացություն**

Այսպիսով, ընդհանրացնելով՝ կարելի է գալ հետևյալ եզրակացության: ԱՄՆ-ի քաղաքականությունը իսրայելա-պաղեստինյան հակամարտության հանդեպ 1948-1958թթ, ձևավորվում է երկու գործոնների ազդեցության տակ: Առաջին գործոնը ամերիկյան դիվանագիտության ձգտումն էր՝ Լոնդոնի և Փարիզի ազդեցությունը տարածաշրջանում փոխարինել ամերիկյանով:

Երկրորդ գործոնը անմիջականորեն կապված էր տարածաշրջանում ԽՍՀՄ-ի ազդեցության ուժեղացման հետ և նպատակ ուներ ռազ-

մական դաշինքների ստեղծման միջոցով կանխել, հնարավորության դեպքում չեզոքացնել այդ ազդեցությունը: Այդ էր պատճառը, որ ԱՄՆ-ը սկզբից ևեթ աջակցում էր Եգիպտոսի ներկայացրած արաբական երկրների կոլեկտիվ անվտանգության պայմանագրի վավերացմանը՝ Արաբական Լիգայի անդամ 7 երկրների կողմից: ԱՄՆ-ը դրանում տեսնում էր իր գլխավորության ապագայում ստեղծվելիք ռազմական խմբավորման սաղմը: Նմանատիպ ծրագրերի մասն էին կազմում նաև «միջինարևելյան հրամանատարություն» անվանումով ռազմական դաշինք ստեղծելու ամերիկյան փորձերը: ԱՄՆ-ի քաղաքագետները անընդհատ շեշտում էին Արաբական Արևելքի կարևոր նշանակությունը իրենց համար և հայտարարում էին, որ ԱՄՆ-ը աճող հետաքրքրություն է ցուցաբերում մերձավորարևելյան պրոբլեմների նկատմամբ: Մերձավոր Արևելք թափանցելու համար ԱՄՆ-ը օգտագործում էր նաև այն հայեցակետը, որ «Մերձավոր Արևելքի ժողովուրդները չեն վախենում ԱՄՆ-ից, քանի որ գիտեն ԱՄՆ-ի չխառնվելու տրադիցիան և գիտեն, որ ԱՄՆ-ը Մերձավոր Արևելքում տարածքային պահանջներ չունի»: Ընդհանուր առմամբ 1947-1967թթ կարող ենք բնորոշել Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի քաղաքականության կայացման շրջան:

### Օգտագործված գրականության ցանկ


1. Mandate For Palestine, Department Of State,Washigton.D.C,1931.
2. Briscoe R., The Polish Robbinate and Jewish Emigration To Palestine, From Haven to Conquest, Beirut, 1971, p.446.
3. Պրիմակով Ե.Մ., Մի դավադրության պատմություն, Երևան, 1987, էջ 124:
4. Khalidi W.**,** From Haven to Conquest. Readings in Zionosm and the Palestine Problem Until 1948, Beirut, 1971,The Institute for Palestine Studies. 914.p., p.174.
5. Jeffries J. Analysis of The Balfour Declaration, From Haven to Conquest, p.174.
6. Ibid. p 175.
7. From Haven to Conquest, p.647.

8. Barbour N., The White Paper of 1939, From Haven to Conquest, pp.461-474.
9. Ibid.
10. Ibid.
11. Jeffries J. Analysis of The Balfour Declaration, From Haven to Conquest, p.174.
12. Barbour N., The White Paper of 1939, From Haven to Conquest, pp.461-474.
13. Sterling W.F., Palestine 192-23, From Haven to Conquest, p.228.
14. From Haven to Conquest, p.861.
15. Binationalism not Partition, From Haven to Conquest, p.674.
16. Ibid.
17. The Zionist Biltmore Program, 11.05.1942. New York, From Haven to Conquest, p.495.
18. Roosevelt K.,The US and Arab World, From Haven To Conquest, Beirut,1971,p.516.
19. История Дипломатии, М., 1944, т. 3, с. 89-92.
20. Roosevelt K., The US and Arab World, From Haven To Conquest, Beirut, 1971, p.517.
21. Հովհաննիսյան Ն., Արաբական արևելքը ԱՄՆ-ի քաղաքականության մեջ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, h.9, Երևան, 1978, էջ 237-255:
22. Նույն տեղում:
23. Նույն տեղում:
24. Дмитриев Е., Палестинский Узел, к вопросу урегулирования Палестинской Проблемы, М., 1978, с. 18.
25. Roosevelt K., The US and Arab World, From Haven To Conquest, Beirut, 1971, p.516.
26. Department of State, Anglo-American Committee of Inquiry: Report to The US Government and His Majesty's Government in the UK, Washington, 1946.

27. Roosevelt K., The US and Arab World, From Haven To Conquest, Beirut,1971,p.516.
28. From Haven to Conquest, p.696.
29. Muhammad Z.KH., Palestine in The UNO, 1948, From Haven To Conquest, pp.6-23.
30. Հովհաննիսյան Ն., Արաբական արևելքը ԱՄՆ-ի քաղաքականության մեջ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ.9, Երևան,1978, էջ 228:
31. Никитина Г., Государство Израиль, Наука, Мю, 1968 с. 51
32. Там же, с. 51.
33. Report to The General Assembly By The UN Special Committee on Palestine, Official Records of The Second Session of GA, 1947, Supplement #11.
34. Ibid.
35. Հովհաննիսյան Ն., Արաբական արևելքը ԱՄՆ-ի քաղաքականության մեջ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ.9, էջ228:
36. Никитина Г., Государство Израиль, с. 51.
37. Roosevelt K., The Partition of Palestine, A Lesson in Ppressure Politics,The Middle East Journal, II,# 1, 1948, pp.13-16
38. Report To The General Assembly Of The UN Special Committee on Palestine, Official Records Of The Second Session Of GA, 1947, Supplement # 4.
39. Muhammad Z.KH.,Palestine in The UNO, 1948, From Haven To Conquest,pp.6-23.
40. Պրիմակով Ե.Մ., Մի դավադրության պատմություն, էջ, 125:
41. Muhammad Z.KH.,Palestine in The UNO, 1948, pp.6-23.
42. From Haven to Conquest, p. 843.
43. Ibid, p. 597.

44. Звягельская И., Роль военной верхушки в формировании государственной политики Израиля, АН СССР, Институт Востоковедения, с. 35.
45. Никитина Г., Государство Израиль, с. 55.
46. Там же, с. 55.
47. Там же, с. 56.

## ВОЗНИКНОВЕНИЕ ПАЛЕСТИНСКОГО КОНФЛИКТА И ПОЛИТИКА США

**Артак Оганнисян**
Филиал ЕУ в г. Гюмри, к.и.н., доцент

В 21 веке остается нерешенным один из самых запутанных вопросов для мирового сообщества - арабо-израильский конфликт. Возникшая в 1947 году израильско-палестинская проблема, переросла в арабо-израильский конфликт в последующие годы, прямо или косвенно затрагивая почти все страны Ближнего Востока, а также мировые сверхдержавы, имеющие свои стратегические интересы в регионе.

**Ключевые слова.** Палестина, Израиль, Резолюция ООН, Трумэн, Иерусалим, Национальный дом, «План большинства», Декларация Бальфура, Рузвельт, Меморандум Эллинга.

## THE OCCURENCE OF THE PALESTINIAN CONFLICT AND USA POLICY

**Artak Hovhannisyan**
EU, Gyumri Branch, PhD in History, Associate Professor

One of the most difficult issues for the world community in the 21st century, which is the Arab-Israeli conflict- remains unresolved. Dating back to 1947 as an Israeli-Palestinian problem, the conflict escalated into

an Arab-Israeli conflict in subsequent years, directly or indirectly affecting almost all countries in the Middle East, as well as world superpowers with strategic interests in the region.

**Keywords.** Palestine, Israel, UN Resolution, Truman, Jerusalem, National House, Majority Plan, Balfour Declaration, Roosevelt, Elling Memorandum

*Տրվել է տպագրության՝ 17.09.2021թ.*
*Գրախոսվել է՝ 20.11.2021թ.*

# ՆԵՐՀԱՅԵՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԵԹՈԴ

***Հրանուշ Թովմասյան***
*ԲՊՀ, Լեզվաբանության և հաղորդակցման փեսության ամբիոն*
*ԵՀ, Կիրառական լեզվաբանության ամբիոն, բ.գ.դ., դոցենտ*
*anushtovmasyan@yahoo.com, +374 91 483398*

*Հետազոտությունը նվիրված է Հոգելեզվաբանության դասընթացին ներհայեցման մեթոդի կիրառման արդյունավետությանը՝ դասախոսի կողմից նոր թեմայի ներկայացման և ուսանողի կողմից դրա յուրացման համար: Հոդվածում քննարկման առարկա են դարձել ներհայեցման մեթոդի երեք ենթամեթոդների կիրառման առանձնահատկությունները և նոր թեմայի ներկայացման, քննարկման, յուրացման արդյունավետությունը դրանցից յուրաքանչյուրի միջոցով: Ուսումնասիրությունը կատարել ենք տեսական և էմպիրիկ հետազոտական մեթոդներից դիտման-զննման, փորձառական, համեմատության, վերլուծության, համադրության և ինդուկցիայի մեթոդներով: Արդյունքում եկել ենք այն եզրահանգման, որ ներհայեցման մեթոդը Հոգելեզվաբանության դասընթացի շրջանակում կիրառվող ամենաարդյունավետ մեթոդներից է, քանի որ այն գործ ունի գիտակցության բովանդակության բացահայտման հետ, իսկ հոգելեզվաբանության թեմատիկ շրջանակը վերաբերում է գիտակցության բովանդակությանը, առանձնահատկություններին և գործառման օրինաչափություններին:*

***Հիմնաբառեր***. *Ներհայեցում, հետահայեցում, բարձրաձայն մտորելու-արձանագրելու ենթամեթոդ, օրագրի ուսումնասիրման ենթամեթոդ, մեթոդ, ենթամեթոդ:*

Ներհայեցումը հոգեբանության ամենաhին մեթոդներից է, որը հատկապես արդյունավետորեն կիրառվել է 18-19 դդ.: Դրա նպատակը մարդու գիտակցության բովանդակային բաղադրիչների որոնումն է: Բովանդակային բաղադրիչները այն գիտակցական բաղադրատարրերն են, որոնցից կազմված է մարդու հոգեկան ներաշխարհը: Դրանք ժամանակին եղել են մարդու ապրած զգացումները, զգացո-

ղությունները, տպավորությունները և այլն: Ենթադրաբար դրանցից են կազմվում մեր մտքերը և զգացմունքները, ինչպես բառը՝ տառերից, և հատուկ պատրաստված մարդը կարող է զննել իր գիտակցության բովանդակությունը, գտնել գիտակցության բաղադրատարրերը և ապա որոշել, թե ինչպես են դրանք միահյուսվում և ձևավորում մարդու հոգեկան ներաշխարհը:

Երբեմն ժամանակակից հոգեբանները դիտարկում են ներհայեցումը որպես նեղ անձնային ուսումնասիրման մեթոդ՝ զատելով այն փորձառական մեթոդների շարքից: Այսպես Ջոնսոն-Լաիրդը նշում է, որ «Մտածել նշանակում է մտածական գործընթաց ծավալել: Ներհայեցումը չի բացահայտում, թե ինչպես է այդ գործընթացը գործառում: Ուստի այդ գործընթացը անգիտակցական է» (Johnson-Laird 2008: 17): Սակայն 18 դ.-ի վերջում Վ. Վունդթը և Ու. Ջեյմսը (Mandler 2007) մշակեցին ներհայեցման փորձառական մեթոդը, որի միջոցով ուսումնասիրում էին մարդու սուբյեկտիվ ապրումների փոփոխությունները որոշակի խթանի ազդեցության ներքո: Որոշ ժամանակ անց ներհայեցման կիրառելիությունը նվազեց՝ դրա գերանձնային բնույթի պատճառով: Սակայն 20րդ դարում տեղի ունեցավ ներհայեցման մեթոդի վերարժևորում, քանի որ չկար այլ գիտական մեթոդ, որով հնարավոր կլիներ ներթափանցել մարդու հոգեկան ներաշխարհ և ուսումնասիրել այն: Իսկ ներհայեցան մեթոդի անբավարարությունը ստիպեց մշակել դրա ենթամեթոդներ, որոնց միջոցով հնարավոր կլիներ առավել արդյունավետ ներթափանցել մարդու հոգեկան ներաշխարհ: Ներյակումս ներհայեցումը մի քանի ենթամեթոդից կազմված մետաճանաչողական մեթոդ է, որի մասին առավել մանրամասն կխոսենք հաջորդիվ:

Հետաքրքրական է, որ 20րդ դարում ներհայեցման վերարժևորումը պայմանավորված էր ճանաչողական հոգեբանության և գիտելիքի ձևավորման տեսության զարգացմամբ, որի խնդիրն էր ուսումնասիրել մարդու ճանաչողական գործընթացները՝ մի կողմ դնելով գիտակցության զգացական բաղադրատարրերի ձևավորման գործընթացները (Dörner 1979, Ericsson and Simon 1980, 1998, Fellows 1976, Flavell 1976 և ուրիշներ):

Այսպիսով, ներհայեցումը սեփական զգացումների ուսումնասիրման գործընթացն է: Սա նյութի հավաքագրման մեթոդ է, որը սերտորեն կապված է անձի ինքնամտածողության հետ և կապ չունի արտաքին զննման/ դիտման հետ: Ներհայեցման մեթոդը առաջին անգամ կիրառվել է ճանաչողական հոգեբանության մեջ Էրիկսոնի և Սայմոնի կողմից (Erricson and Simon 1980)՝ նյութ հավաքագրելու նպատակով, այն է, թե ինչպես է մարդը ճանաչողության միջոցով մշակում տեղեկությունը: Ըստ Նունանի՝ ներհայեցումը սեփական մտքերի, զգացումների, շարժառիթների, մտածական գործընթացների և մտավոր վիճակների դիտումն ու դրանց շուրջ մտորումն է՝ պարզելու, թե ինչպես են դրանք անդրադառնում մարդու բնավորության վրա (Nunan 1992: 115): Չերին կարծում է, որ ներհայեցումը և՛ անհատի կողմից իր գիտակցության բովանդակության դիտումն ու քննությունն է, և՛ գիտական փորձառական մեթոդ է (Cherry 2018):

Այսպես, ներհայեցում հովանոցային մեթոդի ներքո առկա են երեք ենթամեթոդներ՝ *հետահայեցումը, բարձրաձայն մտորել-արձանագրելը* և *օրագրի ուսումնասիրումը*:

Հետահայեցումը որոշակի իրադարձության մասին նյութի հավաքագրումն է դրա տեղի ունենալուց որոշակի ժամանակ անց, որը թույլ է տալիս հավաստի տեղեկություն ստանալ տեղի ունեցածի վերաբերյալ:

Բարձրաձայն մտորել-արձանագրելու ենթամեթոդը նյութի հավաքագրման մեթոդ է: Այն տեղի է ունենում հետևյալ կերպ. հետազոտողը խնդրում է փորձառության մասնակիցներին բարձրաձայնել իրենց մտքերը, զգացումները, կարծիքը որոշակի առաջադրանք կատարելիս: Մաքեյը և Գասը կարծում են, որ բարձրաձայն մտորելու ենթամեթոդը վեր է հանում, թե ինչպես է մտածում յուրաքանչյուր ուսանող որոշակի խնդիր լուծելիս (Mackey and Gass 2005): Որպես կանոն, նրանք տարբեր կերպ են մտածում ու տարբեր ուղիներ են փնտրում միևնույն խնդրի լուծման համար, բայց գալիս են միևնույն եզրահանգմանը: Նունանը կարծում է, որ կարելի է տեսա/ձայնագրել ուսանողի պատասխանը հետագայում նրա մտածողությունը և ճանաչողությունը ուսումնասիրելու համար (Nunan 1992): Բարձրաձայն մտորել-արձանագրելու ենթամեթոդը թույլ է տալիս հետազոտողին ստանալ առա-

ջին ձեռք տեղեկություն հարցվածի կարճաժամկետ հիշողությունից: Չերիի (Cherry 2018) կարծիքով հարցվածների մտքերի, զգացումների և հիշողությունների շուրջ մտորելը և ուսումնասիրելը նշանակում է ներգրավվել ներհայեցման գործընթացին:

Օրագրի ուսումնասիրումը որոշակի անձի կողմից իր սեփական մտքերի, ապրումների, կենսափորձի, կարևոր իրադարձությունների պարբերական և օբյեկտիվ գրանցումն է որոշակի կաղապար կամ օրինաչափություն դուրս բերելու համար (Nunan 1992, Mackey and Gass 2005, Bailey 2015): Օրագրի ուսումնասիրումը թույլ է տալիս անհատին վեր հանել լեզվի յուրացման իր անձնային առանձնահատկությունները: Օրագրի ուսումնասիրման ենթամեթոդը արձանագրում է օրագիր վարողի լեզու յուրացնելու անհատական պատմությունը. վերանայել նախնական տվյալների բազան, վերհանել կաղապարներ և օրինաչափություններ, մեկնաբանել և քննարկել կարևոր գործոններ: Այն տալիս է արժեքավոր դիտարկումներ լեզու յուրացնելու հասարակական և հոգեբանական գործոնների շուրջ: Դուրս են բերվում այն գործոնները, որոնք ազդում են լեզու յուրացնելու վրա:

Փորձառության, արդյունավետ դասավանդման և նյութի յուրացման նպատակով կիրառել ենք ներհայեցման մեթոդը Հոգելեզվաբանության դասընթացի դասաժամերին Բրյուսովի անվան պետական համալսարանի Կրթության և մասնագիտական մանկավարժության ֆակուլտետի անգլերեն լեզու և գրականություն, ֆրանսերեն լեզու և գրականութուն, գերմաներեն լեզու և գրականություն 4րդ կուրսի ուսանողների շրջանում:

Հետաքրքրական է, որ հոգելեզվաբանության գրեթե բոլոր թեմաները արդյունավետ ընկալելու և ուսանողների ակտիվ ներգրավվածությունը ապահովելու համար անհրաժեշտ է ներհայեցման մեթոդի կիրառում: Ինչո՞վ է սա պայմանավորված: Հոգելեզվաբանության դասընթացի թեմաները՝ լեզվական ունակության ձևավորումը, խոսքի օնտոգենեզը, հաղորդակցական ոչ լեզվական միջոցների հոգեբանական նշանակությունը, լեզվի և մտածողության կապի խնդիրը, տեքստի հոգելեզվաբանական քննությունը, խոսքային գործունեության բաղադրիչները՝ խոսքի ընկալում, հասկացում և ձևավորում և այլն, վե-

րաբերում են մարդու գիտակցության բովանդակության աներևույթ, անտեսանելի երևույթների և բաղադրատարրերի, որոնք այլ մեթոդներով ուսումնասիրել հնարավոր չէ: Փորձառության արդյունքերը փաստում են, որ ուսանողների կողմից նոր թեմայի, տեղեկության ամենալավ և ամենախոր ընկալում տեղի է ունենում, երբ ուսանողը կիրառում է ներհայեցման տարբեր մեթոդներ՝ քննվող նյութը ընկալելու համար իր սեփական կենսափորձը որպես հենք կիրառելու միջոցով:

Հատկանշական է, որ կիրառվել են ներհայեցման բոլոր ենթամեթոդները տարբեր նպատակների համար: Այսպես նոր թեմայի մատուցման, ներկայացման ժամանակ հատկապես արդյունավետ են ներհայեցան մեթոդի հետահայեցում և բարձրաձայն մտորել-արձանագրելու ենթամեթոդները, քանի որ նոր թեման ներկայացնելիս դասախոսի և ուսանողների միջև սկսում է շատ հետաքրքիր բանավեճ, քննարկնող նյութի տվյալների վավերականության հիմնավորում սեփական փորձի՝ հետահայեցման միջոցով, կամ դասախոսի հարցին պատասխանելու, ասածը հիմնավորելու, վարժությամբ առաջադրված մտածական գործընթացի սխեմայի անհատական ներկայացման հիմնավորման համար ուսանողը բարձրաձայն մտորում է՝ վեր հանելով իր մտածական գործընթացների յուրահատկությունը:

Որպես օրինակ՝ ներկայացնենք մեկ դաս Հոգելեզվաբանություն դասընթացից (30.09.2021), որտեղ նյութի յուրացման, քննարկման և ասվածը հիմնավորելու համար արդյունավետորեն կիրառվել է ներհայեցման մեթոդը: Դասի թեման էր «Լեզվական ունակություն. կառուցվածքը և բովանդակությունը»: Դասախոսը ներկայացնում է, որ լեզվական ունակության կառուցվածքը բաղկացած է երեք փոխկապակցված բաղադրիչից՝ լեզվական մեխանիզմ, լեզվակրի լեզվական կառուցվածք և խոսքային մեխանիզմ: Այս բաղադրիչներից լեզվակրի լեզվական կառուցվածքը ներկայացնում է, թե ինչպես են լեզվակիրը և ոչ լեզվակիրը յուրացնում լեզու չորս մակարդակով՝ հնչունային, բառային, քերականական և կարծրատիպային: Հետաքրքրական է, որ լեզվակիրների և ոչ լեզվակիրների շրջանում նշյալ բաղադրիչների ձևավորման գործընթացը պատկերացնելու և ընթացակարգը բացատրելու ու հիմնավորելու համար ուսանողները ակտիվորեն կիրա-

ռում էին հետահայեցման մեթոդը իրենց անձնական կամ ուրիշների լեզվի յուրացման փորձը նկարագրելու համար, և բարձրաձայն մտորելու-արձանագրելու ենթամեթոդը դասագրքի վարժությունների առաջադրանքները վերլուծելիս:

Այսպես, դասախոսը նախ հարցնում է ուսանողներին՝ ինչպես է լեզվակիրը յուրացնում քերականական բաղադրիչը՝ որպես քննարկման մեկնարկային հարց: Որոշակի մտորումներից հետո ուսանողներից մեկը (Մարիա) ներհայեցման միջոցով տալիս է մոտ, բայց ոչ լիարժեք պատասխան, որ լեզվակիրը նույն ձևերն է գեներացնում, օրինակ՝ հոգնակի թվի կազմության համար: Դասախոսի ուղղորդման արդյունքում ուսանողներն ընկալում են, որ լեզվակիրը յուրացնում է քերականությունը կաղապարման միջոցով՝ իր գիտակցության մեջ ձևավորելով քերականական տարբեր կաղապարներ, օրինակ՝ ներկա անորոշ ժամանակի կաղապար, անցյալ կատարյալի կաղապար, հոլովի կաղապար և այլն: Ասվածը հիմնավորելու համար ուսանողները ներհայեցման մեթոդով՝ հետահայեցում և բարձրաձայն մտորել-արձանագրել, ներկայացնում են բազում քերականական կաղապարներ և օրինակներ՝ դրանք հիմնավորելու համար: Նույն տրամաբանությամբ և մեթոդաբանությամբ ներկայացվում և քննարկվում են լեզվական ունակության լեզվակրի լեզվական կառուցվածքի մյուս բաղադրիչները: Օրինակ՝ կարծրատիպային բաղադրիչի քննարկման ժամանակ ուսանողը (Տաթև), հասկանալով բաղադրիչի ձևավորման առանձնահատկությունները լեզվակրի մոտ, ներկայացնում է հայ մշակույթում մահացածի ընտանիքին և մտերիմներին ցավակցելու նպատակով ցավակցության տարբեր ձևեր՝ իրավացիորեն նշելով, որ ցավակցության տարբեր ձևերի ընտրության հարցում նա հենվում է իր մշակութային-կարծրատիպային գիտելիքների վրա: Այսպես նա նշեց, որ «Ցավակցում եմ:/ Ցակակցություններս:» ձևը ընդհանրական է և կիրառելի գրեթե բոլոր նման իրավիճակներում, մինչդեռ «Լույսերի մեջ մնա: Հողը թեթև լինի: Աստված հոգին լուսավորի:» ասույթները կիրառելի են ավելի մտերիմ հարաբերություններ ունեցող մարդկանց շրջանում:

Անդրադառնանք ներհայեցման միջոցով ուսանողների կողմից նույն թեմայի ընկալման, հասկացման և յուրացման գործընթացին ոչ

լեզվակիրների պարագայում: Ուսանողները դասախոսի հարցին, թե ինչպե՞ս եք դուք՝ որպես ոչ լեզվակիր, լեզու սովորող, յուրացնում քերականական բաղադրիչը, իրավացիորեն նշեցին, որ օտար լեզվի կաղապարների յուրացումն իրենց մոտ միջնորդված է մայրենի լեզվով: Նրանք իրենց ասածը հիմնավորեցին հետևյալ օրինակներով, որ քանի որ հայերենում չկա անձնական դերանունների սեռային տարբերակում, իրենք անգլերեն լեզվի յուրացման ժամանակ, հատկապես նախնական շրջանում չեն տարբերակել անգլերենի he և she անձնական դերանունները՝ դրանք կիրառելով մեկը մյուսի փոխարեն: Կարծրատիպային բաղադրիչի քննարկման ժամանակ ուսանողները ներհայեցման միջոցով իրավացիորեն նշեցին, որ այս բաղադրիչի ձևավորմանը խոչընդոտում են երկու գործոն՝ իրական մշակութային միջավայրի բացակայությունը, որտեղ լեզու սովորողը կկարողանար յուրացնել կարծրատիպային իմաստները և մայրենի լեզվի միջնորդությունը: Այսպես, բոլոր նմանատիպ դեպքերում նրանք, փաստորեն, կիրառում են ընդհանրական, չտարբերակված ձևեր օտար լեզվով՝ կարծրատիպային ասույթները/ բառակապակցություններն իրարից չտարբերակելու կամ ընդհանրապես չիմանալու պատճառով: Օրինակ՝ Աիդան ասաց, որ անգլերենում իրենք ցավակցելիս, որպես կանոն կիրառում են, «Rest in Peace» ասույթը՝ այլ ասույթներ չիմանալու պատճառով:

Նշենք, որ ներհայեցման օրագրի ուսումնասիրման ենթամեթոդը Հոգելեզվաբանության դասընթացին արդյունավետորեն կիրառվում է տնային առաջադրանքներ կատարելու ժամանակ: Այսպես, դասախոսը առաջադրել է ուսանողներին ընտրել չորս բաղադրիչներից մեկը և մեկ շաբաթվա ընթացքում օրվա վերջում գրի առնել ամենահիշվածները թե՛ մայրենի, թե՛ օտար լեզուներում, ապա հաջորդ դասին կատարել վերլուծություն: Հետաքրքրական է, որ ուսանողները հատկապես օտար լեզվի սխալների ուսումնասիրման հարցում հանգել էին ճիշտ եզրահանգումների՝ կիրառելով ներհայեցման օրագրի ուսումնասիրման ենթամեթոդը: Բերենք մի օրինակ, ուսանողներից մեկը (Մերի) նշեց, որ նա իր գրառումներից նկատել է, որ նա այդքան էլ ճիշտ չէ արտասանում անգլերենի [ð] հնչյունը, հատկապես the որոշ-

յալ հողում, քանի որ հայերենում չկան միջնատամնային բաղաձայններ:

Այսպես կատարված ուսումնասիրությունը փաստում է, որ ներհայեցման մեթոդը հոգելեզվաբանության և այլ մտածական-ճանաչողական դասընթացների դասավանդման և նոր նյութի յուրացման արդյունավետ մեթոդ է: Սա պայմանավորված է նախ խնդրո առարկայի՝ գիտակցության աներևույթ բնույթով, որը պահանջում է թե՛ դասավանդման, թե՛ նոր թեմայի յուրացման ներհայեցման մեթոդի կիրառում: Հատկանշական է, որ ուսումնասիրության արդյունքների վիճակագրական տվյալների քննության արդյուքնում պարզեցինք, որ նոր թեմայի յուրացման համար լսարանում առավել հաճախադեպ է հետահայեցման (մոտ 70%) և բարձրաձայն մտորելու-արձանագրելու (մոտ 30%) մեթոդը, իսկ տնային առաջադրանքների դեպքում ներհայեցման երեք ենթամեթոդները՝ կախված առաջադրանքի բնույթից:

## Օգտագործված գրականության ցանկ


1. Bailey, K. Conducting Diary Studies. In D., Brown & C., Coombe, (Eds.) The Cambridge Guide to Research in Language Teaching and Learning, 2015: 247-252.
2. Cherry, K. The Everything Psychology Book: Explore the human psyche and understand why we do the things we do Paperback 8, Massachusetts: Adams Media Avon, 2018. Kindle.
3. Dörner, D. Self-reflection and problem solving. In F. Klix. (Ed.), Human and artifcial intelligence. Oxford, UK: Elsevier Science, 1979.
4. Ericsson, K. A., & Simon, H. A. Verbal reports as data. Psychological Review, 87(3), 1980: 215–251. http://dx.doi.org/10.1037/0033-295X.87.3.215.
5. Ericsson, K. A., & Simon, H. A. How to study thinking in everyday life: Contrasting think-aloud protocols with descriptions and explanations of thinking. Mind, Culture, and Activity, 5(3), 1998: 178–186. http://dx.doi.org/10.1207/s15327884mca0503_3.

6. Fellows, B. J. The role of introspection in problem-solving research: A reply to Evans. British Journal of Psychology, 67(4), 1976: 519–520. http://dx.doi.org/10.1111/j.2044-8295.1976.tb01542.x.
7. Flavell, J. H. Metacognitive aspects of problem solving. In L. B. Resnick (Ed.), The nature of intelligence. 1976: 231–235. Hillsdale, NJ: Lawrence Erlbaum.
8. Johnson-Laird, P. M. How we reason. Oxford, UK: Oxford University Press, 2008. http://dx.doi.org/10.1093/acprof:oso/9780199551330.001.0001.
9. Mackey, A. and Gass, S. Second Language Research: Methodology and Design. New Jersey, Mahwah: Lawrence Erlbaum Associates, 2005.
10. Mandler, G. A history of modern experimental psychology: From James and Wundt to cognitive science. Cambridge, MA: MIT Press, 2007.
11. Nunan, D. Research methods in language learning. Cambridge: Cambridge University Press, 1992.


## ИНТРОСПЕКЦИЯ КАК ЭФФЕКТИВНЫЙ МЕТОД ИССЛЕДОВАНИЯ ПСИХОЛИНГВИСТИКИ


**Грануш Товмасян**

ГУ им. В. Брюсова, кафедра Лингвистики и теории коммуникации

ЕУ, кафедра Прикладной лингвистики, д.ф.н, доцент



Статья посвящена изучению эффективности применения метода интроспекции на уроках психолингвистики при объяснении-представлении преподавателем новой темы и при ее усвоении студентами. В статье обсуждаются особенности применения трех подметодов: метода интроспекции и эффективность представления, обсуждения и усвоения новой темы посредством каждого из них. В ходе исследования были использованы теоретико-эмпирические методы исследования, в частности методы наблюдения, научного эксперимента, сравнения, анализа, комбинированно-индукционных методов. По итогам исследования было выявлено, что метод

интроспекции является одним из наиболее эффективных методов, используемых на уроках психолингвистики, поскольку тематика психолингвистики имеет дело с выявлением содержания сознания и особенностей функционирования психических процессов.

**Ключевые слова:** Интроспекция, ретроспекция, подметод рассуждения вслух, подметод дневник самоконтроля, метод, подметод

## INTROSPECTION AS AN EFFECTIVE METHOD OF STUDY OF PSYCHOLINGUISTICS

**Hranush Tovmasyan**
BSU Chair of Linguistics and Theory of Communication
EU, Chair of Applied Linguistics, Doctor of Philological Sciences,
Associate Professor

The article dwells upon the effectiveness of the application of the method of introspection for comprehension and assimilation of new topics by students at lessons of Psycholinguistics. The article discusses the features of the use of three sub-methods of the introspection method and the effectiveness of presentation, discussion and assimilation of a new topic through each of them. The study has been carried out by the theoretical-empirical research methods of observation, scientific experiment, comparison, analysis, synthesis, and induction. The outcomes of the research have singled out that the introspection method is one of the most effective methods used at lessons of psycholinguistics, since the scope of psycholinguistics deals with the identification of the content of the consciousness and the characteristics of the functioning of mental processes.

**Keywords:** Introspection, retrospection, think-aloud protocol sub-method, self-inspection diary sub-method, method, sub-method

*Ընդունվել է տպագրության՝ 24.10.2021*
*Գրախոսվել է՝ 09.12.2021*

# ENGLISH INTERJECTIONS IN THE CONTEXT OF EMOTIONAL LITERACY

***Gaiane Muradyan***
*YSU, Chair of English Philology*
*Doctor of Philology, Professor*
*g.murad@ysu.am, +374 91 372207*
***Kristine Harutyunyan***
*PhD in Philology, Associate professor*
*YSU, Chair of English Philology*
*charoutyunyan@gmail.com, +374 77 087700*

*The 21st century is an era in which communication in English has become an important factor in determining the development of the society and its place in modern information civilization. And in this, very important is mastery of emotional literacy (EL), including mastery of English interjections. Thus, the paper will focus on the important role of teaching English interjections to students in the educational practice of learning English as a foreign language. Therefore, we will consider the most important features, strategies and skills related to the use of interjections as a tool of teaching emotional literacy aiming at not only developing academic performance but also increasing self- and social awareness and the ability of choice of appropriate emotional/behavioral responses in given situations.*

***Keywords:*** *emotional literacy/intelligence, cultural literacy, interjections, learning community.*

## Introduction

Many profound and essential experiences in students' lives are saturated with emotions. To name a few, students experience joy after accomplishing a difficult task, grief and despair at a loss of opportunity, anger at biased or improper treatment, and anxiety before taking a task. A student promoted into honors may feel pride, excitement, and nervousness; while another one may feel sadness and rejection among a

multitude of other emotions. Positive emotions usually arise when children progress toward an aim, whereas negative emotions such as anger, despair usually arise when children have difficulty accomplishing a goal. The role of emotions is very important in the classroom, and emotional literacy (EL) - still a relatively new and growing area in education - matters a lot if we want to achieve an enthusiastic and supportive learning community where the sense of belonging is strong, each pupil is valued for a unique contribution, independence, creativity, and full engagement in deep learning experiences are encouraged.

Great is the role of the interjection in teaching emotional literacy to all learners of English, and mastery of both EL and the interjections will result in perceiving and understanding the oral and written forms of the interjection; enhancing divergent thinking and imagination; facilitating careful attention to detail; recognizing and using emotions to enhance thinking, label emotions with words appropriately, manage one's own and others' emotions, make smart decisions.

**Emotional Literacy in the Classroom**

Emotional literacy/intelligence means understanding and managing emotions, expressing empathy, overcoming emotional problems, overall - facilitating the feeling of community. Only when learners feel emotionally secure in their environment, will they be able to overcome challenges and risks needed to learn. Both young and adult learning communities need recognition and praise for what is correct, and for finding solutions through collaboration with the teacher and each other.

Emotional literacy, first of all, encompasses cultural literacy (CL) which, in its turn, shapes social life. Culture - part of which are the interjections - constitutes a way of life and impacts the understanding, displaying and experiencing of emotions. Matthews [7] argues that social and emotional interactions take place in a cultural context (different cultures may interpret the same social context in different ways) which provides guidelines and rules to help understand, interpret, and express various emotions. This is most productively done through knowing native

interjections and learning the foreign ones, i.e. in our case learning English emotional culture is closely connected with learning interjections (more than other parts of speech).

To encourage EL in the classroom, it is important for the teacher to rely on personal responsibility and create a positive classroom environment by not making fun of whatever seems foreign and unusual (in our case the English interjections); encouraging creativity (by acting different emotional situations with the learners), or trying to find innovative ways to teach to express the right feelings in the right situations.

The mastery of EL, i.e. comprehension of the language of emotions, will enhance divergent thinking and imagination; develop academic performance, increase self- and social awareness, promote personal growth; improve decision-making; facilitate social skills; help formulate emotions with words and interpret materials in English; foster the choice of appropriate emotional/behavioral responses in given situations; and finally - enable the application of the obtained cultural literacy in oral and written communication.

Thus, EL in education presupposes the learning community to feel with and for others and resolve personal conflicts and social difficulties productively using words instead of destructive physical force.

In their discussions about interjections as constituting or not constituting a separate part of speech or presenting verbal or non-verbal element of communication - linguists have expressed different opinions (Jespersen 1921; Bloomfield 1933; Trager 1964; Goffman 1981; Wilkins 1992; Wharton 2003; Wierzbicka 2009a, 2009b). However, the notion that interjections are either special words such as *aha, ehe, sh/hush, ouch, wow, gee, oh, oho, oops, yuck, ugh,* etc. (primary interjections), phrases often of peculiar construction such as *dear me, goodness gracious, oh dear, thank you, good-bye,* etc. (secondary interjections) and even longer utterances (*You, son of a bitch!, Yeah, alright, why not?*) that express emotions - cannot be argued. Whatever theoretical approaches about the interjection, it is a fact that learners of a language need to be taught interjections, their uses, their meanings typical of the culture. From this

point of view, the pragmatic and discursive aspects in teaching interjections to the learning community of English - are the more important ones. In other words, what is important in teaching interjections, is viewing interjections as pragmatic and discursive markers - a subset of items that encode speaker attitudes and communicative intentions, and are context-bound [5, p. 387].

Thus, the teacher's role is to provide a safe but at the same time challenging learning environment where the students are free to grow academically, socially and emotionally while being taught the English interjections - the most emotional part of English language and culture.

In teaching emotional literacy and emotional culture through the interjection, the teacher often encounters unexpected behavior. To avoid this s/he should check and examine beforehand what interjections are appropriate to teach in the given cultural context. Therefore different techniques are created for developing both EL and EC through the interjection. The strategies include not only teaching the pronunciation, meaning and respective displays of English interjections through audio and video materials but also through implementing cross-cultural learning activities which involve native usages and comparisons if interjections of both the native and the foreign languages. Activities can also focus on broader principles, like the basic emotions all human beings share, regardless of background, ethnic origin and manners of display. For example, the emotion of fear and its expression can be interpreted through similar or the same interjection in both languages. This principle can be used in many classroom situations.

It is essential for the teacher to understand the purpose of various instructional methods, particularly those that tend to foster thought- and discovery oriented mindset in the classroom, otherwise, students not equipped with the ability of conceptual knowledge of emotions - will under-perform because "language not only enters into the categorization process, but it also directs the development of emotional category knowledge" [1, p.37] and will require the integration of a rational categorization system. Hence it seems highly likely that interjections -

linguistic expressions of emotions and attitudes, can play a more important role in the rational developmental processes than verbal labels. For example, *yuck/ugh*, *wow, ouch* express more than just saying *I am disgusted*, *I am surprised* or *I am in pain*. Often a certain interjection may express a blend of different emotional shades of meaning. *Wow,* for example, expresses positive evaluation - surprise blended with being impressed at some knowledge/experience. If used negatively, it will sound odd, unless something sarcastic is meant. All such instances clarified to the learner via explaining the sequential structure, meaning and usage of the given interjection, playing sound and video modes (from natural speaker interaction) in and out of context and discussing potential cross-cultural differences between the mother tongue and the English variety - are good strategies. Book Units Teacher (2020) proposes the following methods of dealing with interjections for the achievement of ideal results in the process of education: the interjection alphabet (naming interjections for each letter of the alphabet); comic strip (a video or image featuring this or that emotion and the respective interjection); sentence strip (sentences describing the emotion and expecting the respective interjection to be uttered); emotion display (physically showing the emotion and expecting its characterization by an interjection); the emotion game (teams choosing a slip of paper and creating a sentence that uses an interjection which corresponds with the given emotion); BrainPop (watching a short YouTube video and writing out the interjections).

All the mentioned techniques help develop recognition, concentration, critical thinking, judgment, memory, goal setting, patience, a sense of achievement, team-work, and finally - emotional literacy at large.

**Conclusion**

If some years ago verbal means of communication were the main means to transmit information and knowledge, now the role of emotive/feeling words play a crucial role in sending and receiving information to promote the learning community. In this context,

developing both emotional literacy and emotional culture of the foreign language through the interjection includes not only teaching the pronunciation, meaning and respective displays of English interjections through audio and video materials but through implementing cross-cultural learning activities involving different teaching methods. Therefore, learning English interjections is a contribution to the challenging environment of learning emotional literacy. Mastery of emotional literacy, learning and understanding emotions as a part of it - helps learners develop a good command of English, communicate more effectively, handle anxiety-arousing situations. As a general result, knowing well what emotional literacy is - contributes to the development of self-esteem, self-control and development of numerous social skills.

**References:**

1. Barrett, L. F. *Solving the emotion paradox: Categorization and the experience of emotion*. Personality and Social Psychology Review, 2006, 10(1), pp. 20–46.
2. Bloomfield, L. *Language*. New York: Holt.,1933.
3. *Book Units Teacher*. https://www.scholastic.com/teachers/lessons-and-ideas/>. Accessed 09 March 2020.
4. Goffman, E. *Forms of Talk*. Oxford: Blackwell,1981.
5. Fraser, B. *An approach to discourse markers*. Journal of Pragmatics, Vol. 14, 1990, pp. 383-395.
6. Jespersen, O. *Language: its nature, development and origin*. London: George Allen, 1921.
7. Matthews, B. E*ngaging Education. Developing Emotional Literacy, Equity and Co-education*. McGraw Hill: Open University Press, 2006.
8. Trager, G. *Paralanguage: A first approximation*. in: Dell Hymes (ed.), Language in culture and society, pp. 274-288. New York: Harper and Row, 1964.
9. Wharton, T. *Interjections, language, and the showing/saying continuum*. Pragmatics & Cognition 11, 2003, pp. 39–91.

10. Wierzbicka, A. *Language and metalanguage: Key issues in emotion research.* Emotion Review, 1(1), 2009a, pp. 3–14.
11. Wierzbicka, A. *Overcoming Anglocentrism in emotion research.* Emotion Review, 1(1), 2009b, pp. 21-23.
12. Wilkins, D. *Interjections as deictics.* Journal of Pragmatics, 18, 1999, pp. 119–158.

## ԱՆԳԼԵՐԵՆԻ ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԳԱՅԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

**Գայանե Մուրադյան**
ԵՊՀ, Անգլիական բանասիրության ամբիոն, բ.գ. դ., պրոֆեսոր
**Քրիստինե Հարությունյան**
ԵՊՀ, Անգլիական բանասիրության ամբիոն, բ.գ. թ., դոցենտ

21-րդ դարում անգլերեն լեզվով հաղորդակցությունը դարձել է կարևոր գործոն հասարակության զարգացման համար և վճռում է նրա դիրքը ժամանակակից տեղեկատվական քաղաքակրթության մեջ: Այս ամենում իր ուրույն տեղն ունի զգայական գրագիտության տիրապետումը, այդ թվում՝ անգլերենի ձայնարկությունների իմացությունը: Սույն հոդվածում ընգծվում է անգլերենի ձայնարկությունների ուսուցման դերի կարևորությունը անգլերենը որպես օտար լեզու ուսումնասիրողների լսարանում: Այսպիսով, մենք կդիտարկենք կարևորագույն հատկանիշները, ռազմավարությունները և հմտությունները, որոնք փոխկապակցված են ձայնարկությունների՝ որպես զգայական գրագիտություն դասավանդելու միջոցի հետ՝ նպատակ ունենալով ոչ միայն ընդլայնել ակադեմիական գիտելիքները, այլ նաև զարգացնել հասարակական իրազեկումը, ինչպես նաև համապատասխան իրավիճակներում զգայական պատասխաններ ներկայացնելիս՝ ճիշտ ընտրություն կատարելու ընդունակությունը:

**Հիմնաբառեր.** Զգայական գրագիտություն, մշակութային գրագիտություն, ձայնարկություններ, ուսանող համայնք:

# МЕЖДОМЕТИЯ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА В КОНТЕКСТЕ ЭМОЦИОНАЛЬНОЙ ГРАМОТНОСТИ.

**Гаяне Мурадян**
ЕГУ, кафедра Английской филологии, д.ф.н., профессор
**Кристине Арутюнян**
ЕГУ, кафедра Английской филологии, к.ф.н., доцент

В 21-ом веке коммуникация на английском языке стала важнейшим фактором в становлении развития общества и определении его места в современной информационной политике. В данном контексте особенно важную роль приобретает владение эмоциональной грамотностью, включая знание английских междометий. В данной статье подчеркивается важность преподавания междометий при изучении английского как иностранного языка. В статье рассматриваются наиболее важные особенности, стратегии и навыки, связанные с употреблением междометий, как инструмента преподавания эмоциональной грамотности, имеющее целью не только развитие академических знаний, но и увеличение социальной осведомленности и способности выбора соответствующих эмоциональных ответов в заданных ситуациях.

**Ключевые слова**: эмоциональная грамотность, культурная грамотность, междометия, изучающее сообщество.

*Ընդունվել է փպագրության՝ 15.09.2021*
*Գրախոսվել է՝ 09.12.2021*

# DEFORMATION OF IDIOMS IN ENGLISH NURSERY LITERATURE

***Kristine Harutyunyan***
*YSU, Chair of English Philology*
*Ph. D. in Philology, Associate professor*
*charoutyunyan@gmail.com, +374 77 087700*
***Anna Karapetyan***
*YSU, Chair of English Philology*
*Ph.D. in Philology*
*5510anna@mail.ru, +374 94 414080*

*The present article is devoted to the study of the deformation of idioms in English nursery literature.*

*Idioms or phraseological units are usually formed on different occasion and after remaining in speech for some time, are fixed in dictionaries. But the given state doesn't often last for a long time. In certain speech situations, the idioms which have somewhat lost their imaginative character, are presented anew. Thus, as a result, we have the deformed variation of the given idiom.*

*The material used for the study of deformation of idioms in nursery literature includes "Alice's Adventures in Wonderland" and "Through the Looking-glass" by L. Carroll, "The Marvelous Land of Oz" by F. Baum, "The Chronicles of Narnia" by C. S. Lewis and the series of the novel "Harry Potter" by J. K. Rowling.*

***Keywords:*** *idioms, deformation, nursery literature, substitution, modification, distribution.*

## Introduction

The increased interest in the research and the study of idiom deformation in fiction resulted in the distinction between deformation of idioms in adults' literature and those in nursery literature.

By nursery literature we understand fiction, drama and poetry intended for and used by children. Contemporary literature has given an

important role to these works. The writers of nursery literature have great freedom to choose the necessary means for creating the world they would like. This freedom includes deforming original idioms to suit the contextual situation or the linguistic environment. Deformation of idioms in nursery literature not only creates a sense of reality of the world created by the author, but also pursues the aim of fixing idioms in the little readers' minds. Today idioms constitute an important research topic. It might be explained by the fact that scientists have come to realize that idioms form a noticeable part of our linguistic knowledge and are necessary features of any language. At times it is even claimed that "people do not speak in words, they speak in phrasemes" [2, p.169].

According to David Crystal idioms are "sequences of words that are semantically and often syntactically restricted and they may function as single units. The meanings of the separate words can't be combined in order to produce the meaning of idiomatic expressions as a whole unity" [1, p.18].

**Idiom Variation in Children's Literature**

Deformation of idioms done in the so-called literature for the grown-ups presupposes that the author functions rather consciously and is able to feel the word play or the joke which serve as the basis of the conscientious deformation of the idiom. In such deformations the potential meaning of the components of the idiom is realized. Even more, the components of the idiom appear independently and have the meanings, which don't depend on the other constituents of the idiom

But there exists another type of deformation which is done unintentionally. This type of deformation occurs when the character is not educated and can't make a proper use of idioms. This type of deformation in phraseology is known as "nursery" deformation.

The difference that exists between "nursery" deformation of idioms and the usual one doesn't mean that the child cannot treat idioms. Just the opposite, children "play idioms up". The real difference lies in the conscientious stylistic use or naïve interpretation of the native language word-groups that are difficult to understand.

The different means of deformation of idioms in children's literature may result in two main types of deformation:

1. Deformation which results in semantic breaking of idioms without breaking its structure.
2. Deformation where the semantic or stylistic changes of the idiom are accompanied by alternations of its structure.

In the first type, the following variations are possible:

a. The idiom is played up and understood semantically in a different way, in other words, it may be understood in its literal meaning as a free word-group.

The authors of nursery fiction use such "play on words" when the situation or the context may suggest the change of meaning of the idiom. The authors make use of pun as a stylistic device by taking into account children's wish to explain the meaning of difficult word-groups and to find explanations based on logics for non-understandable idioms. We may see such an example in Baum's "The Marvellous Land of Oz":

One of the characters speaks of Jack with irritation saying that Jack always "loses his head" while meeting a little obstacle:

*"I'll have nothing more to do with that Pumpkinhead," declared the Sawhorse, viciously. "He loses his head too easily to suit me." [3, p. 117]*

The idiom *"to lose one's head"* has the idea of losing control and not acting calmly. In the given context the semantic unity of this idiom is broken by the fact that the reader already knows Jack's peculiar manner of losing his pumpkin head which is badly fixed to his shoulders by his creator. From a larger context, we learn that he, in fact, loses his head all the time. In the little readers' conscience, very naturally, the literal and the idiomatic meanings of the idiom *"to lose one's head"* are fixed.

In another example taken from the same book Scare crow, which for the absence of straw is stuffed with money, is often being warned that he might fall from height and break. And so, one of the characters notices:

*"It wouldn't matter," remarked the educated Woddlebug, "He can't get broke so long as he is stuffed with money."[3,p.156]*

The meaning of the idiom *"to get broke"* is to go bankrupt and here as the Scare crow is stuffed with money, it can't go bankrupt.

Thus, we may make a conclusion that in nursery literature the authors use the homonymy of literal and figurative meanings of idioms in an attempt to fix the idiomatic meaning of the phrase in little readers' conscience.

b. There are cases in children's literature when the situation or the context doesn't suggest the change of meaning of the idiom but the fact that children have a kind of particular thinking leads them to the literal understanding of such word- groups.

This is one of the most frequent types of nursery idiom deformation. The case in point can be illustrated with the following examples:

*"I dare say you never even spoke to Time!"*

*"Perhaps not," Alice cautiously replied, "but I know I have <u>to beat time</u> when I learn music."*

*"Ah! That accounts for it," said the Hatter. "He won't stand beating. Now if you only kept in good terms with him he'd do almost anything you liked with the clock."[4, p.101]*

In this quotation the character uses the idiom *"to beat time"*. The meaning of this idiom is to demonstrate the tempo and rhythm of a piece of music via metronomic actions of the body, such as tapping one's feet, clapping one's hands, nodding one's head, etc. Yet, in the given example, the Hatter treats this idiom as a free word-group. Consequently, it is understood literally and its semantic unity is deteriorated.

The following example is taken from L. Carroll's "Through the Looking-glass":

*Alice attended to all these directions, and explained, as well as she could, that she <u>had lost her way</u>. "I don't know what you mean by your way," said the Queen: "all the ways about here belong to me – but why did you come out here at all?" she added in a kinder tone. [5, p.28]*

The meaning of the idiom *"to lose one's way"* is to become lost or not to be able to find the right course forward. However, in the above-

mentioned example the Queen doesn't accept the idiom in its semantic unity which leads her to its literal understanding.

In all the examples deformation of idioms results in a semantic breaking of idioms while the structure is not broken. However, the most frequent type of deformation is the one when the semantic or stylistic changes inside the idiom are accompanied by changes in the structure. The several methods used for this kind of deformation of idioms in nursery literature are substitution, modification, distribution and conjunction of different idioms.

*It was such a romp as no one has ever had except in Narnia; and whether it was more like playing with a thunderstorm or playing with a kitten Lucy could never make up her mind. [6, p.69]*

In this extract from C. Lewis' "The Chronicles of Narnia" "playing with a thunderstorm" is a deformed variant of the common idiom *"to play with fire"* which is said to mean that the way in which one acts is very dangerous and risk-taking. The substitution of the component "fire" with "thunderstorm" in the deformed variant emphasizes the sense of danger expressed by the original idiom. Later the introduction of the idiom "or playing with a kitten" creates a contradiction with the deformed idiom which makes the semantic impact of the idiom more and more powerful.

*Peter thought to himself that unless they had some stroke of luck they would soon be glad to eat eggs raw, but he didn't see any point in saying this out loud. [6, p.84]*

In the given example the author makes use of the idiom *"a stroke of luck"* substituting the indefinite article "a" with the pronoun "some". In this context the indefinite pronoun "some" is used synonymously with the indefinite article "a": it is used to express an unspecified amount. This brings us to the conclusion that here the author's use of "some" instead of "a" serves to the enforcement of the semantic colouring of the idiom.

Substitution as a means of deformation in nursery literature is abundantly used by J. K. Rowling in her "Harry Potter" series. Let us consider the most interesting cases found in this source.

*Harry opened his eyes. He was still in the library; the Invisibility Cloak had slipped off his head as he'd slept, and the side of his face was stuck to the pages of Where There's a Wand, There's a Way.[9, p.425]*

*"Where there's a wand, there's a way"* is the name of the book that the main character of the novel reads. The title of this book is a deformation of an English proverb *"Where there's a will, there's a way"* which is used to mean that in spite of the difficulties you can find a way to achieve what you want if you are determined enough. The deformation is achieved through the means of substitution of the component "will" with "wand". Wand is a tool for performing magic, and the use of "wand" instead of "will" is more rational in this wizarding context.

Modification of idioms is another common form of deformation of idioms in nursery literature. An example of modification of idioms is found in L. Carroll's "Alice's Adventures in Wonderland".

*"I've a right to think," said Alice sharply, for she was beginning to feel a little worried. "Just about as much right," said the Duchess, "as pigs have to fly..."[11, p. 135]*

Here one of the characters of the tale, namely the Duchess, makes use of the idiom *"pigs might fly"* which is used when you think that there is no chance at all of something happening. In her speech, though, the Duchess substitutes the component "might" with "have to". This is only one part of the deformation observed in the structure of the idiom under consideration. Apart from substitution, modification as a means of deformation is used as well. The phraseological unit "just about as much right as" is introduced in the structure of the original idiom. The goal of such a deformation is to emphasize the impossibility of whatever is stated previously.

*"I'm not saying his heart isn't in the right place," said Professor McGonagall grudgingly, "but you can't pretend he's not careless. He does tend - - what was that?"[9,p. 10]*

The given quotation is from J. K. Rowling's novel "Harry Potter and the Philosopher's Stone" where the character of Professor McGonagall speaks about another character called Hagrid. In his speech he makes use

of the deformed idiom *"his heart isn't in the right place"*. The original idiom is *"one's heart is in the right place"* which means that one is well intentioned, even if he/she does not always do the right thing. The introduction of the negative particle "not" changes the meaning of the original idiom and creates just the opposite impact: if his heart is not in the right place, his intentions are not good.

Very few cases of distribution as a type of deformation of idioms in nursery literature are observed.

*"Please, would you tell me," said Alice, a little timidly, for she was not quite sure whether it was good manners for her to speak first, "why your cat grins like that?""It's a Cheshire cat," said the Duchess, "and that's why, Pig!"[4, p.82]*

The original idiom is *"to grin like a Cheshire cat"*. The idiom expresses the meaning of smiling broadly, especially in a self-satisfied way. Here the author segregates the idiom under consideration so that one of its component parts occurs in the question asked by one character, while the other part occurs in the answer given by another character. It is obvious that the original idiom is divided into two parts by distribution.

As far as we can conclude, the goal that the author pursues with the use of such a deformation is not as much stylistic as educational. Carroll gives the description of the grinning cat before introducing the idiom and then he introduces the idiom through asking and answering a question. As a result, we have both the idiom and its explanation in this part of the tale. This is a great way of teaching idioms to children.

Let us consider another example from the same source:

*"In that direction," the Cat said waving its right paw round, "lives a Hatter, and in that direction," waving the other paw, "lives the March hare. Visit either you like, they're both mad!"[5, p. 90]*

In this example two cases of idiom deformation are observed. The author uses both distribution and conjunction of two different idioms. The two original idioms are: *"mad as a Hatter"* and *"mad as a March hare"*. Both of them mean extremely silly or stupid. The component parts of the original idioms are separated by distribution so that the component parts "the March

hare" and "the Hatter" are found in different clauses and are connected through the clause "they're both mad". It is obvious that such kind of deformation is based on semantic motivation, particularly on periphrasis. The conjunction of these two idioms does not make any changes in their meaning only due to the fact that the original idioms are synonymous.

**Conclusion**

The present article is devoted to the study of deformation of idioms. Research that has been carried out, allowed us to confirm that deformed idioms are important components of any language and one of the most significant components of any work of literature, and works of nursery literature, in particular. There does not exist any fixed word combination for children. Their language is always new and fresh, their speech is always in constant development. The fact that in nursery literature the deformation of idioms takes place more frequently than in adults' literature may be accounted for by this.

However, we should not forget that literature for children is being written by adults who have to possess the ability of seeing the fixed word-combinations common for everyday speech.

Substitution is the most common and widely used type of deformation in nursery literature. Modification of idioms is also common. As for distribution and conjunction of different idioms, few cases are found in nursery literature.

**References:**

1. Crystal D. *Introducing Linguistics*, Penguin, 1994.
2. Melchuk I. A. *The Russian Language in the Meaning- Text Perspective*. Wiener Slawistischer Almanach/Shkola "Yaziki russkoy kultury" Vienne/Moscow,1995.

**Sources of Data:**

3. Baum, F. *Oz: The Complete Collection*, New York, 2013.

4. Carroll, L. *Alice's Adventures in Wonderland*, Chicago, 2001.
5. Carroll, L. *Through the Looking Glass*, London, 2001.
6. Lewis C. S., *The Chronicles of Narnia*, USA, 2001.
7. Rowling J. K., *Harry Potter and the Deathly Hallows*, USA, 2007.
8. Rowling J. K., *Harry Potter and the Goblet of Fire*, USA, 2000.
9. Rowling J. K., *Harry Potter and the Half Blood Prince*, USA, 2005.
10. Rowling J. K., *Harry Potter and the Order of Phoenix*, USA, 2003.
11. Rowling J. K., *Harry Potter and the Sorcerer's Stone*, USA, 2001.

**Internet sources:**

12. Idioms and Phraseological Units in Translation. Deformation of Idioms as a Stylistic Device, available at <http://linguists-konspect.org> (accessed 17 September 2020)
13. The Nature and Classification of Idioms, available at <http://shodhganga.inflibnet.ac.in> (accessed 3 September 2020)

## ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԱՂԱՎԱՂՈՒՄ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

**Քրիստինե Հարությունյան**
ԵՊՀ, Անգլիական բանասիրության ամբիոն, բ.գ.թ., դոցենտ
**Աննա Կարապետյան**
ԵՊՀ, Անգլիական բանասիրության ամբիոն, բ.գ.թ.

Սույն հոդվածը նվիրված է անգլիական մանկական գրականության մեջ դարձվածքների աղավաղման ուսումնասիրությանը: Դարձվածքները սովորաբար ստեղծվում են տարբեր առիթներով և մնալով լեզվում որոշակի ժամանակահատված՝ ներառվում են բառարաններում: Սակայն այս կարգավիճակը կարող է շատ երկար չտևել: Որոշ խոսքային իրավիճակներում դարձվածքները կարող են հանդես գալ նորովի: Արդյունքում մենք կարող ենք հանդիպել դարձվածքների աղավաղված տարբերակների:

Սույն հոդվածի համար որպես ուսումնասիրության նյութ են ծառայել Լ. Քերրոլի, Ֆ. Բոմի, Ք.Ս. Լյուիսի և Ջ. Ռոուլինգի ստեղծագործությունները:

**Հիմնաբառեր.** դարձվածքներ, աղավաղում, մանկական գրականություն, փոխարինում, ձևափոխում, բաշխում:

## ИСКАЖЕНИЕ ИДИОМ В АНГЛИЙСКОЙ ДЕТСКОЙ ЛИТЕРАТУРЕ

**Кристине Арутюнян**
ЕГУ, кафедра Английской филологии, к.ф.н., доцент
**Анна Карапетян**
ЕГУ, кафедра Английской филологии, к.ф.н.

Данная статья посвящена изучению искажения идиом в английской детской литературе.

Идиомы или фразеологизмы в основном создаются в различных ситуациях и оставаясь в языке в течении определенного промежутка времени, фиксируются в словарях. Но данный статус может длиться недолго. В определенных речевых ситуациях идиомы могут предстать для нас по-новому. В результате, мы получаем искаженные варианты идиом.

Материалом для данного исследования послужили произведения Л. Кэролл, Ф. Баума, С. Льюиса и Дж. Роулинг.

**Ключевые слова:** идиомы, искажение, детская литература, замещение, модификация, распределение.

*Ընդունվել է փպագրության՝ 15.09.2021*
*Գրախոսվել է՝ 09.12.2021*

# ԳՈՐԾԱՐԱՐ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՏԵՐՄԻՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ ԽԹԱՆՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐ

***Արուսյակ Իվանյան***
*ԵՀ, Կիրառական լեզվաբանության ամբիոն, հայցորդ,*
*arusyak.ivanyan.1981@mail.ru, +374 98 965646*

*Սույն հոդվածի նպատակն է վեր հանել կենդանիների անունների օգտագործման առանձնահատկություններն ու իմաստաբանական հատկանիշները գործարար անգլերենում: Բազմաթիվ կենդանիների անուններ փոխանցվում են գործարար անգլերեն տրանստերմինոլոգիայի արդյունքում՝ հանդիսանալով տնտեսական և գիտակրթական արդյունավետ գործոններ: Տրանստերմինոլոգիան այն լեզվաբանական գործընթացն է, երբ մեկ գիտակարգից մյուս գիտակարգ են ներթափանցում տերմիններ և ադապտացվում: Հոդվածի ուսումնասիրության աղբյուր են հանդիսացել հայտնի լեզվաբանների հեղինակավոր աշխատություններ, հոդվածներ, գրքեր, առցանց բառարաններ:*

***Հիմնաբառեր.*** *տրանստերմինոլոգիա, տրանստերմիններ, տնտեսական գործոն, գիտակրթական գործոն, փոխաբերություն, հայեցակարգ:*

Կյանքի արագընթաց հորձանուտում իր մեծ դերակատարումն ունի տեղեկատվական տեխնոլոգիաների և գիտությունների համընթաց զարգացումը: Զարգացման այսպիսի աննախադեպ տեմպերը իրենց հետ բերում են մրցակցային այնպիսի ընթացակարգեր, որոնք ակնառու են գրեթե ամենուր, թե՛ իրական կյանքում, և թե՛ համացանցային իրողություններում: Գիտության զարգացումը դարձել է դարի պահանջը, քանի որ նրա զարգացման համար առկա են բոլոր պայմանները: Համացանցային իրականությունը տալիս է անսահմանափակ հնարավոր միջոցներն ու գործիքները, որոնք արագընթաց զարգացումը դարձնում են հասանելի բոլոր առումներով: Գոյություն ունի տեղեկատվական այնպիսի հարուստ համակարգ, որն ինքնին հզորագույն

աղբյուր է հանդիսանում զարգացման, շարժման և մրցակցության դաշտի ընդլայնման համար: Գործարար աշխարհը դասվում է առաջնային ոլորտների շարքին, որն օրըստօրե վերելք է ապրում ու նոր դռներ բացում գործարար ոլորտում գործունեություն ծավալողների համար: Գործարար ոլորտը մրցակցային այն համակարգն է, որի արդյունքում ծնվում ու իրագործվում են նոր ստեղծարար մտքեր ու գաղափարներ: Գործարար աշխարհ ասելով հասկանում ենք ողջ գործարար ընդերքը, որի մեջ են մտնում ֆինանսատնտեսական համակարգը, կառավարումը, մարքեթինգը, հաշվապահությունը, աուդիտը, բանկային գործը, արժեթղթերի շուկան և այլն: Գաղտնիք չէ, որ անգլերենը համարվում է միջազգային լեզու և այն գործարար աշխարհում համար առաջին շարժիչ ուժն է: Ժամանակակից աշխարհում գործարար անգլերենը նախ և առաջ կարևոր է հաղորդակցական նպատակների համար: Գործարարները պետք է կարողանան հաղորդակցվել անգլերեն լեզվով բազմազան հաճախորդների, գնորդների, վաճառողների, մատակարարների և այլ գործընկերների հետ [4, էջ 2]: Ներկայումս գործարար անգլերենը ունի շատ մեծ պահանջարկ ամբողջ աշխարհում, քանի որ այն ներկայանում է որպես շահույթ ապահովող առաջնակարգ գործոն: Այն ներկայացնում է բազմազան ոլորտներ ինչպիսիք են՝ հաշվապահությունը, առևտուրը, էլեկտրոնային առևտուրը, տնտեսագիտությունը, ֆինանսները, մարդկային ռեսուրսները, տեղեկատվական տեխնոլոգիաները, իրավաբանությունը, արտադրությունը, մարքեթինգը, արդյունաբերությունը, արժեթղթերի շուկան, առևտուրը, տրանսպորտը և գործարար հաղորդակցական ներկայացումները, բանակցությունները, հանդիպումները, նամակագրությունն ու զեկույցները [4, էջ 2]: Սույն հոդվածում փորձենք ուսումնասիրել գործարար անգլերենի տերմինոլոգիան որպես տնտեսական և գիտակրթական գործոններ, քանզի գործարար անգլերենում յուրաքանչյուր ճիշտ ընտրված տերմին կարող է մեծ եկամուտ բերել այս կամ այն ընկերությանը կամ երկրին բավականին կարճ ժամկետներում: Գործարար անգլերենը դիտվում է որպես «անգլերենը հատուկ կարիքների համար» ենթաճյուղ (ESP), որը միտված է բարելավելու մասնագիտական գիտելիքները, հմտությունները, դիրքորոշում-

ները ինչու չէ նաև սովորողների վարքագիծը: Բարձրագույն ուսումնական հաստատություններում գործարար անգլերենի դասավանդումը շատ կարևոր է այն առումով, որ ուսանողը կարողանա հասկանալ գործարար աշխարհն ընդհանուր առմամբ, օրինակ՝ ինչպես հարաբերություններ կերտել հաճախորդի հետ և բավարարել նրա կարիքները, ինչպիսի հասարակական, քաղաքական և տնտեսական բանակցություններ վարել, վերլուծել զեկույցներ բանակցությունների և հարցազրույցների համար, հեռախոսային ինչպիսի խոսույթ վարել և որ ամենակարևորն է՝ ինչպիսի հմտություններ ձևավորել վաճառք, մարքեթինգ, ֆինանսատնտեսական շահավետ գործունեություն իրականացնելու համար: Շահավետ հաղորդակցություն ապահովելու համար, և՛ գործարար ոլորտում աշխատողները, և՛ թե ուսանողները պետք է տիրապետեն գործարար անգլերենի հատուկ բառապաշարին: Սա վերաբերում է ոչ միայն ֆիզիկական կամ ավանդական, այլ նաև համացանցային գործարար ոլորտին: Իրական աշխարհը բաղկացած է մարդկանցից, որոնք ապրում են երկրագնդի տարբեր հատվածներում, պատկանում են հասարակական որոշակի շերտերի, կրում են յուրօրինակ լեզվամտածողություն, աշխարհայացք և ունեն իրենց մայրենի լեզուն: Համացանցային աշխարհը ևս լի է մարդկանցով, որոնք ստեղծելով իրենց թվային հաշիվները, իրականացնում են որոշակի նպատակ: Մտքի ու նպատակի փոխանցումը իրական կյանքից դեպի համացանց իրականացվում է շատ արագ՝ շնորհիվ տարատեսակ տեղեկատվական տեխնոլոգիաների: Մտքի ու նպատակի իրագործման հիմքում է, որ ձևավորվում են հայեցակարգեր, որոնք արտահայտվում են որոշակի տերմինների միջոցով: Վերջին շրջանում գործարար անգլերենում նկատվում են այնպիսի տերմիններ, արտահայտություններ ու լեզվական միավորներ, որոնք առանձնահատուկ ուսումնասիրության կարիք ունեն: Այդ տերմինները ներթափանցում են բոլորովին այլ գիտակարգերից և իրենց կիրառությունը գտնում գործարար անգլերենում: Խոսքը գնում է ***փրանսփերմինոլոգիայի*** մասին, որը դիտվում է որպես մի գիտական ապարատից մյուս գիտական ապարատ փոխանցվող երևույթ [15, էջ 10]: Տերմինն ունի իր ծագումնաբանությունը տնտեսագիտության մեջ, որն օգտագործվում է

ներկայացնելու մի խումբ մարդկանց կամ շահառուների հետաքրքրությունները: Շահառուները դրանք այն մարդիկ են, ովքեր ներդրումներ են կատարում գործարար միջավայրում շահույթ ստանալու համար: Իսկ այդպիսի շահույթ նրանք ստանում են համագործակցության շնորհիվ: Թերևս սա է հիմնական պատճառը, որ տերմինի ձևավորման գործում մեծ դերակատարում ունեն շահառուները: Կան երկու տիպի շահառուներ՝ ներքին և արտաքին: Ներքին շահառուներ են համարվում հաճախորդները, աշխատողները, կառավարիչները: Արտաքին շահառուներ են համարվում կառավարությունը, օրենսդիր մարմինները, հետաքրքրված անձինք և լրատվական դաշտը: Կառավարության անդամները կարող են ճշգրիտ օրենքներ մշակել կոնկրետ երկրում լեզվի մակարդակը բարեփոխելու համար: Ինչ վերաբերում է տնտեսական ոլորտին, ապա պետք է հավելել, որ բաժնետերերը համարվում են տերմինաբանության ձևավորման սկզբնաղբյուրն ու որոշողը [16]: Տրանստերմինոլոգիայի արդյունքում առաջանում են մի շարք իմաստաբանական փոփոխություններ՝ փոխաբերական, փոխանվանական, համանունների և հոմանիշների տեսքով: Շատ գիտնականների ուսումնասիրությունները թույլ են տալիս փաստել, որ փոխաբերությունը գործարար անգլերենի անբաժանելի մաս է կազմում հատկապես ճանաչողական լեզվաբանության դիտանկյունից: Սա չի ենթադրում միայն գործարար բառապաշարի ուսումնասիրություն և խմբավորում, այլ այն թե ինչպես են այդ տերմինները ազդում ճանաչողական իրականության վրա և գործարարների մտքում առաջացնում հայեցակարգային գաղափարներ [11, էջ 105]:

Մեր օրերում գործարար անգլերենի գրավոր և բանավոր խոսույթում և համացանցային տիրույթում հաճախակի ենք հանդիպում կենդանիների անուններ, որոնք օգտագործվում են տարբեր իմաստներով՝ փոխաբերական և փոխանվանական: Կենդանիների անունների այսպիսի ներթափանցումը ժամանակակից գործարար անգլերեն կատարվում է տրանստերմինոլոգիայի հետևանքով: Հետևաբար հարց է առաջանում, թե ինչու և ինչ մոտիվացիայի արդյունքում են նրանք փոխանցվում գործարար ոլորտ: Խնդիրն այն է, որ գործարար աշխարհի մրցակցային իսկա դաշտում շահառուները փորձում են տարբերվել և

դուրս մղվել մրցակցային դաշտից և ավելի թրենդային երևալու համար ստեղծում են տերմիններ, որոնք բարձրացնում են իրենց ընկերության հեղինակությունը: Սիլասկին առանձնացնում է ***մարդիկ կենդանիներ*** են և ***ինսփիփուփները կենդանիներ*** են փոխաբերական և փոխանվանական ճյուղերը, որոնք արտահայտում են տարբեր հայեցակարգային համակարգեր: Մարդիկ կենդանիներ են փոխաբերության ժամանակ կենդանիների մի շարք հատկանիշներ վերագրվում են մարդկանց որպես թիրախային տիրույթներ: Հեղինակը կարծում է, որ կենդանիների փոխաբերությունը տնտեսական և գործարար աշխարհում պայմանավորված է կոնկրետ մարդկային և անկենդան երևույթների հայեցակարգերով [14, էջ 512]: Հայեցակարգը մտքի այն տարրն է կամ մտային կառուցվածքը, որն արտահայտում է մի շարք օբյեկտների ամբողջականությունը: Հայեցակարգերը բաղկացած են մի շարք հատկանիշներից, որոնք բնութագրում են յուրաքանչյուր առարկա: Հասկացությունները հիմք են հանդիսանում թե՛ տերմինների տեսության, թե՛ արհեստական բանականության, ճանաչողական գիտության այն ճյուղի համար, որը զբաղվում է փորձագիտական համակարգերի նախագծմամբ և ստեղծմամբ [3, էջ 42]: Ինչպես նշում են Լակոֆն ու Ջոնսոնը, «մարդկային հայեցակարգային համակարգը փոխաբերականորեն է կառուցված և սահմանված»: Հետևաբար, լեզվաբանական արտահայտությունները հնարավոր են հենց այն պատճառով, որ անձի հայեցկարգային համակարգում փոխաբերություններ կան [12, էջ 6]: Քննարկենք մի շարք օրինակներ, որոնք շատ արդիական են գործարար անգլերենում՝

***Purple cow*** - «Մանուշակագույն կով» արտահայտության հեղինակն ամերիկացի հայտնի գրող, գործարար, խոսնակ Սեթ Գոդինն է: Նա իր «Purple Cow» գրքում ներկայացնում է մարքեթինգի ևս մեկ տեսակ (P, purple cow), որն ըստ նրա նորարություն և հեղափոխություն է առաջացնում մարքեթինգի բնագավառում: Հեղինակի նպատակն է՝ մանուշակագույն կովի փոխաբերությունն օգտագործելով, մարքեթինգի ոլորտում ներդրում ունենալ և այն դարձնել հետաքրքիր ու ուշագրավ (remarkable): Գրքում կա ևս մեկ օրինակ՝ շագանակագույն կով (brown cow) արտահայտությունը, որին հանդիպում ենք հաճախակի

գյուղ գնալիս [6, էջ 2]: Փոխաբերական իմաստով դրանք այն գովազդներն են, որոնք միանման են և շատ ձանձրալի: Մանուշակագույն կովի փոխաբերությունը միտված է գործարար աշխարհը դարձնել ուշագրավ, այսինքն՝ հանրային բոլոր շերտերին հետաքրքիր ու հասանելի, իսկ շագանակագույն կովերը ասոցացվում են ձանձրույթի հետ, որը ոչնչով չի նպաստում կյանքի որակի բարձրացմանը:

***Ostrich effect*** – «Ջայլամի երևույթը» տերմինի շրջանառության համահեղինակներն են Գալայն ու Սադեն: Տերմինը լայնորեն կիրառվում է վարքային տնտեսագիտության մեջ և կապվում է հիմնականում ֆինանսական ռիսկերի հետ: Հայտնի լեգենդի համաձայն ջայլամը հակված է միշտ խուսափել ռիսկային իրավիճակներից և որպես ինքնապաշտպանական միջոց գլուխը թաքցնում է գետնի տակ, կարծես չի տեսնում որևէ խնդիր: Այս համատեքստում նրանք ի նկատի ունեն այն, որ որոշ ներդրողներ խուսափում են ռիսկային ֆինանսական իրավիճակներից՝ ձևացնելով թե դրանք գոյություն չունեն [4, էջ 2744]: Սիլասկին իր աշխատության մեջ նշում է, որ կենդանիներին բնորոշ դիրքորոշումները, ինչպես օրինակ՝ շրջահայաց, անխոհեմ կամ ագահ վարքագծային դրսևորումները, բնութագրում են ներդրողներին որպես թիրախային տիրույթներ [14, էջ 569]: Գոյություն ունի նաև ***meerkat effect*** տրանստերմինը, որին անդրադարձել են մի շարք գիտնականներ՝ Ղերզին, Դանիելը, Սթյուարտը, Հաիսլին, Այտոնը իրենց համահեղինակային հոդվածում, “The meerkat effect: Personality and market returns affect investors’ portfolio monitoring behavior”: Ըստ նրանց ի տարբերություն ջայլամի երևույթի՝ «սուրկատի երևույթին» վերաբերող ներդրողները գերարագ են և զգաստ նույնիսկ ամենաբարդ խնդիրների ժամանակ և կարողանում են վերահսկել իրենց ընկերություններն ու տվյալները [5, էջ 2]:

***Butterfly effect*** – «Թիթեռնիկի երևույթը» բավականին տարածված տրանստերմին է համաշխարհային գործարար անգլերենում, մասնավորապես՝ համաշխարհային շուկայում: Տերմինի հեղինակ է համարվում Է. Լորենզը, որն էլ առաջին անգամ այն կիրառեց 1972թ. “Predictability: Does the Flap of a Butterfly’s Wings in Brazil Set Off a Tornado in Texas?” գրքում: Է. Լորենզը մասնագիտությամբ մաթեմա-

տիկոս էր և օդերևութաբան: Տերմինի հիմքում ընկած են բազմաթիվ գիտական ապացույցներ: Հեղինակը գիտափորձ կատարելիս նկատեց, որ եղանակային կանխատեսումների համար կիրառվող գծային մոդելներում թերություններ կան և հայտնաբերեց այդ թերությունները շտկող մեխանիզմ համակարգչային ծրագրում: Նա նկատեց, որ պարզ համակարգերը քիչ փոփոխականներով կարող են բարդ և անկանխատեսելի վարքագիծ դրսևորել: Նա ապացուցեց, որ նույնիսկ ամենաորոշիչ համակարգերն ունեն իրենց կանխատեսելիության սահմանները [13, էջ 13]: Այսպիսով՝ «թիթեռնիկի երևույթի» ժամանակ, թվացյալ կայուն իրավիճակը կարող է ենթարկվել փոքր ազդեցությունների և վերափոխվել, սակայն այդ համակարգի գործունեության կանխատեսելիությունը քիչ հավանական է: Տերմինը հետագայում կիրառվեց «մաթեմատիկա», «քիմիա», «հասարակագիտություն» գիտակարգերում: Որպես տրանստերմին այն այժմ լայնորեն կիրառվում է գործարար անգլերենում, հատկապես մարքեթինգի բնագավառում: Համաշխարհայնացման հետևանքով խիստ մրցակցային իրավիճակ ստեղծվեց ոչ միայն համաշխարհային շուկայում, այլ նաև տեղային շուկայում (local market): Ամբողջ աշխարհում առաջ եկան տարբեր ընկերություններ և ապրանքներ, որոնց արդյունքում ստեղծվեց քաոսային իրավիճակ համաշխարհային և տեղային շուկաների համար, քանի որ տեղային շուկաները նույնպես փորձում են գնալ համաշխարհայնացման տեմպերով՝ արագ աճ ապահովել և համապատասխան տեղ զբաղեցնել շուկայում: Սակայն այսպիսի միտումը կարող է հանգեցնել քաոսի, քանի որ գոյություն ունեն բազմազան ընկերություններ և ապրանքներ շուկայում, որոնք փորձում են նույնականացվել: Սպառողի մոտ այսպիսի բազմազանությունը կարող է շփոթմունք առաջացնել: Ցանկացած ընկերություն, եթե ուզում է շուկայական մրցակցային քաոսում կայուն դիրք ապահովել, ապա պետք է ստեղծի տարբերվող ապրանք, որն ընկերությունը ուշագրավ կդարձնի և սպառողին նկատելի կլինի: Պրոֆեսոր Ռաջագոպալն առաջին անգամ «թիթեռնիկի երևույթ» տերմինն օգտագործեց իր “The butterfly effect in competitive markets” գրքում, որտեղ ներկայացվում է, թե ինչպես կարելի է շուկայում փոքր քայլերով հասնել մեծ արդյունքների: Թիթեռ-

նիկի երևույթը հենց այն փոքր քայլն է, որը կարող է բերել մեծ եկամուտներ ընկերությանը [13, էջ 14]:

***Fishbone diagram*** - 1960թ որակի վերահսկման վիճակագիր ճապոնացի Քաորու Իշիկավան ստեղծեց “Ishikawa diagram” կամ “fishbone diagram” ***գ***ծապատկերը, որը կիրառվում էր նավաշինության արդյունաբերության մեջ որակի վերահսկման համար [9, էջ 2]: Հետագայում տերմինը լայն կիրառում ստացավ տարբեր գիտական համակարգերում, մասնավորապես՝ գործարար անգլերենում: Տերմինն անվանվել է ձկան անունով քանի, որ ինքնին ունի ձկան տեսք՝ արտահայտված պարզ գծերով: Այն երբեմն համարվում է պատճառահետևանքային գծապատկեր (cause and effect), քանի որ ցույց է տալիս հատուկ իրավիճակների պատճառները: «Ձկնոսկրի գծապատկերի» նպատակն է վերծանել ներկա խնդիրները հետագա խնդիրներից խուսափելու համար: Գծապատկերը նման է ձկան կմախքի, որը ներկայացնում է խնդրի պատճառները, իսկ վերջնական արդյունքը դրանից խուսափելու համար ներկայացվում է գանգում: Իլին և Գիոկոիուն իրենց “Application of Fishbone Diagram to Determine the Risk of an Event with Multiple Causes” աշխատության մեջ շատ մեծ կարևորություն են տալիս «ձկնոսկրի գծապատկերին» ռիսկերի նույնականացման փուլերը վերլուծելիս: Հեղինակները գտնում են, որ գծապատկերը շատ լավ մեթոդ է նաև համընդհանուր ռիսկերը գնահատելու և կանխատեսելու համար [7, էջ 20]:

***Queen bee role*** - 2018թ. Միքաելովիչը հրատարակեց իր գիրքը «Clockwork: Design Your Business to Run Itself», որում մանրամասնորեն ներկայացնում է թագուհի մեղվի դերը: Հեղինակը գրքում անդրադառնում է այն ձեռնարկություններին, որոնք նոր են սկսում ընդլայնել իրենց գործունեությունը, սակայն հիմնադիրներն իրենց անփորձությամբ կանխում են այն: Այս տեսանկյունից ելնելով՝ հեղինակն առաջին անգամ կիրառում է «թագուհի մեղու» և «չորս շաբաթվա արձակուրդ» հասկացությունները: «Թագուհի մեղվի» հայեցակարգը հեղինակը վերցրել է հաշվի առնելով նրա դերը մեղվի փեթակում: Ձու դնելու դերը շատ կարևոր է և մյուս մեղուները օգնում են նրան այդ հարցում: Երբ նեկտար հավաքելիս թագուհի մեղուն տաքանում է, այդ

ժամանակ մյուս մեղուները նրան սատարելով սառեցնում են: Այս փոխաբերությունն առաջ բերելով՝ հեղինակը փորձում է օգնել ձեռնարկատերերին կենտրոնանալ սույն հայեցակարգի վրա և, այն կիրառելով ընկերությունում, ֆինանսական մեծ եկամուտներ բերել: Այսինքն՝ ձեռնարկատերերը ոչ թե պետք է առաջնորդվեն միայն որոշումներ կայացնելով, այլև՝ նախագծելով, խորհրդակցելով գործընկերների հետ: «Չորս շաբաթվա արձակուրդ» հայեցակարգում նա ընդգրկում է չորս ընթացակարգեր՝ անել, որոշել, պատվիրել և նախագծել “4Ds: doing, deciding, delegating, and designing”: Հեղինակը խորհուրդ է տալիս առաջին հերթին սահմանել թագուհի մեղվի դերը այսինքն՝ նախագծել, պլանավորել, հետո նոր որոշել ընկերության կարիքներն ու եկամտաբերությունը [12, էջ 5]:

***Giraffe money*** - Ջարվիսն իր “Giraffe Money” գրքում առաջին անգամ կիրառում է «ընձուղտ» և «զեբր» տերմինները: Նա կիրառում է «ընձուղտ»-ի և «զեբր»-ի փոխաբերությունները՝ արմատական փոփոխության լծակներ առաջարկելով շահառուներին: Գրքում ներկայացված յոթ ընթացակարգերը ելակետեր են ներկայացնում շահառուներին, թե ինչպես կարելի է աճել և դառնալ ֆինանսապես անկախ: Այդ նպատակին հասնելու համար նա առաջարկում է լինել ընձուղտների նման: Երկար ժամանակ Ամազոնում ուսումնասիրելով ընձուղտների վարքագիծը՝ հեղինակը նկատում է, որ բոլոր կենդանիների շարքում միայն նա է, որ դրսևորում է կամայական դրական վարքագիծ: Դա տեսնելով՝ նա որոշում է որպես բրենդ օգտագործել ընձուղտի փոխաբերությունը գործարար աշխարհում: Նա առաջարկում է գործարարներին ընձուղտի նման կամայականություն դրսևորել, վիզը երկար պահելով միշտ նոր հնարավորություններ փնտրել և փոփոխություններ մտցնել գործարար աշխարհում: Նա համեմատություն է անցկացնում ընձուղտի և զեբրի միջև: Նախ և առաջ նրանք տարբերվում են հասակով: Գրքում, հասակ ասելով, հեղինակը նկատի ունի գումարի չափը, որին տիրապետում է շահառուն: Եթե շահառուն շատ գումար է վաստակում, ապա նշանակում է նա ընձուղտ է: Երկրորդը, որով տարբերվում են իրարից ընձուղտն ու զեբրը, դա «աչքի քննությունն» է (eye exam), որն ինքնին կյանքի ու գործի նկատմամբ քո դի-

տակետն է: Վայրի բնության մեջ զեբրը խոտ արածելիս գլուխը միշտ ցած է իջեցնում, իսկ ընձուղտը՝ հակառակը՝ սնվում է ծառերի և բարձր թփերի տերևներով: Փոխաբերական իմաստով ընձուղտները միշտ տեսնում են իրենց առջև ընկած հեռանկարները, հնարավորությունները: Եթե մտածելակերպով բաժնետերը առաջ է գործընկերներից, տարբերվում է նրանցից, գործում է այլ կերպ, ապա դա հենց իր հաջողության գրավականն է [8, էջ 3]:

Կանադացի գրող, գործարար Բրաունն իր «***Wealthing like Rabbits***» գրքում կիրառում է նապաստակի փոխաբերությունը և ներկայացնում անձնական ֆինանսներ կառուցելու մի շարք ընթացակարգեր՝ օրինակ ինչպես սկսել սեփական գործ, կատարել խնայողություններ, ընդլայնել սեփական բյուջեն հետագայում ավելի շուտ թոշակի անցնելու համար: Այդ առումով շատ հետաքրքրական է նապաստակի փոխաբերության օգտագործումը գրքում: Նապաստակը շատ արագ է վազում և բազմանում է կարճ ժամանակում: Այս հատկանիշները վերագրվում են սեփական գործ սկսելուն, օրինակ՝ արագ բազմացումը ասոցացվում է խնայողություններ կատարելու և դրանք բազմապատկելու հետ [1, էջ 12]:

Այսպիսով՝ վերոնշյալ տրանստերմինների իմաստաբանական վերլուծությունը թույլ է տալիս գալ հետևյալ եզրահանգումների՝

- Տրանստերմինոլոգիայի հետևանքով գործարար անգլերեն են փոխանցվում կենդանիների անուններ, որոնք ստեղծում են հատուկ հայեցակարգային համակարգեր, տեսություններ: Այդ տեսությունները մեծ արդյունավետություն կարող են ապահովել թե՛ տնտեսության խթանման համար, և թե՛ գիտակրթական համատեքստում:
- Որպես տնտեսական արդյունավետության գործոններ՝ կենդանիների անունները ներկայացնում են ֆինանսատնտեսական այնպիսի ընթացակարգեր, որոնք նպաստում են մարքեթինգի, կառավարման, ֆինանսների, ռիսկերի գնահատման և շուկայական ռազմավարության մեխանիզմների բարելավմանը: Վերոնշյալ օրինակներում յուրաքանչյուր կենդանական տրանստերմին ներկայացնում է գործարար ոլորտը վարելու ռազմավարություն, որը փորձում է հաղթահարել գործարար աշխարհում կատարվող մրցակցային անկառավարելի իրավիճակը: Կեն-

դանական տրանստերմինները հանդիսանում են նաև բրենդային տերմիններ, որոնք հաճախորդների մոտ առաջացնում են հետաքրքրություն: Մարդու ճանաչողական գիտակցության մեջ այդպիսի հետաքրքրությունը դարձնում է նրան արդյունավետ հաճախորդ համապատասխան ընկերության համար: Շահավետ հաճախորդը հենց այն նպատակն է, որն իրականացնում է ընկերության եկամուտի վերջնարդյունքը:

- Որպես գիտակրթական գործոններ կենդանական տրանստերմինները կարող են կիրառվել դասավանդման նպատակներով: Գործարար անգլերենի ուսուցումը հարկավոր է զուգակցել ոչ միայն դասագրքերով, այլ նաև մասնագիտական գրքերով, հոդվածներով, որոնցում ընգրկված են տրանստերմինները: Յուրաքանչյուր տրանստերմինի հիմքում ընկած է տնտեսական այնպիսի տեսություն, որը կարող է նպաստել ուսանողների մոտ մասնագիտական բառապաշարի ընդլայնմանը, տնտեսական մտածողության զարգացմանն ու անձնական գործ սկսելու, ֆինանսները վերահսկելու, բանակցություններ վարելու պատրաստակամությանը, հաղորդակցական հմտությունների ամրապնդմանը:
- Կենդանիների անունները կարող են լինել ինչպես ժարգոնային, այնպես էլ ոչ ժարգոնային տրանստերմիններ: Ոչ ժարգոնային տրանստերմինները հաճախակի հանդիպում ենք մասնագիտական գրքերում, որոնք հիմնականում գրական ժանրի են և լայնորեն կիրառվում են գործարար անգլերենում, իսկ ժարգոնային տրանստերմինները պաշտոնական կիրառելիություն առայժմ չունեն և հաճախակի հանդիպում ենք համացանցի տարբեր կայքերում: Այս փաստարկը ևս մեկ անգամ թույլ է տալիս ենթադրելու հանրային շերտերի տարանջատման միտումը, որով բնորոշվում են տարբեր անհատների լեզվամտածողության մակարդակներն ու մտադրությունները:
- Բերված օրինակներում ներկայացված կենդանիների անունները կրում են իմաստաբանական ամբողջական փոփոխություններ: Նրանք ունեն փոխաբերական կան փոխանվանական իմաստներ: Կառուցվածքային փոփոխություններն այս պարագայում քիչ նկատելի են, բայց ակնառու կերպով ընգծվում է իմաստի ընդլայնման գործընթացը, որը վերածվում է գիտական հայեցակարգի: Բաղադրիչային ա-

ռումով հաճախակի հանդիպում ենք գոյական, գոյական + գոյական, ածական + գոյական կառույցների: Հայտնի է, որ գոյականն այն խոսքի մասն է, որն արտահայտում է հայեցակարգեր:

• Կենդանական տրանստերմիններն ընդգրկում են ***կենդանիների փոխաբերություն***: Տերմինի փոխարինումը կենդանու անունով արդեն նկատելի դարձնելու միտում ունի: Մարդը և կենդանին ունեն բազմաթիվ տարբերություններ և բնության մեջ ունեն իրենց առավելությունները որպես առանձին տիրույթներ: Մարդն առավել է կենդանուց մտածելու, երևակայելու, երազելու, խոսելու, ունակություններով: Մարդը բնության մեջ միատեսակ է, իսկ կենդանիները բազմատեսակ, չնայած որ մարդը ևս կենդանի է համարվում: Մարդն ունի վարքագծային իրեն բնորոշ հատկանիշները, որոնք բոլորի մոտ գրեթե նույնն են, իսկ կենդանիների բազմազանության մեջ առկա են բազում վարքագծային դրսևորումներ: Նույն իրավիճակը վերաբերում է նաև գործարար աշխարհին: Եթե կիրառենք «***մարդը գործարար աշխարհն է***» փոխաբերությունը, ապա կտեսնենք թե ինչքան միօրինակ և անհետաքրքիր է դառնում գործարար աշխարհը, քանի որ մարդուն հատուկ են սահմանափակ վարքագծային հատկանիշներ, որոնք իրավիճակները ավելի պատկերավոր ներկայացնելու և, որ ամենակարևորն է, տարբերվելու համար խթան չեն հանդիսանում: Կենդանիների տարատեսակ վարքագծային հատկանիշները բնության մեջ, ժամանակի և տարածության միջակայքում ունեն իրենց նշանակությունը և կարևոր են մարդու կյանքում, քանի որ ապահովում են բնության ներդաշնակությունը և միևնույն ժամանակ բազմազանությունը: Թերևս այս հանգամանքն է, որ թույլ է տալիս մարդկանց և անհատներին միօրինակությունից դուրս գալու համար կիրառել կենդանիների անուններն իրենց բնորոշ վարքագծային հատկանիշներով: Կենդանիների վարքագծային դրսևորումները դրանք հենց այն ընթացակարգերն են, որոնք պետք է լինեն ճիշտ ընտրված, մշակված և հաշվարկված: Այսպիսով՝ «***կենդանիների փոխաբերությունը***» որպես տրանստերմինոլոգիայի դրսևորում, նպաստում է գործարար աշխարհի տարբեր շերտերում կոնկրետ գործարար նպատակների արդյունավետ իրագործմանը:

# ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## Օգտագործված գրականության ցանկ


1. Brown R. R., Wealthing like Rabbits-An Original and Occasionally Hilarious Introduction to the World of Personal Finance, Redford Enterprises, 2014
2. Cabre M. T., Terminology, Theory, methods and applications, John Benjamins Publishing Company Amsterdam/Philadelphia
3. Chandra Sekhar Rao V., English for Business and Management, Journal for Research Scholars and Professionals of English Language Teaching, ISSN:2456-8104, Issue 2, Vol. 1, 2017
4. Galai D., Sade O., The "Ostrich Effect" and the Relationship between the Liquidity and the Yields of Financial Assets, The University of Chicago Press, The Journal of Business, Vol. 79, No. 5 (September 2006), pp. 2741 - 2759, https://www.jstor.org/stable/10.1086/505250
5. Gherzi S., Daniel E., Stewart N., Haisley E., Ayton P., The meerkat effect: Personality and market returns affect investors' portfolio monitoring behavior, Journal of Economic Behavior & Organization, G Model JEBO-3405; No. Of Pages 15, 2014
6. Godin S., Purple Cow, Transform Your Business By Being Remarkable, Electronic edition: February 2004
7. Ilie G. and. Ciocoiu C. N, Application Of Fishbone Diagram To Determine The Risk Of An Event With Multiple Causes, Bucharest Academy of Economic Studies, Knowledge Management Research & Practice· January 2010, https://www.researchgate.net/publication/46567642
8. Jarvis C., Giraffe Money: See Better Paths to Elevated Wealth, 2020
9. Kheovichai B., Metaphor in Business English, Department of English, Faculty of Arts, Silpakorn University, Thailand Corresponding author: barameek436@gmail.com
10. Lakoff G., Johnsen M., Metaphors We Line In, London: The university of Chicago press, 2003

11. Mackey J. B, Bear, Bull, Wolf, Eagle Markets and Multi-method Investing, 4/20/2018 www.4tfg.com/bear-bull-wolf-eagle
12. Michalowicz M., Clockwork: Design Your Business to Run Itself, 2018
13. Rajagopal, The Butterfly Effect in Competitive Markets, Driving Small Changes for Large Differences, EGADE Business School, ITESM Mexico City and Visiting Professor, Boston University, Boston, MA, 2015
14. Silaski N., Animal metaphors in some business-related terms in English, 13 (1), 565-576, 2011
15. Васильевна Р. Т., Специфика процесса транстерминологизации в отраслевой терминосистеме: На материале русской и английской терминологии правоведения, 2001 https://www.dissercat.com/content/spetsifika-protsessa-transterminologizatsii-v-otraslevoi-terminosisteme-na-materiale-russkoi
16. Https://www.termnet.org/downloads/english/projects/IFAP/pres_drame_term_stand.pdf

## USAGE OF ANIMAL TRANSTERMS IN BUSINESS ENGLISH AS PROMOTING FACTORS IN ECONOMIC AND EDUCATIONAL DOMAINS

**Arusyak Ivanyan**
EU, Chair of Applied Linguistics, Researcher

The purpose of the present article is to highlight the properties and semantic features of the usage of animal terms in Business English. Many animal terms inflow into Business English as a result of transterminologization as effective economic and educational factors. Transterminology is the linguistic process when terms of one science migrate to another one and adapt.

**Keywords:** transterminologization, transterms, economic factor, educational factor, metaphor, concept.

# ИСПОЛЬЗОВАНИЕ ТРАНСТЕРМИНОВ ЖИВОТНЫХ В ДЕЛОВОМ АНГЛИЙСКОМ КАК ПРОДВИГАЮЩИЙ ФАКТОР ЭКОНОМИЧЕСКОЙ И НАУЧНО-ОБРАЗОВАТЕЛЬНОЙ СФЕР

**Арусяк Иванян**
ЕУ, кафедра Прикладной лингвистики, соискатель

Целью данной статьи – является анализ особенностей и семантики использования названий животных в деловом английском. В результате транстерминологии имена многих животных используются в деловом английском языке, это служит эффективным экономическим и научно-образовательным фактором. Транстерминология - это лингвистический процесс, при котором термины переходят из одной дисциплины в другую и адаптируются.

***Ключевые слова:*** транстерминология, транстермины, экономический фактор, научно-образовательный фактор, метафора, концепт.

*Ընդունվել է փպագրության՝ 01.11.2021*
*Գրախոսվել է՝ 09.12.2021*

# ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

***Արուսյակ Գևորգյան***
*ԵՀ, Հոգեբանության ամբիոն*
*gevorgyanarusyak-6@aspu.am, +374 77 072000*

*Իրավապահ համակարգը, մասնավորապես ՀՀ ոստիկանությունը, բարդ և բազմաշերտ է իրենում՝ ներառված ենթակառույցներով, որոնցում իրականացվում են տարբեր գործառույթներ՝ օպերատիվ, կրթական, կազմակերպչական և այլն, հետևաբար դրանցում մարդկային ռեսուրսների կառավարման յուրահատկությունները պետք է ուսումնասիրվեն համապատասխան ենթակառույցների աշխատակիցների ներգրավմամբ:*

*Հոդվածում ներկայացվում են ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների աշխատակիցների պատկերացումները և առաջարկությունները կառավարման գործընթացի յուրահատկությունների վերաբերյալ՝ կոնստրուկտիվ կառավարման սոցիալ-հոգեբանական խնդիրների բացահայտման նպատակով:*

***Հիմնաբառեր.*** *Մարդկային ռեսուրսների կառավարում, իրավապահ մարմիններ, աշխատանքի արդյունավետություն, միջանձնային փոխհարաբերություններ, հոգեբանական մթնոլորտ:*

Աշխարհի տարբեր երկրներում աշխատակիցների կառավարման գործընթացում ղեկավարները բախվում են մի շարք խնդիրների: Մասնավորապես, առկա են սոցիալ-հոգեբանական խնդիրներ, ինչպիսիք են մոտիվացիան, աշխատանքային գործընթացում աշխատողների միջև հարաբերությունները, կոնֆլիկտները, իշխանության ձգտումը և դրա ազդեցությունը անձնակազմի կառավարման վրա և այլն [5]: Այս ամենի հետ կապված՝ հատկանշական են արտասահմանյան հեղինակներից անձնակազմի կառավարման 2021 թվականի ուսումնասիրություններից Դ.Վ. Ռուսեցկայայի «Մասնագիտական

գործունեության մեջ իրավապահ մարմինների աշխատակիցների բացասական հոգեկան վիճակների հոգեբանական ուղղման առանձնահատկությունները» [3], որտեղ ուսումնասիրության նպատակն էր գտնել և զարգացնել հոգեբանական շտկման արդյունավետ միջոցներ՝ հոգեկան բացասական վիճակների համար, որոնք առաջանում են իրավապահ մարմինների աշխատակիցների մասնագիտական գործունեության ընթացքում, Ե.Վ. Սաունինի «Իրավապահ մարմինների աշխատակիցների հաստատակամությունը որպես մասնագիտական արհեստավարժության գագաթնակետի հասնելու պայման» [4] ուսումնասիրությունը, որտեղ համաձայն հետազոտության արդյունքների՝ ոստիկանության աշխատակիցների շրջանում ինքնավստահության, հաստատակամության ձևավորումը կախված է ինչպես անձնային հատկություններից, այնպես էլ այդ հատկությունների ձևավորմանը միտված հատուկ ծրագրերի բովանդակությունից և այլն: Հայաստանում ոլորտին առնչվող ուսումնասիրություններ ևս արվել են և առանձնակի կարևորություն ունի Ն.Մ. Նազարյանի «Ոստիկանի մասնագիտական գործունեության և անձի հոգեբանական առանձնահատկությունները» [1] թեմայով ուսումնական ձեռնարկը, Ռ. Հ. Պետրոսյանի «Իշխանության մոտիվացիայի դրսևորումը կառավարչական գործառույթներում» [2] ուսումնական ձեռնարկը և այլն:

Թեման, լինելով իսկապես չուսումնասիրված, կամ էլ չհրապարակված՝ պայմանավորված ոլորտի պետական գաղտնիության մասին տեղեկանքներով, համակողմանի ուսումնասիրելու և առաջադրված նպատակին հասնելու համար կարիք կա որակական մեթոդների միջոցով շոշափելու իրավապահ մարմիններում մարդկային ռեսուրսների կառավարման հետ կապված իրավիճակը: Այդ նպատակով 2019թ. ՀՀ ոստիկանության կրթահամալիրում կրթության որակի ապահովման բաժանմունքի աշխատանքների շրջանակներում իրականացվել է հարցում ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների թվով 42 աշխատակիցների հետ: Հարցման իրականացման նպատակն էր պատկերացում կազմել իրավապահ մարմինների ստորաբաժանումներում առկա խնդիրների մասին, որոնք ազդում եմ աշխա-

տանքի արդյունավետության վրա և գտնվում են մարդկային ռեսուրսների կառավարման շրջանակում:

ՀՀ Ոստիկանության կրթահամալիրի և Երևան քաղաքի բաժինների աշխատակիցների շրջանում (N=42) իրականացվել է հարցում՝ բացահայտելու աշխատանքին խոչընդոտող գործոնները, որոնք նշանակալի են մարդկային ռեսուրսների կառավարման տեսանկյունից:

Այսպես, հարցին, թե՝ «*կարելի՞ է անձնակազմի աշխատանքի արդյունավետությունը կապել ղեկավարի կառավարման հմտությունների հետ*», հարցվողների 66.3%-ը պատասխանել է «այո», 16.4%-ը՝ «ոչ», իսկ 17.3%-ը դժվարացել է պատասխանել: Ակնհայտորեն երևում է, որ ղեկավարի՝ որպես կառավարչական գործառույթ իրականացնող անձի դերը հիմնականում կարևորվում է:

Հաջորդիվ, հարցվածների 65%-ը դրական և 35%-ը բացասական է պատասխանել նաև *«Ըստ Ձեզ, Դուք կարիք ունե՞ք ձեր ներկայիս աշխատանքային ոլորտում վերապատրաստում անցնելու» հարցին:*

*«Ձեր տեսանկյունից Ձեր ստորաբաժանման կոլեկտիվի համախմբվածությունը պայմանավորվա՞ծ է արդյոք ղեկավարման ոճով»* հարցին դրական են պատասխանել 77.5%-ը, բացասական 22.5%-ը: Որպես սույն հարցի տրամաբանական շարունակություն, նրանք նշել են, որ ղեկավարման ոճից է կախված *Աշխատանքի արդյունավետությունը (27%), Կոլեկտիվի անդամների միջև բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի հաստատումը (25%), Կոնֆլիկտայնությունը (19%), Կոլեկտիվի համախմբվածությունը (16%), Կոլեկտիվի անդամների միջև փոխհարաբերությունները (8%), այլ պատասխաններ՝ 5%:*

Այն հարցին, թե *«Ի՞նչն է խոչընդոտում կոլեկտիվում արդյունավետ աշխատելուն»* չեն պատասխանել հարցվողների *27%-ը, իսկ 73%-ի կողմից* նշվել են բազմաթիվ գործոններ, որոնք փորձ է արվել խմբավորել ըստ օբյեկտիվ և սուբյեկտիվ սկզբունքի:

Որպես աշխատանքային արդյունավետությանը խանգարող օբյեկտիվ գործոններ, աշխատակիցներն առանձնացրել են ինֆորմացիայի պակասը, աշխատանքային պայմանները, ավելորդ բյուրոկրատիան, որոնք ինչ-որ տեղ հատուկ և բնորոշ են իրավապահ համակարգին և միշտ չէ, որ ստորաբաժանման ղեկավարների կողմից կա-

ռավարելի են (ղեկավարի իրավասությունների շրջանակներից դուրս են):

Սուբյեկտիվի մեջ առանձնացվում են աշխատակիցների, ուղիղ ղեկավարի հետ կապված, ինչպես նաև միջանձնային հարաբերություններով պայմանավորված գործոններ *(տե՛ս աղյուսակ 1):*

*Աղյուսակ 1.*

***Արդյունավետ աշխատանքին խոչընդոտող գործոնները***

| **Գործոններ** | **Բաղադրիչներ** |
|---|---|
| **Օբյեկտիվ** | *Աշխատանքի պայմանները, ինֆորմացիայի պակասը և ապատեղեկատվությունը, բյուրոկրատիան* |
| **Սուբյեկտիվ՝** Աշխատակիցների հետ կապված | *Միշտ առաջինը երևալու մոլուցքը, Սեփական «Ես»-ի գերագնահատումը, գրագիտության և դաստիարակության պակասը, պատասխանատվության բացակայությունը, բամբասանքը, անտարբերությունը, անփութությունը, սեփական աշխատանքը ուրիշի վրա բարդելը, աթոռի կռիվը, մոտիվացիայի բացակայությունը, անկազմակերպվածությունը, ծուլությունը, աշխատակիցների սահմանափակ մտածելակերպը և կարողությունները, մեծամտությունը ընդհանուր շահի համար աշխատելու գիտակցման բացակայությունը, անհանդուրժողականությունը* |
| **Սուբյեկտիվ՝** Միջանձնային հարաբերություններով պայմանավորված | *Միմյանց ընդառաջելու բացակայությունը, անառողջ մթնոլորտը, համախմվածության բացակայությունը, միմյանց նկատմամբ անվստահությունը, կոնֆլիկտների առկայությունը, մարդկանց ծաղրելու արատավոր երևույթը, համագործակցելու բացակայությունը, անառողջ մրցակցությունը, իրար հանդեպ հարգանքի բացակայությունը* |
| **Սուբյեկտիվ՝** Ղեկավարի հետ կապված | *Կառավարման բացակայությունը, ստորաբաժանման պետի ոչ արդյունավետ կառավարումը, ամեն մեկն իր աշխատանքով չզբաղվելը կամ դերային անորոշությունը, ոչ արդար գնահատումը, աշխատանքի անհավասար բաժանումը, կողմնակալությունը, քաղաքացիական և ծառայող աշխատողների տարբերակումը:* |

**Աշխատակիցների հետ կապված սուբյեկիվ գործոնները վերլուծելիս** *(տե՛ս աղյուսակ 1), պարզ է դառնում,* որ օրինակ առկա է *անտարբերություն*, ինչը կարող է բացասական հետևանքներ ունենալ կոլեկտիվում՝ այլ մարդկանց հետ հարաբերությունների վրա: Դա կարող է նաև հանգեցնել *միայնության և սոցիալական մեկուսացման*: Առկա է *անհանդուրժողականություն,* ինչը բնորոշ է կոնֆլիկտային անձանց: Հաջորդիվ *բամբասանքի հակումը*. օրինակ, կոլեկտիվում այլ մարդկանց մասին բամբասելը, քննարկելը հաճախ հանգեցնում է *«թիմային» վեճերի*: Եվ նույնիսկ, եթե մարդը բամբասանքներ չի տարածում, բայց միայն լսում և հավաստում է դրանք, կոլեկտիվում կոնֆլիկտի հավանականությունը մեծանում է: *Սեփական «Ես»-ի գերագնահատման* դեպքում մարդիկ չեն կարողանում գիտակցել սեփական սխալները, սովորաբար ունենում են չափազանց բարձր ինքնագնահատական, որն էլ կոլետիվում առաջացնում է բացասական վերաբերմունք*: Միշտ առաջինը երևալու մոլուցքը* կարող է պայմանավորված լինել անմիջական ղեկավարի կողմից բարձր գնահատանքի արժանանալու ցանկությամբ: Իսկ, քանի որ իրավապահ մարմիններում, մասնավորապես ոստիկանությունում, տեղի են ունենում լավագույն աշխատակիցների պարգևատրումներ, նման ցանկությունը դառնում է հասկանալի: Այնուհետև, կոլեկտիվում թափուր պաշտոնի ի հայտ գալուն պես (կոնկրետ պահանջ չկա, բացի կոչումից ու ընդհանուր ստաժից), շատերի շրջանում առաջանում է *«պտոռակոիվ»:* Մասնակիցների կարծիքով, առկա է *գրագիտության (որոշ պաշտոնների դեպքում միջնակարգ կրթությունը բավարար է) և դաստիարակության պակաս,* ինչը կարող է հանգեցնել անխոհեմ և սխալ քայլերի՝ ստեղծելով, կոնֆլիկտային իրավիճակներ: Կոլեկտիվում *պատասխանատվության բացակայությունը և անփութությունը, մոտիվացիայի բացակայությունը, անկազմակերպվածությունը, ծուլությունը* կարող են խաթարել ընդհանուր թիմային աշխատանքի արդյունավետությունը, իսկ շատ դեպքերում էլ այդ ամենն ուղեկցվում է *սեփական աշխատանքն ուրիշի վրա բարդելով, որն էլ ընդհանուր շահի համար աշխատելու գիտակցման կամ ցանկության բացակայության արդյունք է:* Որպես խոչընդոտող գործոն՝ նշվել են նաև *աշխատակիցների սահմանափակ մտածելակերպն ու կարողությունները*, ինչն էլ ուղ-

դակիորեն բացասաբար է անդրադառնում աշխատանքի որակի վրա: Վերջինս, իհարկե, ղեկավարի կողմից լիարժեք կառավարելի է՝ նման ծառայողներին կա՛մ հարկավոր է ուղարկել վերապատրաստման, կա՛մ էլ փոխարինել նրանց ավելի լայն մտածելակերպ ունեցող և կոմպետենտ մասնագետներով:

**Դիտարկելով միջանձնային հարաբերություններով պայմանավորված սուբյեկտիվ գործոնները** *(տե՛ս աղյուսակ 1)*՝ նշվել է *միմյանց ընդառաջելու բացակայությունը, անառողջ մթնոլորտը, համախմբվածության բացակայությունը, միմյանց նկատմամբ անվստահությունը, կոնֆլիկտների առկայությունը, մարդկանց ծաղրելու արատավոր երևույթը, համագործակցելու բացակայությունը, անառողջ մրցակցությունը, իրար հանդեպ հարգանքի բացակայությունը*: Այս ամենը կարող են հանգեցնել նրան, որ ա) լավագույն մասնագետները մտածեն այլ աշխատանքի տեղափոխվելու մասին, բ) ի հայտ գան կոնֆլիկտային և թշնամական հարաբերություններ, գ) ծաղրի հետևանքով աշխատակիցների շրջանում կարող են առաջանալ որոշակի բարդույթներ, դ) թիմային մտածելակերպի և փոխօգնության պակաս և այլն: Բնականաբար, այս ամենի արդյունքում տուժում է աշխատանքի արդյունավետությունը, որակը:

**Դիտարկելով սուբյեկտիվ գործոնները՝ կապված ղեկավարի հետ** *(տե՛ս աղյուսակ 1)*, նշվել է *կառավարման բացակայությունը, ստորաբաժանման պետի ոչ արդյունավետ կառավարումը, ամեն մեկն իր աշխատանքով չզբաղվելը կամ դերային անորոշությունը, ոչ արդար գնահատումը, աշխատանքի անհավասար բաժանումը, կողմնակալությունը, քաղաքացիական և ծառայող աշխատողների տարբերակումը:* Կարելի է ենթադրել, որ խնդիրը բազմակողմանի է: Սակայն անդրադառնալով աշխատանքի բաժանման բացակայությանը, կողմնակալությանը և աշխատանքային դերերի անորոշությանը, կարելի է նշել, որ աշխատանքի բաժանումն անհրաժեշտ է, քանի որ այդ պարագայում աշխատանքից բավարարվածությունը բարելավվում է, աշխատողին տրվում է կոնկրետ աշխատանքային առաջադրանք: Ընդունված է՝ աշխատանքի բաժանումը ընդհանուր առմամբ անխուսափելի է, այն պատճառով, որ ոչ ոք չի կարող միանգամից կատարել

բոլոր առաջադրանքները: Աշխատուժի աստիճանակարգը ժամանակակից աշխատատեղերի կառուցվածքի շատ տարածված առանձնահատկություն է, բայց, իհարկե, այս աստիճանակարգերի կառուցվածքի ձևավորումն իրականացվում է ղեկավարի կողմից, քանի որ դա մտնում է վերջինիս կառավարչական գործառույթների մեջ: *Վերոնշվածի հետ կապված՝ ստեղծվելու են պաշտոնի անձնագրեր, որոնք էլ ինստիտուցիոնալ առումով կլուծեն նմանօրինակ խնդիրները:*

Այսպիսով, աշխատանքային արդյունավետությանը խանգարող **սուբյեկտիվ գործոններից են՝ ա) կապված ղեկավարի հետ՝** *դերային անորոշությունը, ոչ արդար գնահատումը, աշխատանքի անհավասար բաժանումը, կողմնակալությունը և այլն,* **բ) միջանձնային հարաբերություններով պայմանավորված՝** *միմյանց ընդառաջելու բացակայությունը, անառողջ մթնոլորտը, համախմվածության բացակայությունը, միմյանց նկատմամբ անվստահությունը, մարդկանց ծաղրելու երևույթը, համագործակցելու, հարգանքի բացակայությունը, անառողջ մրցակցությունը և այլն,* ***գ)*** **աշխատակիցների հետ կապված՝** *անտարբերությունը, անհանդուրժողականությունը, բամբասկոտությունը, սեփական «Ես»-ի գերագնահատումը, առաջինը երևալու մոլուցքը, պատասխանատվության բացակայությունը և անփութությունը, մոտիվացիայի բացակայությունը, անկազմակերպվածությունը, սահմանափակ մտածելակերպն ու կարողությունները* կազմում են ղեկավարի կառավարչական իրավասությունների և պարտականությունների շրջանակը, հետևաբար՝ կառավարելի բացասական գործոններ են:

Մարդկային ռեսուրսների կառավարման աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար ստորաբաժանումների աշխատակիցները ներկայացրել են հետևյալ առաջարկությունները, որոնք նպատակահարմար է ներկայացնել խմբավորված՝ ըստ ուղղությունների (տե'ս աղյուսակ 2): Ինչպես կարելի է նկատել, բոլոր առաջարկները իրար հետ խիստ փոխկապակցված են, և դրանց խմբավորումը նպատակ ունի հեշտացնելու ընկալումը: Ինչպես, օրինակ, նույն թիմագոյացման կամ ղեկավարի հետ կապված առաջարկությունները կապված եմ մոտիվացիայի բարձրացման հետ:

*Աղյուսակ 2.*

***Մարդկային ռեսուրսների կոնսպրուկտիվ կառավարման առաջարկությունները***

| **ՄՌ արդյունավետ կառավարման ուղղությունները** | **Առաջարկություններ** |
|---|---|
| Ղեկավարի հետ կապված | Ռեսուրսների ճիշտ բաշխում կատարել, ապահովել ղեկավարների անմիջական շփումը ենթակաների հետ, լսելի դարձնել ենթակաների ձայնը, աշխատանքը հավասարապես բաշխել, հետադարձ կապ ապահովել, ճանաչել անձնակազմին, հեղինակություն լինել աշխատակցի համար, «Վստահիր և պահանջիր» սկզբունքը կիրառել |
| Կանոնակարգային | Կադրային քաղաքականություն մշակել,կոչումներ տալու կարգի վերանայել, պաշտոնին նշանակելիս հաշվի առնել կադրային ստորաբաժանման կարծիքը, տալ պաշտոն՝ համապատասխան ունակությունների, նվազեցնել թղթաբանական ծանրաբեռնվածությունը |
| Թիմագոյացում | Կոլեկտիվ /այդ թվում սպորտային/, կորպորատիվ միջոցառումներ կազմակերպել, բարոյահոգեբանական մթնոլորտը վերանայել, համագործակցությունը զարգացնել |
| Մասնագիտական վերապատրաստում-ներ | Փորձի փոխանակում իրականացնել, բանակցելու հմտություն, լսելու կարողություն ձևավորել, գործողումներ կազմակերպել ավելի շատ, նորագույն տեխնոլոգիաների ներմուծում |
| Մոտիվացիա | Ճիշտ խրախուսելու մեխանիզմներ մշակել, աշխատակցին օբյեկտիվ և արդարացի գնահատել, հոգեբանական սենյակներ ստեղծել խորհրդատվություն ապահովելու նպատակով, աշխատավարձը բարձրացնել, առաջխաղացման հնարավորություններ ստեղծել |

Նկատելի է, որ առաջարկությունների մի մասն ինստիտուցիոնալ բնույթ են կրում, իսկ մյուսը՝ ավելի ընդգրկուն մասը, մարդկային ռեսուրսների կոնստրուկտիվ կառավարման արդյունքում, կարող են իրականացվել՝ բարձրացնելով աշխատակիցների մոտիվացիան՝ ապահովելով մասնագիտական աճը և առաջխաղացումը, կոլեկտիվի բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտը, ինչը և կնպաստի աշխատանքի որակի բարձրացմանը:

Այսպիսով, ստացվում է, որ աշխատակիցների հարցման արդյունքում առանձնացված աշխատանքի արդյունավետությանը խանգարող գործոնների և նրանց կողմից արված առաջարկությունների մեծ մասը վերաբերվում էին ղեկավարի կառավարման ոճին, անձնային առանձնահատկություններին, որոշումների կայացման կարողություններին, հաղորդակցման ոճին, որոնք էլ տեղ են գտել հետագա ուսումնասիրություններում:

## Օգտագործված գրականության ցանկ


1. Նազարյան Ն.Մ. Ոստիկանի մասնագիտական գործունեության և անձի հոգեբանական առանձնահատկությունները: Ուսումնական ձեռնարկ. Եր.: 2015թ., -230 էջ
2. Պետրոսյան Ռ. Հ., Իշխանության մոտիվացիայի դրսևորումը կառավարչական գործառույթներում (ուսումնամեթոդական ձեռնարկ), ՀՊՄՀ, Եր., հեղինակային հրատ., 2012, 70 էջ:
3. Русецкая Д.В. Особенности психологической коррекции негативных психических состояний в профессиональной деятельности сотрудников органов внутренних дел. 2021
4. Саунин Е.В. Ассертивность сотрудников органов внутренних дел как условие достижения вершин прфессионального мастрества. 2021
5. Уткин, Э. А. Управление персоналом в малом и среднем бизнесе / Э. А. Уткин, А. И. Кочеткова. М.: АКАЛИС, 1996. 205 с.

## ОСОБЕННОСТИ УПРАВЛЕНИЯ СОТРУДНИКАМИ ОТДЕЛЕНИЙ ПОЛИЦИИ РА

**Арусяк Геворкян**
ЕУ, кафедра Психологии

Правоохранительная система, в частности Полиция РА, сложная, многоуровневая система с включенной в нее инфраструктурой, которая выполняет различные функции: оперативные, образовательные, организационные и др. Поэтому необходимо изучать особенности управления человеческими ресурсами при участии соответствующего персонала инфраструктуры.

В статье приводятся представления сотрудников подразделений полиции РА по вопросам особенностей управленческого процесса с целью выявления социально-психологических проблем конструктивного управления.

**Ключевые слова.** Управление человеческими ресурсами, правоохранительные органы, эффективность работы, межличностные отношения, психологическая атмосфера.

## CHARACTERISTICS OF MANAGEMENT OF RA POLICE DEPARTMENT EMPLOYEES

**Arusyak Gevorgyan**
EU, Chair of Psychology

The law enforcement system, in particular the RA Police, is complex, multi-layered with the infrastructure included in it, in which various functions are performed: operative, educational, organizational, etc., therefore the peculiarities of human resource management should be studied with the involvement of relevant infrastructure staff.

The article presents the ideas of the employees of the RA police subdivisions and suggestions on the peculiarities of the management

process in order to reveal the social-psychological problems of constructive management.

**Keywords.** Human resource management, law enforcement agencies, work efficiency, interpersonal relationships, psychological atmosphere.

*Տրվել է տպագրության՝ 26.10.2021թ.*
*Գրախոսվել է՝ 05.11.2021թ.*

# ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՏԻՊԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՈՉ ՏԻՊԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

***Գագիկ Նիկողոսյան***
*ՇՊՀ, Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ ամբիոն, ֆ.-մ.գ.թ.,*
*gagonik@mail.ru, +374 98 457767*
***Վարդան Մանուկյան***
*ՇՊՀ, Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ ամբիոն, ֆ.-մ. գ. թ., դոցենտ*
*mvardan_1972@mail.ru, +374 93 464903*

*Աշխատանքը նվիրված է մաթեմատիկայի դպրոցական դասընթացում հանդիպող տարբեր տիպային խնդիրների ոչ տիպային լուծումների վեր հանմանը: Հոդվածում նախ կպարզաբանենք, ինչ ի նկատի ունենք «տիպային խնդիր» և «տիպային լուծում» ասելով, որից հետո կանդրադառնանք մաթեմատիկական խնդրի գեղեցկության բնութագրման ռուս հայտնի մանկավարժ-գիտնական Մ. Ս. Յակիրի հայտանիշներին, ինչից հետո կոնկրետ տիպային խնդիրների օրինակով կդիտարկենք և կվերլուծենք մաթեմատիկական տարբեր տիպային խնդիրների ոչ տիպային լուծումները, մատնանշելով վերջիններիս գեղեցկության բնութագրման վերոգրյալ հայտանիշները, ինչը կարծում ենք կնպաստի սովորողների ստեղծագործական մտածողության խթանմանը, մաթեմատիկական գեղեցիկի ընկալմանն ու զարգացմանը և ըստ այդմ ուսուցման արդյունավետության բարձրացմանը:*

***Հիմնաբառեր.*** *մաթեմատիկա, տիպային և ոչ տիպային խնդիրներ, գեղեցկության բնութագրման հայտանիշներ, վերլուծություն:*

Ներկայումս, երբ Հայաստանի Հանրապետությունում ավարտվում է կրթության ոլորտի բարեփոխումների հերթական փուլը [1], արձանագրված արդյունքները ոչ միայն գոհացուցիչ չեն, այլև չափազանց մտահոգիչ են, հատկապես, մաթեմատիկա առարկայի մասով: Այսպես, վերջին տարիներին

- մաթեմատիկայի միասնական քննությունների մասնակիցների միջին գնահատականը շարունակաբար նվազում է, ավելա-

նում են անբավարար ստացողների քանակը, իսկ մասնակիցների կեսից ավելին հազիվ հաղթահարում են անցողիկ 7.5 միավորը [2],
- մաթեմատիկայի դպրոցականների օլիմպիադաների եզրափակիչ փուլի հաղթողներ և մրցանակակիրներ են դառնում միայն 4-5 դպրոցների և վարժարանների սաներ, այն դեպքում, երբ հանրապետությունում գործում է շուրջ 1400 միջին և ավագ դպրոց [3]:

Այս ամենը, մեր կարծիքով, պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով: Նշենք դրանցից մի քանիսը.
- մաթեմատիկայի դպրոցական ուսումնական ծրագրերում միջառարկայական և ներառարկայական կապերը ոչ լիարժեք են արտացոլված, ինչը լուրջ խոչնդոտ է ստեղծագործական մտածողության զարգացման համար,
- բացակայում է մաթեմատիկայի ուսուցման մեթոդիկայի վերաբերյալ ըստ բաժինների համակարգված գրականությունը,
- կարևորելով ուսուցման կազմակերպման նոր ձևերը, բավարար ուշադրություն չի դարձվում ուսուցման բովանդակության կատարելագործմանն ու արդյունավետության բարձրացմանը,
- ուսուցիչների գերակշռող մասի մոտ բացակայում է «զարմանք» առաջացնելու թե ցանկությունը և թե կարողությունը /*ընդ որում ի նկատի ունենք «զարմանք» առաջացնելու կարողությունը ոչ միայն ի հաշիվ կամ ի շնորհիվ դիդակտիկ պարագաների և/կամ տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունների, այլև կրթության բովանդակության, միջառարկայական օրիգինալ կապերի, գիտական ժամանակակից ձեռքբերումների պրակտիկ-կիրառական բաղադրիչի վեր հանման շնորհիվ*/, ինչը լուրջ խոչընդոտ է սովորողների որոնողական և ստեղծագործական մտածողության զարգացման համար:

Այս համատեքստում, սույն աշխատանքը նվիրված է մաթեմատիկայի դպրոցական դասընթացում հանդիպող տարբեր տիպային խնդիրների ոչ տիպային լուծումների վեր հանմանը և այդ կոնտեքս-

տում մաթեմատիկական գեղեցիկի ընկալմանն ու զարգացմանը, ինչում էլ կայանում է աշխատանքի գիտամանկավարժական նորույթը:

Ստորև նախ հակիրճ կպարզաբանենք «տիպային խնդիր» և «տիպային լուծում» եզրույթները, այնուհետև համառոտակի կանդրադառնանք ռուս հայտնի մանկավարժ-գիտնական Մ. Ս. Յակիրի կողմից ներմուծված մաթեմատիկական խնդրի գեղեցկության բնութագրման հայտանիշներին, ինչից հետո կոնկրետ տիպային խնդիր-օրինակների միջոցով վերջիններիս համար կներկայացնենք ինչպես այլընտրանքային, «զարմանք առաջացնող» ոչ տիպային լուծումներ, այնպես էլ այդ լուծումների ներքո կմատնանշենք մաթեմատիկական խնդիրների գեղեցկության բնութագրման վերը նշած հայտանիշները:

Առհասարակ, խնդիրը և նրա լուծումը մարդու նպատակների իրականացման կարևոր փուլերից են: Յուրաքանչյուր մարդ, իր կենսագործունեության ընթացքում առնչվելով կենցաղային, մասնագիտական, ինտելեկտուալ ամենատարբեր խնդիրների, պետք է լուծի դրանք, ըմբռնի դրանց էությունը, պատկերացնի առկա միջոցները և մտքի լարման միջոցով հանգի որոշակի պատասխանի: Նման գործընթացը մաթեմատիկական գործունեության բնորոշ առանձնահատկություններից մեկն է: Ավելին, մաթեմատիկան սովորեցնում է լուծել խնդիրը: Մաթեմատիկական խնդիրը աչքի է ընկնում իր հստակությամբ, իսկ նրա լուծումը՝ հուսալիությամբ: Մաթեմատիկան կոչված է նաև մոդելավորել կյանքում և գիտության այլ բնագավառներում առաջացած զանազան խնդիրներ, այսինքն՝ մաթեմատիկայի լեզվով գրել կիրառական խնդիրը և, բնականաբար, նրա լուծումը ստանալ մաթեմատիկական մեթոդներով: Սա էլ մաթեմատիկայի օգնությունն է այլ բնագավառներում ծագած խնդիրները լուծելիս:

Այսուհետ տիպային խնդիր ասելով ի նկատի կունենանք մաթեմատիկայի դպրոցական դասընթացում հանդիպող բոլոր այն թեմատիկ խնդիրներն ու վարժությունները, որոնց լուծման համար գոյություն ունեն մշակված ստանդարտ ալգորիթմներ (այսինքն՝ որոշակի վերջավոր քայլերի կոնկրետ հաջորդականություն) և վերջիններիս կիրարկման պարագայում միանշանակ հանգում ենք խնդրի կամ վարժության լուծմանը: Ըստ էության այդպիսի ալգորիթմներն էլ հանդի-

սանում են հենց տվյալ տիպային խնդիրների տիպային լուծումները: Որպես ասվածի վառ դրսևորում կարելի է բերել, օրինակ ընդհանուր տեսքով քառակուսի հավասարման լուծման ալգորիթմը, այն է՝ նախապես հաշվել տրված քառակուսի հավասարման դիսկրիմինանտը, որից հետո, կախված վերջինիս արժեքից (դրական, բացասական կամ զրո), որոշել հավասարման իրական արմատները:

Բնականաբար, աշակերտը տիրապետելով տիպային խնդիրների տիպային լուծումներին, ձեռք է բերում առարկայական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ: Սակայն կարծում ենք մաթեմատիկայի ուսուցման գործընթացում այդքանով չպետք է բավարարվել և անհրաժեշտ է միջառարկայական և ներառարկայական կապերի, ոչ ստանդարտ, էվրիստիկ մոտեցումների վեր հանման միջոցով փորձել տիպային խնդիրների համար «փնտրել» և «գտնել» նաև ոչ տիպային լուծումներ, ինչը ինքնին և «զարմանք» կպատճառի սովորողներին, կխթանի նրանց մոտիվացիան առարկայի սերտման և յուրացման գործընթացում, արդյունավետ գործիք կհանդիսանա մաթեմատիկական խնդրի գեղեցկության ընկալման համար, կնպաստի սովորողների որոնողական և ստեղծագործական մտածողության զարգացմանը:

Յուրաքանչյուր խնդիր իր պարզության կամ բարդության, լուծման հեշտության կամ դժվարության և այլ հատկանիշների հետ միասին ունի նաև իր գեղեցկությունը: Ըստ այդմ կարող է բնական հարց առաջանալ՝ իսկ ո՞րն է մաթեմատիկական խնդրի գեղեցկությունը, նրա գեղագիտական գրավչությունը: Ռուս հայտնի մանկավարժ-գիտնական Մ. Ս. Յակիրը, որպես մաթեմատիկական խնդրի գեղեցկության բնութագրման հայտանիշներ, առաջարկում է ***անկանխատեսելիությունը, անսպասելիությունը, պարզությունը և հեղափոխական քայլի առկայությունը*** [4]:

***Անկանխատեսելիությունը*** հանդես է գալիս, երբ մարդ ի զորու չէ ի սկզբանե կռահելու խնդրի եզրակացությունը, իսկ ***անսպասելիությունը***՝ երբ խնդրի պայմանները չեն թելադրում նրա եզրակացությունը:

Խնդրի ***պարզությունը*** վերաբերում է ինչպես նրա բովանդակությանը, այնպես էլ շարադրանքին և լուծման ընթացքում կիրառվող եղանակին: Հաճախ խնդիրը անհասկանալի է դառնում նրա ձևակերպման լեզվական անհարթությունների պատճառով, իսկ երբեմն էլ երկար-բարակ ձևակերպված պայմանների ետևում կռահելու բան չի մնում:

***Հեղափոխական քայլի առկայությունը*** առավելապես վերաբերում է խնդրի լուծմանը: Հենց հեղափոխական քայլի առկայությունն է, որ պետք է «զարմանք» պատճառի աշակերտին:

Ըստ էության կարող ենք փաստել, որ երբ հաջողվում է տիպային խնդրի լուծման համար կիրառել ոչ տիպային մոտեցումներ, արդյունքում ապահովում ենք մաթեմատիկական տվյալ խնդրի գեղեցկության բնութագրման վերոգրյալ բոլոր հայտանիշները: Մասնավորապես, ցանկացած ոչ տիպային մոտեցման հիմքում հենց անկանխատեսելիությունն ու անսպասելիությունն է, երբ թվում է, թե ոչինչ չի «հուշում» խնդրի պնդման ճշմարտացիությունը հիմնավորելու համար, մինչդեռ ինքնատիպ, ոչ տրիվիալ մոտեցման և տրամաբանական դատողությունների միջոցով անմիջականորեն հանգում ենք խնդրի պնդման ապացույցին:

Մյուս կողմից հասկանալի է, որ մաթեմատիկական տիպային խնդիրն աչքի է ընկնում իր ձևակերպման պարզությամբ և հստակությամբ: Եվ, վերջապես, տիպային խնդրի լուծման ոչ տիպային մոտեցման կիրառման պարագայում, երբ արդեն վերջինս տեղայնացնում և կիրառում ենք տվյալ խնդրում, այդ պահից սկսած արդեն իսկ ապահովված է հեղափոխական քայլի առկայությունը:

Այժմ դիտարկենք մաթեմատիկայի դպրոցական դասընթացում հանդիպող տարբեր տիպային խնդիրներ, որոնց համար հակիրճ կնկարագրենք վերջիններիս լուծման հայտնի տիպային մոտեցումները, ինչպես նաև կառաջարկենք ոչ տիպային մոտեցումներ:

**Խնդիր 1:** Ապացուցել, որ կամայական $a$; $b$; $c$ իրական թվերի համար, երբ $(1+ab)(1+bc)(1+ca)\neq 0$, տեղի ունի հետևյալ նույնությունը. $\dfrac{a-b}{1+ab}+\dfrac{b-c}{1+bc}+\dfrac{c-a}{1+ca}=\dfrac{a-b}{1+ab}\cdot\dfrac{b-c}{1+bc}\cdot\dfrac{c-a}{1+ca}$: [5, էջ 133]

**Լուծում:** Ակնհայտ է, որ խնդիրը տիպային է և վերջինիս լուծման համար բավական է նույնության ձախ մասում կոտորակները բերել ընդհանուր հայտարարի, կատարել նույնական ձևափոխություններ և նման անդամների միացում: Ստորև կառաջարկենք այլընտրանքային ոչ տիպային մոտեցում: Կատարենք փոփոխականների փոխարինում, այն է՝ $a = tg\alpha;\ b = tg\beta;\ c = tg\gamma$, որտեղ $\alpha;\beta;\gamma \in \left(-\frac{\pi}{2};\frac{\pi}{2}\right)$:

Արդյունքում կունենանք՝ $\frac{a-b}{1+ab}+\frac{b-c}{1+bc}+\frac{c-a}{1+ca}=tg(\alpha-\beta)+$
$+tg(\beta-\gamma)+tg(\gamma-\alpha)=tg((\alpha-\beta)+(\beta-\gamma))\cdot(1-tg(\alpha-\beta)tg(\beta-\gamma))+tg(\gamma-\alpha)=$
$=tg(\alpha-\beta)tg(\beta-\gamma)tg(\gamma-\alpha)=\frac{a-b}{1+ab}\cdot\frac{b-c}{1+bc}\cdot\frac{c-a}{1+ca}$: Նույնությունն ապացուցված է:

**Խնդիր 2:** Ապացուցել որ $100007\cdot100013\cdot100001+55$ թիվը բաղադրյալ է: [6, էջ 212]

**Լուծում:** Ակնհայտ է, որ խնդիրը տիպային է և վերջինիս պնդման ապացույցի համար բավական է կիրառել բաժանելիության հայտնի որևէ հայտանիշ, մասնավորապես 3-ի կամ 9-ի բաժանելիության հայտանիշները: Ստորև կառաջարկենք այլընտրանքային ոչ տիպային մոտեցում: Ընդ որում հարկ ենք համարում նշել, որ ներկայացվող մոտեցումն առավել համապիտանի է, քանզի բաժանելիության հայտնի հայտանիշների ոչ կիրառելի լինելու պարագայում ներկայացվող մոտեցումը կարող է հանդիսանալ ապացուցման արդյունավետ գործիք: Այսպես, նշանակենք $100005 = x$, կունենանք՝
$100007\cdot100013\cdot100001+55=$
$=(x+2)(x+8)(x-4)+55=x^3+6x^2-24x-9=(x-3)(x^2+9x+3)\vdots100002$
, հետևաբար տրված թիվը բաղադրյալ է: Պնդումն ապացուցված է:

**Խնդիր 3:** Ապացուցել որ կամայական բնական $n$-ի դեպքում $\left(9^n+11\right)$-ը բաժանվում է $4$-ի: [7, էջ 92]

**Լուծում:** Ակնհայտ է, որ խնդիրը տիպային է և վերջինիս պնդման ապացույցի համար բավական է օգտվել մաթեմատիկական ինդուկցիայի մեթոդից: Ստորև կառաջարկենք այլընտրանքային ոչ տիպային մոտեցում: Նկատենք, որ $9^n+11=$ $\left(9^n-1\right)+12$, հետևաբար խնդրի պնդումն ապացուցելու համար բավական է ցույց տալ, որ կամայական բնական $n$-ի դեպքում $\left(9^n-1\right)$-ը բաժանվում է $4$-ի: Վերջինս էլ ապացուցելու համար կատարենք հաշվարկման համակարգի փոփոխություն՝ անցում կատարելով 9-ական դիրքային համակարգի: Ունենք՝ $4_{10}=4_9$; $\left(9^n-1\right)_{10}=$ $=\left(\underset{n\text{ հատ}}{88\cdots8}\right)_9=\left(\left(\underset{n\text{ հատ}}{22\cdots2}\right)_9\cdot4_9\right)\vdots4_9$, հետևաբար ակնհայտ է, որ կամայական բնական $n$-ի դեպքում $\left(9^n-1\right)$-ը բաժանվում է $4$-ի: Պնդումն ապացուցված է:

**Խնդիր 4:** Մաթեմատիկական ինդուկցիայի մեթոդով ապացուցել, որ $1+2+\ldots+n=\dfrac{n(n+1)}{2}$ հավասարությունը ճշմարիտ է: [7, էջ 91]

**Լուծում:** Ակնհայտ է, որ խնդիրը տիպային է և վերջինիս պնդման ապացույցի համար անհրաժեշտ է կիրառել մաթեմատիկական ինդուկցիայի մեթոդը: Ստորև կառաջարկենք այլընտրանքային ոչ տիպային մոտեցում: Դիտարկենք, համապատասխանաբար, 1,2,..., n հատ միավոր քառակուսիներից կազմված պատկեր (տես նկ. 1-ա): Այժմ այդ նույն պատկերը դիտարկենք որ մեկ հատ nxn էջերով ուղղանկյուն եռանկյունուց և n հատ 1x1 էջերով փոքր ուղղանկյուն եռանկյուններից կազմված պատկեր (տես նկ. 1-բ): Անմիջականորեն հավասարեցնելով նկ. 1-ա-ի և նկ. 1-բ-ի պատկերների մակերեսները,

կունենանք՝ $1+2+\ldots+n=\frac{n\cdot n}{2}+n\cdot\frac{1\cdot 1}{2}=\frac{n(n+1)}{2}$, ինչն էլ պահանջվում էր ապացուցել:




/ա/ /բ/

***Նկ. 1 - 1, 2, ..., n հատ միավոր քառակուսիներից կազմված պատկեր***

**Խնդիր 5:** Լուծել հավասարումը՝ $|x+5|+|3+x|=2$ : [8, էջ 56]

**Լուծում:** Ակնհայտ է, որ հավասարումը տիպային է և վերջինիս լուծման համար բավական է օգտվել հայտնի միջակայքերի եղանակից: Ստորև կառաջարկենք այլընտրանքային երկու ոչ տիպային մոտեցումներ:

**I եղանակ:** Օգտվելով իրական թվի մոդուլի սահմանումից նկատենք, որ կամայական $a$ և $b$ իրական թվերի համար $|a|+|b|=|a-b|$ հավասարությունը տեղի ունի այն և միայն այն դեպքում, երբ $ab\leq 0$ (երբ $a$-ն և $b$-ն տարբեր նշանի են):

Նշանակելով $a = x+5$ և $b = 3+x$, տրված հավասարման համար կունենանք՝ $(x+5)(3+x) \le 0 \Rightarrow x \in [-5;-3]$:

Պատ.՝ $x \in [-5;-3]$:

**II եղանակ:** $Ox$ կոորդինատային առանցքի վրա դիտարկենք $A(-5)$; $B(-3)$ և $X(x)$ կոորդինատներով կետերը: Նկատենք, որ $AB = 2$; $AX = |x+5|$ և $BX = |x+3|$, հետևաբար տրված հավասարումից կստանանք՝ $AX + BX = AB$ (որտեղ $A$; $B$ և $X$ կետերը պատկանում են միևնույն ուղղին), ինչը տեղի կունենա այն և միայն այն դեպքում, երբ $X$ կետը կպատկանի $AB$ հատվածին, այսինքն՝ $X \in [AB] \Leftrightarrow x \in [-5;-3]$:

Պատ.՝ $x \in [-5;-3]$:

**Խնդիր 6:** Ապացուցել որ $\frac{1}{\sin\frac{\pi}{7}} = \frac{1}{\sin\frac{2\pi}{7}} + \frac{1}{\sin\frac{3\pi}{7}}$ : [5, էջ 138]




***Նկ. 2 - $\frac{\pi}{7}$ գագաթի սուր անկյունով հավասարասրուն եռանկյուն***

**Լուծում:** Ակնհայտ է, որ խնդիրը տիպային է և հավասարությունն ապացուցելու համար բավական է աջ մասում կոտորակները բերել ընդհանուր հայտարարի, օգտվել եռանկյունաչափական ֆունկցիաների արտադրյալի և գումարի, բերման, երկու անկյունների գումարի և տարբերության եռանկյունաչափական ֆունկցիաների բանաձևերից և նույնական ձևափոխությունների միջոցով հանգել ապացույցին: Ստորև կառաջարկենք այլընտրանքային երկու ոչ տիպային մոտեցումներ:

**I եղանակ:** Դիտարկենք $\frac{\pi}{7}$ գագաթի սուր անկյունով, $AC$ հիմքով $\triangle ABC$ հավասարասրուն եռանկյունը, որի $BC$ սրունքին տարված բարձրությունը պայմանականորեն համարենք միավոր՝ $AH=1$ (տես նկ. 2): Պարզ է, որ $\angle BAC=\angle BCA=\frac{3\pi}{7}$: $\triangle ABC$-ի $BC$ սրունքի վրա ընտրենք $D$ կետն այնպես, որ $\angle BAD=\angle DBA=\frac{\pi}{7}$, որտեղից ակնհայտ է, որ $DA=DB$ և $\angle CAD=\angle CDA=\frac{2\pi}{7}\Rightarrow$ $CA=CD$: $\triangle ABH$-ից ունենք՝ $AB=\frac{AH}{\sin\frac{\pi}{7}}=\frac{1}{\sin\frac{\pi}{7}}$: $\triangle ADH$-ից ունենք՝ $AD=\frac{AH}{\sin\frac{2\pi}{7}}=\frac{1}{\sin\frac{2\pi}{7}}$: $\triangle ACH$-ից ունենք՝ $AC=\frac{AH}{\sin\frac{3\pi}{7}}=\frac{1}{\sin\frac{3\pi}{7}}$: Ի նկատի ունենալով, որ $AB=BD+DC=AD+AC$, կունենանք՝ $\frac{1}{\sin\frac{\pi}{7}}=\frac{1}{\sin\frac{2\pi}{7}}+\frac{1}{\sin\frac{3\pi}{7}}$, այն ինչ պահանջվում էր ապացուցել:

**II եղանակ:** Դիտարկենք միավոր տրամագծով շրջանագծին ներգծած $ABCDEFG$ կանոնավոր յոթանկյունը (տես նկ. 3): Հեշտ է նկատել, որ $\angle CAD=\angle DAE=\frac{\pi}{7}$ և $\angle ACE=\frac{3\pi}{7}$: $\triangle ACD$ և $\triangle ACE$ եռանկյուններից, անմիջականորեն կիրառելով սինուսների թեորեմը, ինչպես նաև ի նկատի ունենալով առկա համաչափությունները,

կստանանք՝ $CD = DE = 2R\sin\frac{\pi}{7} = \sin\frac{\pi}{7}$;

$AC = CE = 2R\sin\frac{2\pi}{7} = \sin\frac{2\pi}{7}$; $AD = AE = 2R\sin\frac{3\pi}{7} = \sin\frac{3\pi}{7}$:

Մյուս կողմից նկատենք, որ $ACDE$-ն ներգծյալ քառանկյուն է, որի համար կիրառելի է Պտղոմեոսի թեորեմը, համաձայն որի՝ $AD \cdot CE = AC \cdot DE + CD \cdot AE$, որտեղից կստանանք՝ $\sin\frac{3\pi}{7} \cdot \sin\frac{2\pi}{7} = \sin\frac{2\pi}{7} \cdot \sin\frac{\pi}{7} + \sin\frac{\pi}{7} \cdot \sin\frac{3\pi}{7}$: Ստացված հավասարության երկու մասը բաժանելով $\sin\frac{\pi}{7} \cdot \sin\frac{2\pi}{7} \cdot \sin\frac{3\pi}{7}$ արտադրյալի վրա, արդյունքում կստանանք այն, ինչ պահանջվում էր ապացուցել:




***Նկ. 3 – միավոր փրամագծով շրջանագծին ներգծած կանոնավոր յոթանկյուն***

Ամփոփելով կարող ենք փաստել, որ մաթեմատիկայի ուսուցման գործընթացը հագեցված է խնդիրների լուծմամբ, ինչը մեծապես նպաստում է սովորողի մոտ կյանքի նկատմամբ լավատեսական կողմնորոշման ձևավորմանը: Մաթեմատիկական խնդրի լուծումը պահանջում է համառ ու հետևողական աշխատանք: Այդ պատճառով այն ձևավորում է աշխատասիրություն, ինչը, անշուշտ, պարունակում է նաև գեղագիտական հատկանիշներ:

Ակնհայտ է, որ խնդրի լուծման միջոցով ձևավորված գիտելիքները, կարողություններն ու հմտությունները արտահայտում են իմացության այն մակարդակը, երբ սովորողը կարողանում է կիրառել իր ունակությունները, գնահատել դրանք, դրսևորել ինքնավստահություն:

Սա ստեղծում է մաթեմատիկայի ուսուցման ընդհանուր գեղագիտական դրական միջավայր, իսկ խնդրի լուծման գործընթացի առանձին տարրերի իրականացման ոչ տիպային, դրական ընթացքն ուղեկցվում է համապատասխան դրական հուզական ապրումներով: Օրինակ, խնդրի պնդման ապացույցի ճշմարտացիության հիմնավորման ստացմանը հաջորդում է ոգևորվածության այնպիսի հուզական վիճակ, որը սովորողին մղում է հետագա գործունեության: Սովորողին հետաքրքրում են նոր խնդիրներ, նա ձգտում է դրանց լուծմանը և լուծման համար անհրաժեշտ գիտելիքների իմացության: Ուսուցման ողջ գործընթացը նրան դուր է գալիս, նա սիրում է սովորել: Իսկ իրեն սիրել ստիպում, պարտադրում է գեղեցիկը: Եվ ուրեմն, խնդրի հաջող լուծումը նպաստում է, գեղեցիկ է դարձնում ուսուցման ողջ գործընթացը,

Դասավանդման տարիների փորձը վկայում է, որ մաթեմատիկական տիպային խնդիրների առաջարկվող ոչ տիպային լուծումները արդյունավետ և նպատակահարմար է կիրառել հատկապես թեմատիկ ընդհանրացնող կրկնությունների ժամանակ, երբ ամփոփ դիտարկելով և ընդհանրացնելով թեմատիկ խնդիրների և վարժությունների տիպային լուծումները, անդրադարձ կկատարվի նաև ոչ տիպային լուծումներին, դրանով իսկ զարգացնելով սովորողների որոնողական և ստեղծագործական ընդունակությունները, վերջնարդյունքում ակնկալելով ուսուցման արդյունավետության և կրթության որակի բարելավում:

*Հետազոտությունն իրականացվել է ՇՊՀ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № ShSU SCI-02-2020 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:*

## Օգտագործված գրականության ցանկ

1. https://escs.am/am
2. http://www.atc.am/
3. http://olymp.am/

4. Якир М.С., Что такое красивая задача?, Математика в школе.-1989.-№6, стр. 41-46.
5. Կարապետյան Ա.Հ., Հանրահաշիվ, վարժությունների ժողովածու, Երևան, «Քվանտ» հրատ., 2000.-236 էջ:
6. Նիկոլսկի Ս.Մ., Պոտապով Մ.Կ., Ռեշետնիկով Ն.Ն., Շևկին Ա.Վ., Հանրահաշիվ, 9-րդ դասարանի դասագիրք, Եր.: Անտարես, 2012 - 280 էջ:
7. Գևորգյան Գ.Գ., Սահակյան Ա.Ա., Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր բնագիտական հոսքի համար, 11-րդ դասարանի դասագիրք, Երևան, «Տիգրան Մեծ», 2010.-208էջ:
8. Գևորգյան Գ.Գ., Սահակյան Ա.Ա., Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր բնագիտական հոսքի համար, 12-րդ դասարանի դասագիրք, Երևան, «Տիգրան Մեծ», 2011.-208էջ:

## НЕСТАНДАРТНЫЕ РЕШЕНИЯ МАТЕМАТИЧЕСКИХ СТАНДАРТНЫХ ЗАДАЧ КАК СРЕДСТВО ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ ОБУЧЕНИЯ

**Гагик Никогосян**
ШГУ, кафедра Математики, физики и информационных технологий, к.ф.-м.н.
**Вардан Манукян**
ШГУ, кафедра Математики, физики и информационных технологий, к.ф.-м.н., доцент

Работа посвящена выявлению нестандартных решений различных стандартных задач, встречающихся в школьной математике.

В статье сначала поясним, что мы понимаем под «стандартной задачей» и «стандартным решением», после чего мы обратимся к характеристикам описания красоты математической задачи, которые были введены известным российским педагогом-ученым М. С. Якиром, после этого, на примере конкретных стандартных задач мы

будем рассматривать, анализировать нестандартные решения различных типов математических задач, указывая на вышеупомянутые особенности описания их красоты, которые, как мы думаем, будут способствовать стимулированию творческого мышления студентов, восприятию и развитию математической красоты, тем самым способствуя повышению эффективности обучения.

***Ключевые слова:*** *математика, стандартные и нестандартные задачи, признаки характеристики красоты, анализ.*

## NON-STANDARD SOLUTIONS OF MATHEMATICAL STANDARD PROBLEMS AS A MEANS OF INCREASING LEARNING EFFICIENCY

**Gagik Nikoghosyan**
SHSU, Chair of Mathematics, Physics and Information Technologies
Candidate of Physical and Mathematical Sciences
**Vardan Manukyan**
SHSU, Chair of Mathematics, Physics and Information Technologies
Candidate of Physical and Mathematical Sciences, Associate Professor

The work is devoted to identifying of non-standard solutions to various standard problems encountered in school mathematics.

In the article, we first clarify what we mean by "standard problem" and "standard solution", after which we will turn to the characteristics of the beauty of a mathematical problem, which were introduced by the famous Russian teacher-scientist M.S. Yakir. Further on, we will consider and analyze non-standard solutions to various types of mathematical problems, pointing out the aforementioned features of their description of beauty, which, we think, will contribute to stimulating students' creative thinking, perception and development of mathematical beauty, thereby contributing to increasing the effectiveness of learning.

***Keywords:*** *mathematics, standard and non-standard tasks, signs of beauty characteristics, analysis.*

*Տրվել է տպագրության՝ 17.09.2021թ.*
*Գրախոսվել է՝ 19.11.2021թ.*

**Խմբագրության հասցեն. Հայաստանի Հանրապետություն,
Երևան 0037, Դավիթ Անհաղթի 10**

**Հեռ.** (374 10) 24 00 38
**Ֆաքս** (374 10) 24 00 38
**Վեբ կայք** http://www.eua.am
**Էլ. փոստ.** info@eua.am

Համակարգչային ձևավորումը՝ Մ. Գևորգյանի
Սրբագրությունը՝ Գ. Պետրոսյանի

Ստորագրված է տպագրության 25.12.2021թ.

Ֆորմատ՝ 60x84 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 19 մամուլ: Տպաքանակ՝ 100:

Եվրոպական համալսարան հրատարակչություն,
Երևան 0037, Դավիթ Անհաղթի 10

Տպագրվել է «Աստղիկ Գրատուն» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Գևորգ Քոչարի փ. 21:
Հեռ.՝ (+374 10) 52-88-00:
E-mail: astghik59@gmail.com